ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԿՏՐՎԵՑ ՄՈՐՍ ԹԶԲԵՀԻ ԹԵԼԸ

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԿՏՐՎԵՑ ՄՈՐՍ ԹՋԲԵՀԻ ԹԵԼԸ

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 2003

ՀՏԴ 891.981-1 Մարության
ԳՄԴ 84Հ7-5
Մ 399

Գիրքը հրատարակության են պատրաստել
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ և ***ՏԱԹԵՎԻԿ ՄԱՐՈՒԹՅԱՆՆԵՐԸ:***

Մ 399 ՄԱՐՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՆ
«ԿՏՐՎԵՑ ՄՈՐՍ ԹՋԲԵՀԻ ԹԵԼԸ»: Բանաստեղծ./Տիրան Մարության.- Եր.: «Նաիրի», 2003, 424 էջ:
Ժողովածուն ընդգրկում է 92-ամյա ճարտարապետ Տիրան Մարությանի տարբեր տարիներին գրած բանաստեղծությունները:

Մ $\frac{4702080202}{705(01)2003}$ 2003 թ. ԳՄԴ 84Հ7-5

ISBN 5-550-01319-3
© Տիրան Մարության, 2003 թ.



Հեղինակը մեծ սիրով բանաստեղծությունների իր այս ժողովածուն նվիրում է Կարո, Զարուհի, Արփենիկ և Տիգրան թոռնիկներին:

Մարոն ինձ պոետ օծեց,
Կասկածի դուռը գոցեց.
Մինչ Զուլիետը սրտաբաց,
Գրքիս ծախքերը հոգաց...

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Տիրան Մարությանը մասնագիտությամբ ճարտարապետ է, Հայաստանի վաստակավոր շինարար (1961), ճարտարապետության դոկտոր (1992): Նա ծնվել է 1911 թ. Ղշլաղ գյուղում (ներկայումս Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս): Մանուկ տարիներն անց է կացրել Ղարաքիլիսայի և Լոռու որբանոցներում, նախնական կրթությունը ստացել հայրենի գյուղում: 1937 թ. ավարտել է Երևանի շինարարական ինստիտուտի (ներկայումս՝ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան) ճարտարապետության բաժինը: 1935-37 թթ. ունկնդրել է Հայաստանի գրողների միությանն առընթեր Գրական համալսարանի դասընթացը, ուր այդ ժամանակ դասավանդում էին հայ մշակույթի մեծանուն գործիչներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Եղիշե Չարենցը, Արսեն Տերտերյանը, Խաչատուր Կանայանը, Խորեն Սարգսյանը և ուրիշներ:

Տ. Մարությանը 1933-35 թթ. աշխատել է ակադեմիկոս Ալ.Թամանյանի և ճարտարապետ Գ. Քոչարի արվեստանոցներում, 1935-39 թթ.՝ Հայաստանի հողժողկոմատի հատակագծային բյուրոյում, իսկ 1939-91 թթ.՝ «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտում (1952 թ.-ից՝ գլխավոր ճարտարապետ): Այդ տարիների ընթացքում նա կազմել է Հայաստանի մեծ ու փոքր հիդրոկայանների մասնաշենքերի ճարտարապետական նախագծերը, այդ թվում՝ Սևանի ստորերկրյա ՀԷԿ-ի վերերկրյա շինությունները, Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնիի, Երևանի (նոր), Շամբի, Սպանդարյանի, Տաթևի (վերջինս՝ հեղինակային խմբի կազմում) հիդրոհանգույցների մասնաշենքերն ու կառուցվածքները: Նրա նախագծերով նման շինություններ են կառուցվել նաև Հյուսիսային Օսիայում (Զարամագի I, II), Կաբարդինո-Բալկարիայում, Գանայում:

Տ. Մարությանը կազմել է Արարատյան դաշտի ավելի քան մեկ տասնյակ գյուղերի վերակառուցման հատակագծերը, նրա կազմած գլխավոր հատակագծերով են ստեղծվել մոտ 15 նոր բնակավայրեր, այդ թվում Լուսավանը (ներկայումս՝ Չարենցավան), Աջափնյա Սիսիանը, Լուսակերտը, Արզնին (այժմ՝ Առողջարան թիվ 1), Ջերմուկի Կեչուտ բանավանը և այլն: Տ. Մարությանի նախագծերով են իրականացվել 250-ից ավելի կառույցներ, այդ թվում՝ մշակույթի տներ ու ակումբներ, հիվանդանոցներ ու բնակելի շենքեր, փողոցներ, հրապարակներ, աղբյուր-հուշարձաներ: Այս կարգի կառույցներից հիշարժան են Հրազդանի մշակույթի տունը, Կապանի երաժշտական ուսումնարանը, Երևանի կոոպերատիվ տեխնիկումի շենքը (ներկայումս՝ Ճարտարագիտական համալսարանի մասնաշենքերից՝ Կորյունի փողոցի թիվ 12), Մոսկովյան փողոցի թիվ 8, Ազատության պողոտայի թիվ 1-12 բնակելի շենքերի համալիրը, Ղշլաղ և Օշական գյուղերի աղբյուր-հուշարձանները և այլն: Ճարտարապետի գործունեության այս դրվագները առավել ամբողջական են արտացոլված Հայաստանի ճարտարապետների միության ջանքերով 2002 թ. լույս տեսած «Հայ ճարտարապետության վարպետները» շարքի Տիրան Մարությանին նվիրված գրքույկ¬ալբոմում:

1959 թ. ի վեր, ամենօրյա աշխատանքային օրվան զուգընթաց Տ. Մարությանը զբաղվել է հայ ճարտարապետության պատմության և տեսության

հարցերով, հեղինակել վեց ծավալուն, բովանդակալից, պրոբլեմատիկ հարցեր ընդգրկող մենագրությունների՝ «Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ» (1963), «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (1972), «Ավանի տաճարը» (1976), «Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք» (1978), «Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анийской Богоматери…» (1989), «Հայ դասական ճարտարապետության ակունքներում» (2003), շուրջ երեք տասնյակ հոդվածների: Միաժամանակ լինելով պրակտիկ ճարտարապետ և ճարտարապետության պատմության մասնագետ, Տ. Մարությանը առանձնանում է իր գործընկերների շրջանում: Ռուսերեն մենագրությունը Տ. Մարությանին դարձրել է ճարտարապետության համաշխարհային բիենալեի դափնեկիր (1991, Սոֆիա):

Տ. Մարությանը ճարտարապետների միության անդամ է 1935 թ.¬ից: Նա Հայրենական մեծ պատերազմի մասնակից է, պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության երեք պատվոգրերով (1945, 1953, 1960 թթ.), շուրջ 30 տարի եղել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության ընկերության հանրապետական խորհրդի նախագահության անդամ: 2002 թ. Տ. Մարությանը պարգևատրվել է Ալ. Թամանյանի ոսկե մեդալով:

Տ. Մարությանը բանաստեղծություններ է գրում աշակերտական տարիներից ի վեր: Նրա գրվածքների վերաբերյալ դրականորեն են արտահայտվել Ավետիք Իսահակյանը, Վահագն Դավթյանը, Մարո Մարգարյանը: Առաջին անգամ նրա մի քանի փոքրածավալ բանաստեղծությունները տպագրվել են «Կամուրջներ» ալմանախում (1989), ապա՝ «Գարուն» հանդեսում (1997, թիվ 2): Բանաստեղծությունների առաջին ծավալուն ժողովածուն հրատարակվել է 1999 թ., Մարո Մարգարյանի առաջաբանով: Բանաստեղծուհին գրում էր. «Երբ հարգելի Տիրան Մարությանը իր բանաստեղծությունների հսկա թղթապանակը ձեռքին եկավ մեր տուն և ասաց, թե «Այս իմ երկար տարիների բանաստեղծություններն են», ես մի քիչ վախով բացեցի թղթապանակը հենց սկզբից ծանոթանալու գոնե մի քանի բանաստեղծական կտորների հետ, ապա թեթև շուչ քաշեցի և ուրախացած շարունակեցի կարդալ՝ նուրբ, հրաշագեղ բանաստեղծություններ էին և հոգեկան զգացումի ու կատարման կուլտուրայով հրաշալի քառյակներ, ութնյակներ, ինչպես նաև լուրջ, ավելի երկարաշունչ գործեր: Ահա իմ սիրած քառյակներից մեկը՝

Աչքս լիքն է արտասուքով
Էն պղտորված ծովի պես.
Եկա ուրախ, անցա սուգով
Աշուղ Սայաթ-Նովի պես:

Երևի, երբ մարդը բացառիկ խորը մտքի ու տաղանդի տեր է, ինչ գործով էլ զբաղվի, կզգացվի տաղանդը. բայց այստեղ կա նաև շատ բանաստեղծական սիրտ ու հոգի: Ահա և իր խոսքը բանաստեղծությամբ՝

Խոհերս բոլոր ու երազներս
Խոսք ու գիր արած թղթին հանձնեցի…

Զգացվում է, որ յուրաքանչյուր ստեղծագործություն հեղինակի հոգին է ու կյանքը: Մեր սիրելի ու հարգելի մեծավաստակ ճարտարապետի համար պոեզիան հոգու սնունդն և ուրախությունն է եղել, բայց քանի որ իսկական բանաստեղծի անկեղծությամբ է զբաղվել իր համար սրբազան նաև այս գործով՝ նրա ողջ կյանքը հուզաշաղախ գույներով նկարվել է այս ազնիվ ու բնաբուխ պոեզիայում»:

Ներկայացվող գրքում տեղ են գտել Տ. Մարությանի տարբեր տարիներին գրված բանաստեղծությունների մեծ մասը:

Հայրենիք

Հայրենիք

Դու՝ ջրի ճերմակ փրփուր,
Դու՝ գարնան ամպի քուլա.
Սիրո սառնորակ աղբյուր,
Գինի քաղցր, կլկլան:
Սիրամարգ - ոսկե փետուր.
Ծիծեռնակ սիրած թռչուն.
Աղավնի մաքուր, մաքուր
Սրտի երգ - սիրո հնչյուն:
Դու՝ սիրուն սարի կաքավ,
Սեգ սոխակ, սարի մեխակ,
Սիրահար սեր հնդկահավ,
Ձնծաղիկ, վարդ, մանուշակ:
Ծաղկանկար բլուր, հովիտ,
Օրորուն արտ ու անտառ,
Թուխ այծյամ, եղնիկ ու վիթ,
Ջրահարս, փերի պայծառ:
Ոսկեցող, ոսկե ձկնիկ,
Ոսկեշող, շող արևի.
Եդեմի ծառ օ՜, եղեգնիկ,
Ծով շրշյուն շեկ տերևի:
Առավոտ պարզ ու պայծառ,
Կապուտակ - զուլալ երկինք.
Կարոտի ծով - եզերք անծայր,
Այգեստան, հազար բարիք:
Գթառատ մայր սիրելի,
Հարգարժան մեծն հայրիկ.
Ով միակ, անկրկնելի,
Դու՝ ամենայն, ի՜մ հայրենիք:

1936

* * *

Կգա գարուն,
Կելնի առուն,
Ու կծաղկեն ծաղիկներ.
Այնքա՜ն սիրուն,
Ու գույնզգույն,
Կճռվողեն ճնճղուկներ:
Հանդ ու արոտ

Գարնան կարոտ,
Կառնեն զգեստ բազմերանգ,
Ու քարքարոտ
Լեռներն ամպոտ
Կերգեն քաղցր, ներդաշնակ:
Կյանքի հնքով,
Ամպի թևքով
Լույս ցերեկը կմարի.
Կապույտ ու մով
Երկինքը՝ ծով
Իր աստղերը կվառի:
Մեղմիկ ու հով
Գիշերը՝ զով,
Կիջնի զեփյուռն էն սարի,
Պարզ զնգոցով,
Արծաթ բոցով
Կերգի աղբյուրն անտառի:
Կգա գարուն,
Կերգի առուն,
Ծիլ ու ծաղիկ կշնչեն.
Բյուր անանուն,
Անթիվ, անհուն
Այնքա՜ն սրտեր կհնչեն:

1936

* * *

Եղել է, կա ու կմնա,
Աշխարհն այսպես հար ու հավետ.
Լոկ մենք ենք, որ պիտի գնանք,
Կորչենք անուժ, անհուշ, անհետք:

Հազար, հազար տարի անցել,
Նույնքան էլ դեռ կգա, կանցնի.
Ի՞նչ ենք մենք էս կյանքին հանձնել,
Որ կյանքն էլ մեզ անմահացնի:

Բնությունը մեծ է, շատ մեծ.
Մենք էլ այնքան, այնքան փոքր ենք,
Որ ինչքան էլ գործ մեծամեծ
Աշխարհ բերենք, աշխարհ երկնենք,

Էլի քիչ է ու աննշան,
Էլի դեռ շատ սերունդ է պետք.

Աշխարհն առնի աշխարհին տա
Ու լուռ անցնի սրտակեղեք։

Էլի, էլի, էլի անվերջ
Տքնի, տոկա ու հեծեծի.
Մարդը՝ մժեղ բնության մեջ,
Մարդը՝ ցնորք բանաստեղծի։

1936

* * *

Թավ Նորքի ուսից ելնում ես, արև,
Մեղմ ու դուրեկան նայում այս հովտին,
Կապում վառվռուն գույների գոտին,
Թավ Նորքի ուսից ելնում ես, արև։

Բացվում են, ժպտում ծիլ, ծաղիկ, տերև,
Ու քո շողերում փայլում է ցողը.
Ասես արթնանում, շնչում է հողը.
Թավ Նորքի ուսից ելնում ես, արև։

1940

* * *

Օ՜, աշնան արև, դու դարձյալ ջերմ ես,
Մոր պես գթառատ,
Մոր պես մեղմանուշ,
Մոր պես անարատ,
Եվ քնքշաքնքույշ.
Օ՜, աշնան արև, դու դարձյալ ջերմ ես։

1940

* * *

Ծագեց Արփին.
Զարկիր դարբին,
Զոդիր այն սուրն ու շղթան,
Որ մեր ձեռքին
Շաչի կրկին,
Ազատ պահի մեր Վաթան։

Ահա նորից,
Սարից-ձորից
Մռայլ ամպերն ելան վեր.

Գիշեր է մութ,
Չարն անհագուրդ
Նյութում աղետ ու ավեր։

Կգան սրով,
Թրով, հրով,
Գարշանքներով թունալից.
Հոխորտալով,
Կոխորտալով,
Բանակներով սրբապիղծ։

Ու չեն զիջի,
Կացնով դահճի
Կկոտորեն մեր-մանուկ.
Կամայացնեն,
Կդարձնեն
Շեներն ավեր ու խարույկ։

Ահա նորից
Սարից-ձորից
Մռայլ ամպերն ելան վեր.
Ելեք քնից,
Տեղից-տնից,
Մարտի կացեք, բանակներ։

Որ թշնամին
Պատեհ ժամին,
Անազնիվ ու գողեգող,
Ընտանիքին,
Հայրենիքին
Չգա, չանի ոտնակոխ։

Ծագեց Արփին.
Զարկիր դարբին,
Զոդիր այն սուրն ու շղթան,
Որ մեր ձեռքին
Շաչի կրկին,
Ազատ պահի մեր Վաթան։

1940

Կոչ

Չորս մույթի վրա զույգ հազար տարի

Մեր տաճարներն են մնացել կանգուն.
Ավերումները նենգոտ օտարի
Ողբով են լցրել մեր օջախն ու տուն:

Նրանք փշրել են մույթերը մեկ-մեկ,
Տարել են խարիսխ, տարել են խոյակ.
Մեր սեգ ուսերն ենք պարզել արնաներկ,
Ու մեր գմբեթը չի եղել խորտակ:

Եվ այժմ խախտված մույթերից ահա
Մեր սուրբ տաճարի գմբեթն է կախվել.
Հմուտ վարպետներ, քարքարի վրա…
Մեր պատիվն է մեր սրտի մեջ մեխվել:

Մենք դեռ հնչելու աղոթքներ ունենք,
Մեր բուրվառի մեջ դեռ խունկ կա բուրող.
Ի՞նչ փույթ, թե փոքր ենք, խոր ենք, անհուն ենք,
Մենք հանճարածին լույս աստղեր երկնող:

Դեռ երկար պիտի ջահն այս հուրհրա.
Ո՞վ մեր հավատը կտա ոտնատակ,
Հմուտ վարպետներ քար-քարի վրա…
Գմբեթը մեր սուրբ պահենք անխորտակ:

1942

* * *

Արագած, ու՞ր մնացիր.
Դու՝ Արարատ, սուրբ կատար,
Իմ լուրթ Սևան՝ ծով անծիր,
Հայրենական ջինջ կատար:

Լեռներ, լեռներ ծածկեցին
Ձեր պատկերն իմ հայացքից.
Նոր ճամփաներ ձգվեցին,
Ու հեռուներ տարան ինձ:

Ձեր կարոտը իմ սրտում,
Ձեր պատկերը թափանցիկ
Կրելու եմ անտրտում
Օրերում այս դարձդարձիկ:

1942

Հայաստան

Կա՛ց, արծի՛վ արու, սեգ ժայռին թառած,
Եվ հուր¬հեռատես
Հայացքդ էն սուրբ լեռներին հառած
Քարացի՛ր այդպես:

Խենթ ու խելագար, զենք-զրահ առած
Խուժանն այլատես,
Սև, մահասարսափ պատրույգը վառած
Թե սպառնա քեզ,

Կա՛ց անշարժ, անթեք, կարծր ժայռացած,
Թող իրե՛նք սարսեն,
Չի անառիկ են և աստվածացած
Մուշ, Սասուն, Բասեն:

1942

* * *

Ու թե որ մեկ էլ ջրհեղեղ լինի,
Արար աշխարհը տիղմի տակ մնա,
Ջրի մեջ սուզվի երկնի հայելին,
Նոյի տապանը վեր կբարձրանա՞,
Ու կայան կընտրի՞ կատարը այն սուրբ,
Որ մի օր փրկեց շողը մարդկության
Իրեն բարձունքում՝ ճերմակ, երկնահուպ,
Երբ աշխարհն արար դարձել էր օվկյան:
Եվ ո՞վ կլինի նավակում այն ժամ,
Եվ ո՞վ կդառնա նոր նախահայրը,
Որ գոռ ամպերի ոլորտով դաժան
Գտնի արարչի լույս ճանապարհը
Խորհրդով լցվի ու իջնի աշխարհ,
Տնկի նոր այգի մի արգասաբեր,
Եվ պտուղները՝ գոյության նշխար,
Բաժանի որդոցն ու տա խիստ պատվեր,
Որ ցրվեն երկրի բոլոր կողմերը,
Հիմնեն նոր աշխարհ, նոր սերունդ, նոր ցեղ.
Որքան աղմկեն ահեղ հողմերը՝
Մանկան ճիչ լսվի ամեն, ամեն տեղ:
Եվ արդյոք, արդյոք հայոց աշխարհում
Մանուկն ի՞նչ լեզվով ճիչեր կարձակի.
Մարութա, Մշո էն սուրբ լեռներում
Կփայլի՞ փրկչի թուրը կայծակի,

Կինչի՞ բարբառը մեր սուրբ հայրենյաց,
Կվերածնվի՞ նաիրյան լեզուն,
Եվ Արարատը սեգ, երկնասլաց
Կմնա՞ նշան գոյության ոգուն:
Ես հավատում եմ, որ այն մանուկը,
Որ սուրբ ոլորտից մեր երկիրն իջնի
Կսանձի սուրող հողմի աղմուկը՝
Մեր լեզվի ծաղկով երգեր կփնջի:

1945

Իմ Հայրենիքում

Կանաչել են բաց լեռները,
Բլուրները, սար ու ձոր.
Կանաչել են անտառները,
Ու պարտեզները բոլոր:

Պճնվել են կատարները,
Ու լանջերը ծիրանի.
Խոխոջում են առուները,
Խաղում, ասես պատանի:

Լայն բացվել են բողբոջները,
Բուրում են վարդ ու ծաղիկ.
Ճռվողում են թռչունները,
Երգում սոխակ, ծիծեռնիկ:

Մարդն էլ այդ ծով, դրախտ հովտում
Աշխատում է սրտաբաց,
Օրհնանքով ճոխ սեղան նստում,
Երջանկությամբ ողողված:

Կանաչել են մեր արտերը,
Ծաղկել՝ անտառ, սար ու ձոր.
Ջահելացել՝ մեր սրտերը,
Գարուն, քեզնով բախտավոր:

1945

* * *

Կծկվել ես, իմ Արազ,
Լլկվել ես, իմ Արազ,
Կանգ ես առել, չես հոսում.

Խռովել ես, չես խոսում,
Էն ժայռի պես քարացել,
Մոլորվել եմ մնացել:

Արդ դու երես առ երես,
Ինձ նախատում ես կարծես…
Արազ, Արազ, իմ Արազ,
Հավերժ ցնորք ու երազ:

1946

* * *

Աշխարհով արյուն կրակ էլ անցնի,
Հողագործ, հերկիր հողը հայրենի.
Հունդը իր կրծքում նա կթաքցնի,
Մինչ խուժանն անցնի խենթ ու վայրենի:

Կա՛ց հավատարիմ հողին ու հերկին,
Ոռոգիր ջրով, անձրև-արցունքով.
Կվերադարձնի քո ջանքը կրկին,
Կմխիթարի զրկանքդ բերքով:

Հողն էլ մայր է մի, որ ջերմ երկունքով
Մարդկային ցեղն է կորստից փրկում.
Ինչ փոթորիկ էլ անցնի երկնքով,
Անթեղված կյանքը կաճի քո հերկում:

Մարդ կյանքից առած պարտքով է հարուստ.
Հատուցիր շռայլ ինչով կարող ես.
Կաց տեր քո կոչման առաքված վերուստ,
Զի մարդ ես, հիշիր՝ և արարող ես:

Աշխարհով արյուն կրակ էլ անցնի,
Հողագործ, հերկիր հողը հայրենի.
Հունդը իր կրծքում նա կթաքցնի,
Մինչ խուժանն անցնի խենթ ու վայրենի:

1946

Կարմիր բլուր

Նոքա այստեղ զենք են կռել,
Հալել պողպատ ու պղինձ.
Նոքա այստեղ կռիվս տվել

Թշնամու դեմ նենգապիղծ։

Պարիսպներն են հսկայաչափ
Պատնեշ կանգնել չարի դեմ.
Դժոխքից են ազգը փրկել
Աշտարակներն այս վսեմ։

Արդ անկյունաքարն այս հսկա,
Դեռ կանգուն է, դարահասակ.
Երկար դարեր դեռ կմնա
Զինվորն այս քաջ - բազմավաստակ։

1950

* * *

Էս ճամփով ո՞վ է անցել.
Աղքատություն, սով է անցել.
Էս ճամփով հազարամյա
Կռիվ, արյուն, ծով է անցել։

Էս ճամփով ո՞վ է անցնում.
Մենք ենք հրով, սրով անցնում.
Էս ճամփով հազարամյա
Գալիս, ոնց մեկ օրով անցնում։

Էս ճամփով դեռ ո՞վ կանցնի.
Միլիոնների կորով կանցնի.
Էս ճամփով հազարամյա
Մի նոր աշխարհ սիրով կանցնի։

Էս ճամփեն հազարամյա
Հազար սերունդ կանմահացնի։

1955

* * *

Դեմս ահա ձորն անհուն,
Որոտանը խենթ, անքուն,
Որոտում է գիշեր-զոր,
Քշում ջրերն անհատնում։

Չի վերջանում, չի վատնում,
Չի դժգոհում-գանգատվում.
Ես էլ լուռ նստած քարին,

Աչքս՝ ջրին անթարթում:

1958

* * *

Որոտանը որոտալով,
Մռնչալով, հոխորտալով,
Ասես լալով, մերթ խնդալով
Քշում է իր ջրերն առաջ:

Քանի սերունդ անհետացել,
Դար ու դարեր եկել, անցել,
Որոտանն է հար մնացել
Խորքում հազար խինդ ու հառաչ:

Հովիտներով ու ձորերով,
Ժայռից, քարից գլորվելով,
Այս կողմ, այն կողմ ոլորվելով,
Արձակելով շաչ ու շառաչ,

Ահա գալիս, ահա գնում,
Այսօր այնպես, ինչպես հնում,
Հավերժությամբ իր անքննում,
Շուրջը գարուն, լալ ու կակաչ

Որոտանը, Որոտանը:

1958

* * *

Մենք տնկեցինք
Այս ծառերը, այս պուրակը, այս այգին,
Երբ ունեինք
Լոկ մանկական պարզ զգեստներ մեր հագին,
Օ՜, որքա՜ն են այս ծառերը բարձրացել,
Որ դեռ երեկ շիվեր էին լղարիկ.
Արդ հովասուն ստվերները թանձրացել,
Արդ ծանրացել ճյուղերին միրգ ու բարիք:

Ու դարձել են սաղարթախիտ, հաստաբուն,
Ու դարձել են այգեստաններ ու անտառ.
Մենք պահապան, մենք այգեպան մշտարթուն,
Մենք մանկան պես և ժրաջան և կայտառ:

Օ՜, բարձրացեք, օ՜, բարձրացեք երկնասույզ
Մեր մանկական, պատանեկան ջանք ու սեր.
Օ՜, կարոտներ հարուցանող երգ ու հույզ -
Անցած օրեր և գալիքի ջերմ հույսեր:
Օ՜, որքա՜ն են,
Օ՜, որքա՜ն են այս ծառերը բարձրացել,
Իսկ մենք, իսկ մենք,
- Կյա՛նք անողոք. ճերմակել ենք՝ ծերացել:

1959

* * *

Այս սեգ պապերիս հայրական հողն է,
Այս նրանց սրտի, օ՜, սրսուռ դողն է,
Որ մտել մեջս, դադար չի տալիս,
Մինչ ժամանակիս հարմար չի գալիս:

Հողն այս մեր սուրբն է ու արարողն է,
Մեզ կերակրել միակ կարողն է,
Ինչու՞ է դարձել այն կռվախնձոր,
Ալեկոծում են, խառնում սար ու ձոր:

Հողը չեն թողնում իրեն՝ տիրոջը,
Հպատակներից աստծո՝ անխոնջը.
Ողջ ժողովրդին մատնել են քաղցի,
Արի աշխարհից մի բան հասկացի:

1967

* * *

Խաչ է հիմքում այս տաճարի՝
Կիսաբոլոր չորս խորան.
Առանց սյուն, առանց գերան՝
Խաչ է հիմքում այս տաճարի:

Փայլատակում, օ՜, հանճարի,
Աստվածային շողքը վրան.
Խաչ է հիմքում այս տաճարի՝
Առանց սյուն, առանց գերան:

1968

* * *

Դավիթ կյուրապաղատ,

Ես չգիտեմ, թե եղե՞լ ես ճաղատ,
Բայց որ խելոք ես եղել շատերից,
Վեր է կասկածից:

Դե բարդ է եղել քո ժամանակը,
Պետք է լինեիր և դիվանագետ,
Փակեիր մեկի խենթ ախորժակը,
Խաղաղ ապրեիր բարեկամի հետ:

Բայց անքեն եղար և հավատացիր,
Դավեցին և քեզ, ընկար որոգայթ,
Թույնով բաժակը հլու ըմպեցիր…
Երկիրդ անտեր, գործերդ անավարտ:

Եվ հոշոտեցին քո ժողովրդին,
Հափշտակեցին հողդ հայրենի.
Մենք սպասեցինք մի արդար դատի…
Ժամանակն էր, օ՜, խենթ ու վայրենի:

1977

* * *

Ներսես Գ Շինող,
Արյունոտվել էր հայրենիք ու հող.
Տոթ հարավից էր ներխուժել անկարգ,
Խաժամուժ, վայրագ
Ցեղն անապատի՝ կոչումով «քանդող»:
Եվ այլանդակող սեր ու սրբություն,
Ու սրի մատնող ազգ ու մարդկություն:

Ոգին, սակայն մեր, ոգին անկոտրում
Խավարի մեջ էլ նոր ելք էր փնտրում,
Եվ դու կանգնեցիր Ոգուն պահապան,
Որպես պատասխան
Բիրտ կոտորածին
Հասակ, շունչ տվիր սեգ Զվարթնոցին:

1977

* * *

Քանի գնում, հեռանում եմ նպատակից,
Որքան շտապում, հետ եմ մնում ժամանակից,
Ե՞ս եմ արդյոք անհաջողակ,
Օրերի հետ աններդաշնակ,

Թե՞ պտույտն է արագացել մոլորակի,
Բոցկլտացել արեգակը թեթևակի:

Քանի գնում, հեռանում եմ նպատակից,
Վազքիս պահին հողն է փախչում ոտքիս տակից:

1978

* * *

Երանի նորից նոր աշխարհ գայի,
Կյանքի վայելքը, օ՜, հավերժ լիներ.
Կորովս, ջանքս աշխարհին տայի,
Երկինքը երկրին դրախտ պարգևեր:
Ի հուրախություն ցեղին մարդկային
Դրախտը հավերժ երկրային լիներ:

Երանի նորից նոր աշխարհ գայի:

1978

* * *

Անց կենայի հորդ Արաքսը,
Մասիսն ի վեր ելնեի,
Էն բարձունքից հեռուներին՝
Մեր աշխարհին նայեի:

Ու խոժոռված աչքերիս դեմ
Հրաշք լիներ անքննին՝
Անատոլիան ծովն ընկղմվեր,
Նորից հառներ արևին:

Մաքրազարդվեր հողը պղծված,
Ու ընդերքից դարավոր
Վահագն ելներ, կանչեր հուզված…
Ա՜յ թե լիներ հնարավոր:

1980

* * *

Արդեն հաճախ ես մեր հայացքներից
Փակվում, Արարատ,
Ու ձանձրացել ես մեր կարեկցանքից,
Կանչերից անկեղծ.
Օ՜, դու պետք ունես, որ քեզ ձեռք մեկնի

Արարիչ մի Մեծ…
Արդեն հաճախ ես մեր հայացքներից
Փակվում, Արարատ:
Բայց մեզ հավատա, որ սրտերում մեր
Քո սերն անարատ
Անթեղած ունենք, ինչ փույթ, թե պահը
Սառն է, հողմածեծ…
Արդեն հաճախ ես մեր հայացքներից
Փակվում, Արարատ,
Ու ձանձրացել ես մեր կարեկցանքից,
Կանչերից անկեղծ:

1980

* * *

Արարատյան դաշտ ու մի ժողովուրդ -
Երկուսն էլ կիսվել, զարկվել, մանրատվել,
Ոսոխը ազահ, նենգ ու անհագուրդ,
Սպանել, բայց և չի դատապարտվել:
Դրա համար էլ այսքան անխորհուրդ
Եկել, եզերքում ծպտյալ դարանել,
Որ ապրողներին գլորի անդունդ,
Նույն դահճի ձեռքով, որ չի վարանել:

1981

* * *

Փայլդ ի՞նչ անեմ, լուսեղեն Լուսին,
Եթե կարող ես, տաքացրու մի քիչ.
Աշխարհը քնել, լոկ մեր երկուսին
Ոչ քուն կա, ոչ նինջ:

Փայլդ ի՞նչ անեմ, լուսեղեն Լուսին,
Եթե կարող ես, սփոփիր մի քիչ.
«Վերջը լավ կլնի» - բոլորը ասին՝
Խոսքեր ամոքիչ:

Ե՞րբ է այդ «վերջը», լավ չհասկացանք,
Անվերջ մաշվում ենք, վերջանում քիչ-քիչ.
Մեզ մնացել է վերջին մի պատրանք…
Ու… վերջին մի ճիչ:

Փայլդ ի՞նչ անեմ, հավերժորեն սին
Լուսեղեն Լուսին:

1982

* * *

Արարատի դեմ-դիմաց,
Մի գավաթ ջուր, լավաշ հաց,
Նստեմ, խաղաղ վայելեմ,
Վիշտ ու խոկանք մոռացած:

Արարատի դեմ-դիմաց,
Ճամփաներ կան երկարած.
Գնամ, դառնամ հեգ ճամփորդ,
Ճամփորդին միշտ Տեր աստված:

1982

* * *

Քարի երկիր քարաստան,
Հայի երկիր Հայաստան,
Դու հայրենիք չոր քարի,
Եվ կոշտ, և չար, և բարի:
Հայն էլ քարի նման քար,
Ունի լոկ սիրտ ու քանքար.
Քարն ու քանքարն իրար հետ,
Բռնած մի լույս արահետ,
Անվերջ իրար են գալիս,
Մերթ ծիծաղում, մերթ լալիս:
Բայց արցունքի շիթերում,
Ու վարդագեղ շուրթերում,
Բուրում ցորյան արտ ու հերկ,
Ու հնչում է մեղմ մի երգ՝
- Հայի երկիր՝ Հայաստան,
Դու մեր միակ Մայր ոստան:

1982

* * *

Երբ աշխարհ եկավ քսաներորդ դարը,
Լոկ հայը դարձավ զոհը-ավարը.
Դեռ քառասունն էր այս ճամփորդ դարի,
Պատուհաս իջավ ուսին աշխարհի:
Արդ ավարտին է մոտենում դարը ¬
Չյունել է, ձյունել է մեր լեռնապարը.
Անհույս փակվել մեր ճանապարհը

Դեպի երկիրը - ավետյաց սարը:
Լոկ մեր հոգին է այնտեղ թափառում,
Մեր մարմինն այստեղ անհույս խարխափում:
Ե՞րբ իրար կգան մարմինն ու հոգին,
Որ գնանք, փարվենք երկրին կաթոգին:

Օ՜, ավարտին է մոտենում դարը,
Սակայն ձյունել է մեր լեռնապարը:

1982

* * *

Թուրքերը պեղում են մեր հողը,
Պեղում են գանձերը նախնյաց.
Թալանում, ինչ կար պահված…
Թուրքերը պեղում են մեր հողը:
Տեր ու տիրակալ դարձած,
- Եվ ո՞վ է նրանց արգելողը:
Թուրքերը պեղում են մեր հողը,
Պեղում են գանձերը նախնյաց:

1983

* * *

Պատուհանս դեմդ բացել,
Ու նայում եմ, անվերջ նայում.
Շատ նայել ու չեմ հագեցել,
Այդ ինչպե՞ս ես դու հմայում:

Ձյուն ես հագել, դու ճերմակել ես,
Ճերմակությամբ գեղեցկացել.
Ինձ գերել ու համակել ես,
Ցուրտ կրակով քո սաստկացել:

Էնքան, էնքան եկան-անցան,
Քո կարոտը խոր անթեղած,
Կրակ էին ու մոխրացան,
Ասես երբեք եղա՜ծչեղա՜ծ:

Նրանց հետքով ես էլ ահա,
Բռնած ճամփան այս անիծյալ,
Գնում եմ արդ մահամնա -
Մերթ հետիոտն ու մերթ հեծյալ:

Հորիզոնը մթնում կորել,
Ու թվում է կուրացել եմ.
Դարը եկել, ու բոլորել,
Ու հավատս ուրացել եմ:

*

Պատուհանս դեմդ բացել,
Ու նայում եմ, անվերջ նայում.
Շատ նայել ու չեմ հագեցել,
Այդ ինչպե՞ս ես դու հմայում:

1984

* * *

Հայեր, հայեր, խաբված հայեր,
Աշխարհի հետ չափված հայեր.
Ձեր փոխարեն «գորշ գայլերին»
Ո՞վ, ո՞վ պիտի դիմակայեր:

Հայեր, հայեր, խաբված հայեր,
Անդատ դատված, հատված հայեր.
Երբ չի դատված նենգ բորենին,
Հայն ու՞մ պիտի ապավիներ:

Հայեր, հայեր, խաբված հայեր,
Բնից հատված, հատված հայեր,
Մահ տենչացեք անօրենին,
Ի՞նչ փույթ՝ կընկնեն շահեր, գահեր:

Հայեր, հայեր, խաբված հայեր:

1984

* * *

Օ՞, վրիպակներ աստվածային,
Դուք, որ պատիժ եք իրական,
Ոտնակոխ եք արել հային,
Ու իղձերն իր նվիրական:

Օ՞, վրիպակներ աստվածային,
Որոգայթներ ամբարտավան,
Ի՞նչ եք թողնում հետագային,
Ի՞նչ գույն ունի մեր ապագան:

Օ՞, վրիպակներ աստվածային,

Անքննելի - եղեռնական.
Թելադրանքով անմարդկային
Դարձանք Սփյուռք – աստանդական:

1984

* * *

Ծովափ է, անվերջ ավազ ու խիճ է,
Ճայերի երամ, հրճվանքի ճիչ է,
Ու մերթ զզվոտոց, ցաված կռինչ է…
Ծովափ է, անվերջ ավազ ու խիճ է:
Ծովափը մերկ է, ծառերը քիչ են,
Այդ չի՞ նկատել բարձյալը, ինչ է.
Ծովափ է, անվերջ ավազ ու խիճ է.
Ճայերի երամ, հրճվանքի ճիչ է:

1984

* * *

Արարատին լավ նայիր,
Ու հասկացիր, որ հայ ես.
Պարզև է այդ, փայփայիր…
Հպարտացիր, որ հայ ես:

Նա կար, երբ դու չկայիր,
Արդեն շատերը չկան.
Որ եկել ես, լա՛վ նայիր,
Նա է քո գալու վկան:

Շուտով դու էլ կգնաս,
Նայիր հախուռն-ակնապիշ.
Տես, կարոտով չմնաս,
Չկա Արարատ ուրիշ:

Եղել է, կա, կլինի,
Նա է հային հայ պահում,
Մեկ էլ թուրը Հավլունի,
Երբ սրբերն են գրոհում:

1984

* * *

Ազգիս մեծերը անցնող դարի հետ
Վերջին հրաժեշտից չխուսափեցին.

Աստվածների հետ անքեն չափվեցին
Ազգիս մեծերը անցնող դարի հետ:
Հայոց պատկերը այս անձեռակերտ
Հզոր հանճարով ոսկեզօծեցին.
Ազգիս մեծերը անցնող դարի հետ
Վերջին հրաժեշտից չխուսափեցին:

1984

* * *

Ելնեմ սարերը,
Ման գամ հրի.
Իջնեմ ձորերը՝
Ման գամ ջրի.
Ընկնեմ դաշտերը՝
Ման գամ հացի.
Ախ, իմ վշտերը
Բոլորից բացի
Դեռ որոնելու
Շատ բան ունեն,
Սակայն գտնելու
Գեթ հույսը չունեն:

1984

* * *

Չեմ հագենում աշխարհից.
Գեղեցկությամբ իր շռայլ
Գերել, գերում է նա ինձ:

Չեմ հագենում աշխարհից,
Նույնիսկ պահերին մռայլ
Չի իջնում սրտիս թախիծ:

Չեմ հագենում աշխարհից.
Մխիթարանք, օ՜, մի այլ
Չեմ սպասում այլ կողմից:

Չեմ հագենում աշխարհից.
Հագենալուց հագենալ,
Ոչ, չի հաջողում այդ ինձ:

1984

Դիլիջան

Անտառներում հին ու խոր,
Ծմակներում այս մթին
Եդեմական ջինջ անդորր…
Իսկ հովը երգը շրթին
Անցնում սաղարթից-սաղարթ,
Նվագում է տավիղն իր
Ու պար բռնում ուր բացատ
Նվագի տակ անձանձիր։

*

Թռչնոց երգին ունկնդիր,
Ու ջրերի կարկաչին,
Դիլիջան, օ՜, գեղադիր,
Դու մերձ գահին արարչի։

1984

* * *

Ջուր ըմպեցի աղբյուրների ակունքներից,
Ու լվացի սիրտս նրանց պաղ ջրերում.
Առա կորով սեգ լեռների երկունքներից,
Չշեղվեցի կյանքի պղտոր անուրջներում.
Ի՞նչ փույթ, չիջավ տխրությունը իմ հոնքերից,
Ի՞նչ փույթ, այրվեց կյանքս կյանքի կրակներում։

1984

* * *

Տերություններ, տերություններ,
Մեծ ու հզոր տերություններ,
Դուք որքան մեծ, այնքան խանդոտ,
Այնքան չկամ, տերություններ։

Ճիշտ, թե սխալ, այդ ենք տեսնում
Արդեն քանի հազար տարի.
Դրանից է, որ չենք հասնում
Երազ դարձած մեր աշխարհին։

1984

* * *

Շառագունել է երկնակամարը.
Արևածագի համառ սպասումով,

Ալեկոծվել է ներքին ցասումով
Սեգ, սպիտակափառ հեթանոս սարը:

Շառագունել է երկնակամարը.
Վերահաս պահի դառը սոսկումով,
Եվ ամեն քայլի արթուն հսկումով
Դեպի ավարտն իր սահում է դարը:

Շառագունել է երկնակամարը.
Եվ կապտակապույտ անհունության մեջ,
Որ չունի սկիզբ, չունի նաև վերջ,
Բոցավառվում է ... մեր Լեռնապարը:

1984

* * *

Չիչխանի ափին՝ հին եղեգնուտում
Իմ շիվը աճեց, դարձավ եղեգն.
Օ՜, այնտեղ այնքան դալար է փտում
Քիչ է թափանցում լույսը - արեգը:

Ոչ ոք նկատեց եղեգն իմ դալար,
Որ դառնալ կարող էր սրինգ մի լուսե,
Որ ճկվել կարող էր, որպես կամար,
Ու մոտեցողին ներշնչեր հույսեր:

Չիչխանի ափին՝ հին եղեգնուտում
Անթեղված մնաց կրակն իմ հոգու.
Այնտեղ լոկ ծուխն է դեռ վերև միտում,
Թևածում լքված քանքարն իմ հոգու:

1984

* * *

Ո՞վ է սիրում հայրենիքն իր հայի պես…
Հանուն իր սուրբ ու նախընտիր հավատի
Ո՞վ է կռվել մեծ զորավար Գայի պես:

Բայց և ոչ մենք մեր հայրենիքն ունեցանք,
Ոչ էլ Գայը մի բուռ հող հայրենիքում…
Շա՜տ եք, շատ եք անգթություն ու հանցանք:

1984

* * *

Թուրդ վաղ ես պատյան դրել,
հայրենակից,
Ասում են չես դիմադրել,
հայրենակից,
Սուտ մարդկանց ես ունկնդրել,
հայրենակից,
Քեզ քո դեմ ես հակադրել,
հայրենակից:

Բանը բանից անց է կացել,
հայրենակից,
Դատարկաձեռն ես մնացել,
հայրենակից,
Նոր ես միայն աչքդ բացել,
հայրենակից,
Ու աշխարհը նոր հասկացել,
հայրենակից:

Դիմացել ես, էլ դիմացիր,
հայրենակից,
Դատդ, սակայն, լավ իմացիր,
հայրենակից.
Ազնվության հետ դաշնակցիր,
հայրենակից.
Թև ու թիկունք միշտ ունեցիր,
հայրենակից:

1984

* * *

Քանի շնչում ես ու կաս,
Նայիր Արարատին.
Մեր այդ սուրբ հավատին,
Քանի շնչում ես ու կաս:
Թե չէ՝ կարոտը կզգաս
Հենց կյանքիդ ավարտին.
Քանի շնչում ես ու կաս
Նայիր Արարատին:

1984

* * *

Եթե մի օր ինքը՝ Աստված

Գահաժողով հրավիրեր,
Ու մեծերին տեղ ժամանած
Նստաբարձեր բաժաներ,
Տեղավորեր նա ըստ կարգի,
Ըստ տեղի պատկանելույն,
Եվ ըստ պատվի, և ըստ հարգի,
Հաշվի չառներ տեսք ու գույն,
Հարստություն և ունեցվածք,
Հեռաստաններ տերության,
Գեղեցկություն, նաև կեցվածք,
Ցենզ, գիտելիք կրթության,
Ի՞նչ համարով նա բարձ կտար
Հայկազյան ցեղի մարդուն
Խոհեմությամբ նա իր արդար
Հեռավոր Ադամորդուն:
Կճանաչե՞ր, ու կկանչե՞ր
Հային հայի անունով,
Թե՞ էս հայը էն հայը չէր,
Փոխված էր տեսք ու գույնով:
Օ՜, ի՞նչ պատիվ կտար հային,
Այդ հավաքում ցեղերի.
Մոտ կպահե՞ր նա իր գահին
(Քմծիծաղով բեղերի):

1984

* * *

Ո՞վ, ո՞վ ունի Հայաստանից
Ավելի լավ հայրենիք,
Հայաստանից ու հոր տանից
Ավելի լավ պաշտելիք:

Սինայի գորշ անապատին
Քանի արաբ զոհ գնաց.
Չընկրկեցին լավ ու վատին,
Ամեն զոհվող գոհ գնաց:

Էլ ու՞ր մնաց, որ չզոհվենք
Մենք մեր չքնաղ վաթանին.
Այդպես է իր մորը սիրում
Կռիվ մեկնող պատանին:

1984

* * *

Ով Արտաշես և Տիգրան Մեծ,
Ով Մեծ հայեր հայրենաստեղծ.
Դուք Մեծ հայեր բազում որդվոց
Եվ զորավար, և բանաստեղծ,
Եվ շինական բազում ու հոծ,
Եվ շինարար զերթ քարն անեղծ:

Մեզ թողեցիք, օ՜, լայնարձակ
Գեղեցկագույն մի հայրենիք
Լեռնակուտակ բարձրավանդակ,
Վեր մխացող մի լուրթ երկինք:

Մենք ժառանգներ իրավական,
Զորու չեղանք խուժանի դեմ.
Այն, որ սուրբ էր, նվիրական,
Որ դրախտ էր, անսուտ եդեմ,

Դժոխք դառավ, դաժան գեհեն,
Պատառոտվեց ու մասնատվեց.
Ժողովուրդը անապավեն
Անտառի պես հատվեց, հատվեց:

Այժմ երկրից մեծ Հայաստան
Մի նշխար է մեզ մնացել.
Մի սրբություն անապաստան.
Ու մի Սփյուռք անմահացել:

1984

* * *

Սև օրով բացվեց քսաներորդ դարը հայերիս համար,
Մենք զոհեր տվինք աստղերից էլ շատ՝ անթիվ, անհամար.
Հրով արծարծվեց քսաներորդ դարը հայերիս համար:

Մենք զոհեր տվինք աստղերից էլ շատ՝ անթիվ, անհամար.
Իսկ մեղավորը մնաց անպատիժ, խենթ ու անպատկառ.
Մենք զոհեր տվինք աստղերից էլ շատ՝ անթիվ, անհամար:

Սև օրով բացվեց քսաներորդ դարը հայերիս համար.
Ինչպե՞ս կավարտվի փոթորիկների դարն այս անկատար…
Հրով արծարծվեց քսաներորդ դարը հայերիս համար:

1984

* * *

Ուզում եմ այսպես անվերջ զրուցել,
Վերծանել երգիդ տողն ու հանգերը,
Ինչ-որ հանելուկ լուծել, վերլուծել…
Օ՜, ղողանջում են, սակայն զանգերը։
Ու առաքում են վերև՝ առ երկինք
Նոր-նոր արարված դարի վերքերը.
Ով՝ ինչ, ես միայն «հային հայրենիք»,
Հազիվ զսպում եմ իմ գոռ կրքերը։
Զի մեր վերքերը, որ ցարդ բաց են դեռ,
Անվերջ մորմոքվում աղի անձրևից,
Որ այսքան տարի զավթել է մի ՆԵՌ,
Իսկ մենք ելնում ենք «օրենքից, ձևից»։

1984

* * *

Նոր չափեր է ընդունում
Հեգ հայերիս ուծացումը.
Չար վտանգի մեծացումը
Նոր չափեր է ընդունում։
Ո՞նց են ծածկել հանդգնում
Ժառանգների հեռացումը…
Նոր չափեր է ընդունում
Հեգ հայերիս ուծացումը։

1985

* * *

Մեր պապենական հողերից բացի
այլ պահանջ չունենք.
Ով բարեկամ է, բարի դրացի,
հյուր գա՝ կընդունենք։
Մինչ ով զավթել է ու սեփականել,
երբեք չենք հաշտվի.
Պատրաստ ենք ոխն այդ դարերով տանել,
մինչ սուտը ճշտվի։

Ինչ էլ որ փլվի մեր ուս-թիկունքին,
դառնա հալածանք,
Ինչ հարված էլ որ իջնի մեր քունքին,
համարվի հանցանք,
Օ՜, միևնույն է, մեր հայրենիքը

պիտի պահանջենք.
Թեկուզ երկփեղկվի մեր լուրթ երկինքը…
Էլ ու՞ր նահանջենք:

1985

* * *

Նահանջներ ենք ունեցել,
Եվ վերելքներ մեր գործում,
Ընկել ենք ու բարձրացել,
Բացել ճամփա և անցում:

Ու երկարում են ահա
Ճամփաներն այդ լայնահուն,
Ելնում լեռներ բարձրագահ,
Հորիզոններ երկնագույն:

Նահանջով ու վերելքով
Թրծվեց, անցավ մի սերունդ.
Արեգական երկունքով
Ահա նոր ճիչ, նոր ծնունդ:

Ու աշխարհն է նորանում,
Որպես գարնան առավոտ.
Հայրենիքը զորանում -
Օ՜, կայծակնացոլք որոտ:

1985

* * *

Նավը խարիսխ է գցել ջրերում,
Ոչ մոտենում է ու ոչ հեռանում.
Մինչ ալիքները հա տարուբերում…
Նավը խարիսխ է գցել ջրերում:

Որպես մանկանը ծովը օրորում,
Ժամեր են անցնում, օրեր բոլորում…
Նավը խարիսխ է գցել ջրերում,
Ոչ մոտենում է ու ոչ հեռանում:

1985

* * *

Հեգ հային հայրենիք է պետք

Որ ապրի, հրաշք երկնի,
Որ աշխարհում թողնի խոր հետք,
Մեր երկնածը էլ չկրկնի:

Հեգ հային հայրենիք է պետք…
Այդ ո՞վ էր, նրանից խլեց մի օր.
- Ավելի վատթար, ավելի, քան նենգ -
Էլ ի՞նչ անվանեմ մեղքն այդ հրեշավոր:

1985

* * *

Մեր երկիրն է Տայքը,
Նա ինքն է՝ Հայքը –
Այն էլ Խորագույն.
Այնտեղ մեր կայքը,
Պապերի «վարքը»
Հին ու հնագույն:

Մեր երկիրն է Տայքը,
Իզուր են այլքը
Ջանում ապարդյուն
Մեր տունն ու վանքը,
Նաև հմայքը
Իրենց վերագրում:

1985

* * *

Հայեր,
Հայեր,
Թե ձեզ Աստված
Բարի նայեր,
Հիմի դուք էլ
Կարող էիք
Հպարտորեն
Ինքնավայել
Հեռու նայել:
Սակայն,
Սակայն
Արդ գլխիկոր,
Մտամոլոր
Սուր հայացքնիդ
Գետնին հառել,

Ու ընթացքնիդ
Տեղում սառել,
Չեք իմանում
Թե հետո ուր,
Ուր են տանում
Ճամփեքն անդուռ:
Հայեր,
Հայեր,
Թե ձեզ Աստված
Բարի նայեր…

1985

* * *

Ահեր շատ կան,
Մահեր շատ կան
Արարատի ստորոտում.
Թագեր շատ կան,
Գահեր շատ կան
Կործանված խորխորատում:

Օ՜, հին կուռքեր,
Անցած փառքեր,
Որ վշտեր չեք փարատում.
Խեղված ձեռքեր,
Խոցված վերքեր
Ոչ ոք չի վիրակապում:

1985

* * *

Հողմը խելակորույս
Ընդվզումի պահին
Խենթորեն իր անհույս
Մեծ ճանապարհին
Ոչինչ չի խնայում,
Չի տարբերում ոչինչ.
Ոչնչի չի նայում,
Անտեսում ողբ ու ճիչ,
Քշում ու տանում է,
Ու լցնում է գետ ու ձոր.
Նա ուզածն անում է -
Հողմը՝ խելացնոր:

1985

* * *

Ինձ հանգիստ չեն տալիս
Հայն ու Հայաստանը՝
Սփյուռք - անապաստանը…
Ինձ հանգիստ չեն տալիս:
Չի գործում, չի գալիս
Դատն ու դատաստանը:
Ինձ հանգիստ չեն տալիս
Հայն ու Հայաստանը:

1985

* * *

Այս ծովից այն կողմ օսման թուրքերն են,
Ջրի նկատմամբ նույն իրավունքով.
Օ՜, այնտեղ հայոց բերրի հերկերն են,
Որ մեզնից զավթել են զենք ու զորքով:

Այս ծովից այն կողմ օսման թուրքերն են,
Ափի երկայնքով ձգվող դարանում.
Շատ անազնիվն են, ու գոռ կրքերն են
Պատնեշ դարձրել ու չեն վարանում

Սեղմել ձգանը գոռ, փոթորկածին,
Որ մեջտեղ բերեն պանիսլամիզմը.
Որ սրի քաշեն դեռ հայ մնացածին,
Որ փառքով օծեն իրենց սադիզմը:

Այս ծովից այն կողմ օսման թուրքերն են,
Որ զենք բանեցնել գիտեն լոկ միայն.
Մզկիթ ու մոլլա - նրանց կուռքերն են
Բանականությամբ դատարկ և ունայն:

Ատելությամբ եմ անունը տալիս,
Ու արդ չեմ խորշում իմ այս արարքից.
Այդ Մեծ եղեռնի ցավից է գալիս,
Եվ մեր հողերի գոռ տառապանքից:

1985

* * *

Հայ էլ կա, հայ էլ,

Հայ, հեռու մնա
Վարքից անվայել:

Կարող ես նայել,
Լուռ շրջագայել,
Մտքումդ ոմանց
Հարգել, փայփայել,
Նույնիսկ… հայհոյել:

Ու թե կարող ես
Սիրել, հմայել,
Արա առավել:

Բայց երբեք, երբեք,
Չընչարաշահել:
Հարկ է, որ ապրես
Դու հայավայել:

1986

* * *

Մեր ժողովուրդը քաջ էր, ես գիտեմ,
Բայց դա առաջ էր, երբ բոլորն ի զեն
Ժողովվում էին բակում տաճարի,
Չէին սպասում խոսքի ու ճառի,
Սլանում էին ճակատամարտի՝
Հանուն մայր հողի ու սուրբ հավատի:

Իսկ այժմ, այժմ խելք է բանեցնում,
Երբեմն, նույնիսկ առաջ է անցնում
Իմաստուններից շատ հռչակավոր՝
Գիտություն, արվեստ, պատիվ փառավոր,
Եվ մոռանում է, որ լոկ դրանցով
Չի հարատևի, նույնիսկ աստուծով:

1986

* * *

Ի՞նչ իմանանք,
Կդիմանա՞նք.
Աշխարհը լի
Հազար փորձանք,
Հազար պատեհ
Ու պատահար,

Հազար վերելք,
Վայրէջք-դադար:
Կանչեր, կանչեր
Անարձագանք.
Սուտ ճաճանչներ
Ու քամահրանք:
Էհ, լավ է, որ
Այսքան դեռ կանք,
Թավագլոր
Ընկնենք-գնանք,
Տեսնենք մինչ ուր
Եվ կամ սահման,
Բացված մի դուռ,
Գոց պատուհան
Մեզ կտանի
Մեր էս ճամփեն
Ողջկենդանի,
Սիրով անքեն:
Ի՞նչ իմանանք
Օ՜, մինչև Այն
Կդիմանա՞նք:

1986

* * *

Մենք հրաշքների ծով կարիք ունենք՝
Մեծ երազների իրականացման,
Խորխորատների խաղաղ շրջանցման…
Մենք հրաշքների ծով կարիք ունենք:
Անքեն հոլովվիր, օ՜, մայր տիեզերք,
Մեր մոլորակը գոտկի՛ր, ծիածան…
Մենք հրաշքների ծով կարիք ունենք,
Մեծ երազների իրականացման:

1986

* * *

Հայոց Մեծերի շիրմաքարերին
Անուն-ազգանուն չի արձանագրված.
Օ՜, չեն վստահել բարբարոսներին,
Որ նշխարները մնան չանարգված:

Այդ էլ չի օգնել ու ավիրվել են,
Ու կողոպտվել են, ու անհետացել,

Ու քարերն անգամ գերվել, տարվել են,
Մեծ շիրիմներից հետք չի մնացել:

1986

* * *

Չենք նախատում, հայրենիք,
Որ վշտացնում ես մերթ մեզ.
Քո որդին ենք համեստ, հեզ,
Չենք նախատում, հայրենիք:
Մեծ հաղթանակ քեզ բերինք,
Որ դուրս ելնես ասպարեզ.
Չենք նախատում, հայրենիք,
Որ վշտացնում ես մերթ մեզ:

1986

* * *

Ոչ մի հանաք
Ի՞նչ իմանանք՝
Մինչ այգաբաց
Կդիմանա՞նք:

Գնանք, գնանք,
Ետ չմնանք,
Չկորցնենք
Պատիվ, հարգանք:

Թե դիմանանք,
Չզարմանանք.
Լոկ զգանք, որ
Ապրում ենք, կանք,

Ապրում ենք, կանք:

1986

* * *

Զյունել է սարը,
Ողջ լեռնապարը,
Իսկ ճանապարհը
Կորել է:

Ելել է բուքը՝

Ժայռի արբունքը,
Որպես արցունքը՝
Ծորել է:

Նորեր չեկան…
Մարտերում ընկան…
Մինչ մեր լուսընկան
Նորել է:

1986

* * *

Ճերմակ աղավնիներ են թևածում -
Խաղաղ բարձրերում կապտասուտակ.
Եթերային է՝ երազ մի հստակ…
Ճերմակ աղավնիներ են թևածում:
Ճչալ եմ ուզում - որպես հիացում,
Ու խլրտում է սիրտս կրծքիս տակ…
Ճերմակ աղավնիներ են թևածում
Խաղաղ բարձրերում կապուտակ:

1986

* * *

Թե որ այսպես շարունակվի,
Ու բզկտվենք չարաչար,
Մեր նժարը ցած կհակվի,
Կկործանվեն տուն-տաճար:

Կվերանան հայերն իսպառ
Բոլորից կմոռացվեն,
Սուրբ գրքերը մեր հայատառ
Պահոցից կհեռացվեն:

Եվ փոշեկուլ տաք ու պաղից
Կքարանան¬համրանան,
Ժամանակի կյանք ու խաղից
Անգետ, անմաս կմնան:

1986

* * *

Կայծակում են ու որոտում
Աշնան ամպերը,

Հորդ անձրևում արտ-արոտում,
Բացվում ծերպերը։

Ու պարզվում է կամաց-կամաց
Երկնի կապույտը.
Ներս է մտնում դռներից բաց
Սարերի ցուրտը։

Ու երթիկից վեր է ձգվում
Ծուխը թոնրատան.
Հնդկահավն է բակում փքվում
Հանց ազնվական։

Շտապում է գործն ավարտի
Հոգնած ցերեկը,
Որ երբևէ չընդհատվի
Ծղրիդի երգը։

1986

* * *

Քո իններորդ ալիքին
Դիմացա ես, կյանք,
Հույսս նետած գալիքին -
Տարա ամեն տառապանք։

Գանգատավոր չեղա, ոչ,
Քո և ոչ մի հարվածից.
Ո՞ր հոգածուն «ինքնակոչ»
Պիտի սթափվեր իմ լացից։

Տեղի տվիր, օ՜, դու էլ,
Ետ քաշվեցիր, մտար հուն.
Արարքներով անվայել
Կյանք, մեղքերիդ թողություն։

1987

* * *

Աղմուկներ կան տիեզերքում,
Փայլատակում հրդեհի.
Աստղը աստղին այնտեղ հերքում
Ընդվզումով ամեհի։

Աղմուկներ կան տիեզերքում,
Աղաղակներ աղեկեզ.
Թվում է, թե երկնի վերքում
Հրաբխում է հուր մի կեզ։

1987

* * *

Աշխարհում թուրք կա, թաթար կա,
Մեջները ոսոխ ու պայքար կա.
Հանդիպես, աչալուրջ եղիր,
Դե կյանք է, փորձանք, վթար կա։

Ճամփա է, վերելք կա, դար կա.
Քայլելիս վազք ու դադար կա,
Դե կյանք է, ի՞նչ իմանաս
Դեմդ տարի, թե՞ դար կա։

1987

* * *

Բա՛րձր, բա՛րձր խրոխտ լեռներ,
Անխախտ մույթեր գմբեթակիր,
Աստվածընծա հայոց երկիր…
Բա՛րձր, բա՛րձր խրոխտ լեռներ։
Անգոց դռներ, արահետներ,
Հորիզոններ անափ, անծիր…
Բա՛րձր, բա՛րձր հայոց լեռներ,
Անխախտ մույթեր գմբեթակիր։

1987

* * *

Ոչ, չընկրկեցինք
Դաժան չարի դեմ.
Ենիչարի դեմ
Գոռ մարտնչեցինք։

Փող հնչեցրեցինք,
Կոչ զգաստության.
Մենք իմաստության
Առաջնորդեցինք։

1988

* * *

Անվերջ գոռում ու գոռգոռում,
Ու՞մ են սաստում կամ հորդորում
Երկինքն առած գորշ ամպերը.
Արդ խորհում են, թե՞ մաքառում
Անընկճելի ու անառում
Վեր լեռնացած այս ծերպերը։

Երևի թե նրանք միմյանց
Հասկացել են ու միացած
Մեզ են անվերջ ահ ներշնչում.
Էհ, համբերենք. կամաց-կամաց
Ամպը կանցնի հողմահալած.
Հավատ է պետք ամեն ինչում։

1988

* * *

Հայեր, հայեր,
Թե որ Տերը շրջագայեր,
Տեսներ մերը,
Կվկայե՞ր
Իր մեղքերը,
Բյուր դեպքերը,
Որ մեզ զրկեց
Ամեն լավից,
Բաժին հանեց
Ամեն ցավից։
Հայեր, հայեր,
Այսքան դավեր,
Այսքան ցավեր,
Ու մի օր էլ կհամարեն՝
«Սուտ, անվավեր»…
Հայեր, հայեր,
Հայեր, հայեր։

1988

* * *

Ունեինք հավատ,
Ու այն լավ թե վատ
Պահեց, պահպանեց
Այնպես աննկատ։

Մենք երախտապարտ
Մեր ճակատագրին,
Կուլ չգնացինք
Հեղեղին, հրին:
Օ՜, հավա՜տ, հավա՜տ,
Դու մոր սե՜ր ու կաթ,
Մեր մեջ ապրեցիր
Սուրբ ու անարատ:

1989

* * *

Մեծ նախնիների
Սուրբ նշխարների
Պահապան մեր հող,
Մնացիր գերի
Ձեռքերում բռի
Ավազակ ու գող:

Արդ ինչպես ուզում,
Տանջում են, հուզում
Լավի անկարող,
Դու խաբված նազում,
Դու հիվանդ հազում –
Գրկած մահու դող,

Օ՜, հայրենի հող,
Օ՜, հայրենի հող:

1989

* * *

Օ՜, դու հպարտ,
Օ՜, դու անպարտ,
Ու միշտ մեզ հետ
Հնուց ու ցարդ:

Հայոց հավատ՝
Ջինջ, անարատ.
Երկնագնա
Սուրբ Արարատ:

1989

* * *

Ազերը մերոնց շրջափակել են,
Որտեղ հանդիպել, բռնել, թակել են,
Մտել տները, թալանել, այրել,
Ու չեն խնայել, ու… կրակել են:

Ու՞ր է, թե լիներ դատ ու դատաստան,
Գեթ ազատ շնչեր որբն անապաստան.
Կենտրոնի կամքն է, որ այդպես լինի՝
«Առանց հայերի, կեցցե Հայաստան»:

1989

* * *

Գիր է գրել իր «աջովը»
Վերև նստած Գորբաչովը,
Սպառնում է որդեգրած
Թուրքի շաչ ու շառաչովը:

Թող տա աստված, որ խելքի գա,
Հասկանա, որ թուրքը ագահ
Մի օր պիտի փորձի տիրել
Ռուսի հողը և թագ, և գահ:

1989

* * *

Արդ փոխանակ զարկեն քունքին,
Սկսել են զինել թուրքին:
Մեկ անգամ չէ, որ խաբվել են,
Զղջալու են նորից, կրկին:

Ուշ կլինի, սակայն, արդեն,
Ուժ կդառնա թուրքը ի զեն.
Մեծ ատյանում զինողները
Դեռ թլպատված կկակազեն:

1989

* * *

Նրանք պղծում են գերեզմանները,
Նշխարներն անում արևերես.
Սեփականում են զարդարանքները
Երբեմնի հարսերի՝ լուսերես:

Նրանք պղծում են գերեզմանները,
Հրաշք խաչքարերը ջարդոտում:
Շնագայլերը անվերջ հոտոտում,
Ու չեն դադարում ընդվզումները:

Նրանք պղծում են գերեզմանները:

1989

* * *

Ով անարդար
Քսաներորդ դար,
Չարագործին
Դարձանք ավար:

Դու անկատար,
Անմշակ քար.
Դու մեր վրա
Բիրտ շիրմաքար,

Քսաներորդ դար,
Քսաներորդ դար:

1990

* * *

Օ՜, երդվյալ ֆիդայիններ,
Հավատավոր, քաջակորով.
Դուք մեր հույսը, ուրիշ էլ ո՞վ…
Օ՜, երդվյալ ֆիդայիններ:
Արդ օրհնում եմ վերելքը ձեր,
Մարտնչումը հրով–սրով.
Օ՜, երդվյալ ֆիդայիններ,
Հավատավոր, քաջակորով:

1990

* * *

Ում հետ որ հույս ենք կապել,
Լքել են մեզ ու խաբել.
Ու դեռ խելքի չենք գալիս…
Գինովցե՞լ ենք, մրափե՞լ:

Պահ է, պետք է սթափվել,
Թոթափել կապ ու կապանք.
Ով էլ որ փորձի դավել,
Մեր ճամփին դնի կապանք,

Փույթ չէ, պետք է բարձրանալ.
Կոփվել, պրկվել, կարծրանալ,
Համարումին մեր վայել,
Հասկացնել, չձանձրանալ:

Ու թե ստիպեն մարտնչել,
Երբեք, երբեք չերկնչել.
Ինչպիսի ելք էլ լինի
Չամաչել, այլ շառաչել:

1990

* * *

Թե չլիներ Արարատը,
Գուցե ես էլ գնայի.
Գուցե այնտեղ մնայի,
Թե չլիներ Արարատը:
Չեմ ուրանա իմ հավատը,
Անհավատ սիրտն ամայի…
Թե չլիներ Արարատը,
Գուցե ես էլ գնայի:

1990

* * *

Տագնապում եմ նորից, նորից,
Ալեկոծվում վերստին.
Զոհ է գնում ժողովուրդս
Նենգ կեղծիքին ու ստին:

Դարն այս մուտքից մինչ ավարտն իր
Թաթախված կեղտաջրում,
Արյունածիր ալ մելանով
Իր պատմությունն է գրում:

Գրում, ջնջում, աղավաղում,
Հավաստում է իր օգտին.
Խիճ ու ավազ խառնում, մաղում,
Մութ մտքերով մի հետին:

Տագնապում եմ նորից, նորից,
Չէ որ միշտ, ամեն անգամ
Վշտանում ենք մենք բոլորից՝
Ով դավաճան, անզգամ,

Ով հղում է մեզ կործանում,
Անհետացում, մոռացում.
Մեր վրեժն է արդ կարծրանում
Կամքով վերին՝ Միացում:

1990

* * *

Աստծո անեծք կար դարի ճակատին,
(Գալու օրվանից մինչև ավարտը),
Հետապնդում է նա մեր հավատին,
Չտարբերելով ազնիվն ու վատը:

Տեղի չունեցավ Հայոց մեծ Դատը
Արյուն խառնվեց մանկան սուրբ կաթին.
Պղծությամբ օծվեց նույնիսկ դրախտը,
Ամոթից խամրեց երկնի Ծիր-կաթին:

Աստծո անեծք կար դարի ճակատին,
Մինչ տենդի մեջ է մեր հողահատը.
Օ՜, սպառնալիքը հայոց արմատին
Դեռ չի կասեցվել: Եվ այդ է վատը:

1990

* * *

Թե կարենայի օգնության գայի էս նեղ օրերիդ,
Ոսկեղեն փոշի առատ ցանեի շրշող շորերիդ,
Առաջվա նման ի տես ելնեիր արևածագին,
Փառքդ ծղրտար սրտաճաք սիրով ինչպես մի ծղրիդ:

Թե կարենայի բուժող սպեղանի դնեի սրտիդ,
Որ վերք պատճառեց անճոռնի վարքով դարը այս հտպիտ,
Ու ամեն հայի ալեկոծ հոգում տագնապ հարուցեց,
Վհուկի բերնով բարբաջեց անսուտ կործանում երկրիդ:

Օ՜, ոչ, օ՜, երբեք չի խորտակվելու թռիչքը նետիդ,
Աստծո օրհնանք կա հավերժագնա լուսավոր հերթիդ.

Ոռնացող գայլը կընկնի նետահար, այո, վաղ թե ուշ,
Մենք պիտի լինենք ականատեսը հաղթական երթիդ:

1990

* * *

Ամպերը իջան, իջան,
Պառկեցին ջրերի վրա.
Տարածվեց կապույտ անրջանք,
Ցոլացին աստղերն ակամա:

Գիշերը աղմուկով լցվեց,
Խոսեցին լույսերը բոլոր,
Ասես տիեզերքը ցնցվեց
Ծագերում իր լուրթ-հեռավոր:

Ակնապիշ նայում եմ, նայում,
Շնչում եմ այնպես լիաթոք.
Օ՜, կյանքը, կյանքը հմայում -
Չգիտեմ՝ պատրա՞նք է, ցնո՞ր:

1990

* * *

Ով կողոպտված հայ, իմաստուն եղիր,
Մեծ վճիռներում հաստատուն եղիր.
Միջոց ամբարիր ինքնափրկումի,
Ու միշտ ծխացող Սասնա տուն եղիր:

Գոյատևումի հնար որոնիր,
Բազմամանուկի մորը գովք ձոնիր.
Հանուն հայրենյաց մարտիրոսվողի
Սուրբ հիշատակը ծնրադիր տոնիր:

1990

* * *

Հեգ պապերիս շիրիմները մամռոտել,
Ծածկվել են անունները վիմագիր.
Երևի թե արյան կանչով կարոտել,
Արդ օրհնում եմ նրանց առջև ծնրադիր:

Ծնողներիս ծնողներն են սրբացած,
Որ տագնապած քարերի տակ այս հանգչում.

Յաթաղանի, Ղուրանի դեմ ծառացած
Մինչև այսօր, օ՜, ճչում են ու կանչում:

Գնանք զինվենք, զինավորվենք ու կռվենք,
Պահպան կանգնենք ջրին, հերկին, հավատին.
Մարդ լինելու դասեր տանք ու խրատենք
Երախտամոռ արյունարբու կավատին:

1990

Ջ.Մ.- ին

Արարատը լքում,
Ու՞ր եք մեկնում, հայեր.
Ո՞նց եք հայոց մայրեր
Արարատը լքում:
Դառնության տակ կքում,
Ու՞մ եք կնքում ձեզ Տեր.
Արարատը լքում,
Ու՞ր եք մեկնում, հայեր:

1990

* * *

Խառնակ օրեր են.
Ալեկոծվել են ժողովուրդները.
Տեղն իր չի գտնում երկնային Տերը…
Խառնակ օրեր են:
Արդ մեր նորերն են,
Որ կործանում են գոցված դռները.
Խառնակ օրեր են -
Ալեկոծվել են ժողովուրդները:

1990

* * *

Եթե ունես թշնամի,
Սովորիր ատել նրան.
Անցիր, մի նայիր վրան
Եթե ունես թշնամի:

Նույնն է անում նա հիմի,
Թե որ ծույլ չէ կամ անբան:
Եթե ունես թշնամի,

Սովորիր ատել նրան:

1990

* * *

Դաժան բախտ է մեզ վիճակվել,
Ու այդ բախտին մենք հլու,
Գոռ բեռի տակ թեպետ ճկվել,
Բայց միշտ կամքով ապրելու,
Շտկվել ենք ու մաքառել
Ու ձգվել վեր՝ Արևին.
Սուրբ հայրենին գոհ բարբառել՝
Հնոց պարգևն այդ վերին:

1990

* * *

Մեր Ոսկեդարը
Մնաց էն հեռվում,
Ծխացող բոցը
Անվերջ կեռմեռվում,

Արդ այրում է մեզ՝
Մոխիր դարձնում,
Մեր ինչքը հրկեզ
Չի վերադարձվում:

1991

* * *

Էն լուրթ երկնքից սուրբ լույս էր իջել
Աստվածապարգև այս հողահատին.
Տերը մյուռոնով իր խաչն էր դաջել
Հեթանոս հայի պայծառ ճակատին:

Ու ճառագում է լույսն այդ մինչ էսօր,
Շողարձակվելով բոլոր կողմերում.
Եվ ուր կրակ կա ու բոցն է բոսոր,
Ուր արևներ են ծնվում հողմերում,

Թևաբախում է այնտեղ մեր ոգին
Իր լայնատարած հսկա թևերով,
Ու առյուծածին մոր պես կաթոգին
Փառաբանում է հազար ձևերով,

Իր արծվասիրտ ու հաստատակամ
Բյուր որդիներին արար աշխարհում,
Որ քաջ մնացին անբարոյական
Ու վայրիվերո այս դաժան դարում:

1991

* * *

Տարուբերվում է անտառը հողմից,
Ու ճռնչում են, ճկվում ծառերը.
Օ՜, անպաշտպան են երկրիս սարերը,
Երբ այն փչում է մեզ անհայտ կողմից,
Ասես ձայներ են գալարափողից.
Մթնում մնչում են խորունկ այրերը…
Տարուբերվում է անտառը հողմից,
Ու ճռնչում են, ճկվում ծառերը:

1991

* * *

Ես միշտ քեզ հետ եմ եղել, հայրենիք,
Ոչ մի ակնթարթ չեմ լքել հողդ,
Ինձ է փոխանցվել հողեղեն դողդ…
Ես միշտ քեզ հետ եմ եղել, հայրենիք:
Քեզ միշտ մաղթել եմ լուսեղեն երկինք,
Թող որ շաղոտի արևաշողդ…
Ես միշտ քեզ հետ եմ եղել, հայրենիք,
Ոչ մի ակնթարթ չեմ լքել հողդ:

1991

* * *

Օ՜, շիկանում է Երկրի երկունքը,
Ուր որ է հիմա պիտի երկնի.
Շանթն իր շեղումը պիտի կրկնի
Օ՜, շիկանում է Երկրի երկունքը:

Աշխարհ պիտի գա հրաշամանուկը,
Ծով մարդկությունը պիտի բերկրի…
Օ՜, շիկանում է Երկրի երկունքը,
Ուր որ է հիմա պիտի երկնի:

1991

* * *

Դեռ ծխում է մեր եղեգան փողը,
Ու մերթ կայծեր է տենդով դուրս նետում,
Մինչ սրտերումս բոց է վետվետում…
Դեռ ծխում է մեր եղեգան փողը:
Եռում է ջուրը, այրվում է հողը.
Խուլ դղրդյունն է նոր օր ավետում…
Դեռ ծխում է մեր եղեգան փողը,
Ու մերթ կայծեր է տենդով դուրս նետում:

1991

* * *

Իմ սրբասուրբ հայրենիք,
Դու Քրիստոսի պես խաչված,
Դու Քրիստոսի պես աստված,
Իմ սրբասուրբ հայրենիք:
Ինչ ունեինք, քեզ բերինք.
Դու մեր արյունով հաստված.
Իմ սրբասուրբ հայրենիք,
Դու Քրիստոսի պես խաչված:

1991

* * *

Ոչ, ոչ, վախճան ողբերգական չենք ունենա,
Օ՜, մենք պետք է հավիտյանս հարատևենք.
Մեր գեների ճանապարհը հեռագնա
Պիտի մեր սուրբ ու բոց սրտի արյամբ ներկենք:

Ու այդ արյամբ ամեն գարնան ծաղկեն պիտի,
Պտղաբերվեն այգեստանները հայրենի,
Ի հեճուկս գայլաբարո նենգ հտպիտի,
Որ մարդ չէ դեռ, գազան է նեռ ու վայրենի:

1992

* * *

Ամենքիս մեջ աստվածը կա,
Ու ամենքս էլ արարող ենք,
Հավաստի ենք, Տերը վկա,
Մենք աշխարհ ենք, ջուր ենք, հող ենք:

Լույսն է մեզ հետ արեգական,
Մենք հեթանոս, կրակապաշտ ենք.
Մեզ չի լքում վառ լուսընկան,
Մենք ի ծնե խաղաղ-հաշտ ենք:

Օրերի հետ ու հավերժի
Համաքայլ ենք ու համառ ենք,
Ու հավատը մեր չենք դրժի,
Ունեցածով խանդավառ ենք:

Մենք եղել ենք, կանք, կլինենք,
Մեզ չեն կարող բերել ծնկի,
Աստվածաստեղծ, աղոթող ենք,
Մեր բուրվառում բուրմունք խնկի:

Մենք չգիտենք հուսալքվել,
Նույնիսկ, նույնիսկ երբ պարտվում ենք,
Սովորել ենք մերվել, պրկվել,
Սուտ է, թե մենք ավարտվում ենք:

Օ՜, մենք գիտենք բազմապատկվել,
Հարատևել սերունդներով,
Աստծո կամքին հպատակվել,
Թևել, անցնել անդունդներով:

Ամենքիս մեջ աստվածը կա,
Ու ամենքս էլ արարող ենք.
Հավաստի ենք, Տերը վկա,
Մենք աշխարհ ենք, ջուր ենք, հող ենք:

1992

* * *

Մենք քեզ հավատացինք, ով երկնավոր,
Վստահեցինք մեր ճակատագիրը,
Մեր հողը, ջուրը, լեզուն, մեր գիրը…
Մենք քեզ հավատացինք, ով երկնավոր:
Եվ հույսով եղանք, ասես բախտավոր,
Մինչ հռչակվեց մեր եղեռնագիրը.
Մենք քեզ հավատացինք, ով երկնավոր,
Վստահեցինք մեր ճակատագիրը:

1992

* * *

Ապավինելն աստծուն
Մեզ փրկություն չբերեց.
Ոչ ոք ճիշտ չհամարեց
Ապավինելն աստծուն:
Մեզ քամահրեց ծաղրածուն,
Իսկ հավատը կործանեց.
Ապավինելն աստծուն
Մեզ փրկություն չբերեց:

1992

* * *

Ամպամպոտել է հայոց կապույտը,
Ուր որ է պիտի կարկուտ տեղա.
Խուճապահար է հանդիս արտույտը…
Այդ քո՞ արարքն է, օ՜, Տեր իմ, մեղա:

Ուր որ է պիտի կարկուտ տեղա.
Անժամանակ է սաստկանում ցուրտը…
Առ աստված պարզիր աղոթքն, աբեղա,
Վրա է հասնում իրիկնամուտը:

1992

* * *

Շատ գեղեցիկ է իմ հայրենիքը՝
Ամեն ինչ այնպես մոտ է - հարազատ.
Դրա համար է մեզ խանդում ինքը՝
Աստըծո ոգին - անկաշկանդ, ազատ:

Ոգին այդ հաճախ իջնում է երկիր,
Ըմբոշխնում ծաղկած ծիրանի բույրը.
Ապա համբառնում կարոտով անծիր՝
Ծաղկաթերթերին թողած համբույրը:

1993

* * *

Օ՜, թող հավատամ հավերժությանդ,
Ով աստվածածին իմ հեգ ժողովուրդ,
Նենգ ընչաքաղցն է կից հարևանդ,
Արարքներով իր խենթ ու անխորհուրդ:

Քեզ միշտ օգնական մեր Տերը վերին,
Որդիքդ՝ պատրաստ մարտիրոսվելու.
Զենք ավելացրու իր ծանր բեռին -
Արժանի լինի Հայ համարվելու:

1994

* * *

Քանի սերունդ կործանվեց
Մեր էս դարում խենթ-անկարգ,
Տերերն հոռի ու վայրագ…
Քանի սերունդ կործանվեց:

Դարն այս վերուստ անիծված,
Դարը անտեր ու անթագ…
Քանի սերունդ կործանվեց
Մեր էս դարում խենթ-անկարգ:

1994

* * *

Հպարտացիր, որ հայ ես,
Արդարացրու քո վարքով
Հայընտիր արքուբարքով…
Հպարտացիր, որ հայ ես:

Տերը սեր կընծայի քեզ,
Դափնեպսակ՝ իր կարգով…
Հպարտացիր, որ հայ ես,
Արդարացրու քո վարքով:

1994

* * *

Ակնթարթ է տիեզերքի
Հոլովույթում դարը մեր,
Ավազաքար լուրթ եզերքի
Հողագունդը մեր այս ծեր:

Ու մենք փոշի հողմի շրթին
Կանք, թե չկանք, հոգ չէ մի.
Տիեզերքի շփոթ երթին
Ի՞նչ տագնապներ կան հիմի:

1994

* * *

Հեռու մեկնողներ, բարի վերադարձ,
Այս հայրենիքն է ձեր պապենական,
Այստեղ ձեզ կյանք է շնորհվել անվարձ
Եվ շունչ հաղորդվել, սեր անապական:

Դուք հայ եք ծնվել, հայ էլ մնացեք,
Եվ հպարտացեք նաև դրանով,
Մինչև աշխարհի ծայրը գնացեք,
Բարին արարեք անեղծ անունով:

Ու … վերադարձեք, ու … վերադարձեք,
Հայրենիքը ձեր մեղքը կքավի,
Ինչպես բաժանվել, այնպես միացեք
Ու արժանացեք լավի, համբավի:

1995

* * *

Լուրթ, երկնամերձ այս հողում
Բազում սրբեր են հանգչում
Նրանք եկան-գնացին
Խոնարհվեցին, հող դարձան
Ու նրանցով հող ու հերկ
Սարսուռով մի սրբացան…
Լուրթ, երկնամերձ այս հողում
Բազում սրբեր են հանգչում:

Այս հողից են մերթ կայծեր
Ու մերթ աստղեր ճաճանչվում,
Այդ նրանք են, որ հառնում
Դառնում շռայլ սերմնացան:
Լուրթ, երկնամերձ այս հողում
Բազում սրբեր են հանգչում
Նրանք եկան-գնացին
Խոնարհվեցին, հող դարձան:

1995

* * *

Բարեկամության առհավատչյա
ձեռքսեղմման պահին

Մենք արարեցինք մի աստվածային
հոգու վեհություն.
Արդ ինչ էլ ցցվի մեր դեմ ահազդու
ձիգ ճանապարհին,
Օ՜, միևնույն է, աստծո օրհնությամբ
հասնելու ենք տուն:

1995

* * *

Անհավասար է բաշխում
Տերն իր բարիքները,
Կարիք-չարիքները
Անհավասար է բաշխում:

Դրանով էլ նա իշխում,
Կոծկում իր մեղքերը…
Անհավասար է բաշխում
Տերն իր բարիքները:

1996

* * *

Գոյատևելու համար դարերում
Հայերին հզոր հայրենիք է պետք,
Ճգնաժամերում գտնել ստույգ ելք՝
Գոյատևելու համար դարերում:

Վախկոտին, թույլին սպանում՝ չեն ներում,
Չի օգնում ողբը, օ՜, սրտակեղեք.
Գոյատևելու համար դարերում
Հայերին հզոր հայրենիք է պետք:

1996

* * *

Պատսպարիր մեզ, Տեր
Քո լուրթ հովանու ներքո,
Մենք միշտ աղոթքը քո,
Պատսպարիր մեզ, Տեր:
Գիտես, որ կարևեր
Նքում ենք անգոց վերքով…
Պատսպարիր մեզ, Տեր
Քո լուրթ հովանու ներքո:

1996

* * *

Փակագրեր կան, որ չեն վերծանվել,
Թե մեր բերդերը ոնց են կործանվել,
Ովքեր են բացել գոց դարպասները,
Որով խուժանը ամրոց է լցվել:

Ու հաշվեհարդար տեսել անողորմ
Ու ավեր, ու մահ սփռել ամեն կողմ,
Ու չեն խնայել մոր ու մանկանը,
Զերթ անապատի խուլ ավազահողմ:

Ծաղկած շենները ողջ ավերակել,
Լի ամբարները մաքուր դատարկել,
Ու սովի մատնել մի ողջ ժողովուրդ,
Բայց և իրենց են, օ՜, պախարակել:

1996

* * *

Օ՜, սուրբ կանոններ սահմանված վերուստ,
Դարձաք օրենքներ անբեկանելի,
Բայց ցավոք, ցավոք թերիներով լի…
Օ՜, սուրբ կանոններ սահմանված վերուստ:

Թե գոյատևեք մինչև նոր Գալուստ,
Մինչ որ սահմանվեն սահմանք տանելի…
Օ՜, սուրբ կանոններ սահմանված վերուստ,
Դարձաք օրենքներ անբեկանելի:

1996

* * *

Ծիծեռնակներ, եկեք,
Ձեր ժամանակն է.
Այստեղ, թե այդտեղ
Նույն արեգակն է:

Ծիծեռնակներ, եկեք,
Այս նույն առվակն է,
Այս նույն տնակն է.
Ծիծեռնակներ, եկեք:

Ձեր երգը երգեք,
Նույն սարքն ու կարգն է.
Ծիծեռնակներ, եկեք,
Ձեր ժամանակն է:

1997

* * *

Պանդուխտ հայերը չվերադարձան,
Օտարության մեջ տուն ու տեղ դրին,
Դարձի կարոտը ծամեցին լռին…
Պանդուխտ հայերը չվերադարձան:
Սուրբ հայրենիքից, օ՜, օտարացան,
Վարժվեցին լատին գրքին ու գրին…
Պանդուխտ հայերը չվերադարձան,
Օտարության մեջ տուն ու տեղ դրին:

1997

* * *

Պանդուխտ հայերը չվերադարձան,
Մնացին այնտեղ, ուր մեկնել էին.
Հիմնավորվեցին, բնիկներ դարձան,
Ճանապարհներին շատ հոգնել էին:

Պանդուխտ հայերը չվերադարձան,
Սուրբ հայրենիքը հանձնեցին բախտին.
Հարազատ էին և օտարացան.
Տերն այդ էր գրել նրանց ճակատին:

Այս հողի տերը նորից պակասեց.
Հաշտվենք, որ նրանք արդեն ուծացան.
Աշխարհն իր գործը արեց ու մարսեց…
Պանդուխտ հայերը չվերադարձան:

1997

* * *

Հայերենի անգերազանց սուրբ բառերով
Երախտապարտ, օ՜, քեզ սիրով փառաբանեմ.
Ձեռքդ բռնած մի օր ինձ հետ դրախտ տանեմ
Հայերենի անգերազանց սուրբ բառերով:

Մտքով կանցնեմ շատ ծովերով ու սարերով,
Ու տաղտուկը քո օջախից դուրս կվանեմ.
Հայերենի անգերազանց սուրբ բառերով,
Օ՜, քեզ սիրով, երախտապարտ փառաբանեմ։

Հայն անդորր է միշտ տենչացել,
Մինչ՝ խենթացել, ալեկոծվել.
Հազար տեղից ծեծկվել, խոցվել
Ու անհարկի նենգ քարկոծվել։

Հայն աստծուն սիրտ է բացել
Հազարերանգ սեր խոստացել
Մեկ է, էլի մերկ մնացել
Եվ ողջ կյանքում չի տաքացել։

1998

* * *

Կոյուն թուրքերը՝ քոչվոր¬խաշնարած,
Երբ ներխուժեցին աշխարհը հայոց,
Ցանեցին համակ հուր, կրակ ու բոց…
Կոյուն թուրքերը՝ քոչվոր¬խաշնարած։
Անբավ սփռեցին մահ՝ համատարած
Չխնայեցին ծեր, կին, օրորոց…
Կոյուն թուրքերը՝ քոչվոր¬խաշնարած,
Օ՜, ներխուժեցին աշխարհը հայոց։

1998

* * *

Հայկ ու Բելի պատերազմում
Հայկը հաղթեց, Բելը՝ պարտվեց.
Դրանով էլ վեճն ավարտվեց
Հայկ ու Բելի պատերազմում։
Հայկը հայոց գահին բազմում,
Այն, որ հետո մեզ ավանդվեց…
Հայկ ու Բելի պատերազմում
Հայկը հաղթեց, Բելը՝ պարտվեց։

1998

* * *

Մեր աղբյուրները ընդերքից բխող,
Որ ցոլցլում են վառ արևաշող,

Կյանք են ընծայում և երջանկություն,
Եվ անանց կորով, քանքար արարող:

Մեր աղբյուրները ընդերքից բխող
Ինչ փույթ, թե մի քիչ ձայնեղ, աղմկող,
Մաքրամաքուր են, սուրբ են, զվարթուն,
Որպես հողը մեր, հերկը հավերժող:

1998

* * *

Հազարամյակի սրբազան շեմին,
Արձանագրում ենք սրբատաշ վեմին,
Որ մեզ պարտք մնաց քսաներորդ դարը
Եվ այն չենք զիջում մենք ամենևին:

Պետք է կայանա Մեծ դատաստանը,
Մենք վերստանանք մեր Հայաստանը.
Որ կրկին չարին իշխի արդարը,
Որ կրկին ծաղկի հայոց Ոստանը:

1998

* * *

Եփրատի ձախ ափը մերն էր,
Հայը իր հողի տերն էր,
Աշխարհ պահողը սերն էր
Եփրատի ձախ ափը մերն էր:
Հուռթի դաշտեր, ցորյան արտեր,
Ճանապարհներ սարերն ի վեր
Թուղպեր, ամպեր անձրևաբեր.
Հուռթի դաշտեր, ցորյան արտեր,
Հայ ռամիկը սպասում է դեռ.
Բազմապատկել հույսե՛ր, լույսե՛ր.
Դղրդում են սարեր, ձորեր...
Հայ ռամիկը սպասում է դեռ:

1999

* * *

Կարա¬կոյուն թուրքերը
Հայերին, օ՜, չեն տանում.
Հենց ընկնում են ձեռքները՝
Թաքցնում են, սպանում:

Ատում են և հույներին,
Թշնամիներ են արյան.
Մահ է տենչում հույն գերին
Այնքան տանջում են նրան։
Թուրքը կառչել է ամուր
Հայի, հույնի հողերին,
Հին արարքով անմաքուր,
Հատուկ հմուտ գողերին։
Պարտք ու մուրհակ չեն ճանաչում,
Քշել են տան տերերին.
Մոռացել են, չեն ամաչում
Մորթված մանկանց, ծերերին։
Թուրքն ատում է հայերին,
Թուրքն ատում հույներին.
Հույսը ստին ու կեղծիքին
Հատուկ գողին, նեռերին։

1999

* * *

Որտեղ որ թուրք, այնտեղ կռիվ,
Գոռ պատերազմ մի անողոք.
Գաղթականներ ցաք ու ցրիվ.
Ալան¬թալան, ցավ ու բողոք։
Հարևանի հողն են ուզում,
Հրով, սրով ու արյունով.
Այսպես անվերջ, օ՜, ընդվզում.
Համաճարակ ու քաղց ու սով։

1999

* * *

Օ՜, բերդապատեր մեր ամրոցների,
Դուք վերջը¬վերջո տեղի եք տվել,
Մահ եք ընդունել, բայց երբեք պարտվել,
Օ՜, բերդապատեր մեր ամրոցների։
Ճարակ եք դառել հրե բոցերի,
Ծխասյուներով երկինք համբարձվել.
Օ՜, բերդապատեր մեր ամրոցների,
Դուք վերջը¬վերջո տեղի եք տվել։

1999

* * *

Թուրքը հողի գինը գիտի,
Ամենուրեք հող է զավթում.
Բնիկները ստիպված գաղթում...
Թուրքը հողի գինը գիտի։
Աշխարհը երբ պիտի դատի
Անօրենին այդ անպատում,
Թուրքը հողի գինը գիտի,
Ամենուրեք հող է զավթում։

1999

* * *

Ես մի աղբյուր եմ կանգնել մեր գյուղում
Սուրբ հիշատակին զոհված քաջերի.
Խմողի սրտի պապակն է մեղմում
Մեղմ զովությունը ակնաբուխ ջրի։
Ջրի հոսքն այժմ մեկ¬մեկ դադարում
Տներն են տանում... նաև գոմերը...
Հարգանք տածեցեք լուսավոր դարում,
Որ ներկա մնան հիշատակները։
Երբ քարակերտ է կանգուն կոթողը,
Ուրեմն սուրբ է, պահպանել է պետք.
Օ՜, շնչավոր է հայրենի հողը
Մեր հողին, ջրին արժանի եղեք։

2000

* * *

Մութ էր, արևը չերևաց,
Երկինքը ամպ ամպամոտ էր.
Ես տրտմությանս մերված.
Սիրտս լիքը կարոտ էր։

Հայրենիքս էր գերված
Վերև, ներքև որոտ էր.
Սրբություններն ավերված,
Դաշտ ու արոտ քարոտ էր։

Հեյ¬հեյ, հեյ¬հեյ, Տեր Աստված,
Տվածդ վեհերոտ էր,
Ճակատագիրն անիծված
Նենգ էր ու գարշահոտ էր։

2000

* * *

Այո, մերն է Արարատը,
Փույթ չէ, գնալ¬գալ չունենք,
Կարոտում ենք, հառաչում ենք,
Այո, մերն է Արարատը։
Ճամփեն փակել է կավատը,
Բայց դե էլի կանչում ենք,
Այո, մերն է Արարատը,
Փույթ չէ՝ գնալ¬գալ չունենք։

2000

* * *

Ինչ լավ է, որ աշխարհը կա.
Այն անսահման գեղեցիկ է.
Նայիր, ինչպես թափանցիկ է.
Ինչ լավ է, որ աշխարհը կա։
Ինչու՞ մնալ, օ՜, բացակա,
... Ավա՜ղ, պահը հպանցիկ է.
Ինչ լավ է, որ աշխարհը կա,
Այն անսահման գեղեցիկ է։

2000

* * *

Մի քիչ էլ մենք մեզ գովենք
Ու գիտակցենք, թե ով ենք.
Մեզ հիշող, նշող չկա.
Մենք՝ մեր փորձով, գործով ենք։
Մենք թե ցամաք, թե ծով ենք.
Մեր ջրով, մեր հողով ենք...
Մեր վար ու ցանքում մաճկալ,
Մենք մեր գլխին ամպհով ենք։

2000

* * *

Մի՛ թող, օ՜, մի՛ թող քո հայրենիքը,
Որբության մի տար քո ընտանիքը.
Անեծքով է լի օտարի հողը,
Նա է ներարկում քեզ ահուդողը։

Քեզ չի գոհացնի օտարի հացը,
Ու չի ցամաքի աչքերիդ թացը.

Դու մեղք ես գործում օջախիդ հանդեպ.
Այն քեզ կխոցի առմիշտ, անվրեպ։

Մի թող, օ՜, մի թող քո հայրենիքը,
Որբության մի տար սուրբ ընտանիքը։

2000

* * *

Պանդխտության են մեկնում
Հայերը տնով¬տեղով,
Ասես քշվում հեղեղով...
Պանդխտության են մեկնում։

Ոչ, փառքեր չեն հավակնում,
Ոչ պալատներ կանթեղով.
Պանդխտության են մեկնում
Հայերը տնով-տեղով։

*

Սիրտս կտրատվում է,
Էս ու՞ր են մեկնում.
- Հայրենիքն ավարտվում է,
Ով ու՞մ է հեգնում։

2000

* * *

Մեկուկես միլիոն հայ է մեկտեղվել Ամերիկայում,
Մեսրոպ Մաշտոցը այնտեղ ծպտվել, նրանց է նայում,
Թե ինչ լեզվով են ասում ու խոսում, գրում, բարբառում.
Մեկուկես միլիոն հայ է մեկտեղվել Ամերիկայում։
Մեր այս վիճակը ինչ է վկայում,
Ինչ է լինելու մոտ ապագայում.
Վերադարձ չկա հայրենի սուրբ տուն...
Մեսրոպ Մաշտոցն է լուռ շրջագայում։

2000

* * *

Օ՜, ուրիշ է մեր արևը,
Զուլալ ջուրը, արդար հողը.
Օրհնանքով լի վարն ու վերը,
Մեր ծիրանն ու մեր խաղողը։
Դեղձ ու նուռը, տանձ, խնձորը

Այս ամենը, այս բոլորը,
Օրհնված մեր ամեն օրը
Եվ դրախտի անգոց դուռը։

2000

Հայաստան

Այս այն երկիրն է
Ուր Արարատ կա,
Նոյան տապան կա
Ձյունով զմռսված.
Այնտեղ երբեմն իր էջքն է գործում
Նախաստեղծ Աստված...
Այս այն երկիրն է
Ուր Արարատ կա։

2000

* * *

Հայերը վերուստ ստացան շնորհք և քանքար և գեն.
Ցանկացած պահին կարող են երկնել ինչ որ փափագեն.
Մինչ չեն մեկտեղվում, չեն համակերպվում, իրար չեն գալիս,
Օ՜, այդ բոլորը պայման է վերին, որ իրենց հարգեն։

Բանն էլ հենց այն է, որ երբ հարգում են, հաշվի են նստում,
Ընդառաջում են պահանջ¬պայմանին, նաև հավաստում,
Որ թերացել են տերությունները մեծ ու բախտորոշ,
Որ մեղքեր ունեն, որ «մոռացել» են և պարտք և խոստում։

2000

1918 թիվ (Ղարաքիլիսայի ճակատամարտը)

Գյուղիս հանդերում ճակատամարտ էր,
Մեր բնագիծը կանաչած արտ էր,
Թուրքը եկել էր, ուզում էր զավթել,
Տեղանքն անհայտ էր, խնդիրը բարդ էր,
Նրան թվում էր այս խաղաքարտ էր,
Մեր սար ու ձորը նրան թակարդ էր,
Հենց այստեղ էր որ, օ՜, նա ջախջախվեց
Խայտառակ երթի վերջին ավարտն էր։

2001

* * *

Բեղավոր,
Մեր ցավ ու կրակի համար,
Տառապանքների համար անհամար
Դու ես մեղավոր։
Բեղավո՛ր,
Մեր կորուստների համար անսովոր,
Մեռյալների համար հին ու նոր
Դու ես մեղավոր,
Դու ես մեղավոր,
Բեղավոր։

2001

* * *

Եփրատի ձախ ափը մերն էր,
Հայը Մեծ Հայքի տերն էր.
Տասնյոթի փետրվարին
Սահմանի տերը ռուսն էր։

Հեղաշրջմամբ նենգ, նկուն,
Տապալեցին Կերենսկուն.
Ու զորքը ետ քաշեցին...
Օ՛, ճառեր, ճառեր փքուն։

Թուրքը մտավ Հայաստան
Վերանվանեց Տաճկաստան.
Հայը ցրվեց աշխարհով
Մեղավորն՝ անդատաստան։

2001

* * *

Գործընկերներս շինարարներ էին՝
Ճարտարապետներ, կառուցողներ հմուտ.
Ճաշակ ունեին, ունեին խիղճ ու գութ,
Գորընկերներս շինարարներ էին։
Նոր տեսք տվին, ջերմ շունչ Երևանին,
Կոթողները ժպտում են սիրով անսուտ.
Գործընկերներս շինարարներ էին՝
Ճարտարապետներ, կառուցողներ հմուտ։

2001

* * *

Ես Ամբերդ եկա, որ Արարատին այստեղից նայեմ.
Հնուց է հայտնի «Բարձրը բարձրից է բարձր երևում».
Մեր միտքն ու հոգին նա է սատարում, անխոնջ արևում,
Ես Ամբերդ եկա, որ Արարատին այստեղից նայեմ։
«Ու քանի նա կա՝ Հայաստանը կա» պիտի վկայեմ.
Ժամանակները անակնկալներ հաճախ են բերում.
Ես Ամբերդ եկա, որ Արարատին այստեղից նայեմ,
Հայտնի բան է, որ «Բարձրը բարձրից է բարձր երևում»։

2001

* * *

Ով դու մեծագույն հզոր բնություն,
Ով աստվածաստեղծ երկիր մոլորակ,
Շնչավորների օջախ, տեղ ու տուն,
Ուր ջուր կա, օդ կա, արև կա կրակ։

Ոչ, չէին լինի ոչ մարդ, ոչ գազան.
Ոչ էլ թռչուններ թևարձակ ճախրող
Ու ոչ էլ ձկներ տարբեր, զանազան
Օ՜, ծնող, սնող, սուրբ¬սրբոց դու հող։

Գուրգուրիր, ով մարդ, սիրիր ու հսկիր,
Քո պահպանության կարիքն ունի նա.
Սուրբ հայրենիք է նա քո թագակիր,
Թող, որ անվթար դարեդար մնա։

2001

* * *

Այս հողում պիտի միշտ հայեր ապրեն,
Այստեղ են նրանք լույս աշխարհ եկել.
Այս աշխարհին են կյանքները տալիս,
Այս հողում պիտի միշտ հայեր ապրեն։
Պիտի երկարեն, պիտի վերապրեն,
Ըմբոշխնեն կյանքը որպես մեղրամիս.
Այս հողում պիտի միշտ հայեր ապրեն,
Այստեղ են նրանք լույս աշխարհ գալիս։

2001

Վրաց կոլեգաներին

Ախր, դուք Իշխան ե՞րբ եք ունեցել,
Որ անկոչ եկել, մերին տիրացել.
Ձեր կոթողների շարքում գրանցել,
Ախր, դուք Իշխան ե՞րբ եք ունեցել։
Արդ ինքնահավան նորից թնդացել,
Դժվար օրերին չարախնդացել...
Ախր, դուք Իշխան ե՞րբ եք ունեցել,
Որ անկոչ եկել, մերին տիրացել։

2001

* * *

Օրերիս գրքում քսաներորդ դարն է,
Օրերիս գրքում սարերի սարն է.
Հայը թուրքերի անտեր ավարն է
Օրերիս գրքում քսաներորդ դարն է։
Մեր շիրմահողին ծանրացած քարն է,
Կոկորդնիս խրված նույն Ավարայրն է.
Օրերիս գրքում քսաներորդ դարն է,
Սիրտը հոշոտված սարերի սարն է։

2001

* * *

Առավել խոր, քան կարոտը
Մի այլ զգացում, ո՛չ, չկա.
Քան գարնան ամպի որոտը
Մի այլ զգացում, ո՛չ, չկա։
Հայրենիքի, մոր ու սիրո
Կարոտը սահման չունի.
Այն հորձանք է անկաս հրո
Պանդուխտ մեկնող թռչունի։

2001

* * *

Հայը երբեմնի հայրենիք ուներ,
Սահմանն անցնում էր վերին Եփրատով.
Հայը ապրում էր վաղվա հավատով…
Հայը երբեմնի հայրենիք ուներ։
Մեծ հայրենիք էր, այն տեղ ու տուն էր,
Ապահովված էր իր լավ ու վատով.
Հայը երբեմնի հայրենիք ուներ,

Սահմանն անցնում էր վերին Եփրատով։

2001

* * *

Թուրքը զավթել է, սահմանում կքել,
Մինչ հայը ահից տուն-տեղը լքել,
Արար աշխարհով ցրվել ծայրից ծայր,
Եւ նրան ոչ ոք դեռ չի ամոքել։
Ամենայն գանգատ նենգ թուրքը հերքել,
Իրավունք, օրենք հեգնել է-թքել.
Աշխարհը անտեր, լիքը գայլ, գազան,
Մենք որքան ձայնել, չեն արձագանքել։

2001

* * *

Ու Նոյը իջավ գագաթից Մասյաց,
Փույթ չէ՝ տապանը վերևում մնաց.
Ստորոտ իջավ իր գերդաստանով
Ու ցրիվ եկավ ողջ Հայաստանով։

Հայաստանից դուրս՝
Մոտ Վրաստանով
Եվ Հնդկաստանով,
Եվ Չինաստանով,
Հաբեշստանով։

Նրանք ձուլվեցին տեղացիներին,
Գույներ փոխեցին, աչք, ականջ ու քիթ.
Դարձան տեղացի, չքնաղ հավք ու վիթ.

Հողը հերկեցին, սերմեր ցանեցին
Գիշակերներին հեռու վանեցին.
Շենացրին հողը իրենց արարքով,
Միշտ բարյացկամ սրտով ու հոգով։

2001

* * *

Հայրենի հող, արևաշող,
Սուրբ ցորյանի հաց արարող
Դու քո որդոց անհուն սիրոյն
Արևակալ, հայրենի հող։

Նշխարները մեր պահպանող,
Խլուրդներից պաշտպանող,
Հավերժին ու Աստծուն միտված
Հայրնիք իմ, հայրենի հող։

2001

* * *

Օ՜, մեզ պետք չեն ձեր փողերը,
Վերադարձրեք մեր հողերը։
Անհայրենիք ու առանց հող,
Կենդանու պես միշտ սողեսող,
Ահով, մահով, զրկանքներով
Կերակրվում փշրանքներով
Հեռուներում անապահով
Անթագավոր ու անգահավոր
Փակուղի է մտնում ճամփեն
Գայլ ու գազան մեզ կլափեն,
Թե չունենանք հայրենի հող,
Մենք կկորչենք, օ՜, անկարող։

2001

* * *

Բարձր բազումի զմրուխտե հովտում
Գյուղ իմ հայրենի, նազանքով փռվել…
Քո մասին ինչու՞ երգեր չեն գրվել
Բարձր բազումի զմրուխտե հովտում։
Օ՜, քեզ հաճախ եմ տենչում, կարոտում,
Գրկել եմ ուզում սիրով առավել…
Բարձր բազումի զմրուխտե հովտում
Գյուղ իմ հայրենի, նազանքով փռվել…

2001

* * *

Անհանդուրժելի, օ՜, անտերություն,
Մի՞թե այդ դու ես՝ մեր նոր տերություն.
Ուժդ չի՞ պատում, որ կարգի բերես,
Արդարությունը իշխի ամենուն։

Բութ բյուրոկրատիան դարձել հաստատուն,
Անաշխատասեր, անուղի, անհուն.
Որպես կեղտաջուր պղտոր, գարշահոտ

Տես չհեղեղի՝ քշի տեղ ու տուն։

2001

* * *

Է՜, հայրենիք, հայրենիք,
Քեզ ուզեցինք նորոգել,
Ծարավ դաշտը ոռոգել.
Դու անտեղի չարացար,
Երաշտ արիր, չորացար։
Հույս ու հավատ սպառեցինք,
Էս ձյուներում սառեցինք,
Աչք ենք տնկել՝ գա գարուն,
Ջրով լցվի չոր առուն,
Հոգիներս լիանա,
Տաք ու ցրտին դիմանա։
Ինչ ասես, որ մենք չարինք,
Բացառելու գոռ չարիք.
Է՜, հայրենիք, հայրենիք։

2001

Օրեր, տարիներ

* * *

Նավակ, իմ նավակ,
Տես, ալիքն այնտեղ
Փրփրաբաշ շքեղ ծաղիկ է փնջում,
Ուրախ քրքջում.
Է՞ր ես ափունքին գամվել ու ննջում,
Ի՞նչ ես անրջում:

Նավակ, իմ նավակ,
Բաց առագաստդ,
Թող քշի լաստդ հողմը համարձակ
Հեռուն¬հեռարձակ,
Ուր ղողանջում է անլուր մի զանգակ՝
Հնչու՛ն, կապուտա՛կ:

Նավա՛կ, իմ նավակ,
Բա՛ց առագաստդ:

1936

* * *

Իմ լուսամուտի ապակու վրա՝
Սառնամանիքը անտես մատերով
Ճերմակ վարդեր է նկարում ահա,
Բացվող ծաղիկներ շքեղ թերթերով:

Այս ո՞ր գարունքի բացված վարդերն են,
Այս ո՞ր դաշտերի շող ծաղիկները,
Որ տարիներ անց ահա եկել են,
Անխոս պարզել են պաղ թերթիկները:

Ավա՛ղ, հալվում են, ու չկան ահա.
Արևը շոյեց, համբուրեց, տարավ.
Նորից ծանրացան լուռ սրտիս վրա
Հուշեր, սերս կարոտ ու ծարավ:

1942

* * *

Էյ, քաջ որսկան,
Որ զարկեցիր ու երկնքից ընկավ ցին,

Որ ճնճղուկին ճիրաններից հանեցին,
Ի՞նչ ստացավ ճնճղուկը քո արարքից,
Երբ վաղուց էր հոգին թռել աշխարհքից։

Եվ որսորդը տվավ մեկին պատասխան՝
- Թող ցինն իրեն, օ՜, չկարծի շահ ու խան։

1943

* * *

Եղեգնուտում տարին մեկ
Նոր եղեգ է բարձրանում,
Հինն ընկնում է հոգնաբեկ,
Նորը՝ անվերջ թանձրանում։

Այդպես է կյանքն օրրանում
Հանց եղեգնուտ նորանում։

1943

* * *

Մեծ ժամանակի այս մեծ պատառը մեզ էր հատկացվել,
Մենք էլ մեր կյանքը առանց մնացորդի և ափսոսանքի
Դարձրինք համակ
Արյուն ու կրակ
Ու մեր կնիքը առհավետ դրինք նրա դրոշին,
Որ տարեգրքին,
Էջին ու հենքին,
Անգութ չնստի գալիք դարերի մոռացման փոշին։

Մեծ ժամանակի այս մեծ պատառը մեզ էր հատկացվել,
Բայց ո՞վ իմանար այսքան անհնար և վայրիվերո
Փոթորիկների
Եվ մրրիկների
Միջով պիտ անցներ մարդկային ցեղի այս հեգ սերունդը,
Որ անշեջ հրով,
Անզիջում սրով
Պիտի գար, փրկեր
Մոլորակը մեր,
Որ չգլորվեր տիեզերական հրո անդունդը։

Մեծ ժամանակի այս մեծ պատառը մեզ է հատկացվել,
Ու մենք էլ ահա հայացքներս բիլ հառած գալիքին,
Նրանով սերված,

Հրով հրդեհված
Տանում ենք անկանգ մեր կրակն անմար աշխարհով արար,
Որ արևի պես
Միշտ մնա հրկեզ
Այս հողագունդը, որ մարդ է ծնել, սնել դարեդար։

1947

* * *

Տարիներ անցան…
Եղանք ցիրուցան
Կողմերն աշխարհի -
Ընկերներ բարի։

Ոմանք բարձրացան…
Ոմանք հրացան
Առան՝ պաշտպանեն
Բախտը մեր դարի։

Ոմանք էլ ընկան…
Ու հիմա չկան,
Ապավինեցին
Ցուրտ շիրմաքարին։

Տարիներ անցան…
Եղանք ցիրուցան.
Հեյ վա՜խ, այդ է հենց
Կարգը աշխարհի։

1947

* * *

Հեռավոր
Ծովեզերքին մենավոր,
Շրջում է մեկը անտուն՝
Սիրտը մութ-մոլոր։

Անանուն
Մտքերով խենթ՝ էն անհուն
Ծովն է թվում լուսաջինջ,
Հանգստավետ տուն։

Ահա նա
Մտնում է ծովը անահ,

Որ իր կերտած պալատում
Հանգստանա։

1947

* * *

Անցած տարին
Դիպավ քարին,
Լացեց-թափեց
Արցունք-արին։

Բարով-խերով
Էս նոր տարին
Ինձ հասցնի
Իմ թուխ յարին։

1947

* * *

Նոր ձմեռ եկավ,
Նորից բո՛ւք-բորան.
Կատարները թավ
Ձյունի տակ կորան։

Ձյունի տակ կորան
Ծաղիկներն ալվան
Աշխարհը ծածկեց
Մի ճերմակ սավան։

1949

* * *

Ոմանք լալիս են,
Ոմանք՝ երգում.
Գնում-գալիս են,
Հաստատում-հերքում։

Ոմանք ապրում են,
Ոմանք՝ մեռնում.
Ոմանք՝ մոռացվում,
Ոմանք՝ հառնում։

Հավերժն անվերջ է,
Ժամանակն երկար.

Կյանքը մի էջ է,
Անուժ է, անկար։

Մարդը խնդումն է
Մեծ տիեզերքի.
Մահը մարումն է
Ամենայն կյանքի։

Ու կյանքն ու մահը
Ծնվել միասին.
Օրոցքն ու դագաղը
Գրկին և ուսին,

Մարդն է, խեղճ մարդը -
Բնության գերին,
Ընկած թակարդը,
Հնազանդ բեռին,

Քայլում է-քայլում
Բյուր ու բյուր դարեր.
Խամրում, մերթ փայլում,
Մերթ գոռ, մերթ երեր,

Մերթ որպես շքերթ
Տոնախմբության,
Մերթ թաղման թափոր
Երթում հավիտյան…

Այսպես, միշտ երկու
Խաղաղ պայքարում,
Կյանքում ահարկու
Եվ մեր այս դարում,

Կյանքը հոսում է
Հավերժի նման,
Խոսում-ասում է՝
Եվ կամ, և չկամ։

1959

* * *

Տեսնես ու՞մ մայրիկն է զառամյալ այս կինը,
(Կամ այդ ինչ մանկիկ է թոռնիկը նրա.)
Սառնամանիքին եկել, փողոցը մաքրում է,

Որքա՞ն է վաստակը տքնաջան օրվա.
- Երևի որդին չկա …, ու ինքը կրում է
Սիրասուն թոռնիկի հոգսն ամենօրյա։

Տեսնես ու՞մ մայրիկն է զառամյալ այս կինը.
Կամ ո՞վ է մանկամարդ թոռնիկը նրա։

1959

* * *

Կեր հաց ու պանիր, խմիր սառը ջուր,
Ուրիշ ոչնչի երանի մի՛ տուր։
Երջանիկ զգա քեզ այս աշխարհում,
Ու մի անիծիր էդ բախտդ իզուր։
Ինչ էլ ապրեցիր, լավն այդ համարիր,
Քանի չես դառել հողակույտ մի բուռ։
Վատը հենց այն է, ինչ չես տեսնելու,
Վատն այն աշխարհն է՝ անկրակ, անդուռ։
Ապրիր, կարո՞ղ ես, հենց այս աշխարհում,
Անկաշկանդ տանն այս՝ անպատ-անկտուր։
Լավ է ապրելը, թե կա նպատակ,
Թե որ սրտումդ կրակ ունես՝ հուր։
Բորբոքիր հոգիդ, դարձրու կրակ
Հոգուդ կրակը այս աշխարհին տուր։
Տու՛ր, տու՛ր բոլորը, ինչ տալ կարող ես,
Ու մի սպասիր վարձ ու պարգևի։
Լոկ քո տվածով կյանքում զորեղ ես,
Հպարտ, անկաշկանդ, ազատ հիրավի։

Կեր հաց ու պանիր, խմիր սառը ջուր,
Ուրիշ ոչնչի երանի մի՛ տուր։

1960

* * *

Հունաստանի Կորֆու կղզում,
Ուր ջրերը ջերմ քնքշանքով ափը լիզում,
Ուր արևը ամենայն ինչ անքեն կիզում,
Մենք ապրեցինք ճոխ վայելքի երեք օրեր։

Չնաշխարհիկ Կորֆու կղզում
Տանտիրուհի Եվան հուզվում,
Սեղաններին ուտեստ դիզում,
Պարգևում սեր, ճոխ վայելքի երեք օրեր։

Իբր երազ Կորֆու կղզում
Մեզնից ոչ ոք չէր ընդվզում.
Մենք ավելին չէինք ուզում…
Օ՜, անմոռաց մեծ վայելքի երեք օրեր
Կորֆու կղզում,
Կորֆու կղզում։

1977

* * *

Զգձգվում է ամեն ինչ,
Զանձրանում են ամենքը.
Բայց տանելի է, ոչինչ,
Չի ուշանում լոկ մեկը։

Նա գալիս է իր ժամին,
Հասանելիքը առնում.
Մինչ ուղեկիցն անմեկին
Այլևս ետ չի դառնում։

1977

* * *

Ա՜յ թե էլի տասը տարի
Քայլեմ, ոտքս չառնի քարի.
Էնքան գործեր կանեմ բարի,
Միայն էլի տասը տարի։

Բայց դե հիմա ամեն տարին
Գալիս, իրեն բաժինն առնում,
Բան չի թողնում իմ նժարին,
Իրենին է անվերջ բառնում։

Սպառվում եմ կամաց-կամաց.
Ինչ փույթ, էլի դեռ գնում եմ.
Ինչ փույթ, խոսքս դեռ կարկամած,
Բայց համառում, հանդգնում եմ։

1978

* * *

Երեկ մենք էինք դեռ երիտասարդ,
Երեկ մեր «թուրն էր աջ ու ձախ կտրում»,

Մենք էինք կյանքում հրաշքներ պտռում,
Քալլում աշխարհով, համարձակ, հպարտ։
Այսօր, թվում է՝ մեզնից մեծ մի սարդ
Մեր շուրջն է իրեն ոստայնը գործում,
Մեր քաջությունն է լռելյայն փորձում,
Ու ցանցապատում մեր փառքը անզարդ։
Երեկ մենք էինք, օ՜, երիտասարդ,
Իսկ այսօր արդեն ծերունիներ ենք.
Ինչ-որ մեկն անտես, ոսկրացած մի ձեռք
Բացել է մեր դեմ վերջին մի թակարդ։
Բայց համառում ենք դեռ մեր դիրքերում,
Դեռ չենք հասցրել, ասելիք ունենք,
Մեր երազներում դեռ կարոտում ենք,
Դեռ մոմուռներ կան մեր բաց վերքերում։
Երեկ մենք էինք, օ՜, երիտսարդ,
Այսօր եկել է նոր սերունդ մի քաջ.
Այն, որ մեզ համար մնաց աննվաճ…
Ձի ժամանակն էր խառնակ, աննպաստ։
Թող նոր սերունդը ոստնի զերթ առյուծ,
Սավառնի որպես արծիվ լեռների.
Հոտը հայրենի փարախը բերի -
Այն, որ բոցերից փրկվեց մազապուրծ։
Երեկ մենք էինք, օ՜, երիտասարդ։

1978

* * *

Գալիս, գալիս
Ու չեմ հասնում.
Վազ եմ տալիս,
Ու չեմ հասնում։

Մի՞թե այդքան
Հեռացել ես,
Անհաս Խաքան -
Վերացել ես։

1978

* * *

Էն աշխարհից, երանի
Էս աշխարհը երևար,
Որ մարդ էս լույս աշխարհից
Էսպես դժվար չգնար։

Գնացողը գիտենար
Անցուդարձը աշխարհի,
Էսպես անգետ չմնար
Կարոտ լույսի նշխարի։
Երանի մեր պապերին,
Որ հույսերով հեռացան,
Էն սարերի ծերպերին
Թառեցին ու քարացան։
Ընտելացան շանթերին,
Կրակ տեսան ու որոտ.
Տեսան լավը ու թերին,
Տեսան տրտունջ ու կարոտ։

1978

* * *

Օրացույցս գնալով բարակում է, բարակում,
Անելիքներս հազար կուտակվում են դարակում.
Գիշերս ցերեկ արած, գիշերաքունս՝ երազ…
Տեսնես լսու՞մ է աստված, թե արդ ինչ եմ ակնարկում։

Օրերն անցնում են հերթով, թերթերս մեկ-մեկ պոկում,
Ոչ ժպիտս ընդունում, և ոչ ցավս ամոքում.
Աշխարհի աչքի առաջ գնալս չեն նկատում,
Թե մի օր, վերջին անգամ աչքերս ոնց եմ փակում։

1979

* * *

Ջահել օրերի կարոտ,
Այնպես նազով ես կանչում.
- Մեր այգին, շունը ալարկոտ
Ճանաչում է, կալանչում։
Ջահել օրերի կարոտ,
Այնպես վճիտ ես հնչում.
- Մեր այգուց ամեն առավոտ
Մայրիկս տուն է կանչում։
Ջահել օրերի կարոտ,
Դու նորից ոգեկոչում.
- Մեր այգում սուրում աղմկոտ,
Մի ցուրտ քամի է փչում։
Ջահել օրերի կարոտ,
Թափառում եմ անուրջում.
- Ձմեռն եկել, ականջիս

Իր ցավերն է մրմնջում։

1979

* * *

Ծիտը նստել բնի առաջ
Ու հսկում է ձագերին.
Նա հիշում է, երբ ինքն էր ձագ,
Մայրն էր այդպես՝ իր դերին։

Մայրն է ձագի պահապանը,
Մինչև ձագը մայրանա.
Սա է կյանքի վեհ պատգամը -
Եղել է, կա, կմնա։

1979

* * *

Մոլորակը մոլորվել է,
Շեղվել սովոր ճանապարհից։
Ասես քար էր, գլորվել է,
Ծովը ընկել սարի ծերից։

Մոլորակը մոլորվել է,
Երբ է նորից ուշքի գալու.
Վախենում եմ պահ չմնա
Գեթ խորհելու, կամ էլ լալու։

Մոլորակը մոլորվել է…

1979

* * *

Մարդը, օ՜, մարդը իր փոքրիկ քայլով
Աշխարհն է չափում և տիեզերքը.
Ու չի հագենում, ու անվերջ ձգտում,
Սակայն չի հասնում երազ-եզերքը։

Մարդը, օ՜, մարդը իր մտքի փայլով
Լուսավորում է անհաս վերելքը.
Իր խորխորատից, սակայն մինչ էսօր
Փնտրում, չի գտնում փրկության ելքը։

1978-80

* * *

Աշխարհն անտեր էր,
Որբը անհեր էր.
Ղեկը անգլուխ -
Գլուխը՝ բեռ էր։

Նա գլորվել էր,
Ու տրորվել էր
Հին խաչմերուկում
Ու … մոլորվել էր։

1980

* * *

Մարդը Քրիստոսին աստված դարձրեց,
Ու նրանից էլ կախման մեջ մտավ.
Մարդն ինքը իրեն հավատացրեց,
Թե մարդկությունը փրկություն գտավ։

Ու այսպես ահա զույգ հազար տարի
Մարդն ու Քրիստոսը եղան անբաժան.
Հեղեղումները քսաներորդ դարի
Որքան էլ բարի, որքան էլ դաժան,

Մարդուն Քրիստոսից փրկելու համար
Ոչ ուժ ունեցան, ոչ էլ հավաստի
Հեղուկ կազդուրիչ՝ հաբ մի փրկարար…
Մնացիք ավար խաբկանք ու ստի։

1980

* * *

Օրացույցի թերթն առաջին
Նոր տարի է բերել.
Երգ է պարում մեր ականջին,
Հունչը համակ գերել։

Օրացույցի թերթն առաջին
Նոր տարի է բերել.
Նրա կյանքն էլ կարճ է, չնչին -
Այսօր կանցնի նա էլ։

Վաղն էլ կգա, վաղն էլ կանցնի,

Կբոլորի տարին.
Ափսոս, որ մեզ չի հասցնի
Մեր Մարութա սարին։

1980

* * *

Իմ ժամանակի բոլոր մեծերին
հմայքով անանց
Տեսա ու եղա հանճարի գերին
ու այդ ինձ մնաց։
Ոմանց հետ նույնիսկ խոսք առա-տվի,
ասին. «Շատ ապրես,
Թե որ տեղը գա, բռնվիր կռվի,
մինչև քեզ պարպես»։
Ասին. «Պապերիդ իղձը հետդ տար,
փոխանցիր որդուդ,
Քանզի երազը մեր կա անկատար,
եղիր անհագուրդ»։
Արդ ինչ կարենում, անում եմ, ու թե
երկարի ճամփես,
Գիտցեք, կհիշի դարն այս երկաթե
Ձեր խորհուրդն ու Ձեզ։

1981

* * *

Էրնեկ տալով տարին-տարուն,
Անցավ քանի-քանի գարուն -
Ջրերով խենթ ու վարարուն,
Էրնեկ տալով տարին-տարուն։

Կյանքն էլ էդպես հրահրուն -
Խելակորույս ու անանուն…
Էրնեկ տալով տարին-տարուն,
Անցավ քանի-քանի գարուն։

1981

* * *

Սև դիակառքը պոկվեց իր տեղից,
Թաղման թափորը շարժվեց համրորեն.
Նվագախումբը նրանց ետևից
Տխուր ծոր տվեց մի հին ռեքվիեմ։

Խուռն մայթերով անցնող-դարձողը
Գլուխ խոնարհեց, տրտմեց հարգալից,
Զի հավերժորեն լուռ հեռացողը
Պատգամաբեր էր անտես բարձրյալից։

1981

* * *

Ով միակ բարձրյալ,
Անհոգ ես դարձյալ.
Էլ ի՞նչ ես անում,
Որ հա ուշանում…

Թե չես «կարծեցյալ»,
Կյանքու՞մ հանդերձյալ
Մեզ պիտի օգնես -
Որ օրհներգենք քեզ։

Արդ, թե կարող ես -
Օգտակար եղիր.
Վերադարձրու մեզ
«Մըր օրհնյալ էրգիր»։

1982

* * *

Աշխարհ ես եկել,
Հաշտվիր նրա հետ.
Չես գալու մեկ էլ,
Հաշտվիր նրա հետ։

Զուր ես ակնարկել,
Հաշտվիր նրա հետ,
Նույնիսկ առարկել…
Հաշտվիր նրա հետ։

Թե չես հաշտվելու,
Գնա, հեռացիր.
Պահ չէ զժտվելու,
Լավ, լավ հասկացիր։

1982

* * *

Ավագները գնացել են,
Ետ դարձող չկա.
Եղողներիս մոռացել են,
Ետ դարձող չկա։

Մենք էլ արդեն խորթացել ենք,
Ճանաչող չկա.
Թվում է, թե խենթացել ենք,
Ճանաչող չկա։

Հեյ վա՜խ, շուտով գնալու ենք,
Ետ պահող չկա.
- Ուր էլ գնանք, մնալու ենք,
Ետ կանչող չկա։

1982

* * *

Երանի թե ժամանակը
Մարդու՝ իրեն ձեռքում լիներ,
Ժամանակի ճախարակը
Ոչ թե առաջ, ետ պտտվեր։

Թե չէ էսպես արագընթաց
Տարիները գալիս-գնում,
Անց են կենում աչքներս բաց -
Օրերը, որ քիչ են մնում։

Արդ կորցրել ենք հաշիվը,
Չենք հավատում գնացածին…
Հալածում է թիվը-թվին,
Էլ ինչ Փրկիչ, ինչ Միածին։

1982

* * *

Ով միակ Բարձրյալ,
Ոգեկոչել ես շարունակ երկնել,
Եվ այսօր դարձյալ,
Եվ այսօր դարձյալ քանիցս կրկնել՝
Թե՝ քո ժամկետը
Եկել, անցել է, պայմանազանց ես,
Առ աղեղ-նետը,

Գնա քո որսին - ուր գերազանց ես։

Ով միակ Բարձրյալ,
Շատ շնորհակալ եմ, որ մեծահոգի
Օրերում անցյալ
Ինձ պարգևել ես եռանդ ու ոգի,
Եվ պատվիրել ես
«Կամքդ» կատարեմ, ինչ գնով լինի,
Եվ հրավիրել ես
Հաղթության օրը գամ, ըմպեմ գինի։

Թող այդպես լինի։

1982

* * *

Երանի թե Աստված լիներ,
Լիներ հզոր, ամենազոր,
Զորք ունենար, զենքով զիներ -
Աշխարհապահ մի կայազոր։

Երանի թե Աստված լիներ
Ու աշխարհին ականջալուր…
Մարդը նրան ապավիներ,
Չկարկամեր ցավից անլուր։

Երանի թե Աստված լիներ՝
Արդարամիտ և դատավոր,
Ու երբեմն մեզ ունկնդրեր՝
Աղերսանքին մեր դարավոր։

Երանի թե Աստված լիներ,
Ու առ երկինք մեր աղոթքը
Բիլ թևերով երկինք ելներ,
Ու չփլվեր մեր օճորքը։

Երանի թե Աստված լիներ։

1982

* * *

Ահա և հասանք «սահմանագծին»,
Որտեղից այն կողմ անէություն է.
Շտապելն այնտեղ անմտություն է…

Ահա և հասանք «սահմանագծին»։

Օ՜, մենք Քրիստոս չենք, նա Տեր Միածին.
Նրա կյանքն անվերջ անմահություն է.
Ահա և հասանք «սահմանագծին»,
Որտեղից այն կողմ անէություն է։

1983

* * *

Աշխարհ են գալիս,
Աշխարհից գնում.
Խնդում են, լալիս,
Ու չեն էլ հոգնում։

Վերուստ առաքված
Օրենք ու կարգ է.
Աստծուց սահմանված
Ու արտակարգ է։

Ի՞նչ կա զարմանքի,
Եվ նույնիսկ, նույնիսկ
Տարակուսանքի.
Այդպե՛ս, իսկ և իսկ։

1983

* * *

Իմաստությունը կյանքի՝
էգ ու որձի մեջ է.
Կյանքը հառնում է
այդ խառնարանում։
Ծնունդը սկիզբ,
ու մահը՝ վերջ է.
Այսպես է աշխարհը
փոխվում, նորանում։

Ուրեմն փառք տանք
էգին ու որձին,
Լծվենք գալիքի
ստեղծման գործին։

1983

* * *

Այսօր նորից հիշել եմ քեզ,
Պատանությու՛նն եմ մեր հիշել.
Այնպե՛ս լա՛վն էր, լա՛վն էր այնպե՛ս…
Այսօր նորից հիշել եմ քեզ:

Այսօր նորից հիշել եմ քեզ,
Մեղք չեմ գործել՝ դե հենց այնպես.
Տարիներն են մեղմ մշուշվել…
Այսօր նորից հիշել եմ քեզ:

1983

* * *

Անմտություն է շատ մտածելը,
Ոչ շահ է բերում, ու ոչ էլ հանգիստ.
Հասկանալ է պետք՝ անցածն անցել է,
Կառչիր քաղաքին այս արքայանիստ:

Ու անքեն քայլիր շիք փողոցներով,
Անցող-դարձողին հարգանք մատուցիր,
Ու թեթևացիր մոռացումներով,
Թե անցնելու ես, լոկ այդպես անցիր:

1983

* * *

Մեր բոլոր մեծերը գնացին,
Աստըծո սերը չօգնեց նրանց.
Չդժգոհեցին, ոչինչ չասացին,
Անխռով եղան սահմանազանց:

Մեր բոլոր մեծերը գնացին,
Օ՜, նրանց տեղը դատարկ մնաց.
Անհունությանը անխոնջ անսացին,
Ուր մարմրում էր վերջին մի կայծ:

1983

* * *

Այո, մեր դարը քսաներորդն էր,
Ծայրից մինչև ծայր.
Փոթորիկներից ամենից հորդն էր,
Թրի պես երկսայր:

Այո, մեր դարը քսաներորդն էր,
Եվ այն գալու էր.
Չէր ուշանալու, որ «կարգի բերեր»
Երկրային գործեր։

Քսաներորդն էր, քսաներորդն էր՝
Դարերից մերը.
Ժամանակների վերին ակորդն էր՝
Արնոտ բևեռը։

1983

* * *

Ճանապարհիս շատն անցել եմ,
Էլ ի՞նչ մնաց՝ մի կանգառ.
Վիճակիս ընտելացել եմ,
Անմռունչ եմ, անբարբառ։

Ճանապարհիս շատն անցել եմ,
Դժվարին էր, անհնար.
Քիչն եմ հիշում՝ մոռացել եմ,
Ինչքանն էր խութ ու վթար։

Ճանապարհիս շատն անցել եմ,
Ապավինում եմ քչին.
Մոլորվել ու մնացել եմ -
Խարիսխս թույլ է, չնչին։

1983

* * *

Մարդը աստծուն ստեղծեց
Ակնածանքով մի վերին,
Տեր դարձրեց իր դերին։

Մարդը աստծուն ստեղծեց,
Որ նա լինի դատավոր,
Ջոկի անմեղ-մեղավոր։

Մարդը աստծուն ստեղծեց,
Որ պահպանի աղվորին,
Պատիժ տա մեղավորին։

Մարդը աստծուն ստեղծեց,
Բարձրացրեց իր գահին,
Որ նա սաստի ագահին։

Մարդը աստծուն ստեղծեց,
Որ հսկի ահին-մահին,
Չծառայեն լոկ շահին։

Մինչ աստված երես առավ,
Միրտը բոլորից սառավ,
Անաստված, անգութ դառավ։

Նա մարդուն էլ մոռացավ,
Մոռացավ ու ուրացավ։
Երևի թե կուրացավ։

Նա նաև գոռոզացավ,
Որքան տեղ կար - հեռացավ.
Ապրեց հանգիստ ու անցավ։

Ու էլ ներքև չի նայում,
Գործով չի շրջագայում,
Ու արդար չի վկայում։

Իբրև նաև խլացավ,
Իր գործերում զլացավ,
Անպարկեշտ, հոռի դարձավ։

Մարդը աստծուն ստեղծեց,
Որ աստված իրեն պահի
Ու պահպանի, խնայի։

Մինչ նա ձայներ չի լսում,
Մարդու հետ էլ չի խոսում,
Ու մերթ ինքն է բամբասում։

Մարդը աստծուն ստեղծեց,
Իրեն նման անկատար,
Իրեն նման անարդար։

Մարդը աստծուն ստեղծեց
Իրեն նման անբարիշտ,
Սխալներով, օ՜, առմիշտ։

Դրանից է, որ ահա
Խառնվել են կյանք ու մահ,
Անժամկետ ու ակամա։

1983-1984

* * *

Մարդ որպեսզի ճորտ չլինի,
Պիտի տուն ու տեղ ունենա.
Պիտի հաց ու թաց ունենա -
Մարդ որպեսզի ճորտ չլինի։
Կյանքը չունի այլ սպեղանի,
Նույնն է՝ ետ կամ առաջ գնա.
Մարդ որպեսզի ճորտ չլինի,
Պիտի տուն, տեղ, հաց ունենա։

1984

* * *

Փափագել եմ ունենալ
Երգերի փոքրիկ մի գիրք,
Լուռ էջերում բոցկլտար
Խինդ ու ծիծաղ, լույս մի կիրք։

Էջերով անխոս անցներ
Մորս ձայնը տուն կանչող.
Իր մրմունջները ցաներ
Մեր Չիչխանը կարկաչող։

Փափագել եմ ունենալ
Երգերի փոքրիկ մի գիրք,
Հանգիստ խղճով հեռանալ,
Թողնելով կյանք, դիրք ու ձիրք։

Ով էլ կարդար, հավատար.
Ներքին ձայնին ունկնդիր
Հանդիպողին ողջույն տար
Հայերենով յուրընտիր։

1984

* * *

Սովորական էր ձեռքիս գրիչը,
Մինչ ժամանակը խիստ անսովոր էր.

Ու միշտ երգի հետ ներկա էր ճիչը,
Եվ տխրությունը արգասավոր էր։

Խենթ ցնծությունը ինձ օտար մնաց,
Այն բույն չհյուսեց հոգուս երթիկում,
Ու բարձրով անցավ, այպե՛ս թևաբաց,
Նրան ձայնելու չունեցա հակում։

Սովորական էր ձեռքիս գրիչը,
Ու միշտ երգի հետ ներկա էր ճիչը։

1984

* * *

Չգիտեմ, թե ինչ եմ գրում,
Եվ ինչու եմ գրում, գրում.
Ով իմանա ինչ է պահված
Աննպատակ այս գրագրում։

Բայց գրում եմ ու չեմ նայում…
Թվում է, թե հետագայում
Կանչելու են ինձ իմ դատին -
Խիստ ուշացած պարագայում։

1984

* * *

Կյանքն ու մահը օրնիբուն
Պահմտոցի են խաղում.
Սուտմեռուկի են տալիս,
Երկար ձգվում, նվաղում։

Խորամանկում են այսպես,
Ճիշտն ու կատակը խառնում,
Առևտուր է պարզապես՝
Փոխզիջում ու համառում։

Ու թև-թևի կյանք ու մահ,
Լաց ու ծիծաղ անբաժան՝
Բարեկամներ ակամա,
Թշնամիներ են դաժան։

Կյանքն ու մահը օրնիբուն
Պահմտոցի են խաղում։

1984

* * *

Ամեն ինչից լիացել եմ,
Պահանջ չունեմ աշխարհից.
Սակավապետ մեծացել եմ,
Չեմ էլ սառսում արդ մահից։

Նույնիսկ սիրուց հարազատի
Չունեմ ոչ մի սպասելիք.
Սիրտ իմ, տոկա, մի վհատի,
Ունե՞ս, ասա ասելիք։

- Գիտեցածս ողջ ասել եմ,
Բայց եղե՞լ է ունկնդիր.
Իմ սահմանը ակոսել եմ,
Աղոթք ասել ծնրադիր։

Ավարտել եմ, ավարտել եմ,
Ինչ որ պետք էր ավարտել.
Կասկածներս փարատել եմ,
Ծակ տեղերը կարկատել։

1984

* * *

Ինչու՞ է քունս տանում
Լույս ցերեկով՝ կեսօրին.
Ո՞նց եմ հասել էս օրին…
Ինչու՞ է քունս տանում։
Թարթիչներս ծանրանում.
Կամքո՞վ է Մեծի-Նորին.
Ինչու՞ է քունս տանում
Լույս ցերեկով՝ կեսօրին։

1984

* * *

Էսքան, էսքան ձիգ տարիներ
Դեմը կքած գրասեղանի,
Որոճում եմ գործ ու մտքեր,
Ու չեմ գտնում մի սպեղանի,
Որ ամոքեր վիշտ ու վերքեր,

Նման աստծո բալասանին.
Հանգստացնող ելած կրքեր…
Էսքան, էսքան ձիգ տարիներ։

1984

* * *

Գնահատեցեք իմ լռությունը,
Նրա ծալքերում այնքա՛ն խորշեր կան,
Անակնկալներ՝ պայթող զերթ ական…
Գնահատեցեք իմ լռությունը։

Տիրոջ պետք ունի մեր հնությունը,
Իմաստություն է այս պապենական…
Գնահատեցեք իմ լռությունը,
Նրա ծալքերում այնքա՛ն խորշեր կան։

1984

* * *

Վազքի մեջ եմ օրն ի բուն,
Ու գործերում հոգնատանջ.
Ոչ մի քայլ ետ կամ նահանջ.
Վազքի մեջ եմ օրն ի բուն։

Օրերում այս խլրտուն
Սակավապետ-անպահանջ.
Վազքի մեջ եմ օրն ի բուն,
Ու գործերում հոգնատանջ։

*

Վազքի մեջ եմ օրն ի բուն,
Անվերջ գործի, գործից՝ տուն.
Երբ եմ հանգիստ առնելու
Օրերում այս խլրտուն։

1984

* * *

Եվ մի՞թե ճիշտ է, որ ծերացել եմ,
Եվ մի՞թե ճիշտ է, որ հեռացել եմ
Լույս ցնորք դարձած ջահել օրերից…
Եվ մի՞թե ճիշտ է, որ ծերացել եմ։

Ո՛չ, ծերության դեմ արդ ծառացել եմ,

Նույնիսկ վեր ձգվել ու բարձրացել եմ.
Ես շարքի մարդ եմ, շարքում եմ նորից…
Փակգրեր բացել ու վերծանել եմ։

Եվ մի՞թե ճիշտ է, որ ծերացել եմ։

1984

* * *

Ձախ ձեռքը միշտ բեռ է տանում,
Աջը՝ պարապ գնում-գալիս.
Մեկ անգամ չէ, որ նախատում,
Թուք ու մուր եմ դեմքին տալիս։

Նա թե՝ իզուր, սխալվում ես,
Ես անգործ չեմ, դեր եմ խաղում.
Էտ էր պակաս - ինձ սևերես…
Թե ինչու եմ ես հապաղում։

Գայլի ու շան ու աղվեսի,
Նույնիսկ կատվի պոչը անգամ
Հարցն են լուծում դեն ու դեսի…
Ճամփի ճիշտը ես տի հոգամ։

Չմոլորվի ճամփի կեսին,
Հանկարծ չընկնի գայլի բերան.
Ի՞նչ նախատինք արդ ինձ պեսին,
Ու բամբասանք սրան-նրան։

*

Պարտք մնացի պարապ ձեռքին,
Արդարացավ. դեռ ավելին՝
Խնդաց, ծաղրեց ձախի խելքին,
Ու զոռ տվեց շարժ ու ձևին։

1984

* * *

Քամին մտել է անտառ,
Մտել ու դուրս չի գալիս.
Ամեն ինչ խառնել իրար,
Հանգիստ, հանգիստ չի տալիս։

Քամին մտել է անտառ,
Բոլորին ոտքի հանել.

Անկոչ հյուրն աղմկարար
Տանտերերին սասանել։

Քամին մտել է անտառ,
Ելք է փնտրում, չի գտնում.
Տագնապում է խելագար…
Գիշեր է, քուն չի մտնում։

1984

* * *

Փողոցն այսօր մարդաշատ է.
Տոն է, հանդես, զբոսանք՝
Հանդարտ շարժվող մի հոսանք…
Փողոցն այսօր մարդաշատ է։
Աշխարհի հետ սիրտս հաշտ է,
Չունեմ ոչ մի ափսոսանք.
Փողոցն այսօր մարդաշատ է,
Տոն է, հանդես, զբոսանք։

1984

* * *

Երբ աշխարհում քաղցածներ կան,
Ես ինչպե՞ս նստեմ հացի.
Քաղցից հյուծված՝ լաց ու կական.
Ես ինչպե՞ս նստեմ հացի։

Երբ աշխարհում անտուններ կան,
Ինչպե՞ս հանգիստ քուն մտնեմ։
Մարդիկ անծածկ, թափառական…
Ինչպե՞ս հանգիստ քուն մտնեմ։

1984

* * *

Սարը փլվեց, լցվեց ձորը,
Սարսուռ տիրեց չորս բոլորը.
Գետը կանգնեց ու լճացավ,
Ետ-ետ գնաց ու բարձրացավ,
Ծածկեց հովտի գյուղ ու շենը…
Այդպես ծնվեց Լճաշենը։

1984

* * *

Աստծու համար միևնույն է,
Թե ծնկաչոք աղոթողը
Թուրք է, ռուս է, հայ կամ հույն է,
Աստծու համար միևնույն է։

Միայն լինի հավատացյալ,
Գիտենա, որ արարողը
Կա, տեսնում է միշտ ու դարձյալ,
Միայն լինի հավատացյալ։

Աստծու համար միևնույն է,
Թե մեղքերը մեղանչողը
Գող, ավազակ, նենգ ու թույն է,
Աստծու համար միևնույն է։

1984

* * *

Այգի մտա,
Թվաց գտա.
Չհասցրի,
Չհարցրի,
Ո՞վ էր, ի՞նչ էր,
Ե՞րգ, թե՞ ճիչ էր.
Հասկանալու
Պահը քիչ էր։
Օ՜… հավատա,
Թվաց՝ գտա.
Բայց թռցրի,
Ու… կորցրի.
Չհասկացա,
Չհասկացա,
Ե՞րբ մոտեցա,
Ե՞րբ հեռացա։
Ի՞նչ արեցի,
Ի՞նչ չարեցի,
Ի՞նչ ասացի,
Ի՞նչ չասացի,
Ի՞նչ իմացավ,
Ի՞նչ չիմացավ
Եվ հասկացա՞վ,
Չհասկացա՞վ։

Փաստը փաստ է,
Ահասաստ է.
Ու մեղքը՝ մեղք,
Մեղկացող ձեռք.
Ու կարոտ աչք,
Հրեշտա՞կ, թե՞ քաջք.
Բայց ի՞նչ գույն էր՝
Միևնույն էր։
Անէ դարձավ,
Անէացավ.
Ու ինձ թողեց,
Խեղճ-սրտացավ։
Ու մինչ այսօր
Չանցավ, չանցավ,
Մնաց նվեր,
Վիշտ կարևեր։

1984

* * *

Հանդերձյալ կյանքի գաղափարը նուրբ
Աշխարհ է եկել սարսուռով մի սուրբ.
Հեռացողները հանգիստ հանգել են,
Հարազատները մեղմ նվագել են,
Որ չխանգարեն լուռ ննջեցյալին.
Աղոթք են հղել վերև՝ Բարձրյալին,
Որ դուռը բանա հրաշք-դրախտի,
Ու իր պայմանը հանկարծ չխախտի.
Զի անցավորը երկրային կյանքում,
Թե լիության մեջ ու թե զրկանքում,
Իրեն պարկեշտ է պահել ու ժուժկալ,
Որ երբևիցե մի անակնկալ
Իրեն չշեղի ճիշտ ճանապարհից.
- Դե ով չի խորշում դժոխքի ահից.
Մարդ չի սակարկել մնալ-գնալը,
Օրենք է եղել ետ աշխարհ գալը.
Քրիստոսինը չէր մենաշնորհը,
Աղոթել էր պետք երկնային հորը։
Ու ամեն անգամ, երբ հազար տարին
Լրում է առնում, տոն է աշխարհին։
Ու գարնան նման վերծանվում են,
Նորերը հնին ճիշտ նմանվում են։
Հարատևում էր կյանքը անվրդով,
Շարունակվում էր ծնողը որդվով։

1984

* * *

Երևի թե աստված կա ու տեսնում է,
Նկատում եմ, որոշ տեղեր հասնում է.
Աչքաթող է անում, սակայն, անիրավ,
Արտը այրվում, տեղը տատասկ բուսնում է։

Երևի թե աստված կա ու լսում է.
Էն անհունում երգ խնկարկում, հյուսում է.
Մերթ բարկանում, գոռում, գոչում, նյութում դավ,
Կարկուտ, անձրև, հեղեղ դարձած հոսում է։

Երևի թե աստված կա ու խոսում է.
Մեկին օրհնում, ապա և բամբասում է.
- Աստված, թե կաս, արարիր դու միայն լավ,
Վատը միշտ կա. ամեն մեկիս ներսում է։

1984

* * *

Մերթ գտնում ենք,
Մերթ՝ կորցնում.
Մերթ ցած բերում,
Մերթ՝ թոցնում։

Կյանքն է դարձել
Խենթ խաղ ու պար,
Ու ծանրացել
Որպես կապար

Մեր սրտերին
Թպրտացող,
Եվ օրերին
Անհետացող։

1984

* * *

Երկի արժեքը պարզության մեջ է,
Անկաշկանդ մտքի և վարպետության.
Այն երկունքով է հառնում հարության…
Երկի արժեքը պարզության մեջ է։

Թե որ կրակը վառ ու անշեջ է,
Առիթ էլ չկա մտահոգության…
Երկի արժեքը պարզության մեջ է,
Անկաշկանդ մտքի և վարպետության։

1984

* * *

Փողոցը դատարկ է ու լուռ,
Ու ժամը ուշ է, ու մի քիչ էլ ցուրտ.
Գոց են ամենուր պատուհան ու դուռ,
Փչում է քամին, անվերջ, անհագուրդ։

Օրը անցել է, ու գիշերն է մութ,
Մինչ անավարտ են գործերն հրատապ,
Մտքերս խառն են, տանջող ցավը՝ բութ,
Մինչ անցնում եմ ես այնպե՜ս անշտապ։

Օ՜… շուտով, մի օր կգա վերահաս
Հաշվեհարդարի ժամը վաղակոչ.
Նա կգա, որպես անզիջում օրհաս,
Որ անժամ տանի ծաղիկ ու բողբոջ։

1984

* * *

Օրեր են էլի, գալիս են, գնում,
Դիզվող ձյան նման շերտ¬շերտ ծանրանում.
Հաճախ գալիքն է վառվում ոսկեղեն,
Անցյալն էլ մեկ¬մեկ ցնորք է դառնում։

Բունը ավերված խեղճ հավքի նման,
Որ թողնված է ձմռան սարսափին,
Մեկ աղոթում եմ գալուստը գարնան,
Մեկ էլ՝ հեռացած տերևաթափին։

Օրեր են էլի, գալիս են¬գնում,
Անանց ամպի պես սրտիս ծանրանում։

1984

* * *

Հասակի հետ է գալիս

Իմաստությունը.
Փառքն ու անունը
Հասակի հետ են գալիս։

Այդ քանքարն է, սիրելիս,
Ու տքնությունը։
Հասակի հետ է գալիս
Իմաստությունը։

1984

* * *

Սերերս նույնպես ծերացել են,
Եվ ակոսվել են ճակատ ու այտեր.
Ինձ թվում է, թե մոռացել են
Ճամփաբաժանը՝ շուրջն արոտ, արտեր։

Սերերս նույնպես ծերացել են,
Բայց հաճելի է մտաբերելը.
Հիշատակները մնացել են՝
Եվ զայրանալը, օ՜, և ներելը։

Սերերս նույնպես ծերացել են,
Ճամփի վրա են լույս ու հավերժի.
Դե սերը սեր էլ մնացել է…
Մինչ որ… թափորը տեղից շարժվի։

1984

* * *

Սերերիցս մեկն էլ գնաց,
Բարի ճանապարհ.
Սրտիցս մաս մոտը մնաց,
Բարի ճանապարհ.
Ու թափորը տխուր շարժվեց,
Բարի ճանապարհ.
Շուտ էր, գնաց, ուխտը դրժեց,
Բարի ճանապարհ.
Երևի էլ հնար չուներ…
Բարի ճանապարհ.
Երամ չուներ, վերջին չուն էր,
Բարի ճանապարհ։

1984

* * *

Անտառները ծերացել են,
Մինչ նորածիլ շիվեր չկան.
Ծառերն ընկած մնացել են,
Փչակներում արջեր չկան.
Գայլ ու աղվես հեռացել են,
Ծղրտացող հավքեր չկան.
Թխկիները վերացել են,
Լորենիներ իսկի չկան։

Տեր կանգնեցեք, մարդի՛կ, երկրին,
Մարդուց զատ, այլ տերեր չկան.
Որ անտառը հառնի կրկին,
Մի՛ վիճարկեք «կան» ու «չկան»։

1984

* * *

Իմ մռնչոցից ինձանից բացի վախեցող չկա,
Մինչ երբ առյուծն է (թեկուզ վանդակում) մռռում, մռնչում,
Բոլորը մեկեն (քնած, թե արթուն) սարսափից ճչում,
Եվ նույնիսկ, նույնիսկ օգնության համար մեկմեկու կանչում։

Դրա համար են նրան վանդակել գազանանոցում,
Որ նրա ահը պարփակվի միայն ազդու ոռնոցում.
Իսկ ինձ թողել են անվերջ տառապեմ ազատության մեջ,
Որ ազատ այրվեմ այս թեժ օրերի անմար հնոցում։

1985

* * *

Հա, այս է, որ կա
Եվ ուրիշ ոչինչ.
Էլ ոչինչ չկա,
Էլ ոչինչ, ոչինչ։

Մնում է վերջին
Կոչնակի ղողանջ,
Ու մի պահ չնչին,
Ու տխուր մի կանչ։

Կարիք չի լինի
Էլ ձեռնափայտի.

Կհավասարվի
Դարն ակնթարթի։

Ինչ փույթ, մնացին
Թերի, անկատար
Երազ լուսածին
Ու ցնորքներ վառ։

1985

* * *

Եվ կրկին հնչում է Շոպեն,
Եվ մեկեն պապանձվում ռոպեն,
Եվ հոգին համբարձվում երկինք,
Եվ լռում և հանճար, և կիրք…

Եվ ինչպես որ ի սկզբանե -
Ողջ կյանքը դառնում է անէ։
Այդ նա է՝ կախարդը ձայնի,
Աստվածը՝ ըստ ամենայնի։

1985

* * *

Կա սխալ, որ թանկ է նստում,
Նույնիսկ, նույնիսկ խիստ բախտորոշ.
Երբ քերթողը բազմախոստում
Նախընտրում է գույները գորշ -

Մրցությունից դուրս է ընկնում,
Հուսահատվում, կանգնում մի կողմ.
Քայլը կյանքին չի համընկնում,
Ու հովն անգամ թվում է հողմ։

Սրսփում է թեթև քամուց,
Ու մոլորվում ճամփի կեսին.
Ու դառնում է խոսք ու զրույց
Միակ սխալ քայլի մասին։

1985

* * *

Ձմեռ է՝ ձյուն, սառնամանիք,
Ճերմակել են տուն ու տանիք.

Ճերմակել է բնությունը,
Մեր փողոցը ու մեր տունը։

Զմեռ է՝ ձյուն, սառնամանիք.
Մինչ մեր բակում մեծ հարսանիք.
Նվագ ու պար, ճիչ, աղաղակ…
- Գնանք ձնե գնդակ խաղանք։

1985

* * *

Օրն ինչպես գալիս, այնպես էլ գնում,
Թվում է տեղը ոչինչ չի մնում.
Անբավական ենք այս առօրյայից,
Քիչը մեզ տալիս, շատն ինքն է առնում։

Օրն ինչպես գալիս, այնպես էլ գնում,
Իր ցանկացածը մեզնից է տանում.
Դե սպառվողը մենք ենք, միայն մենք,
Լոկ պահը գիտե, թե ինչ է անում։

1985

* * *

Բնությունն էլ մարդու նման
Եղանակ է ստեղծում,
Անկարգությամբ ամենեքյան
Համբերություն է փորձում։

Զանձրանում է ու հոգնեցնում
Արարքներով անկատար.
Գարուն օրով ձյուն է լցնում,
Ծածկում բակ ու ճանապարհ։

1985

* * *

Դանդաղ,
Օ՜, շատ դանդաղ է գործն առաջ գնում.
Ով է ետ պահում, որ չենք հանդգնում
Ցատկել ժվարին անցումից-անցում
Կամ կարգի բերել
Խենթ, անհնարին մի իրարանցում։
- Օ՜, չի ժամանել

«Իմպերատիվը», ու չկա ցուցում։

1985

* * *

Մարդու կյանքը կարճ է իրոք,
Ագռավից էլ քիչ է ապրում.
Օ՜, և ապրում, և տառապում…
Մարդու կյանքը կարճ է իրոք։
Միաձուլված խինդ ու մորմոք,
Ու անբաժան՝ հույս, վհատում…
Մարդու կյանքը կարճ է իրոք,
Ագռավից էլ քիչ է ապրում։

1985

* * *

Փողը փող էլ մնացել է,
Ինչ փույթ՝ խոսքն այս հնացել է.
Փողն է լուծում ամենայն հարց,
Փողը շնից շնացել է։

Փողը փող էլ մնացել է.
Փողն իր դերում ամրացել է.
Կարևորը շատն ու քիչն է.
Անփող հողն էլ ամլացել է։

Փողը փող էլ մնացել է.
Մարդն այդ վաղուց հասկացել է.
Է՞ր ենք մենք մեզ շեղում - իբր
«Փողի դերը վերացել է»։

Ով փորձ ունի, փող է շինում,
Օրն օրորում կարմիր գինում.
Չունեցողն էլ աստծու հույսին
Դատարկ գալիս, դատարկ գնում։

1985

* * *

Էսօր ուրբաթ է,
Վաղը՝ շաբաթ.
Կիրակին կգա
Որպես ավարտ։

Կանցնի շաբաթը
Մեկ օրվա պես.
Նոր շաբաթ կգա
Կրկնություն որպես։

Օ՜, մարդը միայն
Կրկնություն չունի.
Կյանքն անարձագանք
Նման հնչյունի,

Մի հեղ կանչում է
Ու ավարտվում,
Արյունը սրտում
Մեկեն մակարդվում։

*

Էսօր ուրբաթ է,
Վաղը՝ շաբաթ.
Կիրակին կգա
Որպես ավարտ։

1985

* * *

Խելքիդ զոռ մի տուր,
Մնա բնական.
Կեր թանով ապուր -
Միայն տնական։

Խելքիդ զոռ մի տուր,
Եղիր հասարակ.
Ճաշդ հաց ու ջուր,
Մեկ-մեկ էլ կարագ։

Խելքիդ զոռ մի տուր,
Զոռ մի տուր խելքիդ.
Ուշադիր եղիր
Դու մուտք ու ելքիդ։

Որ թե ներս մտնես,
Դուրս գալ կարենաս,
Կորածդ գտնես
Ու երջանկանաս։

1985

* * *

Մենք ամեն մեկս մեր աստվածն ունենք,
Եվ հավատում ենք, և պաշտում նրանց.
Մեզ հասցրել են ափը երազած…
Մենք ամեն մեկս մեր աստվածն ունենք։

Ու ձեռքից բռնած վստահ գնում ենք…
Օ՜, սուրբ մայրիկներ՝ անդարձ հեռացած…
Մենք ամեն մեկս մեր աստվածն ունենք,
Եվ հավատում ենք, եվ պաշտում նրանց։

1985

* * *

Անհայտը ձգվում ու երկարում է,
Իսկ լուսաբացը անվերջ ուշանում.
Սրտիս տագնապը լուռ վարարում է,
Որոգայթներից սարսում, զգուշանում։

Անհայտը ձգվում ու երկարում է,
Մութ գիշերվա պես մեր ցուրտ ձմեռվա.
Բուքը մոլեգնում, ցատկում, պարում է,
Խենթ նվագի տակ «Մազանդարա»։

Անհայտը ձգվում ու երկարում է,
Դեռ որքա՜ն, որքան կարող է ձգվել.
Թվում է նա էլ դանդաղ մարում է.
- Լույս, ե՜կ, քեզ հոգիս ուզում է զգվել։

1985

* * *

Դեռ կեսգիշեր է,
Մինչ մի աքաղաղ արթնացել, կանչում,
Արձագանքում է մի այլ աքաղաղ,
Ու տագնապահար փոխնիփոխ ճչում,
Ալեկոծում են գիշերս խաղաղ։

Արդ, դադարել են, «սխալվել» էին…
Ու լռություն է հավանոցներում.
Մինչ ես արթնացել այս կեսգիշերին,
Որքան էլ ջանում, քունս չի տանում։

Դե ինչ հասկացնես կչկչաններին,
Ու ոնց արգելես նրանց ծուղրուղուն.
Կարո՞ղ ես կպչել այդ «անմեղներին»,
Հավի որձերին, օ՜, բազմաբեղուն։

1985

* * *

Թե ուզում ես լավ ծառայեն,
Վարձատրիր նրանց.
Թե ուզում ես վրաղ նայեն,
Եղիր փոխադարձ։

Ամեն մարդ իր պատիվն ունի,
Ամենքն՝ ինքնասեր.
Անկախ ցենզի, մաշկի գույնի -
Տուր հարգանք ու սեր։

1985

* * *

Հաց ենք նետում ճայերին,
Նրանք նավի ետևից
Ուժ տալով սեգ թևերին,
Անկախ ծանր ու թեթևից,
Անկախ ցավից հոգնության,
Որկորի տենչն են հոգում…
Օ՜, կանոն հավերժության -
Նորոգվում ես, նորոգում։

1985

* * *

Չի կարգավորվել
Հարցը տարիքի,
Երաշխավորվել
Չափը կարիքի։

Ու չի ենթարկվում
Մարդը կանոնի,
Ու չի պարփակվում
Չափում քանոնի։

Ամեն մեկն ունի
Իր չափանիշը,
Ինչ փույթ, թե չունի
Այդչափ ուրիշը։

Դեռ չի սահմանվել
«Առ ըստ պահանջի»,
Պակաս կամ ավել -
Քեզ շատ մի տանջի։

Եղածի համար
Եղիր շնորհակալ.
Համարիր հարմար
Ոչ առնել, այլ տալ։

Կկարգավորվի
Ամեն, ամեն ինչ.
Կթագավորի
Մեզ մի նոր փրկիչ

1985

* * *

Մի՛ դանդաղիր, սիրելիդ ի՛մ,
Այնտեղ մեզ սպասող կա.
Չմնանք կես ճանապարհին -
Ձմեռ է, ցուրտ, պարզկա։

Մի՛ դանդաղիր, մի՛ դանդաղիր,
Հեռուներին հավատա.
Հստակ կաց, մի՛ աղավաղիր,
Բախտը մեզ էլ կժպտա։

1986

* * *

Ինչե՛ր, ինչե՛ր մնացին
Անիրական, անկատար.
Արև, դու շուտ մայր մտար…
Ինչե՛ր, ինչե՛ր մնացին։
Ով կյանք, խենթ ու քմածին,
Բավ է, թող ինձ անվթար։
Ինչե՛ր, ինչե՛ր մնացին
Անիրական, անկատար։

1986

* * *

Հեգ հայրերը վաստակեցին
Ջերմ տքնանքով մի քրտնաթոր,
Որդիները շռայլեցին
Խրախճանքում խառնուփնթոր:
Հեգ հայրերը սակավապետ
Հույս դրեցին ապագային,
Որդիները կույր ու անգետ
Սպասում են պարագային:

1986

* * *

Ես շտապում եմ, դու հապաղում ես,
Իմ պարզ խոսքերը աղավաղում ես.
Քեզ դո՞ւր է գալիս, երբ մերկ հոգուս հետ
Այդպես անպատեհ, անխիղճ խաղում ես:

Երբ ես լռում եմ, դու աղմկում ես,
Քնից, հանգստից հանում, գրկում ես.
Առաջնորդում ես ինձ մութ արահետ,
Ու սարսափահար լուռ կարկամում ես:
*
Ես շտապում եմ, դու հապաղում ես:

1986

* * *

Ընտելացել են շունն ու կատուն,
Անքեն ապրում են նույն հարկի տակ,
Վարքով, արարքով հաշտ են ու շիտակ…
Ընտելացել են շունն ու կատուն:
Կատուն արդ ճոն չէ, այլ տանը խանում,
Ու էլ շան համար չի կարում գդակ…
Ընտելացել են շունն ու կատուն,
Անքեն ապրում են նույն հարկի տակ:

1986

* * *

Անց ու դարձ են անում մայթով
Ահել, ջահել, այր ու կին,

Ողջագուրվում ջերմ հոգեթով,
Սեր մաղթելով մեկ մեկին։

Ողջույն առնում, ողջույն տալիս,
Շարունակում են ճամփեն.
Շտապում են. ետ դառնալիս
Գուցե նորից հանդիպեն։

Կյանքը, սակայն, անագորույն,
Մերթ այլ ընթացք ընդունում.
Հեռուները մերթ երկնագույն,
Մերթ անթափանց զուքս հագնում…

Դարձը, սակայն, անհնարին,
Հույսը փոխվում կարոտի.
Խառնվում են չարն ու բարին -
Տարանջատողն ո՞վ պիտի։

1986

* * *

Արևն ելավ, օրը բացվեց,
Կյանքը մտավ հունի մեջ.
Խենթ առօրյան ալեկոծվեց,
Բացեց հազար ելևէջ։

Երեկն եկավ ու շաղախվեց
Այսօրվա հարդ ու հողմին.
Հարցը հարցին քինով բախվեց,
Խոր ցավ զգաց իր կողին։

Օրը թեքվեց ու անվրդով
Թոհուբոհը խաղաղվեց.
Երկիր-երկինք կապույտ մի մով
Երազ ծովում ընկղմվեց։

1986

* * *

Կա՞ հավերժական գեթ մի բան կյանքում,
Այս հողի վրա և կամ երկնքում,
Որ ահ չունենա, որ մահ չունենա,
Եվ հաստատապես չունենա հերքում։

Օ՜, ժամանակն է, ժամանակը լոկ,
Տարածության մեջ, անտարբեր, անհոգ,
Մեծ հոլովույթն է անքեն արծարծում…
Ժամանակն արթուն և մշտանորոգ։

1987

* * *

Դիմակավորվում են նորից մարդիկ,
Կրում ակնոցներ լայն ու գունավոր -
Նոր ժամանակի ոգուն համեմատ,
Ու հաճախ փոխում բաճկոն ու վարտիք,
Պահպանում տարազ ու դիրք հարգևոր -
Ապազգային, անդեմ, անարմատ։

Դիմակավորվում են նորից մարդիկ…
Վաղ են կանխազգում շներն ու օձը
Ցնցումն ստորգետնյա երկրաշարժերի.
Գրավել է պետք կանգնվածք և դիրք -
Օգնում է մարդուն անցյալի փորձը,
Եվ վար ու վերը զույգ նժարների։

Դիմակավորվում են նորից մարդիկ,
Ու հաճախ փոխում բաճկոն ու վարտիք։

1988

* * *

Ես չեմ վարանել հանուն արդարի,
Հանուն ճշմարտի բռունցք կարկառել.
Մութ խավարում էլ ճրագ եմ վառել…
Ես չեմ վարանել հանուն արդարի։
Շատ են մեղքերը մեր անցնող դարի,
Արդ գալիքին ենք մեր հույսը հառել.
Ես չեմ վարանել հանուն արդարի,
Հանուն ճշմարտի բռունցք կարկառել։

1988

* * *

Հեյ-հե՜յ օրեր խառն ու դժվար,
Երկարելով դարձել եք դար.
Հազար փորձանք հարուցեցիք,
Դիմագրավելն, օ՜, անհնար։

Հեյ-հե՜յ օրեր խառն ու դժվար,
Ալան-թալան, մենք էլ ավար.
Թե տաճարներ կառուցեցինք՝
Լոկ Աստծո, ո՛չ մեզ համար:

Հեյ-հե՜յ օրեր խառն ու դժվար,
Նահանջում ենք, բայց ոչ հոժար.
Թվում է, թե կործանվեցինք
Տանուլ տալով զենք ու նժար…

Հեյ-հե՜յ օրեր խառն ու դժվար,
խառն ու դժվար:

1989

* * *

Որքան շատ սիրես,
Այնքան շուտ կանցնի.
Կյանքը էդպես է,
Քեզ չի հարցնի:

Իր պերճանքներով
Քեզ կխենթացնի.
Քեզնից հազար բան
Լուռ կթաքցնի:

Եվ կուրախացնի,
Եվ կլացացնի.
Ուր էլ ուզենա
Քեզ կհասցնի:

Որքան շատ սիրես
Էնքան շուտ կանցնի:

1989

* * *

Մեկին սիրում են,
Մյուսին ատում.
Անօգնականին
Բանտում ու դատում:

Ասողին, գողին

Ցմահ ազատում,
Մեղք չունեցողին
Խիստ դատապարտում։

Մեկը մեկի հետ
Չեն համեմատում.
Ահա այսպես է
Դարը ավարտվում։

1989

* * *

Երանելի օրեր էին՝
Երբ ջահել էինք.
Այն ի՜նչ, այն ի՜նչ թևեր էին
Մեզ հանում երկինք։

Բախտավորներ էի՞ կային,
Թե՞ լոկ մենք էինք.
Օ՜, հրաշք էր, ցոլք երկնային -
Լավ է, որ կայինք։

1990

* * *

Օ՜, հրճվանք հաղթանակի.
Որպես գարնան ավետաբեր,
Ճռվողյունով ծիծեռնակի
Պարուրում ես սրտերը մեր։

Թևավորում, որ սավառնենք,
Եվ սլացքով մի անկաշկանդ
Հորիզոններն ամեն հառնենք,
Ելնենք լեռներ ձյունագագաթ։

1990

* * *

Խաչված Հիսուսի վսեմ պատկերով
Հայացքիս դիմաց ուրվագծվեցիր.
Հոգիս դատարկ էր, եկար, լցվեցիր,
Խաչված Հիսուսի վսեմ պատկերով։
Ես համբարձվեցի հազար հարկերով.
Չհասա Աստծուն, ուղիս էր անծիր.

Խաչված Հիսուսի վսեմ պատկերով
Հայացքիս դիմաց ուրվագծվեցիր։

1990

* * *

Աստված, դու ոնց ես աշխարհն արարել
Այսքան գեղեցիկ, այսպես կատարյալ.
Արդ ծերացել ես, ասես դադարել…
Ու հայացքդ էլ դարձել է մռայլ։

Որքան գիտեի սուրբ աստվածները
Միշտ նույնը մնում ու չեն ծերանում.
Ինչպես հասկանանք քո ասածները՝
Որ միշտ ներկա են ու չեն հեռանում։

Եթե այդպես է, քո հայացքի տակ
Ո՞նց են հանդգնում չարիքներ գործել.
Ասում են իբր, կատա՞կ է, շիտա՞կ,
Քեզ կաշառե՞լ են, թե՞ միայն փորձել։

1990

* * *

Օ՜, սին տեսիլներ վերուստ առաքված,
Որ շլացնում եք լուսարձակի պես.
Հավաստի չեք դուք, չեմ հավատում ձեզ,
Օ՜, սին տեսիլներ վերուստ առաքված։
Խաբեություն է նենգորեն սարքված,
Որ մատուցվում է աշխարհին ի տես.
Օ՜, սին տեսիլներ վերուստ առաքված,
Որ շլացնում եք լուսարձակի պես։

1990

* * *

Մեծ ժամանակն է հավերժականը,
Իսկ մնացյալը՝ անցողական է.
Ծափ է, ծիծաղ է, լաց ու կական է.
Մեծ ժամանակն է հավերժականը։
Կարճ է, չի ձգվում կյանքի ուռկանը,
Անխղճությո՛ւն է, ողբերգակա՛ն է.
Մեծ ժամանակն է հավերժականը,
Իսկ մնացյալը՝ անցողական է։

1991

* * *

Չէ, չի ստացվում,
Ճամփեն չի բացվում,
Ցրտահար սիրտս
Չէ, չի տաքացվում։

Ցաքուցրիվ ենք,
Ու չենք միացվում.
Տես մեր կողերը
Ո՞նց են ցավացվում։

Դե եկ, համբերիր,
Մի՛ ըմբոստանա.
Օ՜, աստված, ներիր,
Հույս մի խոստանա։

Մեծ կործանումով
Թող Նեռը տուժի.
Ժամն է, թող մահը
Նրա տուն խուժի։

1991

* * *

Որտեղ է արևը քնում,
Որ մի գիշերում
Փոխվում¬մանկանում,
Միշտ այդպես շքեղ
Մնալ ցանկանում։
Որտեղ է արևը քնում։
Արդ իմ հուշերում
Իմ մանկությունն է
Այդպես արթնանում.
Ճիշտ այդպես էի
Արևագալը
Մանուկ ընկալում
Ու մանուկ մնալ
Միշտ ակնկալում։
Ես դեռ հիմա էլ կուզեի քնել
Մանուկ արթնանալ
Եվ անվերջ մանուկ

Մնալ ցանկանալ։
Մինչ ես անցել եմ
«Իմ սարի հետև»
Ու այսուհետև
Չեմ մագլցելու
Մացառներն ի վեր.
Այդ հասկանալու -
Պետք է լինել ծեր։

1991

* * *

Ասում են՝ իր հետ ոչինչ չի տանում
Աստծո աշխարհից հեռացողը.
Դրա՞ համար է, որ ոմանք վատնում
Ողջ ունեցածը, նոր մեկնում հողը։

Օ՜, ոչ, սխալ է, տանում են, տանում,
Ով չար է, լպիրշ՝ իր նենգությունը.
Եվ ով բարի է, բարի էլ մնում,
Աշխարհին թողնում իր բարությունը։

1991

* * *

Ինչու՞ հատու չէ հարվածդ, Տեր իմ,
Մերթ վրիպում է նետը աղեղիդ.
Արդ մոլեգնում է խենթ Նեռը հոպիտ…
Ինչու՞ հատու չէ հարվածդ, Տեր իմ։
Մենք քո երկնածը՝ քեզ հավատարիմ,
Մեզ չես խնայում, դու տեր չես դերիդ.
Ինչու՞ հատու չէ հարվածդ, Տեր իմ,
Մերթ վրիպում է նետը աղեղիդ։

1992

* * *

Պատանությանս պայծառ պահերից
Մի փոքրիկ դրվագ ինձ այցի եկավ
Ու ջերմ պարուրվեց. երազ էր հարկավ՝
Պատանությանս պայծառ պահերից։

Երջանիկ բոլոր շահնշահերից,
Ես հարստացա սերերով անբավ.

Պատանությանս պայծառ պահերից
Մի փոքրիկ դրվագ ինձ այցի եկավ։

1992

* * *

Հացի հերթի սպասում -
Ոչ շատ մոտ եմ, ոչ շատ հետ.
Մարդ են՝ ասում են, խոսում,
Աղմկում են, հուզվում մերթ։

Համբերատար, անվրդով,
Դանդաղ շարժվում հերթի հետ.
Ես ներքին մի խորհրդով
Մտքով բռնած արահետ,

Վերանում եմ աշխարհից,
Մի վառ լույսի ակնդետ,
Որ ծագում է սուրբ սարից,
Հյուսում Միրաժ լուսակերտ։

1992

* * *

Միտքն անօրինակ սլացքներ ունի,
Մտքի հետևից լույսն էլ չի հասնում.
Միտքը հետախույզ մթին անհունի՝
Ամեն ձայն լսում, ամեն ինչ տեսնում։

Մարդկային անխոնջ միտքն է ստեղծել
Նույնիսկ աստծուն, նույնիսկ Քրիստոսին.
Եվ այնուհետև աստծուն ակնածել,
Իմաստով օժտել ծուռ Եզոպոսին։

Մարդկային միտքը, օ՜, աստվածային
Ու անչափելի հրաշքն է կյանքի.
Խոնարհվիր, ով մարդ, աստծո ընծային,
Նա զավակն է քո, քո անդուլ ջանքի։

1992

* * *

Մարդ, էությունդ նախ Մարդ լինելն է,
Որ ճանաչում է սեր ու սրբություն,

Որ մահից հետո կա և հարություն ...
Մարդ, էությունդ նախ Մարդ լինելն է։
Չարի դեմ, ով Մարդ, զինել, զինվելն է.
Օ՜, չիք ամենայն խղճահարություն.
Մարդ, էությունդ նախ Մարդ լինելն է,
Որ ճանաչում է սեր ու սրբություն։

* * *

Բախտս չբերեց,
Իմ մոտիկները, որ Մեծեր էին,
Ինչ փույթ, ծեր էին,
Շատ վաղ գնացին.
Նրանք այս կյանքում
Ձեռներեց էին ու … երեց էին,
Ավա՜ղ, գնացին.
Բախտս չբերեց։

1993

* * *

Լուռ տագնապում է արդարությունը,
Ու տեղ չի գտնում գլուխը դնի.
Փնտրում, չի գտնում կորցրած տունը,
Որ մի պահ անքեն, անվրդով քնի։

Ու տեղ չի գտնում գլուխը դնի,
Բոլոր բարձերը կանուխ զավթել է
Նոր անարդարը՝ ժառանգը հնի,
Այլընտրանք չկա, ինքը հաղթել է։

Փնտրում, չի գտնում կորցած տունը,
Ինչ որ անկյունում լուռ ծտպվել է,
Ահա թե ուր է արդարությունը,
Արդարությունը, օ՜, ծեծկռտվել է։

1993

* * *

Դու առյուծ սարսափազդու,
Քեզ չեն հանդգնի ծեծել.
Քեզ մարդը միշտ ակնածել…
Դու առյուծ սարսափազդու։
Դրսում Տեր կլինես դու,
Եվ կսկսեն քեզ քծնել.

Դու առյուծ սարսափազդու,
Քեզ չեն հանդգնի ծեծել։

1993

* * *

Որբանոցում քաղցում էինք,
Եվ օրնիբուն «արածում».
Թեպետ մանուկ, թախծում էինք,
Ցավ, խղճմտանք հարուցում։

Որբեր, որբեր անմխիթար,
Զարկված, զրկված անտերունչ,
Երազում են սեր անխաթար,
Գիշեր ու տիվ լուռ ու մունջ։

Տեր, տերություն արա որբին,
Հասակ քաշի, զորանա.
Կյանքն իր կոփի, որպես դարբին,
Որբությունը մոռանա։

1995

* * *

Իմ սերունդը գնաց,
Գնաց ու… ետ չնայեց.
Ինքն իրեն չխնայեց՝
Իմ սերունդը գնաց։

Աստծուց խռով մնաց,
Ոչ մի հույս չփայփայեց.
Իմ սերունդը գնաց,
Գնաց ու… ետ չնայեց։

1996

* * *

Դեռ չհասկացած թե որն է վայելքը
Ողջ դարը անցանք այսպես վազեվազ.
Եկանք ու հասանք վերջը՝ հազիվհազ…
Դեռ չհասկացած որն է վայելքը։

Արդ գայթակղում լայն բացված ելքը,
Իսկ կանչն անընդմեջ, ձիգ ու հանապազ…

Դեռ չհասկացած որն է վայելքը,
Ողջ դարը անցանք այսպես վազեվազ:

1996

* * *

Ձայներ, ձայներ հեռվից հասնող,
Արձագանքներ սիրո կանչի,
Կորուստների ու թառանչի -
Ձայներ, ձայներ հեռվից հասնող:

Անթառամ սեզ հոգում բուսնող,
Կարմիր ու սև թերթ կակաչի…
Ձայներ, ձայներ հեռվից հասնող,
Արձագանքներ սիրո կանչի:

1996

* * *

Անապատ են քշվել մերոնք,
Լլկանքով, անվայել մահով.
Կեռ յաթաղանի ահով
Անապատ են քշվել մերոնք:

Անողորմ փշրել գանգ ու կոնք
Դահիճները սուլթանի ահով.
Անապատ են քշվել մերոնք,
Լլկանքով, անվայել մահով:

*

Անապատ են քշվել մերոնք,
Մատնվել մահվան մանգաղին,
Կորստյան փոթորկի խաղին…
Անապատ են քշվել մերոնք:

Այդպես անտեր ու անամոք
Գերվել գայլասեր ճիվաղին.
Անապատ են քշվել մերոնք,
Մատնվել մահվան մանգաղին:

1996

* * *

Աստվածները երևի
Նույնպես մայրեր են եղել

Կյանք ու սեր են մեկտեղել
Աստվածները երևի։

Այդ գաղտնիքն է վերևի՝
Միրահարվել, գեղգեղել…
Աստվածները երևի
Նույնպես մայրեր են եղել։

1996

* * *

Ա

Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Ըմբոշխնիր վայելքներն այս բոլոր,
Աշխարհը ծագեծագ՝ չորսբոլոր...
Ով մարդ, որ աշխարհ ես եկել։

Այս է, ու վերջ, չես գալու մեկ էլ.
Ամենն ավարտվում թավագլոր...
Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Ըմբոշխնիր վայելքներն այս բոլոր։

Բ

Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Դարձել հասուն ու կորովի,
Գործիր խելոք ու նորովի…
Ով մարդ, որ աշխարհ ես եկել։

Աշխարհին տուր, ինչ որ հերկել,
Բերք ու բարիք ապահովի…
Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Դարձել հասուն ու կորովի։

Գ

Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Այդ էլ բախտ է անմեկնելի,
Ափսո՛ս, սակայն, անկրկնելի…
Ով մարդ, որ աշխարհ ես եկել։

Աստվածային հայրդ երկնել,
Միրիր նրան դու ավելի…
Ով մարդ, որ աշխարհ ես եկել,
Այդ էլ բախտ է անմեկնելի։

1996

* * *

Առավոտից սպասում եմ,
Օրը եկավ, անցկացավ.
Ինչ փույթ ասում ու խոսում եմ՝
Սիրտս փլվեց, դալկացավ։

Առավոտից սպասում եմ,
Նա ուշացավ, ուշացավ.
Արդյոք ներսում, թե դրսում է…
Աշխարհն արար լիքը ցավ։

1997

* * *

Սովից փրկողը թեպետ գարին է,
Մենք նախընտրում ենք ցորենի հացը.
Մարդ, գնահատիր դու քո կերածը…
Սովից փրկողը թեպետ գարին է:
Դե որոշողը բերքի տարին է,
Տնօրինում ենք աստծո տվածը.
Սովից փրկողը թեպետ գարին է,
Մենք նախընտրում ենք ցորենի հացը:

1997

* * *

Օ՜, շատացել են պաշտոնյաները՝
Պետական մարդիկ, վարքով «անբասիր».
Սիրած խոսք ունեն «դու դեռ սպասի՜ր»…
Օ՜, շատացել են պաշտոնյաները:
Շիք ծառայական մեքենաները…
Ինչե՜ր են պատմում, դու միայն լսիր…
Օ՜, շատացել են պաշտոնյաները՝
Պետական մարդիկ, վարքով «անբասիր»:

1997

* * *

Ես էլ կանչել եմ մեր գութաներգը՝
Սուրբ, հոգեզմայլ մեր հորովելը,
Եզան, հոտաղի ջերմ գորովելը…
Ես էլ կանչել եմ մեր գութաներգը։
Այն տարածվում է, որպես օրհներգը,
Ու տիրական էր անեղծ թովելը.

Մի օր կանչել եմ մեր գութաներգը՝
Սուրբ հոգեպարար մեր հորովելը։

1997

* * *

Ինչու՞ այս կյանքում
Մարդ մարդուն լքում,
Միմյանց օրհասում,
Բայց չեն ամոքում։

Ինչու՞ այս կյանքում
Մարդ դավից կքում,
Մինչ ճակատագրի
Դեմքին չեն թքում։

1997

* * *

Աշխարհը ինձ պարտք մնաց,
Անտիպ թողեց գրքերս.
Չլռեցին կրքերս,
Աշխարհը ինձ պարտք մնաց։

Խութեր կային վերծանված,
Պղտորեցին մտքերս.
Աշխարհը ինձ պարտք մնաց
Անտիպ թողեց գրքերս։

1998

* * *

Չեղավ, չեղավ, չհաջողվեց,
Խառնիխուռն էր ու խճողվեց.
Մատդ խառն էր, Տեր երկնային,
Ինչ որ մի բան աղավաղվեց։

Ընդվզում կար, չխաղաղվեց,
Ափը չոր էր, բայց հեղեղվեց.
Թեպետ առիթներ չկային,
Միտքս նորից, նորից շեղվեց։

1998

* * *

Տերը Տեր է նրանով,
Որ տերություն է անում.
Երբ սուտ չկա նրանում:
Նա մի անտես շնորհով
Մեզ ճանապարհ է հանում…
Տերը Տեր է նրանով,
Որ տերություն է անում:

1998

* * *

Իմ նոր գործերում տեղաշարժ չկա.
Երկար, տևաբար դոփում եմ տեղում.
Կյանքը կատակում, հոգուս հետ խաղում.
Իմ նոր գործերում տեղաշարժ չկա։
Գրքեր ու փաստեր, տվյալներ առկա.
Չեմ հանդուրժելու սուտ, աղավաղում.
Իմ նոր գործերում տեղաշարժ չկա.
Կյանքը կատակում, հոգուս հետ խաղում։

1998

* * *

Իննսունութը, ոչ, իմ տարին չէր.
Վթարներ եղան, ցավոտ անկումներ.
Եվ ամեն անգամ անդարձ կորուստներ...
Իննսունութը, ոչ, իմ տարին չէր։

Չէի դժգոհի, թե խիստ բուք փչեր.
Ճամփիս հարուցեր նոր¬նոր արգելքներ...
Իննսունութը, ոչ, իմ տարին չէր,
Վթարներ եղան, ցավոտ կորուստներ։

1998

* * *

Ինձ օգնության ձեռք մեկնեց
Բարեկամը, օ՜, իմ հին.
Նա բարձրացավ, եղավ մեծ,
Որպես Տիր աստվածուհին։

Ու նրա հովանու տակ
Ես կբացվեմ աշխարհին.

Աշխարհ, դարձիր անպարփակ,
Որպես Տիր աստվածուհին։

1998

* * *

Երբ փղերը ծերանում,
Առօրյայում թերանում,
Թողնում են ու կամովին
Ընկերներից հեռանում։
Նրանց ոչ ոք չի կանչում,
Գնում, գնում են կորչում,
Արծիվներն անգամ այնտեղ
Չեն ճչում, չեն կռնչում։

1999

* * *

Ես ութսունութ տարեկան եմ,
Բարի Տերը դեռ կպահի.
Ես այս դարի ստույգ վկան եմ
Կործանումներ տեսած գահի։

Փույթ չէ, թե ինձ չեն ճանաչում,
Չեն ընծայում պարգև, նշան,
Շփոթում են (չեն ամաչում)
Գայլի հետ կամ պառաված շան։

Այո, այո, օրեր կգան,
Ու կփոխվեն տեղերը մեր.
Փույթ չէ, թե ինչ մորթի հագնեն,
Կտարբերվեն տեր ու անտեր։

1999

* * *

«Դասական» կարդալս կիսատ մնաց,
Կլանված էի հույժ գործերով՝
Անխտիր՝ փոքրերով և մեծերով...
«Դասական» կարդալս կիսատ մնաց։
Ու ցավն այդ չանցավ, այդպես էլ մնաց
Սուր փշերի պես հոգիս քերծելով.
«Դասական» կարդալս կիսատ մնաց,
Ծայրից¬ծայր կլանված հույժ գործերով։

1999

* * *

Զավակն եմ անցած դարի,
Ինձ ոչ ոք չի ճանաչում.
Չեմ վշտանում, ամաչում,
Զավակն եմ անցած դարի։
Մինչ գործերս վիթխարի,
Համեստորեն չեն ճչում.
Զավակն եմ անցած դարի,
Ինձ ոչ ոք չի ճանաչում։

1999

* * *

Աշխարհը սիրո մազից է կախված,
Էն էլ բարակել, լարվել, ձգվել է.
Ահը շուլալվել, հոգիս զգվել է...
Աշխարհը սիրո մազից է կախված։
Ի՞նչ ես մտածում միահեծ աստված,
Ամպերի գույնը մթնել, մգվել է...
Աշխարհը սիրո մազից է կախված,
Այն էլ բարակել, լարվել, ձգվել է։

1999

* * *

Որմի սրբատաշ քարերի վրա
Անուն, ազգանունս փորագրեցին
Այդ հույժ կարևոր պետք համարեցին
Որմի սրբատաշ քարերի վրա։
Այդ մոնումենտ չէ ու ոչ էլ արձան,
Լոկ հավաստումն է այն ճշմարտության,
Որ ես եմ մի օր արարել, օ՜, այն.
Այդ մոնումենտ չէ ու ոչ էլ արձան։
Հայ քարգործները դեռ վաղ օրերում
Այդպես թողել են նշաններն իրենց,
Որ ստեղծել են գործեր մեծամեծ
Հայ քարգործները դեռ վաղ դարերում։
Անհամեստություն թող չհամարվի,
Ներշնչող լինի նորերին գալիք.
Որ ի գործ դնեն և քանքար և կիրք.
Անհամեստություն թող չհամարվի։

1999

* * *

Կապուտակ ծովը,
Երկնքի մովը,
Էն հեռու հեռվում
Իրար են գալիս
Ու սիրով փարվում։
Տիրոջ կամքով է,
Սրտով, հոգով է
Այդ ամենն արվում
Երևի նա էլ
Խանդում է, այրվում։

1999

* * *

Ա՜խ, այդ կարմիր գինին հայոց,
Թունդ է, ասես կրակ ու բոց.
Մեկեն բացում դռները գոց...
Ա՜խ, այդ կարմիր գինին հայոց։
Ա՜խ, այդ կարմիր գինին հայոց
Ընծայում է ջերմ գիրկ ու ծոց,
Բուժում հազար վերքեր ու խոց.
Ա՜խ, այդ կարմիր գինին հայոց։
Ա՜խ, այդ կարմիր գինին հայոց,
Մերթ կործանում բերդ ու ամրոց,
Կյանք պարգևում ժողովրդոց.
Ջան այդ կարմիր գինին հայոց։

1999

* * *

Ամեն ինչ անցնում, ամեն ինչ գնում,
Կարոտներս են, որ մնում ինձ հետ,
Որ մերթ հորդանում, դառնում ելման գետ...
Ամեն ինչ անցնում, ամեն ինչ գնում։
Ու զարմանում եմ, ոնց եմ դիմանում,
Մթնում կորչում են կածան, արահետ...
Ամեն ինչ անցնում, ամեն ինչ գնում,
Կարոտներս ծվարում ինձ հետ։

2000

* * *

Անցավ և այս կիրակին.
Հավելում եմ կրակին
Հաճարի սմքած կոճղեր,
Թեքվում իմ ծեր կռնակին։

Բուքը զարկվում բռնակին,
Ձյուն կուտակում դռնակին.
Տար, համբերիր մրսող սիրտ...
Անցավ և այս կիրակին։

2000

* * *

Բան չի մնացել իմ վերջին գաղթից,
Բայց արի ու տես իմ էս փուչ բախտից,
Սոխակներ եկել, կղկղում, կանչում
Սուրբ աստվածամերձ իրենց դրախտից։
Տեր, ինձ խնայիր, փրկիր նենգ ախտից.
Ես չեմ գանգատվել իմ սովոր բախտից.
Թող հանգիստ սրտով ճամփես ավարտեմ,
Ու անկախանամ սիրո կախարդից։

2000

* * *

Ինձ թվում է, երբ գնացի,
Ելքի դռնից դուրս չթողին.
Բաց էր ճամփես վերադարձի,
Տանն ունեի տաք անկողին։
Դե բացառիկ բախտ է սա էլ,
Կրկնակի կյանք ¬ մի ամբողջ դար.
Տերն է թոթվել, ուսս շոյել,
Համարելով այդ հույժ արդար։
Անհրաժեշտ էր, անելիք շա՛տ,
Ժամանակը ոսկուց էլ թանկ.
Պահ չլինի թող անաշխատ,
Ամենից վեր՝ մարդկային կյանք։

2000

* * *

Ինչ խաղ էլ փորձել, տանուլ եմ տվել,
Առանց մարզիչի առաջ եմ նետվել,

Մինչ որոգայթներ անտես, անպակաս.
Ես հանիրավի ընկրկել, պարտվել։
Եվ կրկին ահա պակաս կամ ավել,
Որքան տվել եմ, ձգտել՝ առավել,
Կյանքում ինչ որ կերպ և ինչ որ չափով
Առանց նեղվելու տեղ եմ գրավել։

2000

* * *

Ես այդպես էլ գիտեի,
Որ մեր կյանքում այս ներկա
Ամեն, ամեն ինչ էլ կա՝
Թունոտ նախանձ,
Շան կաղկանձ.
Եվ խանդահեղձ
Ժպիտ կեղծ,
Չկամություն,
Լորձում, թույն,
Թշնամություն
Մի անհուն,
Փորձեր խարդախ՝
«Առ ու փախ»...
Ես այդպես էլ գիտեի։

2000

* * *

Հուսով եմ, ինձ կհաջողի,
Գնահատել ձեր պահվածքը,
Վերաբերմունքն ու նայվածքը
Հուսով եմ, ինձ կհաջողի.
Այդ վարմունք չէ հայ գրողի,
«Սեփական չէ այդ կալվածքը»,
Հուսով եմ, ինձ կհաջողի
Գնահատել ձեր պահվածքը։

2000

* * *

Միությունների նախագահ չեղա,
Կերուխումերում, օ՜, ագահ չեղա.
Փույթ չէ, շարքային, ամեն բան տեսնող,
Ու սրան¬նրան հիմք ու գահ չեղա։

Անում էի լոկ իմ անելիքը,
Ստանում էի հասանելիքը,
Միշտ հանգիստ խղճով դառնում էի տուն,
Ինձ զբաղեցնում էր սպասվող գալիքը։
Գալիքներ եկան, գալիքներ անցան,
Ոչինչ չփոխվեց, իջան, բարձրացան,
Էն նունյնանման նախագահները,
Իրենց արարքում ընչաքաղց դարձան։
Նոր է երևում ումից ինչ մնաց,
Ով ինչպես եկավ ու ինչպես գնաց,
Դե ինչ, կյանքն այդ է, ուրիշը չկա.
Նույն հեռուները եղան փակ ու բաց։

2000

* * *

Շոգ է, թունդ շոգ Երևանում,
Դժվար է, բայց դիմանում ենք.
Ծանոթներ ենք, իմանում ենք.
Շոգ է, թունդ շոգ Երևանում։
Արեգակն է ջերմն իր վանում,
Շունչներս առած կարկամում ենք,
Շոգ է, թունդ շոգ Երևանում.
Դժվար է, բայց դիմանում ենք։

2000

* * *

Բարդիները շոգ-կրակին չդիմացան,
Գագաթների նուրբ ճյուղերը չորացել են.
Ասես ձմեռ՝ տերևներից մերկացել են,
Բարդիներն այս շոգ¬կրակին չդիմացան։
Թե շոգն ինչ է, երևանցիք լավ իմացան,
Խոստովանենք, առույգ չեն էլ, խիստ թոշնել են,
Բարդիները այս շոգերին չդիմացան,
Գագաթների նուրբ ճյուղերը չորացել են։

2000

* * *

Արև, արև, խնայեցիր,
Դու մեզ լրիվ, օ՜, չայրեցիր.
Վերջին շունչը չփչեցինք
Արև, արև, խնայեցիր...

Դեռ ապրելու պահ թողեցիր
Ու շնչեցինք, ու շնչեցինք.
Արև, արև, խնայեցիր,
Դու մեզ լրիվ, օ՜, չայրեցիր։

2000

* * *

Չէ, չեմ հանդարտվում,
Թե որ չի դատվում
Նենգ հանցագործը,
Չի դատապարտվում։
Չի անդամահատվում
Հանցանքի փորձը.
Մարդ չի հանդարտվում,
Երբ չի մակարդվում
Արնաթոր լորձը։

2000

* * *

Մեծ Թամանյանին աշակերտեցի,
Ինձ ուսուցանեց իր վսեմ գործով.
Եվ հետո կյանքում ինչ էլ կերտեցի
Միշտ չափվում էի նրա արածով։
Այդպես էլ կյանքս ես ավարտեցի,
Անցնելով այրվող կրակագծով.
Մեծ Թամանյանին աշակերտեցի,
Ինձ ուսուցանեց իր վսեմ գործով։

2000

* * *

Մեծ Թամանյանին աշակերտեցի՝
Նրա գործերին վսեմափայլ,
Չունեցա ուսուցիչ մի այլ.
Մեծ Թամանյանին աշակերտեցի։
Հայեցի ոճով իմը կերտեցի,
Համարձակվեցի ես ¬ անայլայլ.
Մեծ Թամանյանին աշակերտեցի,
Նրա գործերին վսեմափայլ։

2000

* * *

Երբ վերծանեցի ստացածս գիրը
Պարտքիս գումարվեց իր վերադիրը.
Երբ փորձում էի թոթափել բեռից,
Խիստ սթափեցվեց իմ խոր թմբիրը։
Փույթ չէ, առկա է իմ վիմագիրը,
Հաղթանակում է մերթ պարտադիրը.
Արդեն ծլկել եմ ինձ խեղդող բեռից,
Անխոցելի է իմ անձնագիրը։

2000

* * *

Որոնումներս շարունակվում են,
Դրսում ու ներսում և ամենուրեք.
Որոշ ճամփաներ դեմս փակվում են,
Դե մեծ աշխարհ է, լայն ու անեզերք։

Պարզ չէ ինձ համար, կգտնեմ, թե՞ ոչ,
Դեռ կա՞ն, թե չկան կորուսյալներս.
Գնում են, գնում, հավերժական քոչ
Շա՛տ ենք միամիտ, օ՛, ուսյալներս։

Բայց միևնույն է, ես որոնում եմ,
Ի՞նչ եմ որոնում, ու՞մ եմ որոնում.
Գուցե՞ հենց այնպես՝ հա հորինում եմ
Ո՛չ, ում գիտեի, ես չեմ մոռանում։

2000

* * *

Անիծյալ լինեք, մեծ տերություններ,
Ձեր առօրյայում բյուր թերություններ.
Այս ձեր մեղքերն են անխիղճ ծանրացել,
Մեր մեղկ ուսերին դարձել օտար բեռ։

Անիծյալ լինեք, մեծ տերություններ,
Որ պարտադրում եք անմիտ օրենքներ.
Նրանք ծառայում լոկ ձեր շահերին,
Օ՛, փոքրերն են միշտ անտերունչ, անտեր։

Անիծյալ լինեք մեծ տերություններ,
Լսելի դարձրեք մերթ ճիչերը մեր.
Աստվածաստեղծ ենք մենք էլ ձեր նման.

Մարդակերպ եղեք, մեծ տերություններ։

2000

* * *

Ապրումներ, հուզմունք, ցավ ու տառապանք,
Եկել, լցվել են սիրտս անկապանք.
Ու խլրտում են, դադար չեն տալիս,
Մերթ չեմ իմանում ինչու եմ լալիս։
Չեմ էլ դժգոհում, հարազատ են ինձ,
Որպես տրտմություն և որպես թախիծ։
Ու երբ մթնում է, օրը հանդարտվում,
Ձերբազատվում եմ, հոգսից փարատվում։
Հուշերն են գալիս, ամենն իր հերթին
Խառնվում անկանգ հարաշարժ երթին։
Ես ինձ գտնում եմ այդ խառնարանում,
Նրանք ինձ առնում, իրենց հետ տանում։
Նորից մեկտեղ ենք՝ մոտ ու բարեկամ,
Պահն այդ, օ՜, թանկ է՝ զգում եմ, որ կամ։

2000

* * *

Ես կեռմաններում հեռավոր Կերչի,
Կրտսերագույնս հայոց մեծ երգչի,
Օ՜, ինձ վերադարձ չէի ակնարկում,
Անլուր պատանդս Ամենափրկչի։
Կարոտ աղբյուրի ու լույս կարկաչի,
Մատնված անզուսպ շաչ ու շառաչի,
Ես օրհնում էի անցնելիք ճամփաս
Պատերազմական օրերում վերջին։

2000

* * *

Էսօր քյուֆթա պիտի ուտենք,
Օ՜, տիկնոջս ծնունդն է.
Ախորժակով օղի ըմպենք,
Հոնի է, օ՜, շատ թունդ է։
Ու սալաթներ տեսակ¬տեսակ,
Համեմունքներ հայրենի.
Դե մեծ քեֆ է, ոչ մի կատակ,
Գինին է թարմ՝ Արենի։
Քեֆչիները պատրաստվել են,

Թամադան դասն է սերտում.
Նվերները դասդասվել են,
Սյուրպրիզներ են ավետում։
Էսօր քյուֆթա պիտի ուտենք,
Օ՛, տիկնոջս ծնունդն է.
Ախորժակով օղի ըմպենք,
Հոնի է, օ՛, շատ թունդ է։

2000

Ով մարդ

Տեր կանգնիր քո արածին,
Տարածին ու բերածին.
Զավակն էր Աստծո
Հերածին ու մերածին։

Տեր կանգնիր քո արածին,
Վարածին ու ցանածին.
Աջից, ձախից կտանեն
Հույսդ կապիր մնացածին։

2000

* * *

Կես դար է անցել, չեմ հանգստանում,
Թեպետ իմ տանն եմ, իմ Հայաստանում.

Բախտս չի բերում, և ամեն անգամ,
Հայտնվում է մի նենգ ու անզգամ.

Չարկամ արարած, հոգով անմաքուր,
Խիղճը կորցրած, թուրք է մի քաֆուր։

Քո ունեցվածքը քեզնից գողանում,
Մաքուր ձևանում ու չքմեղանում.

Տանում, նվիրում մի ստահակի,
Եվ վարձատրվում լրիվ¬կրկնակի՝

Մտերիմների անեղծ առևտուր,
Առնում են, տալիս՝ մաքուր տրիտուր.

Կես դար է անցել, չեմ հանգստանում,

Թեպետ իմ տանն եմ, իմ Հայաստանում։

2000

* * *

Դուք, որ մեզնից վաղ գնացիք,
Չիմացաք էլ ինչեր եղան.
Ձեր կարծիքն էլ մենք չիմացանք՝
Արժե՞ր բացել սփռոց¬սեղան։
Ձեզնից հետո անկախացան,
Ու թեպետ այն խրախուսելի,
Իր հետ բերեց նաև հանցանք՝
Անհարկադիր, խուսափելի։

2001

Գայանե Չեբոտարյանին

Էդվարդ Թոփչյանը
Եղա՞վ Ձեր տանը.
Նա փափագում էր,
Անցնում սահմանը։

Նա երազում էր
Հայրենի Վանը.
Կարծեց կգտնի
Ձեր համեստ տանը։

Անցավ, նա անցավ
Մի ուրիշ սահման.
Վշտից մահացավ
Ու ... չայցելեց Վան։

2001

* * *

Սիրուններ կային,
Որ ակամայից
Նկատելով ինձ
Մոտենում էին։

Սիրուններն այդ հին
Էլ չեն գալիս ինձ,
Դարձել երկնային -

Հեռացել ինձնից

Այդպես սկզբից
Զգտումը լավին
Անկոտրում, անբիծ
Կյանքն է տակավին։

2001

* * *

Օ՜, գործներս կիսատ մնաց,
Չավարտեցինք, չավարտեցինք.
Կյանք էր՝ մրցույթ, մենք պարտվեցինք,
Օ՜, գործներս կիսատ մնաց։
Տարի օր էր, թեքվեց, գնաց.
Մենք ընթացքից դուրս նետվեցինք.
Օ՜, գործներս կիսատ մնաց,
Չավարտեցինք, չավարտեցինք։

2001

* * *

Ինչ որ մեկը պիտի գար,
Պիտի գար ու չգնար.
Ով էր, ով չէր, չգիտեմ,
Նա պիտի գար ու մնար։

Ո՞վ էր գալու, մնալու
Գալը ինձ ի՞նչ էր տալու
Ո՞վ էր, ինձ ծածուկ ասեց.
Ես անտեղյակ, լուռ, հլու։

2001

* * *

Նայում եմ, նայում,
Ծանոթ դեմքերի լուռ պատկերներ են.
Մոտ ու մտերիմ հին ընկերներ են
Արդ ինձ հմայում
Իրենց հետ տանում օրերը այն վաղ
Ուսման, արարման, կերտումի խիզախ
Ամեն ինչ անցյալ,
Ներկա է միայն կարոտս անանց
Թեպետ պապանձվել, կանչում եմ նրանց

Անձայն, խռովյալ։

2001

* * *

Բոլորն էլ մակարդակ ունեն,
Բարձր ու ցածրը հարցրու.
Քոնը նույնպես հրամցրու
Բոլորն էլ մակարդակ ունեն։
Ոմանք «այն» դատարկ ունեն,
Դու դրան «ուշք» դարձրու.
Բոլորն էլ մակարդակ ունեն,
Բարձր ու ցածրը հարցրու։

2001

* * *

Եղեռն անցավ Խոջիվանքով
Համահարթեց ամեն ինչ.
Խանդն էր, եղավ կործանիչ
Եղեռն անցավ Խոջիվանքով։
Ազգայնական պղտոր ջանքով
Շիրիմները բնաջինջ,
Եղեռն անցավ Խոջիվանքով
Համահարթեց ամեն ինչ։

2001

Վ.Հ¬ին, Յու.Յա¬ին և նմաններին

Մեր արվեստի կրիտիկոսները
Այսպես ասած՝ պողոս¬պետրոսները
Մեզ հրամցրել են ոչ իրականը.
Այլ միայն՝ իրենց շատ դուրեկանը։

Ում որ ուզել են՝ ոսկեզօծել են,
Ում որ չեն ուզել՝ խենթ քարկոծել են,
Եվ կամ լռելյայն սահել, գնացել
Մերթ խոստովանել, իբր «մոռացել»։

Ցուցադրել են, մրցանակ տվել,
Խոսք էլ չեն բացել՝ «պակաս կամ ավել»։
Ու տարիների սուտ կուտակումով
Ճանաչում բերել խղճի վակուումով

Կոչում շնորհել, պաշտոն ու պատիվ
Անառարկելի, օ՜, իմպերատիվ...

Երեխաների փուչիկը որպես
Ի վերջո պայթում, օ՜, սիրունատես
Պատկեր ու վիճակ աննախանձելի
Անսպասելի, հակադարձելի։

Դե օրինակներ ամենքն էլ կասեն,
Անհամբերները երկար չսպասեն
Կյանքը եղել է ճշտորեն այդպես
Այս անգամ խոսքս ուղղում եմ
Օ՜, քեզ։

2001

* * *

Չարենց, դու մեծ ես,
Ուրեմն անեղծ ես.
Ասա, ինչպես ես
Գործս որակում։

Կարծիքներ պես, պես,
Անդեմ ու անտես,
Օ՜, անվերջ այսպես
Չեն եզրափակում։

Միմյանց հակասում,
Ասում, բամբասում
Սխալ դասդասում
Ոնց շրջափակում

Ավա՜ղ դու չկաս.
Հույս չկա, թե գաս՝
Ինձ տանես Պառնաս
Ուր միտք չեն լլկում։

2001

* * *

Խանգարել են, խանգարվել եմ,
Ես ամեն մի ձեռնարկում.
Շատ եմ փորձել ձերբազատվել
Չեմ գտել ոչ մի փրկում։

Միթե, միթե ես գերվել եմ,
Կալանվել գետնահարկում.
Խանգարել են, խանգարվել եմ,
Ես ամեն սուրբ ձեռնարկում։

2001

* * *

Ուզել եմ գալ ձեր կողմերը,
Ու սպասել եմ երկար, երկար
Հանդիպմանը մեր անհնար.
Ուզել եմ գալ ձեր կողմերը։
Ո՜հ, կանխեցին ցուրտ հողմերը
Նախընտրեցի այլ ճանապարհ.
Ուզել եմ գալ ձեր կողմերը,
Ու սպասել երկա՜ր, երկար։

2001

* * *

Մեր գետը հաճախ էր վարարում,
Անարգել ուզածն արարում.
Քշում, տանում արմատախիլ,
Կատակում, անկարգ գալարում։
Մարգագետիններ տիղմով լցվում,
Տեղ¬տեղ ջրերի նոր հուն բացվում.
Արդ չեմ էլ հիշում թե ինչպես էր
Հոշոտված այգին կենդանանում։

2001

* * *

Կապիտալիզմը ես չեմ ընդունում,
Զզվում եմ նրա շերտավորումից.
Օ՜, թալանում են, պարզ չէ, ով ումից...
Կապիտալիզմը ես չեմ ընդունում։
Բոլոր «իզմերն» են ախտից դժգունում,
Ոչինչ չենք շահում զոռ ծառացումից...
Կապիտալիզմը ես չեմ ընդունում,
Զզվում եմ նրա շերտավորումից։

2001

* * *

Մարդիկ ծնվում են մերկ ու հավասար,
Մինչ բարուրներն արդեն տարբերվում,
Մայրական կաթը տարբեր է մերվում,
Մարդիկ ծնվում են մերկ ու հավասար։
Օ՜, Տերը թե որ աշխարհը մնար,
Ապրեր մարդկանց մոտ, և ոչ վերևում...
Մարդիկ ծնվում են մերկ ու հավասար,
Մինչ բարուրներն արդեն տարբերվում։

2001

* * *

Մի թող հոգումդ դատարկ տեղ մնա,
Սատանան իսկույն ներս կսղոսկի.
Ամեն արարքիդ կիշխի, կհսկի...
Մի թող հոգումդ դատարկ տեղ մնա։
Ու թե հալածես, թողնի ու գնա
Յոթին կբերի ցեղն այդ տատասկի
Մի թող հոգումդ դատարկ տեղ մնա,
Սատանան իսկույն ներս կսղոսկի։

2001

* * *

Նախ պիտի կարդաս,
Զգաս, հավատաս,
Նոր միայն դատես,
Ապա և վատես,
Օ՜, լավը¬վատից,
Սուրբը կավատից։

2001

* * *

Օրերիս գրքում մեր առօրյան է,
Քսաներորդ դարում մեր ապրած կյանքը.
Մեր խնդությունը, մեր տառապանքը,
Օրերիս գրքում մեր առօրյան է։
Աստվածատեսիլ և աստվածաշեն
Լայն, հուռթի դաշտեր, լեռներ հոյաշեն
Մեր հայրենիքն է, օ՜, աստվածամերձ
Օրերիս գրքում բյուր հարազատներ,
Մայրեր սրբացած, պաշտելի դարձած,
Եվ սիրելիներ չվերադարձած

Օրերիս գրքում՝ բյուր հարազատներ

Եվ սերեր, սերեր, օ՜, ամեն ինչում
Հողի ու ջրի ու ցորեն հացի.
Չախչախի կանչը հին ջրաղացի
Եվ սերեր, սերեր, օ՜, ամեն ինչում։

2001

* * *

Մեկնելու պահին նա մենակ մնաց,
Գնացել էին, սարսուռ, դող զգաց
Ուժ չէր մնացել, ոչինչ չէր հիշում
Անէությունը հայտնվեց անլաց։

Ապա գոցվեցին բոլոր դռները
Եվ մշուշվեցին ծով հեռուները.
Մի այլ աշխարհ էր գիրկն առել նրան
Ուր չեն տարբերվում հինն ու նորերը։

Հավասարվում են, դառնում անխանդ,
Սուրբ սովորույթով, ինչպես հնավանդ
Պատմություններում միմյանց հաղորդվող
Ավել, պակասով, պարզ ու անկաշկանդ։

*

Մեկնելու պահին նա մենակ մնաց,
Անէությունը հայտնվեց անլաց։

2001

* * *

Իմ փոքրիկ, փոքրիկ տրիոլետներում,
Պարզ ու անպաճույճ այս քառյակներում,
Դարավոր կյանքի պատկերն է անսուտ
Համեստ ծպտվել, բայց և չի լռում։
Մերթ ալեկոծվում, լարված գոմռում,
Ինքնաձաղկումով խախտված՝ հռհռում,
Ապա հանդարտվում, հոսում իր հունով,
Քարեքար զարկվում, ցավում, մռմռում։
Օ՜, որքան ուզեք ցավ կա ու կարոտ,
Փույթ չէ, թե փոքր են, խոսքը համառոտ.
Ժամանակն էր քիչ, վազք էր ու սլացք.
Նկատեք, այստեղ գույն կա, համ ու հոտ։

2001

* * *

Չար էր դաժան դիկտատորը,
Նա հայերիս չէր սիրում.
Քանի դեռ ղեկին տիրում...
Չար էր դաժան դիկտատորը։
Պարզ էր իր մտքի պղտորը՝
Մեզ Ալթայ էր «նվիրում».
Չար էր դաժան դիկտատորը,
Նա հայերիս չէր սիրում։

2001

Դիկտատորին

Մենք քեզ ատում էինք,
Դատապարտում էինք.
Նույնիսկ կյանքի գնով
Կյանքն ավարտում էինք։

Մեզ հավատում էին,
Մենք փարատում էինք
Մութը կործանարար
Մերթ վետվետում էինք։

Դու կործանվեցիր
Բայց չմոռացվեցիր
Դու հիշվում ես որպես նեռ
Ու այդպիսին մնացիր։

2001

* * *

Փոքրիկը հորն է ուզում,
Լալիս, բոլորին հուզում.
Փոքրիկը հորն է ուզում։
Ինչ ասեն, ինչպես ասեն,
Ողորկ սիրտը չակոսեն,
Ինչ ասեն, ինչպես ասեն։
Նա դեռ պիտի մեծանա,
Չարն ու բարին հասկանա,
Նա դեռ պիտի մեծանա։
Մինչ ցավն էլ է մեծանում,

Արնոտ քաթան ծածանում...
Մինչ ցավն էլ է մեծանում։
Օ՜, ժամանակը միայն
Կպարզի ողջը ունայն...
Օ՜, ժամանակը միայն։
Ու թերևս նա հաշտվի,
Երբ ամեն ինչը ճշտվի...
Ու թերևս նա հաշտվի։

*

Փոքրիկը հորն է ուզում,
Լալիս, բոլորին հուզում
Փոքրիկը հորն է ուզում։

2001

* * *

Հոր տաղանդը իր որդուն
Մոր կաթով է փոխանցվում.
Որպես նեկտար՝ լցվում...
Հոր տաղանդը իր որդուն։
Արթնանում, ճչում, թնդում,
Աչքը աշխարհին բացվում.
Հոր տաղանդը իր որդուն
Մոր կաթով է փոխանցվում։

2001

* * *

Ինչ արարում ես, քերթող,
Պիտի հայտնություն լինի.
Լինի նոր, զարմանալի
Ինչ արարում ես, քերթող։
Տող լինի այն, թե կոթող,
Լինի անսպասելի...
Ինչ արարում ես, քերթող,
Պիտի հայտնություն լինի։

2001

* * *

Հավերժորեն գնացիր,
Գիտեմ, էլ ետ չես գալու.
Մինչ գնալդ լացեցիր՝
Վերջին առիթն էր լալու։

Տիրոջն անքեն հայցեցիր
Առնի, ինչ ունես տալու.
Հե՛յ աշխարհ, աշխարհ, աշխարհ,
Ճամփա գալու, գնալու։

2001

* * *

Կանայք, սիրեք, կանայք, սիրեք,
Էությունը ձեր նվիրեք.
Հեռու հոռի, հոգեխռով
Արարքներից, օ՛, չավիրվեք։
Ու թե ունեք ցավացած վերք
Դեղ¬դարմանով ապաքինվեք.
Չինանա՝ խոց չդառնա,
Չդառնա վիշտ, չդառնա վերք։

2001

* * *

Գնացողն իր հետ կարոտ է տանում,
Ինքն էլ իր հերթին կարոտ է դառնում.
Գնում, խառնվում անհուն կապույտին,
Այնտեղ հոգու հետ ազատ սավառնում։
Ա՛խ, կարոտները, այդ կարոտները,
Հեռացողինը, ու նաև մերը.
Մեզ մաշում, մաշում, ոչինչ չեն թողնում
Ի՞նչ է մտածում երկնային Տերը։

2001

* * *

Կյանքում ամեն ինչ իր ժամը ունի՝
Իր ժամանակը գործում թրծվելու.
Ընդդիմանալու, ու կամք մրցվելու,
Կյանքում ամեն ինչ իր ժամը ունի։
Դավթի ձեռքերում թուրը հավլունի
Ժայռեր էր ճեղքում դավից փրկվելու...
Կյանքում ամեն ինչ իր ժամը ունի,
Իր ժամանակը գործում թրծվելու։

2001

* * *

Այնպես եմ ուզում ոմանց մոռանալ,
Քանզի հիշելիս սիրտ են ցավացնում.
Գնում ու գալիս ու դեմս ցցվում...
Այնպես եմ ուզում ոմանց մոռանալ։
Անտանելի է անվերջ դառնանալ,
Ժամերն են անցնում, սիրտս չի բացվում.
Այնպես եմ ուզում ոմանց մոռանալ,
Գնում են գալիս ու դեմս ցցվում։

2001

* * *

Գլորվեցի, թավալվեցի,
Փառք Աստծո՝ էլի պրծա.
Ինչ էլ ապրեմ, այդ ինձ ընծա...
Գլորվեցի, թավալվեցի։
Մեղքիս համար, օ՜, ներվեցի,
Դե ուրեմն, բախտ իմ ցնծա։
Գլորվեցի, թավալվեցի,
Փառք Աստծո, որ լավ պրծա։

2001

* * *

Միք տարանջատվի լավի ու վատի,
Ողջագուրվեցեք զերթ հարազատի.
Մեր ազգուտակին այդ է սազական
Մենք աղոթողներ նույն սուրբ հավատի։
Ոչ մի խորթություն անձի ու արյան,
Կյանք ըմբոշխնեցեք սիրազեղ, բորյան,
Այն անցավոր է, օ՜, հազար ափսոս,
Դուք միշտ իմը՝ հավիտենից¬հավիտյան։

2001

* * *

Հայացքս թեքվում ակամա
Քեզ եմ որոնում մտահոգ.
Արև է, կեսօր է շոգ՝
Հայացքս թեքվում ակամա։
Դու քեզնում փակված հիմա...
Օ՜, աներևույթ դու մոգ.
Հայացքս թեքվում ակամա՝
Քեզ եմ որոնում մտահոգ։

2001

* * *

Չզլացավ վրաս նայել իմ շիք հրեուհին՝
Վաղ օրերի համակրելի ընկերուհին.
Նա ոչ ժպտաց, ոչ բարևեց, ոչ էլ հեգնեց,
Օ՜, պարզապես լուռ վերապրեց պահերը հին։

Նա շտապեց, որ չմատնի խռովքն այս նոր,
Չկրկնվեն այն, որ եղան թավագլոր
Խոր մութերում, թփուտներում, մացառներում...
Չխանգարվի թող առօրյան, օ՜, սուտ անդորր։

2001

* * *

Ինձ հանդուրժել ես ու ներել, ներել,
Հպարտ գլուխս դեմդ խոնարհել,
Բարեկամացել ըմբռնողությամբ
Օ՜, պատշաճությամբ ու մարդավայել.

Ու այդ ամենը թողեցինք հեռվում
Այնտեղ, ուր մովն ու ծովը մերվում
Անհասանելի եզրերում անծիր
Որտեղից ոչինչ ետ, ետ չի բերվում։

2001

* * *

Սիրո երգ հյուսել ինձ չի պատշաճում,
Հերոսություն չէ, կամ նոր նվաճում.
Ամեն ինչը իր ժամանակն ունի
Վարդ¬մանուշակն էլ գարնանն է աճում։

Մի բան կա սակայն, որ «սեր» ասածը
Շատ չի տարբերում «նորն» ու «անցածը»,
Ամեն մեկը իր համն ու հոտն ունի,
Նաև չի խառնում թարխունն ու դաղձը։

2001

* * *

Մեր բակը իրոք, նաև նրանցն էր,

Կերած¬խմածը նույն ջուրն ու հացն էր.
Օ՜, նրանք ինչու շատ վաղ գնացին,
Մի՞թե Աստծո խիստ սահմանածն էր։

Այստեղ էր ապրում Շարա Տալյանը,
Հրաչյան Ներսիսյան և Վաղարշը,
Վավիկ Վարդանյանը, Գաբրիելյանը,
Օ՜, հայ արվեստի աստղեր էին մեծ
Օ՜, Տերն էր, նրանց որ մեզ նվիրեց
Բայց դե շուտ տարավ՝ գործ էր անիրավ
Ու մեկնումեկին երկար չպահեց։

2001

* * *

Թումանյանը Աղայանին
«Ասլան ապեր» էր ասում.
Աղայանը Թումանյանին
Արդար «ասլան բալասի».
Նրանք միմյանց լավ հասկանում
Ադաթով հարգում, սիրում,
Հայաստանում, Վրաստանում
Բոլոր սրտերը տիրում։
Այդ հիշվում է ու կհիշվի
Սերունդները կիմանան
Նրանց ծնունդը կնշվի
Աղայան ու Թումանյան։

2001

* * *

Նոր համոզվում եմ, որ արդեն այն չեմ,
Ի՞նչ փույթ, թե դեմ եմ, կամ համաձայն չեմ.
Փույթ չէ, հաշտվում եմ, նաև տագնապում
Ո՞ր մեղքիս համար պիտի ամաչեմ։

Կարող եմ միայն անքեն ափսոսել,
Ինչ որ ծածուկ էր՝ բացեբաց ասել.
Այն, ինչ լոկ իմն էր, բոլորին մնա
Պետք չէ ընդվզել, ժխտել, բացասել։

Այսպես ամեն ինչ իր կարգով գնում,
Ինչ որ բաներ կան, որ միշտ էլ մնում.
«Գալու¬գնալու» գործը Տիրոջն է

Տիեզերական օրենքն անանուն։

2001

* * *

Մեծամիտն ես երևում,
Հնդկահավի պես փքված.
Դու՝ տիրոջից վաղ լքված,
Մեծամիտն ես երևում։
Քեզ չկարծես վերևում,
Պարզ զինվոր ես քիփ ձգված.
Մեծամիտն ես երևում,
Հնդկահավի պես փքված։

2001

* * *

Ես լավ հիշում եմ բոլորիդ, բոլորիդ,
Ձեզ, վաղ գնացած իմ հարազատներ,
Իմ անդավաճան սուրբ պայազատներ…
Ես լավ հիշում եմ բոլորիդ, բոլորիդ։
Ժամանակներ էին խարդախ ու բիրտ.
Իսկ վերևներում՝ անօրեններ…
Ես լավ հիշում եմ բոլորիդ, բոլորիդ,
Ձեզ, վաղ գնացած իմ հարազատներ։

2001

* * *

Մենք ներս ու դուրս հիմա չունենք,
Նույնիսկ միտքն են ճիշտ կռահում.
Էլ ոչ մի հույս զենք-զրահում…
Մենք ներս ու դուրս հիմա չունենք։
Մենք անպաշտպան մերկ թռչուն ենք,
Ապահով չէ Տերն իր գահում…
Մենք ներս ու դուրս հիմա չունենք,
Նույնիսկ միտքն են ճիշտ կռահում։

2001

* * *

Եկել եմ կանգառ, քեզ եմ սպասում
Ու անկեղծորեն ահա բամբասում.
Եղած ու չեղած մեղքեր հիշելով

Դասակարգում եմ, ուշիմ դասդասում։
Ուրիշ ոչ ոքի, քեզ հետ եմ խոսում.
Չեն ոգևորում պատմածներս քեզ,
Ջրի պես անխոնջ՝ անցնում ես, հոսում։

2001

* * *

Վարպետը արծիվ է քանդակում,
Նա գիտի՞ արդյոք, որ ինքը
Ազատությունն է վանդակում։

Օ՜, նա արդեն էլ չի շնչում,
Նա արծվենի, էլ չի շնչում,
Չի կռնչում ու չի ճչում։
Թե կարող ես, շունչ տուր, Վարպե՛տ,
Մարդավարի խոսիր իր հետ.
- Ավա՜ղ, շունչը Տերն է տալիս,
Այն էլ միայն վերուստ գալիս,
Օ՜, ոչ, վարպետ-քանդակողը
Պիտի լինի շունչ տվողը.
Թեպետ հնուց լավ է ասված,
Աստծու կողմից ամուր հաստված
- Արարողը ինքն է աստված։

2001

* * *

Կյանքում տեղդ ունեցիր,
Պահպանիր այն անվթար.
Այն պատահմամբ չստացար...
Կյանքում տեղդ ունեցիր։
Ժառանգողիդ փոխանցիր,
Անվնաս ու անխաթար.
Կյանքում տեղդ ունեցիր,
Պահպանիր այն անվթար։

2001

* * *

Կրակոցներ են աջից, ձախից, դիմացից,
Տե՛ր իմ, Տե՛ր իմ, խուլ վճիռն այս խափանիր,
Գոռ կրքերին, ընդվզմանը սահման դիր…
Կրակոցներ են ձախից, աջից, դիմացից։

Ամբողջ կյանքում տառապեցինք խորշակից,
Մարդը մարդու արարքներին դիմադիր.
Կրակոցներ են ձախից, աջից, առջևից,
Տե՛ր իմ, Տե՛ր իմ, այս ոճիրը խափանիր։

2001

* * *

Ամենուրեք զինվորներ են զինավառ.
Մտահոգ են, լուռ են, լուրջ են, անժպիտ.
Վաղվա օրը անխոստում է, մութ ու բիրտ,
Ամենուրեք զինվորներ են զինավառ։
Ամենուրեք թշնամիներ՝ գոռ, համառ.
Վճիռներ կան անքննելի, օ՜, անմիտ.
Ամենուրեք զինվորներ են զինավառ,
Մտահոգ են, լուռ են, լուրջ են, անժպիտ։

2001

* * *

Զարմացմամբ եմ զարմանում,
Աշխա՛րհ, գործերիդ վրա.
Ո՞րն է առիթը դրա,
Զարմացմամբ եմ զարմանում։
Քեզնից գլուխ չեմ հանում,
Մի՛ խնդա, մի՛ հռհռա.
Զարմացմամբ եմ զարմանում,
Աշխա՛րհ, գործերիդ վրա։

2001

* * *

Ժամանակի զարկերակը
Ահագնացած տրոփում է,
Վրնջում է ու դոփում է
Ժամանակի զարկերակը։
Ավարայրի ամեն զարկը
Մեր քաջերին դեռ կոփում է.
Ժամանակի զարկերակը
Ահագնացած տրոփում է։

2001

* * *

Սիրտս լիքն էր, դատարկվել է,
Ոչ էն էր լավ, ոչ էլ էս.
Տե՛ր, պարզ արա վերջապես…
Սիրտս լիքն էր, դատարկվել է։

Անբույժ ախտով վարակվել է,
Ի՞նչ հաբերով փրկեմ ես.
Սիրտս լիքն էր, դատարկվել է,
Ոչ էն էր լավ, ոչ էլ էս։

2001

* * *

Անհետ կորածներ՝
Մայր, մանուկ ու ծեր,
Փոքրեր ու մեծեր՝
Անհետ կորածներ։

Ինչպե՞ս հասկանանք,
Ի՞նչ հույսով մնանք,
Բա ու՞ր են նրանք,
Բա ու՞ր են նրանք։

Թե որ չեն զոհվել,
Մաս-մաս տրոհվել,
Անէացե՞լ են,
Անհետացե՞լ են։

Նրանց չգտանք,
Չարը անգթանք
Այս վայրիվերո ժամանակներում
Տանում, տանում է
Ու… ետ չի բերում։

Անհետ կորածներ,
Անհետ կորածներ…

2001

* * *

Չըհասկացար, օ՜, չստացար,
Այն, ինչ Տերը քեզ շնորհել,
Քո անվանը հյուսել, օրհնել,
Չըհասկացար, օ՜, չստացար։

Ու թերևս դու մոռացար,
Կյանքը քեզ դեռ չէր մյուռոնել.
Չընհասկացար, օ՜, չընստացար,
Այն, ինչ Տերը քեզ շնորհել։

2001

* * *

Կրակելում դիպուկ եղիր,
Զարկիր փախչող թիրախին,
Անսա սրտիդ բաբախին…
Կրակելում դիպուկ եղիր։
Վրադ եկող նետը շեղիր,
Վնաս չգա օջախին.
Կրակելում դիպուկ եղիր,
Զարկիր փախչող թիրախին։

2001

* * *

Վտակները գետ են դառնում,
Գետերը՝ ծով ու օվկիան.
Հենց այսպես, օ՜, ամեն վայրկյան
Վտակները գետ են դառնում։
Ու չեն մնում, հա հեռանում՝
Անծանոթ, օտարական.
Վտակները գետ են դառնում,
Գետերը՝ ծով ու օվկիան։

2001

Վարպետ

Հիմա դու ինձնից ջահել ես,
Ծերացել եմ, չես ճանաչում.
Ամենևին չեմ ամաչում,
Հիմա դու ինձնից ջահել ես։
Երևի թե կռահել ես,
Որ ծանոթ ձայն է քեզ կանչում.
Հիմա դու ինձնից ջահել ես,
Ծերացել եմ, չես ճանաչում։

2001

* * *

Նոր տարվա շեմից ոտքս ներս դրի,
Նոր հարյուրամյակ, նոր հազարամյակ,
Նոր հասարակարգ՝ անխոհեմ համակ…
Նոր տարվա շեմից ոտքս ներս դրի։
Եվ ով էր կարծում, որ այսքան բռի,
Մի կողմում լիքը, մյուսում՝ դատարկ…
Նոր տարվա շեմից ոտքս ներս դրի,
Նոր հարյուրամյակ, նոր հազարամյակ։

2001

Օրհնանք

Երեխան թող հորով-մորով մեծանա,
Երեխան թող, օ՜, որբություն չտեսնի.
Երեխան թող ձիրքն իր ծաղկման հասցնի
Երեխան թող հորով-մորով մեծանա։
Թե կարենա, տղան թող առյուծ դառնա,
Աղջնակը զավակ ծնի ու սնի.
Երեխան թող հորով-մորով մեծանա,
Երեխան թող, օ՜, որբություն չտեսնի։

2001

* * *

Բոլոր օրերը և տարիները,
Բոլոր դարերը միմյանց հաջորդող
Կրել են իրենց վստահված բեռը,
Կտրել-անցել են ճամփա, ծով ու հող։

Միշտ էլ եղել են բութ արհավիրքներ,
Գոռ մարտնչումներ ահեղադղորդ,
Երկրի պաստառին ակոսել վերքեր,
Քշել-տարել են հեղեղները հորդ։

Այժմ էլ այդպես, նույնը և վաղը,
Պատմությունն իր ալ խալին է գործում.
Ակներև է բյուր գույների խաղը,
Տերն ամենուրեք իր ուժն է փորձում։

Տոկա, մարդկային գոյ՝ սուրբ արարած,
Մինչև որ բացվի մի նոր օր խաղաղ.
Ուշ-ուշ է գալիս, դե ինչ, ինչ արած,

Թող հույսը լինի՝ զորեղ բախտախաղ։

2001

* * *

Անժամանակ հեռացողներ,
Ձեզնից հետո ցավ եք թողնում.
Երկարեիք տաք անկողնում…
Անժամանակ հեռացողներ։
Դուռ բացողներ ու գոցողներ,
Ձեր եռանդը ո՞նց չեք մեղմում.
Անժամանակ հեռացողներ,
Ձեզնից հետո ցավ եք թողնում։

2001

* * *

Քանի սերունդ տեսա. եկան, անցան.
Ասես գետ էր հունով, եկավ, անցավ՝
Պղտորվեց, գալարվեց, դառնացավ…
Քանի սերունդ տեսա. եկան, անցան։
Գնացողները տեսնես հասկացա՞ն,
Թե որքանն էր կյանք, որքանը՝ ցավ.
Քանի սերունդ տեսա. եկան, անցան.
Ասես գետ էր հունով, եկավ, անցավ։

2001

* * *

Մի ձևով են մարդիկ ծնվում,
Մինչ ապրում են տարբեր-տարբեր.
Տարբեր քնում, տարբեր սնվում
Եվ ընդունում տարբեր հաբեր։

Ամեն ինչ է մեկն ունենում,
Մինչ մյուսը՝ մերկ ի մորեն.
Դե, Տերն այդպես է կամենում,
Ամեն ինչում Նա տնօրեն։

2001

* * *

Անգործ նստելով
Ո՞նց է չեն հոգնում.

Կյանքին չեն օգնում՝
Անգործ նստելով։

Տեղից ոստնելով՝
Օ՜, զիլ զրնգում.
Անգործ նստելով
Ո՞նց է չեն հոգնում։

2001

* * *

Ավարտվելու վրա է
Երկու հազար մեկը.
Հանձնելու է պատրաստվում
Օրերի իր ղեկը։

Տեսնենք մեր այս նորեկը
Ինչպե՞ս իրեն կպահի.
Ի՞նչ հանգրվան կունենա
Միջև ահի ու մահի։

2001

* * *

Նոր տարի է ծայր առնում,
Հորիզոններ նոր հառնում,
Մեր ուսերին լավատենչ
Խուրջիններ են նոր բառնում։

Լիքը-լիքը նվերներ,
Չենք իմանում էլ ինչեր
Թոռնիկներին, ծոռներին
Հեքիաթներ ու ժպիտներ։

Զմեռ պապին է անշուշտ
Բաժանողը ամենքին.
Ուրախանան թող մի կուշտ՝
Աստղիկներ իրենց դեմքին։

2001

* * *

Խոստովանածս մեղքերի համար,
Սխալներիս համար միամիտ

Ներում շնորհիր, պատիժներ հարմար,
Որ մի քիչ փոխվեմ, դառնամ խելամիտ։
Ուշացա, սակայն, էլ պահ չմնաց,
Ու ես մնացի այնպես, ինչպես կամ.
Եվ հանձնվել եմ ճամփեքին անդարձ,
Ինքս էլ չգիտեմ՝ արդ կամ, թե՞ չկամ։

2002

* * *

Այս տարվա բեռս ծանր կլինի,
Փույթ չէ՝ ծավալով մանր կլինի.
Օ՜, այն կլինի խելոք, պատվաբեր,
Հոչակ կբերի մեծ ու փոքրին մեր։

Ու բեռնավորված մենք տեղ կհասնենք,
Ինչ ասելու ենք, այրաբար կասենք.
Ու թող հասկանան, ում որ այն պետք է,
Այն վեր հառնելու ձգտում ու հետք է։

2002

* * *

Ա

Ինձ թվում էր՝ քեզ կկախեն
Ոտքերդ վեր, գլուխդ՝ վար.
Կքարկոծեն, օ՜, անդադար.
Ինձ թվում էր՝ քեզ կկախեն,
Չոր գլուխդ կջախջախեն
Գործածդ նենգ մեղքի համար.
Ինձ թվում էր՝ քեզ կկախեն
Ոտքերդ վեր, գլուխդ՝ վար։

Բ

Մինչ ստացվեց հակառակը
Փառքի, պատվի արժանացրին,
Քսակդ էլ ոսկով լցրին…
Օ՜, ստացվեց հակառակը։
Թարս պտտվեց ճախարակը,
Դու ձգտում ես էլի բարձրին.
Օ՜, ստացվեց հակառակը,
Փառքի, պատվի արժանացրին։

Գ

Կարգ էր, փոխվեց, եկավ նորը,
Ժողովուրդը աղքատացավ.

Տուն սողոսկեց հազար մի ցավ,
Կյանքը փոխվեց, եկավ նորը։
Դժգոհում են, օ՜, բոլորը,
Մինչ ոչ մեկը չընդդիմացավ.
Կարգ էր, փոխվեց, եկավ նորը,
Ժողովուրդը աղքատացավ։
Դ
Անգետ մնաց, չհասկացավ
Ժողովուրդը կայացածից.
Ի՞նչ հարցներ մահացածից
Անգետ մնաց, չհասկացավ։
Վերինն էլի վեր բարձրացավ.
Շատ էլ գոհ է իր արածից,
Անտեր մնաց, չհասկացավ
Ժողովուրդը կայացածից։

2002

* * *

Երբ մենակ մնում, լցվում եմ, լցվում ու արտասվում եմ.
Ասես անձրև է, առաջը առնել չեմ կարողանում,
Թեթևանում եմ, խելքի եմ գալիս,
Երբ մենակ մնում, լցվում եմ, լցվում ու արտասվում եմ։
Մի ողջ սերունդ է ասես սրբանում ու բյուրեղանում.
Երբ մենակ մնում, լցվում եմ, լցվում ու արտասվում եմ.
Ասես անձրև է, առաջը առնել չեմ կարողանում։

2002

* * *

Քանի մարդու «գլուխ կերար»՝
Անշառ, անմեղ ու ջահել.
Կեղտաջուր էր վարար-վարար,
Չափ-սահմանից առավել։

Քո զոհերի թիվն ահավոր
Միլիոններով է հաշվվում,
Օ՜, դահճապետ, դու դարավոր,
Դու այդպիսին ես հիշվում։

2002

* * *

Չենք էլ կռահում, որ կողմից եկավ

Հեղեղի տեսքով այս չար փորձանքը.
Անսպասելի հարված-հորձանքը
Չենք էլ կռահում, որ կողմից եկավ։

Աչալուրջ լինենք, չարիքը սակավ
Արատավորի մեր այս բաղձանքը.
Մարդ չի իմանում ո՞ր կողմից եկավ
Հեղեղի տեսքով այս չար փորձանքը։

2002

* * *

Թումանյանից սովորեցինք
Պարտք ու մուրհակ վերադարձնել.
Այդ նույն ձևով սահմանեցինք
Ընկածներին վեր բարձրացնել.
Սովորեցինք, բայց… մոռացանք,
Անպատիժ էլ, օ՜, մնացինք.
Թեպետ երբեմն էլ զորացանք,
Ափսոս, ափսոս՝ չփոխվեցինք։
Թե որ այդպես շարունակենք,
Ու՞ր կհասնենք, ո՞վ իմանա,
Կզարմանա՞նք, թե այդ մե՞նք ենք.
Այո, մենք ենք, մենք՝ ակամա։

2002

* * *

Դու իզուր ես նեղանում,
Ձևանում, չքմեղանում.
Կարելի է վերցնել,
Բայց ոչ երբեք թոցնել։
Թե որ չունես սուր տապառ,
Իզուր ես մտել անտառ,
Ամեն բանում տակտ է պետք,
Ամեն բան թողնում է հետք։
Արդ պիտի գիտենայիր,
Մեղքերից զերծ մնայիր.
Հարգանքով մեծ ծաղրածուն
Խոնարհվում է դրացուն։
Ծափահարում են նրան,
Գովքն անցնում բերնեբերան։
Կյանքը, հասկացիր, էս է,
Աշխարհը՝ մեծ կրկես է։

2002

* * *

Օ՜, ոչ, օ՜, ոչ, ինչ որ սխալ է եղել,
Նրանց գնալն այդպես վաղ ու վռազ.
Այդ ո՞վ է, այդ ով է այդպես նեղել,
Շտապեցրել, հետապնդել հանապազ։

Ինձ հետ պիտի ճանապարհն այս անցնեին,
Մաքառեին, նվաճեին բարձունքներ.
Նրանք պիտի փառքի լույսով փայլեին
Ու տեսնեին մարդկային նոր երկունքներ։

Օ՜, ոչ, օ՜, ոչ, ինչ որ սխալ է եղել,
Երևի թե Տերն է շեղել ու նեղել։

2002

Ես ու ես

* * *

Իմ սևաչյա ծիծեռնակ,
Իմ սիրտ, իմ սեր, իմ կարոտ,
Թափահարիր թևերդ
Գարնան ամեն առավոտ:

Ճախրիր, ճախրիր ծիծեռնակ,
Թռիր այգիս, եկ ինձ մոտ.
Կգուրգուրեմ թևերդ
Գարնան ամեն առավոտ:

Եվ ծով երգով, ծիծեռնակ,
Մեղմիր և վիշտ և կարոտ.
Կհամբուրեմ թևերդ
Ամեն, ամեն առավոտ:

1938

* * *

Կյանքիդ շատը տխուր անցավ,
Հոգուդ երկինքն ամպով լի.
Կայծակ, որոտ ու հուր անցավ
Հոգով քո, ի՛մ սիրելի:

Միշտ տրտում քո աչք ու ունքը,
Ուրախ օրվա անսովոր.
Ե՞րբ է, ե՞րբ է քո երկունքը
Հրդեհվելու լուսավոր:

1938

* * *

Ասում են, թե մարդուս լեզուն
Չի հնազանդվում իր սրտին
Մեկ՝ երբ կորածն է երազում
Վերադառնում վերստին.
Մեկ էլ՝ երբ որ աչքերի դեմ
Ծամածռում մահը ծառս-ծառս.
- Լեզուս փակվեց, արդ չգիտեմ՝
Մա՞հ եմ գրկել, թե՞ երազ:

1938

* * *

Վիշտս թե քոնը լիներ,
Կամպոտեիր, ո՛վ աստված.
Աչքդ արցունք կանձրևեր,
Աշխարհն արար կաներ թաց։

Վիշտս թե քոնը լիներ,
Կիջնեիր քո երկնից ցած.
Ու էլ չէիր ելնի վեր
Գահդ՝ թափուր մնացած։

Ու քանի այդ վիշտն իմն է,
Սիրտս է պատանքը նրա,
Աստվա՛ծ, ինձ շիրիմ հիմնե,
Անձրևի՛ր հողիս վրա։

1938

* * *

Երամ հավքերն եկան, անցան
Լայն թևելով, հևալով.
Հորիզոնում անէացան -
Աչքս մնաց նայելով։

Երամ հավքերն եկան, անցան
Թուխ ամպերը ձևելով.
Հեյ վախ, իմ սեր, դու էլ անցար
Եվ խնդալով, և լալով։

1939

* * *

Այսօր սիրտս գարնան վառման վարդով է լի,
Ու անարատ սիրո սրտի զարդով է լի.
Սիրտս անծիր ծփուն ծովի ծափով է լի,
Մեծ խնջույքի, ուրախ երգի դափով է լի։

Սիրտս երկրիս անծայրածիր չափով է լի,
Աշխատանքի, ջերմ քրտինքի թափով է լի.
Սիրտս հերկի, առատ բերքի ջանքով է լի,
Մեր նորօրյա հեռաթռիչք կյանքով է լի։

1939

* * *

Քեզ նախանձել եմ, թևավոր թռչուն,
Քեզ, նույնիսկ քեզ էլ, այ փոքրիկ ճնճղուկ.
Միշտ երազել եմ անկաշկանդ քո չուն,
Եվ ոստյուններիդ հետևել ծածուկ,
Ունկնդրել ձայնիդ, աղմուկիդ հնչուն,
Թևավոր թռչուն։

1941

* * *

Երբ դեռ պատանի, թեթև, անգիտակ,
Կյանքում ամեն ինչ թվում էր կատակ։
Մեկին ընծա էր վայելքն աշխարհի,
Մեկին՝ մեկնված - լինել նահատակ.
Մեկին՝ իրավունք մեծ Շահնշահի,
Որ պատերազմի գրեր հրովարտակ.
Մեկին՝ տանելու տաժանքը գահի,
Եվ դառնությունը կյանքի բովանդակ։
Ու հիմա էլ դեռ, երբ առած հասակ,
Ինձ թվում է, թե աշխարհն է կատակ։

1947

Պատրանք

Իմ հարսնացուին զուգում են արդեն,
Ու նվերներ են բերում անհամար.
Ծաղկունքով կապում փնջեր ու կամար.
Իմ հարսնացուին զուգում են արդեն։

Բարի են մաղթում արդ նրա ճամփեն,
Որ մեկնում է նա մի այլ աշխարհ.
Իմ հարսնացուին զուգում են արդեն,
Ու նվերներ են բերում անհամար։

1949

* * *

Աշխարհ եմ եկել ու ապրում եմ
Աշխարհի բոլոր ապրողների հետ,
Իմ աշխատանքի ունեմ ասպարեզ,

Ուր ոչ վազում եմ, ոչ էլ մնում հետ։

Այսպես համաչափ օրերի քայլին,
Անցնում եմ կյանքիս ուրույն շավղով.
Ունկնդիր դաշտի թռչնոց դայլայլին,
Խորունկ ընկալում սրտիս տավղով։

Քիչ եմ ունեցել խնդության առիթ.
Չեն ծափահարել ինձ կյանքում հաճախ.
Երբեմն նույնիսկ վրդովել են բիրտ,
Մթագնել պահեր, ցնորքներ չքնաղ։

Ու ծառս եմ եղել չարության ընդդեմ,
Հանուն անաղարտ լույս գաղափարի.
Դրա համար են մերթ ատել, գիտեմ,
Ու զոհ եմ եղել ամենայն դավի։

Բայց դարձյալ անքեն և անոխակալ
Հույսվ եմ նայել լավի գոյության։
- Չեն հարատևի բարքեր կողմնակալ…
Ես հավատում եմ բանականության։

Աշխարհ եմ եկել ու ապրում եմ ես,
Աշխարհի բոլոր ապրողների պես.
Լավ ու վատ, ահա կողք-կողքի դրկից.
Աշխարհ է, կանցնի մեր կյանքն էլ այսպես։

1957

* * *

Վիշտս ծավալվեց անեզր, անափ,
Երբ սպասումներս արին հուսախաբ.

Մխիթարում է ինձ այժմ լոկ այն,
- Ուժիս ներածով արի ամեն բան.

Իսկ այն, որ երբեք ինձնից չէր կախված,
Տնօրինում էր Բարձրյալն ինքն՝ Աստված։

1960

* * *

Իմ քարը արդեն տաշում են,
Որ վաղը քաշեն վրաս.

Ծնվելուս թիվը նշում են.
Ով ավարտ… ե՞րբ պիտի գաս։

Չէ, էնքան էլ անհամբեր չեմ,
Բայց և շատ չեմ վախենում.
Մեկ է՝ շունչս երբ կփչեմ,
Գիտեմ, որ քիչ է մնում։

Դրանից է, որ հանգիստ եմ,
Պահ, դու էլ հանգիստ մնա.
Պատժելում ես էլ խիստ եմ,
Վե՛ր կաց, ու գործիդ գնա։

1979

* * *

Երբեմն այսպես տխրում,
Ու կոտրվում եմ,
Երբեմն մազից կախվում,
Տարուբերվում եմ։

Ուրիշ ընտրություն չունեմ,
Հաշտվում, մնում եմ։
Երամից պոկված թռչուն,
Եվ մնում, և գնում եմ։

1981

* * *

Մնացել են սևագիր
Բյուր նշումներս.
Նամակի տեղ՝ հեռագիր -
Որոշումներս։

Մնացել են սևագիր
Որոնումներս.
Բանավոր են ու անգիր
Հոլովումներս։

Օ՜, ժամանակ չմնաց
Մշակումների.
Դարձավ առիթ բերանբաց
Գուշակումների։

1982

* * *

Ես ու իմ կյանքը
Գործեցինք հանցանք,
Այդպես էլ միմյանց
Լավ չհասկացանք։

Ու դեռ վատնում եմ
Օրերս անօգուտ,
Կարծես հատնում եմ
Վշտից անհագուրդ։

Փույթ չէ, դեռ ուժ կա,
Ու շտապում եմ.
Գուժկանի վրա
Մաղձս պարպում եմ։

1982

* * *

Բերնեբերան սիրտս լիքն է,
Սիրտս լիքն է կարոտներով.
Սիրտս կապույտ էն երկինքն է,
Կապույտը լի թաց թուխպերով։

Աչքս լցվել ու լամ պիտի,
Ու լամ պիտի - թեթևանամ.
Կապույտի պես առավոտի,
Առավոտի պես արթնանամ։

1983

* * *

Ահա այս է իմ գիրքը,
Սրանում է իմ կիրքը,
Իմ ջանքը ու իմ ձիրքը.
Ահա այս է իմ գիրքը։

Սրա վրա եմ տքնել,
Ցերեկը գիշերում կրկնել,
Որոտացել ու երկնել,
Սրա վրա եմ տքնել։

Իմ կամքով եմ ձեռնարկել,
Առել-տվել, քննարկել,
Գիրքն ի վերջո մեկնարկել.
Իմ կամքով եմ ձեռնարկել։

Թվում է թե՝ հասել եմ,
Ինչ որ պետք էր՝ ասել եմ,
Համբերել ու սպասել եմ…
Թվում է թե՝ հասել եմ։

Ես խիղճս չեմ կորցրել,
Անտեղի խոսք թոցրել,
Անպատեհ բան հարցրել…
Ես խիղճս չեմ կորցրել։

Բայց և ոչինչ չեմ զիջել,
Խաթր պահել, ընդմիջել.
Ոչ ցատկել եմ, ոչ իջել…
Բայց և ոչինչ չեմ զիջել։

Գողին գող եմ անվանել,
Հարձակվողին կողմ վանել.
«Կոխել ջուրը ու հանել».
Գողին գող եմ անվանել։

Չեմ ընկրկել «մեծի» դեմ,
Հաստատ՝ որպես որմ ու վեմ.
Կանգնել հպարտ ու խոհեմ…
Չեմ ընկրկել «մեծի» դեմ։

Այսպես միշտ հայավայել,
Մի պատրանք եմ փայփայել,
Աշխարհին ուղիղ նայել…
Այսպես միշտ հայավայել։

1983

* * *

Ամլացել եմ, ամլացել,
Ոչինչ, ոչինչ չեմ անում.
Ծերացե՞լ, թե՞ ծուլացել…
Այ այդ էլ չեմ իմանում։

Տեսնես որքան կտևի

Պարապ-սարապ մնալուս,
Մոռացել են երևի,
Լռել, թողել սուս ու փուս։

Չէ, չէ, էսպես չի լինի,
Լիքն է աշխարհը գործով.
Առնեմ թուրս հավլունի,
Փայլեմ վաստակած փորձով։

1983

* * *

Անվերջ ծվում, ծվծվում ես
Այ փոքրիկ ծիվ-ծիվ.
Ճյուղին նստում, կծկվում ես
Այ փոքրիկ ծիվ-ծիվ։

Այնպես ասա, որ հասկանամ
Թե ինչ ես ուզում.
Թե չէ այդպես անբան, անկամ
Ինձ շատ ես հուզում։

Ոչ ասում ես, ոչ խոսում ես,
Ծվծվում ես միայն.
Ծվծվոցով ակոսում ես
Մտքերս ունայն։

Հաց ու ջուր եմ դրել գոգին
Իմ պատուհանի.
Իսկ դու թառել կապած թոկին
Մեր հարևանի…

Մոտ չես գալիս, չե՞ս ցանկանում
Մի քիչ ուտել, խմել.
Ափոս, լեզուդ չեմ հասկանում,
Ի՞նչ ես ուզում դու էլ։

Երևի թե այլ ցավ ունես,
Մի այլ կարոտ.
Այդպիսի ցավ ունեմ և ես,
Ու սիրտ մի վիրոտ։

Բայց տես, լուռ եմ, չեմ ծվծվում,
Եվ ու՞մ ինչ իմ ցավը.

Բայց և քեզ պես չեմ կծկվում,
Եվ այս է լավը։

Դու էլ, ծիվ-ծիվ, թևիկ-թևիկ
Թռիր, գնա ու եկ.
Ինձ բեր լուրեր սրտահևիկ,
Թեկուզ այդպես՝ մեկ-մեկ։

1984

* * *

Որոնում եմ ինչ որ մեկին ու չեմ գտնում.
Չեմ իմանում՝ տղամա՞րդ է, արդյոք, թե՞ կին.
Ու նայում եմ ամեն մեկին, ոտք ու ձեռքին,
Մեջք ու կոնքին, աչք ու ունքին, այտ-շրթուքին,
Ամեն մեկի մեջ որոնում են մի Մեկին…

Օրը գալիս, անց է կենում ու մայր մտնում,
Ես որոնում ու չեմ գտնում, ու չեմ գտնում։

1984

* * *

Խև մտքերով երբ տարվում եմ,
Տեղնուտեղը սխալվում եմ.
Այլ փրկություն չունեմ, դե ինչ -
Մեղքիս համար ծալմլվում եմ,
Սեղմվում ու մամլվում եմ։

Ի՞նչ փույթ, մեղքը աստծունն է,
Հոլովվողը իմ անունն է.
Ոչինչ չունեմ արդ ամոքիչ -
Դրությունս էլի նույնն է,
Դեմիս փոսը նույն անհունն է։

1984

* * *

Դեպք է եղել, որ ես էլ
Բարձունքներ եմ նվաճել,
Մաքառումով, երկունքով
Վեր բարձրացել ու աճել։
Լուռ եմ անցել սակայն ես
Ճանապարհս դժվարին,
Չեմ տարբերել էապես

Թեթև ու ծանր տարին։
Չեմ փողհարել, շեփորել,
Ազդարարել բարձրագոչ.
- Տեսեք ինչ եմ արարել…
Ոչ, չեմ եղել ինքնակոչ։
Բայց արի-տես, որ հաճախ
Փառաբանում են ոմանց,
Գործ ու վաստակից անկախ
Ձեռքը տալիս ղեկ ու սանձ,
Եվ ասպանդակ, թամբած ձի,
Հետն էլ բարի ձիապան…
Այս բոլորը ըստ անձի,
Ապագան էլ անխափան։
Տիրապետած դիրք ու ձև,
Հավատացնում լսողին,
Իբր առանց «թիկունք-թև»
«Պարգևում են հաղթողին»։
Այս ինչ բան է, այս ինչ կարգ,
Ով է այսպես սահմանել.
Ընթափվի՛ր, հասարակա՛րգ,
Այդ անունիդ չէ վայել։

1984

* * *

Ես արթնանում եմ լուսաստղից էլ վաղ,
Երբ գիշերն է լուռ ու շուրջս խաղաղ,
Երբ սարսռում է ցողն առավոտի,
Երբ աստվածներն են ննջում անզբաղ։

Եվ արթնացումս, օ՜, չէ անտեղի,
Ձի ալիքներում հորդած հեղեղի
Հեգ քարավանիս հեռվին եմ նայում,
Հսկում՝ հողմերից ճամփեն չշեղի։

Ես արթնանում եմ լուսաստղից էլ վաղ,
Շուտով կսթափվի ելնող ցերեկս,
Ընթացք են առնում մտքերս անհապաղ,
Օ՜, արթնանում է, կանաչում հերկս։

1984

* * *

Թե ինձ հեռվում ինչ է սպասում,

Ոչ ոք, ոչ ոք այդ չի ասում.
Ես արորիս մաճից բռնած
Հերկիս սահմանն եմ ակոսում։

Երկինքներից ձայներ լսում,
Աստվածներն են ուր փսփսում,
Իմ գործերի մեջ խառնված
Ասում են հա ու բամբասում։

Մեկը մեկին խիստ հակասում,
Իրենցն ասում, ինձ չեն լսում.
Երկրից ելած, երկինք հասած
Իմ քարտերն են հա դասդասում։

1984

* * *

Ես իմ մանկության աշխարհը տեսա,
Նա գեղեցիկ էր սուրբ հրաշքի պես.
Երազի թևով ես այնտեղ հասա,
Օ՜, տարվել էի, հիացել այնպե՜ս…

Գետակն էր միայն պղտոր հորդացել,
Ու մեծ ծովի պես ալեկոծվել էր.
Լոկ ես էի, որ վաղուց խորթացել,
Ճամփես տուն տանող՝ չկար, գոցվել էր։

1984

* * *

Ես իմ աստծուն հավատում եմ,
Նա իմ կամքը կատարում է.
Ում չեմ սիրում կամ ատում եմ,
Մարդ մնալուց դադարում է։

Ես իմ աստծուն հավատում եմ,
Քարոտ ճամփես հարդարում է,
Ու պարզորոշ նկատում եմ,
Ինչպես գործս զարդարում է։

Ես իմ աստծուն հավատում եմ,
Կա, թե չկա՝ կարևոր չէ։
Իմ ձիգ ճամփեն ավարտում եմ,
Մեկ է՝ քամին ուր կփչէ։

1984

* * *

Ավարտել եմ աշխատանքս
Ու հանձնել եմ «ըստ պահանջի».
Գնահատեք տառապանքս,
Թող, որ խիղճս ինձ չտանջի։

Ավարտել եմ աշխատանքս,
Էլ ոչ մի քայլ ետ-նահանջի.
Կյանք է առել հին պատրանքս,
Ցրվել մուժը մղձավանջի։

Ավարտել եմ աշխատանքս,
Արդ մեկնում եմ այլ սխրանքի.
Նոր իմաստ է առնում կյանքս…
Լավ առիթ է սփոփանքի։

1984

* * *

Աշխարհում ինչքան շատ վայելքներ կան,
Որ կանչել, կանչել ու կանչում են դեռ.
Օ՜, խոստանում են անանց քնքշանքներ…
Աշխարհում ինչքա՞ն շատ վայելքներ կան։
Բայց մեր օրերում՝ պատերազմ, ական,
Հուսահատ, պարզված աղաչող ձեռքեր…
Աշխարհում ինչքա՞ն շատ վայելքներ կան,
Որ կանչել, կանչել ու կանչում են դեռ։

1984

* * *

Ես իմ խաչը քանդակեցի
Այն անկոփ ժայռի կողին,
Ժառանգներիս կտակեցի՝
Ինձ այնտեղ հանձնել հողին։

Ես իմ խաչը քանդակեցի
Եվ թողեցի անանուն,
Այդպես հարմար նկատեցի՝
Թող պատկանի ամենուն։

1985

* * *

Մշուշվել է միտքս, մթնել,
Ու խառնում եմ մոտ ու հեռուն.
Կիսակործան մույթին կռթնել,
Օրորվում եմ թույլ, երերուն։
Թվում է, թե մեկը շանթել,
Այրել ծառիս սաղարթն ու բուն…
Ահա կանգնել ու կարկամել.
Ավա՛ղ, ճամփես չի տանում տուն։

1985

* * *

Երևի վերևում հով է…
Զեփյուռ է անցնում սլացիկ բարդու սաղարթի միջով,
Ու սոսափում են տերևները մեղմ արծաթ հնչյունով.
Երևի վերևում հով է։

Երևի վերևում հով է…
Մինչ տոթ է այստեղ՝ այս մարգագետնում, անտանելի տոթ.
Այրվում արևը, այրվում պտուղը, այրվում սեզ ու խոտ…
Երևի վերևում հով է։

1985

* * *

Օ՛, թե որ կյանքդ
Լավ դասավորվել,
Զգտումդ, ջանքդ
Արգասավորվել,

Ուրեմն իզուր չես
Դու աշխարհ եկել.
Երջանկությունն է
Արդ քեզ համակել։

Տո՛ւր, ինչ կարող ես,
Կյանքը զարդարիր.
Թե արարող ես,
Անվերջ դալարիր։

Թող որ աշխարհը

Քեզնով պարծենա.
Այս փոքրիկ դարը
Քեզնով մեծանա։

1985

* * *

Սրտիս բաբախը ուժեղացել է,
Ու տրոփում է թույլ զարկերակս.
Շռայլ ժպիտս, օ՜, մեղմացել է,
Կարծես նստում է, հանգչում կրակս։

Ու բարակում է վեր ելնող ծուխս
Ու կեռմեռվում է նա թեթև հովից.
Լուռ մոխրանում է փայտի ածուխս,
Էլ չի թեժանում իմ ներքին բովից։

Մի՞թե ավարտս եկել, մոտեցել,
Ու բոլորել է կարճատև դարս,
Ու շատը անցել, քիչը՝ մնացել,
Օ՜, հնչելու է վերջին դադարս։

1985

* * *

Ի՞նչ է սպասվում իմ հեռվում,
Ի՞նչ դառնություն, որոգայթ,
Ի՞նչ ընդվզման հրահրում…
Օ՜, ե՛կ, հույսի ճառագայթ։

Ե՛կ, որ փարվեմ քո շողին,
Փրկության լույս ափ ելնեմ,
Ցրի՛ր մուժն իմ երկյուղի,
Որպես փյունիկ՝ վեր ելնեմ։

1985

* * *

Վրաս չեն նայում, օ՜, չեն այլևս,
Փոխվել է, այո՛, և շարժ ու ձևս.
Բեռս թողել է բազում սպիներ,
Հաճախացել է և հևիհևս,

Բայց չեմ ընկրկում ու կամ դեռևս,

Կապույտ է, պարզ է վրաս-վերևս.
Դեռ սպասում եմ կանաչեն շիվեր,
Նրանց կտակեմ թողած արևս։

1985

* * *

Վատ սկիզբ ուներ իմ այս նոր տարին.
Դե ի՞նչ իմանամ մեծ մեղքը ումն էր.
Գուցե ոչ նորում, այլ հենց հնումն էր…
Վատ սկիզբ ուներ իմ այս նոր տարին։
Ինչ արին-չարին՝ վհուկներն արին,
Մինչ իմ աստվածը իր խոր քնումն էր։
Վատ սկիզբ ուներ իմ այս նոր տարին.
Դե ի՞նչ իմանամ, թե մեղքը ումն էր։

1985

* * *

Գնացողին եմ ափսոսում,
Մնացողը կդիմանա.
Հետո վիշտը կհնանա…
Գնացողին եմ ափսոսում։
Կապրի սերմը թարմ ակոսում.
(Գնացողն այդ ի՞նչ իմանա).
Գնացողին եմ ափսոսում,
Մնացողը կդիմանա։

1985

* * *

Մերթ մորմոքում ես,
Մերթ ամոքում ես.
Ի՞նչ փույթ - մերթ հերքում
Ու բորբոքում ես։

Միշտ իմ մտքում ես,
Իմ ջերմ հոգում ես,
Ի՞նչ փույթ մերթ լքում…
Լալիս, խոկում ես։

Երեխայի պես,
Երեխայի պես,
Ու չես էլ փոխվում…

Օ՜, կաց հենց այդպես։

1985

* * *

Հրճվանքի պահեր մերթ ունեցել եմ,
Պոկված պարանը երբ հանգուցել եմ -
Ու կյանքս փրկել անհետ կորստից։

Հրճվանքի պահեր մերթ ունեցել եմ,
Երբ պարտքս մուծել ու հատուցել եմ,
Գերազանցել եմ, օ՜, ինձ տվածից։

Հրճվանքի պահեր մերթ ունեցել եմ,
Երբ վերջիվերջո ապացուցել եմ…
Ու անմեղ մեկին փրկել եմ… մահից։

Հրճվանքի պահեր մերթ ունեցել եմ,
Բոլոր, բոլորը, օ՜, մոռացել եմ,
Եվ արդ ի՞նչ սփոփանք անցած-գնացածից։

1985

* * *

Քնեցի ու արթնացա,
Այսպես լավ է ավելի.
Դեռ ավելին՝ թարմացա,
Այսպես լավ է ավելի։

Ահա և գործի անցա,
Այսպես լավ է ավելի,
Օ՜, արդյունքով գոհացա,
Այսպես լավ է ավելի։

1985

* * *

Մի՛ շտապիր, կգնանք,
Դե հեռու չէ, կհասնենք.
Դեռ ինչքա՜ն կա ջերմ զգվանք,
Արդ ինչու՞ չվայելենք։

Մի՛ շտապիր, կգնանք,
Էդ ճամփեն մերն ու մերն է.

Ո՞վ է ստիպում՝ չմնանք…
Մեր արևը դեռ վերն է։

1985

* * *

Մի թռչնակ թևել, ընկել էր տունս,
Թափահարվում էր, խանգարում քունս.
Ասում էր. «Եկա, իմ հին բարեկա՛մ», -
Բայց դե չգիտեր նույնիսկ անունս։

Շատ ասեց, խոսեց, չճանաչեցի.
Ես, անկեղծ ասած, խիստ ամաչեցի,
Իսկ նա հյուր գալը էլ չընդհատեց…
Օ՜, անմեկնելի քմայք կանացի։

1985

* * *

Եղնիկ սիգաճեմ,
Որքան էլ խույս տաս -
Պիտի նվաճեմ։

Ես որսորդ զինյալ,
Ուխտիս նվիրյալ,
Լեռներում անհաս
Մինչ արևագալ

Պիտի թափառեմ,
Նոր աստղեր վառեմ,
Ընդդիմությանդ
Կյանքս կարկառեմ։

1985

* * *

Մերթ մտածում եմ՝ կրակին տամ
Բոլոր երգերս, որպես հուշերս,
Բայց վախենում եմ մենակ մնամ,
Ու կրծքիս խաչվեն տրտում ձեռքերս։

Մերթ մտածում եմ՝ կրակին տամ,
Այրեմ - մոխրանան աշտարակներս,
Ու տնից, տեղից գնամ, հեռանամ,

Այն ժամ ու՞մ թողնեմ հիշատակներս։

1986

* * *

Ճանապարհիս եմ նայում,
Որ ձգվում է լանջն ի վեր.
Ես այն հույսն եմ փայփայում,
Որ քանի կամ, ուժ կա դեռ,

Չխոտորեմ, չընկրկեմ,
Բեռնավորված հառնեմ վեր.
Հորիզոնը ընդգրկեմ,
Տեսնեմ անիծիր հեռուներ։

1986

* * *

Նամակներս անպատասխան մնացին,
Սպասելով պղտորվում է աչքս թաց.
Ի՞նչ պատահեց, աղավնիներ թևաբաց…
Նամակներս անպատասխան մնացին։

Անգթորեն շանթահարեց գեշ մի ցին,
Ու փետրաթափ երամներս իջան ցած…
Նամակներս անպատասխան մնացին,
Սպասելով պղտորվում է աչքս թաց։

1986

* * *

Վեճեր կան աշխարհում չլուծված
Հոգիս են անվերջ փոթորկում,
Եվ ընդվզում են, մրրկում…
Վեճեր կան աշխարհում չլուծված։

Քարավանս անխիղճ ծեծկված
Որոճում է թույն ու խոկում.
Վեճեր կան աշխարհում չլուծված,
Հոգիս են անվերջ փոթորկում։

1987

* * *

Ընդդիմախոսս
Անհաղորդ մնաց
Տվայտանքներիս.
Ընդդիմախոսս
Չխորհեց, չզգաց
Ջերմը կրքերիս։
Ընդդիմախոսս
Աննրբանկատ
Սառն ու անտարբեր
Իր թունոտ նետը
Արձակեց ի բաց
Չվող հավքերիս։

1987

* * *

Աստիճան առ աստիճան
Ես իմ վերելքն եմ կերտում.
Ինչ փույթ, եթե վերջինն եմ
Աշխարհաստեղծ այս երթում։

Աստիճան առ աստիճան,
Ինչպես մանկութ հեքիաթում,
Երթն է ձգվում անվախճան,
Բոցավառվում Ծիր-Կաթնում։

Ու սերունդներ նորանոր
Վեր են հառնում, մագլցում.
Ոլորտներում անսովոր
Հուսո խարիսխ են գցում։

1987

* * *

Օ՜, ոչ, չեմ հասնում
Մտքիս հետևից,
Ու չեմ էլ կառչում
Կիրթ շարժուձևից։
Նույնիսկ չեմ խորշում
Սպիտակից, սևից,
Չեմ էլ դժգոհում
Խենթ վազքի հևից։
Միշտ շրջանցում եմ
Խույս տալիս խևից։

Որ հայտնվում է
Դիմացից, թևից:
Խեժ է կաթկթում
Ծառի կեղևից,
Խնկի բուրմունքն եմ
Առնում տերևից:
Կենսական նեկտար
Այրվող արևից,
Անուշ զովություն
Լեռան վերևից:
Եռանդ եմ զգում
Ամենայն լավից,
Խուսափում աննյութ,
Անսփոփ ցավից:

1987

* * *

Անվարժ է ձեռքս,
Չեմ աշակերտել մեծ վարպետների.
Չի հնչում երգս,
Օ՜, այն չի օծել սուրբ Տերը վերին.
Չի փայլում ներկս
Ու չի պատշաճում Տիրոջ պատկերին.
Օ՜, խորն է վերքս,
Չեմ համակերպվում օտար կրքերին:
Ճամփես անցել եմ,
Հաջողությունս չեմ թմբկահարել,
Հեռուս բացել եմ,
Իմ ճիգ ու ջանքով, ձեռք չեմ կարկառել.
Թե զորացել եմ
Փառք չեմ ակնարկել ու չեմ բարբառել.
Ու թե լացել եմ,
Այդ խորոց սրտի պարտքն եմ համարել:

1987

* * *

Այնպես է թվում, թե նոր պիտի գամ,
Պիտի բարձրանամ նոր խոսք ասելու.
Պիտի ժողովվեն խոսքս լսելու…
Այնպես է թվում, թե նոր պիտի գամ:
Գալիքին ընծա խոսքս առ պատգամ,
Արդ առիթ չունեմ տարակուսելու:

Այնպես է թվում, թե նոր պիտի գամ,
Ու վեր բարձրանամ նոր խոսք ասելու։

1988

* * *

Ախ, թե երգել իմանայի,
Կըերգեի տխուր երգ.
Այն կլիներ սուրբ օրհներգ…
Ախ, թե երգել իմանայի,
Կերգեի տխուր երգ։
Վշտակցելու կգնայի,
Ուր կսկիծն է անեզերք.
Ախ, թե երգել իմանայի,
Կըերգեի տխուր երգ։

1988

* * *

Հավիտենության աշխարհն անմեկին
Չի մխիթարում իր երանությամբ.
Թագ չի խոստանում Աստըծո ձեռամբ
Հավիտենության աշխարհն անմեկին։
Ունկնդիր օրվա անսուտ աղմուկին,
Կյանքը երկարենք սրտի ալ արյամբ.
Հավիտենության աշխարհն անմեկին
Չի մխիթարում իր երանությամբ։

1989

* * *

Լիքը, լիքն է մեր սիրտը դառնությամբ,
Եվ այն ծամծմում ու կուլ ենք տալիս.
Շատերի քիմքին այդ դուր չի գալիս…
Լիքը, լիքն է մեր սիրտը դառնությամբ։
Ողջույնը մեր լի գարնան ցնծությամբ,
Ներսում, մեր ներսում ձյուներն են լալիս…
Լիքը, լիքն է մեր սիրտը դառնությամբ,
Եվ այն ծամծմում ու կուլ ենք տալիս։

1989

* * *

Մի թռչնակ կա սաղարթի մեջ,

Չեմ տեսնում նրան.
Ճռվողում է, խոսում անվերջ
Վաղ առավոտյան։

Նրա կանչը արձագանքվում
Ու հետ է գալիս.
Հավանաբար նրան թվում
Թե ձայն են տալիս,

Պատասխանում իր մեղկ կանչին,
Խոսում իր հետ։
Ախ, այդ փոքրիկ չարաճճին
Հայտնվեր ինձ մերթ։

1990

* * *

Էն ո՞վ է, որ չի փափագում,
Կյանքը էլի երկարի.
Դե աստվածը այդ չի հոգում,
Ոչ էլ Քրիստոսը բարի։

Էլ հույսներս ու՞մ հետ կապենք,
Ո՞ր աշխարհի ու գահի,
Արդ դանդաղե՞նք, թե՞ շտապենք
Միջև՝ ահի ու մահի։

1990

* * *

Դեռ ինչքա՛ն եմ տանելու
Իմ էս լուծը ծանր ու բիրտ,
Ոնց եմ գլուխ հանելու
Գործն այս խրթին, հոգնած սիրտ։

Կյանքիս թելը բարակել,
Ուր որ է տի կտրվի.
Վերինը չի առարկել,
- Ինչ իրենն է՝ կտրվի։

Բայց դե խառնակ օրեր են,
Անհաստատ ու հեղհեղուկ.
Ով իմ բարի տնօրեն,
Տալի՞ս ես, տո՛ւր անաղմուկ։

1990

* * *

Ինքս ինձ խաբում,
Կշռում եմ, չափում,
Պակասորդ տալիս,
Դառնում՝ նախատում։

Ու չեմ նկատում,
Ու չեմ հավատում,
Որ կեղծավոր եմ.
Ոչ, չեմ կատակում։

1990

* * *

Ես շատ բանի չհասա,
Մինչ ավարտվում է կյանքս.
Դատարկ մսխեցի ջանքս.
Ես շատ բանի չհասա։

Զորավոր, կանչիս անսա,
Օծիր նորակերտ վանքս.
Ես շատ բանի չհասա,
Մինչ ավարտվում է կյանքս։

1991

* * *

Ելք եմ որոնում,
Ու չեմ գտել դեռ.
Որ կողմը դառնում՝
Դեմս ժայռ է, լեռ։

Դեռ պրպտում եմ,
Չեմ թևաթափվում.
Անվերջ փնտրում եմ,
Ո՞նց չեմ սթափվում,

Որ գլուխներիս
Կրակ է մաղվում.
Այրվում ենք, այրվում
Եվ աղավաղվում։

1991

* * *

Զարմանալի դյուրահավատ,
Անուղղելի լավատես,
Օ՜, ինչու եմ ես այսպես՝
Զարմանալի դյուրահավատ։

Շուրջս այսքան հուդա-կավատ,
Մնացել եմ նույնը՝ ես.
Զարմանալի դյուրահավատ,
Անուղղելի լավատես։

1991

* * *

Կորցրածս դեռ չեմ գտել,
Ոչ ոք տեղը չգիտի.
Վայրկյան անգամ չեմ երկմտել՝
Մեկն ինձ լավ լուր կավետի։

Հավատում եմ, դեռ հավատում,
Տերը ինձ միշտ օգնական,
Որոնողը միշտ էլ գտնում,
Գտածով իր բավական։

1991

* * *

Երազը կյանքի նեկտարն է,
Քեզ այն հաճախ է տանում.
Ուր օրերիդ վաղ ամառն է,
Երբ գեներդ են իմաստնանում։

Երբ պատվելին սիրո բառն է,
Քեզ տնից դուրս է հանում,
Տանում սարը, ուր անտառն է,
Ուր պտուղն է հասունանում։

1991

* * *

Ես մերթ աստծու դեմ ըմբոստանում եմ,

Ու ընդվզում եմ, խոստովանում եմ.
Ուրիշ էլ ինչպես ապրեմ աշխարհում,
Թե ոչ՝ աչքումս նվաստանում եմ։

Նրան մեղքերում ամբաստանում եմ,
Արդար վեճերում զգաստանում եմ,
Իր պատվիրանն եմ ես վարդապետում,
Եվ համարումս վերստանում եմ։

Ես մերթ աստծու դեմ ըմբոստանում եմ,
Ու ընդվզում եմ, խոստովանում եմ,
Ուրիշ էլ ինչպես ապրեմ աշխարհում,
Թե ոչ՝ աչքումս նվաստանում եմ։

1992

* * *

Այս էր, այսքանը, և ոչ ավելին.
Նստել եմ տանը, դեմս հայելին.
Նայում եմ, նայում կքած ծերուկին,
Նմանեցնում եմ հին ծանոթ մեկին։
Նա՞ է, թե՞ նա չէ, ուրիշ էլ ո՞վ է՝
Մի քիչ այլայլված՝ հոգեխռով է.
Ոչ, չեմ շփոթում, ծանոթ եմ իրեն,
Ներքին խռովքն է ծածկում նրբորեն։
Նա չի էլ փորձում հետս խոսք բացել,
Խոսելուց էլ է գուցե ձանձրացել։
Անքեն ընկղմվել իր բազկաթոռում,
Հանուն արդարի փորձում, ոգորում,
Մտքում խռնվել գործերն անավարտ,
Հայացքը սրվել, կոպերը անթարթ,
Չէ, չվրդովեմ… ահա նա կրկին
Ինքն է, իր հետ է՝ հավերժ անմեկին։

1992

* * *

Ծանուցագիր եմ ստացել վերուստ,
Որ միշտ, ամեն պահ կաց-պատրաստ լինեմ.
Ու՞ր եմ մեկնելու՝ դժոխք, թե՞ եդեմ.
Ծանուցագիր եմ ստացել վերուստ։

Ժպտում եմ, սակայն տրտում եմ ներքուստ,
Ժամանակ չեղավ, որ կյանք վայելեմ.

Ծանուցագիր եմ ստացել վերուստ,
Որ միշտ, ամեն պահ կաց-պատրաստ լինեմ։

1992

* * *

Տերևաթափս, օ՜, սկսվել է,
Դեղնած սաղարթս քամով տարվում,
Կուտակվում ձորում, մխում է, այրվում…
Տերևաթափս, օ՜, սկսվել է։

Վախվորած սիրտս լուռ սսկվել է,
Վառվող մոմերս հերթով մարվում.
Տերևաթափս, օ՜, սկսվել է,
Դեղնած սաղարթս քամով տարվում։

1992

* * *

Մի ժամանակ բարի էի,
Հիմա չար եմ ասես.
Ո՞վ է դրա մեղավորը -
Աշխա՞րհը, թե՞ ես։

Մի ժամանակ կոպիտ էի,
Կիրթ չէի այսպես.
Ես չեմ հիշում՝ էլ ինչ էի
Բայց էի անես։

Ամեն մեկս հիմա կենտրոն,
Առանցք ենք ասես.
- Ո՞վ տի լինի առաջինը,
Ասա, դու՞, թե՞ ես։

Ահա այս է փչացնողը
Սրբություն ու ծես.
Ասեք, ո՞վ է մեղավորը,
Հարցնում եմ ձեզ։

1992

* * *

Չեմ կարողանում ուրախանալ,
Ու ոչ էլ հրճվել լավ բանի վրա.

Այնպե՛ս եմ զգում կարիքը դրա…
Չեմ կարողանում ուրախանալ։
Ով չի երազում տուն վերադառնալ,
Մինչ ճանապարհը՝ քար ու քռա.
Չեմ կարողանում ուրախանալ,
Ու ոչ էլ հրճվել լավ բանի վրա։

1993

* * *

Օ՛, դժվար է շատ՝ լավ բան ստեղծել,
Համենայն դեպս չեմ կարող կեղծել,
Որ ամեն անգամ նորն արարելիս,
Ինչպես սիմերը հերթով լարերիս,

Ամբողջ էությամբ լուռ կենտրոնանում,
Ու… չեմ իմանում, թե ինչ եմ անում։
Հետո է պարզվում, թե մեր «սանուհին»
Ինչ է արարել երկունքի պահին։

1993

* * *

Կյանքս, կյանքս ճանապարհ էր,
Երկար ու ձիգ ճանապարհ.
Խորդուբորդ էր, վեր ու վար էր,
Քայլելն, անցնելն անհնար։

Չընկրկեցի, համառեցի,
Եվ ընկա և բարձրացա.
Վարարեցի, արարեցի,
Շոյվեցի մերթ, դառնացա։

Ճանապարհիս լոկ ավարտում
Հասկացա ես, օ՛, հանկարծ,
Թե ինչու չէի հավատում
Հաղթանակին «փառապանծ»։

1993

* * *

Ես հաճախ էի նայում առ երկինք,
Բարձրյալը ինձնից խիստ զգուշացավ,
Իր կացարանից շատ հեռացավ…

Ես հաճախ էի նայում առ երկինք։
Չառաջարկեցի որևէ դաշինք,
Աշխարհականիս վրա բարկացավ…
Ես հաճախ էի նայում առ երկինք,
Բարձրյալը ինձնից խիստ զգուշացավ։

1993

* * *

Հիվանդանոցում
Բուժել են փորձում՝
Վերքեր են բացում,
Վերքեր են գոցում,
Մինչ ծպտվել է
Չարն անբուժ խոցում՝
Մեծ հանցավորը
Այս լացուկոծում։

Կյանքը այրվում է
Կրակ ու բոցում,
Դու ներկա՞ ես, Տեր,
Այս թեժ այրոցում։
Թե՞ անտեղյակ ես,
Աչք ես կկոցում…
Հիվանդանոցում
Բուժել են փորձում։

1993

* * *

Կյանքում ոչինչ չեմ մուրացել,
Ոչ մի երդում չեմ ուրացել,
Ի՞նչ զանցանքիս համար այսօր
Խեղճացել եմ ու … կուրացել։

Չի հաջողվում կարդալ, գրել,
Օրը գեթ մի բան արարել,
Տեր իմ, գուցե դու՛ նեղ օրիս
Կամենայիր ձեռք երկարել։

1993

* * *

Մի շտապիր, Տեր իմ,

Երբ էլ լինի կտանես.
Ուր էլ լինեմ, կգտնես…
Մի շտապիր, Տեր իմ։

Որքան էլ մենք մտերիմ՝
Ետ բերելու ճար չունես.
Մի շտապիր, Տեր իմ,
Երբ էլ լինի, կտանես։

1994

* * *

Օ՜, անսովոր մի կարոտ
Հանկարծ մեջս արթնացավ,
Որպես ամպրոպ ու որոտ
Դղրդաց ու թանձրացավ։

Այրվեց, այրվեց իմ հոգին
Ու բոցակեզ մոխրացավ,
Շիրմաքար մի ահագին
Սրտիս վրա ծանրացավ։

1994

* * *

Որքան էլ խորունկ լինի շիրիմս,
Որքան էլ ծանր վրայիս հողը,
Օ՜, ես, ես հավերժ քո աղոթողը.
Որքան էլ խորունկ լինի շիրիմս։

Դու միշտ եղել ես, օ՜, դու միշտ իմս,
Մարած մոմերս կրկին վառողը…
Որքան էլ խորունկ լինի շիրիմս,
Որքան էլ ծանր վրայիս հողը։

1994

* * *

Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ,
Մեր ձեռքսեղմումը՝ ներշնչված կորով.
Գրկախառնումի ցնծացող գորով…
Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ։

Արդ թվում է, թե գրկում, գգվում եմ,
Պահը ըմբոշխնում անանց, անխռով…

Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ,
Մեր ձեռքսեղմումը՝ ներշնչված կորով:

1994

* * *

Օ՜, անսովոր մի կարոտ
Հանկարծ մեջս արթնացավ,
Որպես ամպրոպ ու որոտ
Դղրդաց ու թանձրացավ:

Այրվեց, այրվեց իմ հոգին
Ու բոցակեզ մոխրացավ,
Շիրմաքար մի ահագին
Սրտիս վրա ծանրացավ:

1994

* * *

Որքան էլ խորունկ լինի շիրիմս,
Որքան էլ ծանր վրայիս հողը,
Օ՜, ես, ես հավերժ քո աղոթողը.
Որքան էլ խորունկ լինի շիրիմս:

Դու միշտ եղել ես, օ՜, դու միշտ իմս,
Մարած մոմերս կրկին վառողը…
Որքան էլ խորունկ լինի շիրիմս,
Որքան էլ ծանր վրայիս հողը:

1994

* * *

Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ,
Մեր ձեռքսեղմումը՝ ներշնչված կորով.
Գրկախառնումի ցնծացող գորով…
Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ:

Արդ թվում է, թե գրկում, զգվում եմ,
Պահը ըմբոշխնում անանց, անխռով…
Ճի՞շտ եմ հասկացել, թե՞ սխալվում եմ,
Մեր ձեռքսեղմումը՝ ներշնչված կորով:

1994

* * *

Հազար ճեղք է տվել սիրտս,
Հազար ճեղքից արյան շիթեր,
Կայծակնածիր հրո շանթեր…
Հազար ճեղք է տվել սիրտս:

Ես խենթացած, օ՜, անմիտս,
Քննարկում եմ դեռ դեմ ու թեր…
Հազար ճեղք է տվել սիրտս,
Հազար ճեղքից արյան շիթեր:

1994

* * *

Աստված, շքեղ շնորհք տայիր,
Լավ-լավ բաներ հորինեի,
Տեսնելու այն տունս գայիր,
Գալուստիդ հուր երգ ձոնեի:

Չշտապեիր, ճաշակեիր
Նեկտարածոր տանս գինին.
Աստվածորեն օրհներգեիր
Ծագն արևի ոսկեբագին:

Աստված, շքեղ շնորհք տայիր,
Ծաղկեցնեի հողը հայոց,
Անբացակա հյուր մնայիր
Մեր աչքի լույս - սրտի խորոց:

1995

* * *

Այս նախավերջին հանգրվանն է տխուր ճանապարհիս,
Ցատկ է մնացել, վերջին մի թռիչք, շնչահեղձ մի պահ,
Որ ապրողները ծածուկ շշնջում, անվանում են մահ…
Այս նախավերջին հանգրվանն է տխուր ճանապարհիս:

Ես դեռ պատրաստ չեմ այդպիսի ցատկի՝ անկամ թռիչքիս
Անէություն է այնտեղ վերջապես, և ոչ փառքի գահ…
Այս նախավերջին հանգրվանն է տխուր ճանապարհիս,
Ցատկ է մնացել, վերջին մի թռիչք, շնչահեղձ մի պահ:

1995

* * *

Տագնապներդ բազմապատկվում են, գիտեմ,
Տարիներդ ծանրանում են ու բարդվում,
Ճամփաներդ, որ խորդուբորդ, չեն հարթվում…
Տագնապներդ բազմապատկվում են, գիտեմ:

Ես, ասա, քեզ ո՞ր փրկչի գալն ավետեմ,
Հուսադրվես, ոգեկոչվես քո հեռվում…
Տագնապներդ բազմապատկվում են, գիտեմ,
Տարիներդ ծանրանում են ու բարդվում:

1995

* * *

Հետապնդում է իմ աստղը ինձ,
Խանդում է հենց որ չեմ երևում,
Վեճի բռնվում իր վերևից,
Արտասվում է մերթ ու անձրևում:

Նա ինձ սիրում է, ես էլ նրան,
Ու փոխադարձ է նվիրումը,
Մեկ-մեկու համար՝ հույս-հենարան,
Սրբազան է միմյանց ներումը:

Որքան կտևի մեր այս դաշինքը
Սուրբ, սրբազան ու աստվածահաճ,
Հաստատ՝ հավերժական է ինքը,
Մինչ կյանքը մարդու՝ չափազանց կարճ:

1995

Մուսային

Իմ ծերանալը հասկանալի է՝
Մահկանացու եմ սովորական,
Քո էությունը աստվածային է,
Ինչու՞ ես այդքան ծերունական:

Նա թե՝ մեկտեղ ենք աշխարհ եկել,
Միաժամանակ, նույն հորից-մորից.
Չենք կրկնվելու, գիտեցիր, մեկ էլ,
Չէ՞ բախտակից ենք ծնվելու օրից:

1995

* * *

Ոչ ոք չի ստիպում այժմ իսկ մեկնել,
Դե ուրեմն, Տեր, դու էլ համբերիր.
Մեծահոգաբար հորդորն այս ներիր…
Ոչ ոք չի ստիպում այժմ իսկ մեկնել:

Անդուր է հաճախ խնդրանքն այս կրկնել,
Աղոթքն առ աստված հղել ծնրադիր…
Ոչ ոք չի ստիպում այժմ իսկ մեկնել,
Դե ուրեմն, Տեր, դու էլ համբերիր:

1995

* * *

Տքնանքի պատճառած
Օ՜, քաղցր հոգնություն,
Դու կամաց-կամաց
Բերում ես ինձ քուն,
Ապա երազներ
Կապույտ՝ երկնային,
Ուր չկան պահեր
Տխուր՝ երկրային…
Տքնանքի պատճառած
Օ՜, քաղցր հոգնություն:

1996

Պտտվիր, պտտվիր, կարուսել

Վ.Տերյան

Պտտվիր կարուսել, պտտվենք,
Պտտվիր, պտտվենք խելահեղ.
Դարն է խելագար ու ահեղ…
Պտտվիր, կարուսել, պտտվենք:

Դե փույթ չէ՝ կործանվենք կամ խեղվենք,
Հեղեղվենք անտեղի ու անմեղ…
Պտտվիր կարուսել, պտտվենք,
Պտտվիր, պտտվենք խելահեղ:

1996

* * *

Սակավապետ եմ ես եղել,
Զուսպ առօրյա պահանջներում,
Չեմ թևածել անուրջներում…
Սակավապետ եմ ես եղել:

Ինձ փորձել են հաճախ նեղել,
Չեմ ընկրկել նահանջներում…
Սակավապետ եմ ես եղել,
Զուսպ՝ առօրյա պահանջներում:

1996

* * *

Ես իմ «Տուրքն» եմ արարում,
Որ տամ պիտի Հայաստանին.
Այն կինձնեմ ժամանակի
Գոռ, անաչառ դատաստանին:

Օ՜, բեկանել այն չեն կարող,
Խարիսխները խորն եմ դնում.
Չըերերաս հայրենի հող,
Հաստատ մնա՝ ինչպես հնում:

Կգան, կանցնեն ժամանակներ,
Բյուր սերունդներ հող կդառնան,
Կբորբոքվեն նոր կրակներ,
Մոխիր ու ծուխ կդառնան:

Միևնույն է, արեգական
Շողերը քեզ կջերմացնեն.
Նոր գարուններ այցի կգան,
Ու մեր ջանքն էլ կանմահացնեն:

1996

* * *

Աստըծու հետ պայման ունեմ,
Որ ինձ ետ է բերելու,
Ես իր մեղքն եմ ներելու…
Աստըծու հետ պայման ունեմ:
Ճամփես բռնել, արդ գնում եմ
Մայր հողի հետ մերվելու…
Աստըծու հետ պայման ունեմ,
Որ ինձ ետ է բերելու:

1996

* * *

Ես չեմ հասկանում, թե ինչ եմ անում,
Բանի նմա՞ն է իմ արարածը,
Մինչ ինձ տանջում է ծածուկ կասկածը…
Ես չեմ հասկանում, թե ինչ եմ անում։
Մինչ ճախարակը մանում է, մանում…
Ինչ է խոստանում ինձ այս արկածը.
Ես չեմ հասկանում, թե ինչ եմ անում,
Բանի նմա՞ն է իմ արարածը։

1996

* * *

Օ՜, նա ողջ կյանքում ինձ հետ է եղել,
Քայլել է անվերջ, ճամփեն չի շեղել,
Անձրևել, հորդացել ու հեղեղել.
Օ՜, նա ողջ կյանքում ինձ հետ է եղել։
Նա խոր վշտերս զգուշորեն մեղմել,
Ձեռքս ափն առել, ջերմորեն սեղմել…
Օ՜, նա ողջ կյանքում ինձ հետ է եղել,
Մենակ չի թողել, ճամփեն չի շեղել։

1997

* * *

Օրերից մի օր հայտնի կդառնա,
Որ ես գնացել, այլևս չկամ.
Շտապել էի կամքով թե անկամ,
Օրերից մի օր հայտնի կդառնա։
Լուրն այդ առնելով, օ՜, կզարմանան,
Ու… կընտելանան՝ կամ ես, թե չկամ…
Օրերից մի օր հայտնի կդառնա,
Որ ես գնացել, այլևս չկամ։

1997

* * *

Հետս այնքան բան եմ տանում,
Որ թողնեի պիտի կյանքին,
Տեր իմ, Տեր իմ, ի՞նչ ես անում,
Ունկ դիր դու իմ պաղատանքին։

Թող որ գործերս ավարտեմ,
Հանձնեմ լրիվ, սարք ու կարգին.
Տեղ է պահված, արդեն, գիտեմ
Գրապահոցի դարակին:

Այն իր դերը պիտի խաղա
Գալիք օրվա «առևտուր»-ում.
Տեր, ես մշակ, և ոչ աղա,
Շահելու եմ վերջին տուրում:

1997

* * *

Երախտապարտ եմ Գևորգ Քոչարին,
Որ վաղ օրերում ինձ պես անճարին
Ուսուցանեց ու հասու դարձրեց
Հայոց շինարար վսեմ հանճարին:

Ես մեծ գործերի կրտսեր մի մշակ,
Ի գործ դնելով քանքար ու ճաշակ,
Իմ ժողովրդին ընծա կերտեցի
Խրճիթ ու պալատ, վեմ ու աշտարակ:

Հիշատակն օրհնեմ Գևորգ Քոչարի.
Օ՜, նա չսպասեց վարձ ու վճարի,
Ցուրտ հեռուներում քաշվել էր, մաշվել,
Կուլ չէր գնացել ստիպմանը չարի:

1997

* * *

Անկեղծ ասած, լավ չգիտեմ՝
Ըշտապե՞մ, թե՞ դանդաղեմ.
Կայարան է, գուցե մի քիչ,
Գուցե մի քիչ հապաղեմ:
Մինչ այդ - գուցե,
Տագնապներս հանդարտվեն,
Մոռացության մատնվեն
Առիթները սիրտ ավիրող՝
Քրքրող ծվեն-ծվեն:

Անկեղծ ասած, լավ չգիտեմ՝
Ըշտապե՞մ, թե՞ դանդաղեմ:

1997

* * *

Սիրտս կանթեղ ծխացող,
Մերթ բորբոքվում, մերթ՝ մարում,
Էլի երգ է հորինում
Սիրտս՝ կանթեղ ծխացող:
Մինչ օրերս հեռացող
Գնում, կորչում անտառում.
Սիրտս կանթեղ ծխացող,
Մերթ բորբոքվում, մերթ՝ մարում:

1997

* * *

Ինձ չտպագրեց հայրենակիցս,
Այդ վատ համարեց դուռ ու դրկիցս.
Ո՞վ էր գեշ շիճուկ ներարկել նրան,
Նա ցած գլորվեց աչք ու ունքիցս:

Այդտեղ նախա՞նձ կար, թե՞ անգիտություն,
Օ՜, ինչ էլ լինի, ոչ մի գթություն.
Թող վատ արարքը իր պատիժն առնի,
Անքեն ճամփորդը ժամանի իր տուն:

1997

* * *

Իմ այսօրն էլ այսպես անցավ՝
Սովորական՝ անփորձանք.
(Խաղաղ էր ծովն՝ անհորձանք…)
Իմ այսօրն էլ այսպես անցավ:
Ինձ խորհելու առիթ դարձավ,
Կյանքը՝ խոհեմ ակնածանք.
Իմ այսօրն էլ այսպես անցավ՝
Սովորական՝ անփորձանք:

1997

* * *

Իմ գարունը յասամանով է գալիս,
Արբենում եմ նրա անանց բուրմունքով.
Հառնում է նա գարնան հրաշք արբունքով…

Իմ գարունը յասամանով է գալիս:
Յասամանի պուրակներով անցնելիս
Վեհանում եմ ու սրբանում հոգեթով.
Իմ գարունը յասամանով է գալիս,
Արբենում եմ նրա անանց բուրմունքով:

1997

* * *

Ինձ հրաժեշտ տալիս թող որ քիչ խոսեն,
Թող վայրկյանները համրորեն հոսեն.
Թող լռության մեջ շնչով երկնային
Ու խոր հոգեթով երգի Լուսինեն:
Ու քունս լինի անվրդով, անքեն,
Օ՜, երանի թե շարունակ երգեն,
Որ չթվա թե ամեն ինչ մեռավ,
Թող հնչյունները վիշտս ամոքեն:

1997

* * *

Անվերջ վիճում եմ ինքս ինձ հետ,
Թե ինչու այսքան ես սակավապետ,
Վայելքի տենչ է հանկարծ արթնացել՝
Դարձել եմ անզուսպ, նպատակամետ:

- Խաբուսի՞կ է այս, օ՜, հավանաբար,
Այն, ինչ անցել է, նա էր Ոսկեդար՝
Մի անգամ է լոկ կյանքում հանդիպում,
Ու այնուհետև առնում է դադար:

1997

* * *

Ես որ չլինեմ,
Ու՞ր պիտի գնաս,
Ու՞ր պիտի մնաս
Ես որ չլինեմ:

Ու՞մ ապավինեմ,
Որ մենակ չլաս,
Գիտենամ, որ կաս,
Ու՞մ ապավինեմ:

1997

* * *

Ում որ գիտեի՝ ինչ որ չեմ տեսնում,
Ուր ձգտում էի՝ գնում, չեմ հասնում,
Է՛, աշխարհ, աշխարհ, միշտ այդպես հաստատ՝
Որոշումներդ անբեկ, անկասում՝
Ոչ մի երկընտրանք, ոչ մի հակասում,
Ոչ մի ընդվզում, տրտունջ կամ ցասում.
Այսպես եղել է, այսպես կլինի
Արար աշխարհի ցանկացած մասում:

1997

* * *

Այդ դու ես՝ հեռվից հեռու
Կարոտով լցված երգում.
Օտար ափերի միգում
Այդ դու ես հեռվից-հեռու՝
Կարկաչող աղբյուր, առու:
Թախիծ է մաղվում մեր հոգում.
Այդ դու ես՝ հեռվից հեռու
Կարոտով լցված երգում:

1997

* * *

Ուշացել եմ, չեմ ավարտել գործերս,
Մինչ մերթ ընդ մերթ ձայն է տալիս ինձ Տերս.
Թաքցնում է ասելիքը՝ խնայում…
Փոխարենը առաքում եմ ջերմ սերս:
Փափագում եմ մարմնավորվեն իղձերս,
Տքնանքով եմ արդարացնում այս դերս,
Համարձակ եմ մարդկանց աչքունքին նայում,
Չափավորում աներևույթ կրքերս:

1997

* * *

Մի այլ օրհնանքի ես պահանջ չունեմ,
Լի ու լի գոհ եմ արդեն եղածով,
Արդեն օծված եմ անքեն աստուծով…
Մի այլ օրհնանքի ես պահանջ չունեմ:
Կանչով եկել եմ, կանչով գնում եմ…

Ապրել, ապրել եմ իմ վաստակածով.
Մի այլ օրհնանքի ես պահանջ չունեմ,
Լի ու լի գոհ եմ արդեն եղածով:

1997

* * *

Նույն հորից ենք ու նույն մորից
ես ու իմ մուսան,
Հարազատ ենք - արյունակից
դեմքով միատես.
Մերթ շփոթում, խառնում են մեզ,
մեզ չեն տարբերում.
Նույն կշռույթով մեզ բառնում են,
ու մենք էլ ներում:
Նույն շենքում ենք մենք բնակվում՝
նույն հարկ-համարում,
Օ՜, իզուր չէ, մարդիկ հակվում՝
մեզ մեկ համարում:

1997

* * *

Ուղևորներ տեղում չկան,
Հանրակառքը նոր է մեկնել.
Ինձ տանելու կգա՞ մեկ էլ…
Ուղևորներ տեղում չկան:
Այս երբ նորեց իմ լուսնկան,
Մինչ ինձ հրում են … ընկրկել.
Ուղևորներ տեղում չկան,
Հանրակառքը նոր է մեկնել:

1997

* * *

Ես ու մուսաս մի մաշկի մեջ,
Կռվշտվում ենք, հաշտվում էլի
Նույն որոշման, մտքի գալի...
Ես ու մուսաս մի մաշկի մեջ:

Կյանքն է այսպես՝ խռովք անվերջ.
Մերթ մղձավանջ, մերթ՝ տանելի,
Ես ու մուսաս մի մաշկի մեջ
Կռվշտվում ենք, հաշտվում էլի:

1998

* * *

Ճերմակ, անգիր թուղթ, ինքնահոս գրիչ,
Դուք, որ երբեմնի իմ տարերքն էիք,
Իմ պտուղն էիք, այգուս բերքն էիք,
Ճերմակ, անգիր թուղթ, ինքնահոս գրիչ,
Մոռացվում եք արդ, խորթանում քիչ¬քիչ,
Որպես երեկը՝ պատմություն անկիրք...
Ճերմակ, անգիր թուղթ, ինքնահոս գրիչ
Դուք, որ երբեմն իմ տարերքն էիք...
*
Մոռացվում եք արդ, խորթանում քիչ¬քիչ։

1998

* * *

Կրակ եմ սարքել ու տաքանում եմ.
Ամենայն տաղտուկ հրում, վանում եմ.
Ծուխն ամեն դեպքում իմ կողմն է գալիս,
Էլի համբերում, անխոնջ տանում եմ։
Կրակն ինչ անի, քամուց է շեղվում,
Ուր խելքը փչի, այն կողմն է մղվում.
Նրան ինչ, թե ես ծխահեղձվում եմ,
Իմ իսկ կրակից հեղվում¬նեղվում եմ։

1998

* * *

Ինձ թվում էր, ավարտվեցի,
Էլ անելիք չունեմ կյանքում,
Չունեմ տալու հիմք ու հերքում...
Ինձ թվում էր ավարտվեցի։
Վերջին մարտում չպարտվեցի,
Չը երկնչեց սուրն իմ ձեռքում.
Ինձ թվում էր, ավարտվեցի,
Էլ անելիք չունեմ կյանքում։

1998

* * *

Ապրումներս, խոհերս
Վերջը¬վերջո գիրք դարձան՝

Հեղինակիս հուշարձան -
Ապրումներս, խոհերս։
Հանդարվեցին ծովերս,
Ալիքները ետ դարձան...
Ապրումներս, խոհերս
Վերջը¬վերջո գիրք դարձան։

1998

* * *

Վաղը հանդիպենք պիտի,
Ժամադրվել ենք արդեն.
Դրկիցներս չգիտեն…
Վաղը հանդիպենք պիտի։
Կհաջողե՞նք, ով գիտի…
Թե մեզ նորից կդատեն…
Վաղը հանդիպենք պիտի,
Ժամադրվել ենք արդեն։

1998

* * *

Ոչ, ոչ, ես դեռ չեմ ավարտվել,
Ոչ մի մարտում օ՛չեմ պարտվել.
Մեղք չեմ գործել, ու ոչ ոքից
Անհարկի չեմ դատապարտվել.
Չեմ կտրատվել, չեմ մկրատվել,
Ընկնելիս էլ չեմ վիատվել.
Եկել, ահա տեղ եմ հասել,
Դեռ կամ, նույնիսկ չեմ հանդարտվել։

1998

* * *

Որոնեցի, որոնեցի,
Որոնեցի, չգտա.
Ինչ հույս՝ Տերը գա ու տա…
Որոնեցի, որոնեցի…
Սարսուռներով հորինեցի,
Գեթ սիրտս ինձ հավատա.
Որոնեցի, որոնեցի,
Որոնեցի՝ չգտա։

1998

* * *

Արդյոք, դու իմ դուստրը չե՞ս,
Որին, ավա՛ղ, չեմ ճանաչում,
Սակայն փնտրում, անվերջ կանչում՝
Արդյոք, դու իմ դուստրը չե՞ս:
Խոստովանիր, լուսերես…
Տագնապում եմ, ճչում, ճչում՝
Արդյոք, դու իմ դուստրը չե՞ս,
Որին, ավաղ, չեմ ճանաչում:

1998

* * *

Ես հիմա գրի կառնեմ
Թելադրանքդ, մուսա,
Հարմարագույն պահն է սա…
Ես հիմա գրի կառնեմ:
Միայն թե վեր չհառնեմ,
Իսկ դու էլ մերթ ինձ անսա,
Ես հիմա գրի կառնեմ
Թելադրանքդ, մուսա:

1998

* * *

Սեր սիրողները ափսոսեն պիտի,
Որ ժամանակին ինձ չեն կարդացել,
Սիրո հաճույքը խոր չեն զգացել…
Սեր սիրողները ափսոսեն պիտի:
Երբ գիրք կդառնամ, ոչ ոք չգիտի,
Այնտեղ մի ամբողջ աշխարհ եմ բացել…
Սեր սիրողները ափսոսեն պիտի,
Որ ժամանակին ինձ չեն կարդացել:

1998

* * *

Սերը կյանքի պատվանդանն է,
Ու պսակն է անձեռակերտ.
Մի կատակեք սուրբ սիրո հետ…
Սերը կյանքի պատվանդանն է:
Ծով աշխարհի հրվանդանն է,
Հեռուն տանող լույս արահետ.

Սերը կյանքի պատվանդանն է,
Ու պսակն է անձեռակերտ:

1998

* * *

Իրականում հեռու էիր,
Ինձնից հեռու, շա՜տ հեռու,
Մինչ երազում, օ՜, մոտ էիր՝
Մեզ բաժանող մի առու:

Շատ փորձեցիր առուն անցնել,
Առանց ջուրը մտնելու,
Օ՜, թեպետ քիչ էր մնացել,
Որ փարվեինք իրարու,

Բայց այդպես էլ առուն չանցար,
Ջուրը պղտոր, անմաքուր.
Երազն անցավ, դու հեռացար
Չիմացանք էլ՝ մինչև ուր:

1998

* * *

Մենք դեռ այնքա՜ն ջահել էինք,
Որ միմյանց լավ չհասկացանք,
Ու միմյանցից օտարացանք…
Մենք դեռ այնքա՜ն ջահել էինք:
Ա՜յ թե նորից հանդիպեինք,
Ափսոսեինք, որ ծերացանք…
Մենք դեռ այնքա՜ն ջահել էինք,
Որ միմյանց լավ չհասկացանք:

1998

* * *

Ես հավատավոր, ռոմանտիկ մի այր,
Մերթ մոռացել եմ ռեալ կյանքի գինը,
Ինձ պատժել է հաճախ Վերինը…
Ես հավատավոր ռոմանտիկ մի այր:
Բայց և չեմ գաղթել ապահով մի վայր,
Այս հողն ու ջուրն է արդար հայինը…
Ես հավատավոր ռոմանտիկ մի այր,
Մերթ մոռացել եմ ռեալ կյանքի գինը:

1998

* * *

Ա՜խ, երանի թե դու այժմ՝ հիմա
Ինձ հասկանայիր, լա՛վ հասկանայիր,
Կամ հեռանայիր, ու կամ մնայիր,
Ա՜խ, երանի թե դու այժմ՝ հիմա
Ինձ մոտենայիր այնպես, ակամա.
Ինձ ուժ ու հենակ, ինձ հույս դառնայիր.
Ա՜խ, երանի թե դու այժմ՝ հիմա
Ինձ հասկանայիր, լա՛վ հասկանայիր:

1998

* * *

Ես ձեզ սիրում եմ երգեր մի գրված տարիներ ի վեր
Դուք պահպանել եք, այն ինչ ես արդեն, արդեն մոռացել եմ
Ես այն օրերից, օ՜, որքան, որքան շատ եմ հեռացել…
Ես ձեզ սիրում եմ երգեր իմ գրված տարիներ ի վեր:
Փույթ չէ, արվեստով ոչ միշտ անթերի, երբեմն անվավեր
Ես ձեզնով լցված և կարոտներով հաճախ վերացել…
Ես ձեզ սիրում եմ երգեր իմ գրված տարիներ ի վեր,
Դուք պահպանել եք, այն ինչ ես արդեն, արդեն մոռացել եմ:

1998

* * *

Ոչ, ոչ, ես դեռ չեմ սպառվել,
Անկելանոց դեռ չեմ տարվել,
Առաջվա պես հորինում եմ,
Լոկ աչքերիս լույսն է մարվել:

Այդպես Տերը իմ կամեցավ,
Ինչ առիթով էր՝ բարկացավ,
Կարծեց շատ եմ ճամարտակում.
Ու տեղովս դառնում եմ ցավ:

Նա վարժվել է չխնայել,
Այս ու այն կողմ շեղակ նայել.
Միակն ինքն է արդարամիտ:
Մինչ գործում է խիստ անվայել:

Ես չեմ զղջում¬մեղա գալիս,

Չեմ վարանում ճիշտ ասելիս.
Մեղքն իր վիզը, թող վայելի,
Կհասկանա հաշիվ տալիս։

1999

* * *

Փայտ հավելեմ կրակին,
Օջախից ծուխ բարձրանա,
Ճաշը եռա, քաղցրանա,
Փայտ հավելեմ կրակին։
Փառք մարդուս ախորժակին,
Կուտի ու չի ձանձրանա.
Փայտ հավելեմ կրակին,
Օջախից ծուխ բարձրանա։

1999

* * *

Գրիչս փոխել, հաստով եմ գրում
Կարդալ կարենամ.
Նպատակս է, ինչ էլ մտածեմ
Էլի թղթին տամ.
Ստացվում է քիչ անընթեռնելի
Դե փառք Աստծո,
Գուցե այս ձևով վաղանցուկ կյանքում
Հիշելի մնամ։

1999

* * *

Իմ սերնդի գալը տեսա ու գնալը,
Տերը բարի ինձ այդպիսի բախտ շնորհեց.
Աշխատեցի արդարացնել իմ մնալը
Ինչ էլ արի, գոհ ընդունեց, սիրով օրհնեց։

Ես ու Տերս այսպես սիրով, բարյացկամ,
Ու փոխադարձ օրհնանքներով, խաղաղությամբ
Դեռ գնում ենք ու ես այսպես քանի դեռ կամ
Պիտի փորձեմ ինձ ավարտել անխոնջ, անձամբ։

1999

* * *

Ես մինչև այսօր դեռ չեմ սթափվել,
Չեմ մխիթարվել որևէ մեկից.
Դու կարող էիր լինել կարեկից.
Ես մինչև այսօր դեռ չեմ սթափվել։
Իմ տառապանքում լոկ քեզ հետ չափվել,
Ու թափվել, որպես ջրվեժ բարձունքից.
Ես մինչև այսօր դեռ չեմ սթափվել
Չեմ մխիթարվել որևէ մեկից։

1999

* * *

Այսպես մեկ¬մեկ սիրտս լցվում
Ու աչքերս թացվում են,
Հին վերքերս բացվում են.
Այսպես մեկ¬մեկ սիրտս լցվում...
Սիրտս լցվում, սիրտս խոցվում,
Դուռ ու դարպաս գոցվում են.
Այսպես մեկ¬մեկ սիրտս լցվում
Ու աչքերս թացվում են։

1999

* * *

Հույսի պես մի բան ցոլցլում հեռվում,
Նա կամաց¬կամաց իմ կողմն է գալիս.
Փույթ չէ, թե ճամփան մի քիչ կեռմեռվում,
Արձագանքում է նա կանչող ձայնիս։
Օ՛, թող որ, թող որ այն չհամբառնա,
Մոտեցող հույսը աչքիս լույս դառնա։

1999

* * *

Պատսպարողս ինձնից վաղ գնաց,
Այժմ ես բաց եմ բոլոր կողմերից.
Մերկ ու անպաշտպան փչող հողմերից.
Պատսպարողս ինձնից վաղ գնաց։
Մարտնչելու եմ ես ահազնացած
Հարվածների դեմ վերից, թե վարից,
Պատսպարողս ինձնից վաղ գնաց.
Այժմ ես բաց եմ բոլոր կողմերից։

1999

* * *

Արդյոք հաջողեմ պիտի
Նորից գիրք գնել, կարդալ.
Կարդացածին հավատալ...
Արդյոք հաջողեմ պիտի։
Բախտի բան է, ո՞վ գիտի,
Առևտուր է՝ առնել, տալ.
Արդյոք հաջողեմ պիտի
Նորից գիրք գնել, կարդալ։

1999

* * *

Դեռ հայտնի չէ ուր կհասնեմ,
Մեծ աշխարհի փոքր մասն եմ.
Աստիճաններ, օ՜, վեր ու վար...
Օ՜, ես միայն միջին դասն եմ,
Կողոպտում են, ես՝ անմասն եմ,
Աղմուկներում՝ կոնտրաբասն եմ,
Ալան¬թալանի աշխարհում
Իմ «կաղ էշով» ու՞ր կհասնեմ։

1999

* * *

Գործեր ունեմ անավարտ,
Պարտք է, պետք է ափսոսել.
Հեշտ է անտարբեր ասել՝
«Գործեր ունեմ անավարտ»։
Այն վշտի պես անփարատ,
Հոգուս հերկն է ակոսել.
Գործեր ունեմ անավարտ,
Պետք է, պետք է ափսոսել։

1999

* * *

Աչքիս լույսը վերստացա,
Հրաշքի պես, սիրելիս.
Հավատս մոտ չի գալիս...
Աչքիս լույսը վերստացա։
Ցնորքներս, օ՜, մարմնացան,
Ալիքները՝ ծափ տալիս...

Աչքիս լույսը վերստացա.
Մարդու հավատ չի գալիս։

1999

Աչքիս լույսը վերադարձվեց.
Հրաշք է այս, թե՞ ցնորք
Գուցե ուղեղի մորմոք.
Աչքիս լույսը վերադարձվեց։
Արդյոք ինքը՝ Տերը գերվեց
Անթիկնապահ, առանց զորք...
Աչքիս լույսը վերադարձվեց.
Հրաշք էր այս, թե՞ ցնորք։

1999

* * *

Քանի տեսնում եմ՝
Աշխարհը կա.
Ես՝ ինքս եմ վկա
Քանի տեսնում եմ։
Գործիս հասնում եմ,
Ես՝ անբացակա.
Քանի տեսնում եմ՝
Աշխարհը կա։

1999

* * *

Մատչելի չեղավ ինձ Պառնասը,
Մտքերս խառն էին,
Բառերս դառն էին…
Մատչելի չեղավ ինձ Պառնասը։
Լոկ սերտում էի օրվա դասը,
Հոռի, համառն էի…
Մատչելի չեղավ ինձ Պառնասը,
Մտքերս խառն էին։

1999

* * *

Կամաց, կամաց խորթանում եմ,
Օտարանում գրքերիս,
Տեղի տալիս կրքերիս.

Կամաց¬կամաց խորթանում եմ,
Պղտորվում ու հորդանում եմ,
Բռնանում լույս մտքերիս.
Կամաց¬կամաց խորթանում եմ,
Օտարանում գրքերիս։

1999

* * *

Ահ, թե ջահել լինեի,
Ինձ բուժողից սիրվեի,
Սենյակի մեջ անմեկին,
Պարանոցին փարվեի։
Դատ¬դատաստան տարվեի,
Մի քիչ խելքի բերվեի,
Ախ, թե ջահել լինեի,
Ախ, թե ջահել լինեի։

1999

* * *

Երեկ նորից գլորվեցի,
Շարքից դուրս է եկել ձեռքս,
Վերաբացվել դեռ թարմ վերքս,
Երեկ նորից գլորվեցի։
Ինձնից անկախ օրորվեցի,
Խարխլվել է ամուր հենքս.
Երեկ նորից գլորվեցի.
Շարքից դուրս է եկել ձեռքս։

1999

* * *

Միֆ է, ցնորք է հիմա,
Որ իրական էր իրոք.
Որ արդ դարձել է մորմոք
Միֆ է, ցնորք է հիմա։
Վաղ գնացել ու չկան
Ոչ ոք, ոչ ոք նրանցից,
Որ խենթացնում էին ինձ.
Վաղ գնացել ու չկան։
Լոկ հիմա եմ հասկանում,
Որ տեսիլք էր ամեն ինչ.
Ցնդեց, ոչինչ չմնաց.

Լոկ հիմա եմ հասկանում։

1999

* * *

Ինձնից ծածուկ, ինչ որ տեղ
Ծպտվել է հեգ մուսաս։
Աչքը շեղ պահած վրաս,
Ինձնից ծածուկ, ինչ որ տեղ։
Այդպես անչար ու անմեղ,
Տեղյակ ցավիս անպակաս,
Ինձնից ծածուկ ինչ որ տեղ
Ծպտվել է հեգ մուսաս։

1999

* * *

Թե որ Տեր ես, Տեր, տերություն արա,
Է՞ր ես ինձ մատնել անտերության.
Ասես հանձնել ես անհույս գերության...
Թե որ Տեր ես, Տեր, տերություն արա։
Ես իմ ուժից վեր ծանր բեռ առա,
Կռնակիս տարա, ի սեր Տերության.
Թե որ Տեր ես, Տեր, տերություն արա,
Է՞ր ես ինձ հանձնել անտերության։

1999

* * *

Ինչ փույթ, թե կյանքս անցել, ավարտվել,
Մինչ ցնորքներս դեռ սավառնում են.
Նորանոր մտքեր ծնվում, հառնում են.
Ինչ փույթ, թե կյանքս անցել, ավարտվել...
Ինչ փույթ, գործերս հաճախ թերատվել,
Նույնիսկ այսօր էլ առանձնանում են.
Ինչ փույթ, թե կյանքս անցել, ավարտվել,
Մինչ ցնորքներս դեռ սավառնում են։

1999

* * *

Բոլոր գործերս կերտել եմ սիրով,
Ու թե հաջողել՝ երջանկացել եմ.
Հաղթանակ է պարզ, ու ցնծացել եմ,

Բոլոր գործերս կերտել եմ սիրով։
Մարտս վարել եմ հրով ու սրով,
Փառք Աստծո՝ առողջ վերադարձել եմ...
Բոլոր գործերս կերտել եմ սիրով,
Ու թե հաջողել՝ երջանկացել եմ։

1999

* * *

Մուսաս երբեմն մի աղջնակ է,
Երբեմն սաստող, խստաբարո կին.
Նայած ինչ օր է, ինչ եղանակ է՝
Անձնատուր եմ, օ՜, ես մեկն ու մեկին։

Տարբեր լեզվով եմ խոսում նրանց հետ,
Խոսելու նյութն էլ տարբեր է լինում.
Օ՜, ինձ հսկում են արթուն, ակնդետ,
Միմյանց չեն զիջում վեճ հորինելում։

1999

* * *

Թերևս ճիշտը սա էր՝
Անցնելս այս ճանապարհով.
Տերը ինձնով վստահ էր.
Այսպես լավ էր, ապահով։
Չարերն ինձ շրջանցեցին,
Մնացի ինքս ինձ հետ.
Արահետներ բացվեցին,
Տարան տաճար, տարան բերդ։

1999

* * *

Տեր։ Ինձ դժոխք չուղարկես,
Սարսափում եմ սարսափից.
Ծաղկածիծաղ այս ափից.
Տեր, ինձ դժոխք չուղարկես։
Ախտերով չը վարակես,
Հեռու պահիր անկապից
Տեր, ինձ դժոխք չուղարկես,
Սարսափում եմ սարսափից։

1999

* * *

Իմ անձնական նշումների գրքույկում
Ոչ մի ապրող, շնչող անուն չմնաց.
Տերն ամենքին անկյուն տվեց երկնքում
Եվ ոչ մեկին նորից երկիր՝ վերադարձ։
Գրքույկն անկյանք ցավով հանձնեմ կրակին,
Ծուխը ցնդի, երկինքն ի վեր բարձրանա.
Շուտով ես էլ կօտարանամ տան հարկին,
Վայ թե հուշս քար կտրի ու կարծրանա։

1999

* * *

Ի մի են գալիս այժմ նրանք,
Որպես հեքիաթում, որպես ցնորք,
Որպես անորսելի մի ճախրանք,
Որպես կարոտ անանց ու մորմոք։
Մտաբերում եմ դեմքեր, դեպքեր,
Տարակուսում եմ՝ իրակա՞ն էին,
Օ՜, վաղուց սպիացած վերքեր,
Օ՜, հարյուրամյա հուշեր իմ հին։

1999

* * *

Օ՜, այս իմ շենքն է, իմ պատշգամբը
Պուրակին նայող շքեղ ճակատով.
Այս չափածոյում տիրող է յամբը
Զուտ հայկական է ձևով, հավատով։
Այստեղ ապրեցի ես ոչ քիչ տարի,
Ես վայելեցի ինչ ինձ ցնորք էր,
Այն որպես նվեր որդուս հանձնեցի,
Այս էլ երևի շենք ու շնորհք էր։

1999

* * *

Երկու վատ տեսնող աչքեր ունեմ ես
Այն էլ միմյանց հետ թշնամացել են.
Ու որոճում են ներքին մի բողոք
Չափ ու սահմանը տվել, անցել են։

Լավ չեմ հասկանում ինչ է պատահել,

Որտեղից այդքան խանդ, նախանձ ու թույն.
Լուրջ առիթ չկա հարց¬պատասխանում.
Միմյանց չեն զիջում, ոչ մի հաշտություն։

Սակայն երբեմն խոսքի արանքում
Մեկ մեկու ընդդեմ փաստեր բերելիս,
Միմյանց հաղթելու աճապարանքում
Ճշմարտություններ էին դուրս գալիս։

1999

* * *

... Ու երբ վիճակից գլուխ չեմ հանում
Ու չեմ հասկանում, թե ինչ եմ անում,
Տեղումս կանգնած դառնում եմ մի կողմ
Ու ինքս իմ մեջ մի քիչ ինքնանում։
Հին ճախարակ մի բամբակ է մանում,
Մերթ հաստ, մերթ բարակ միջից թել հանում,
Փաթաթում դարձող թեշիկի փայտին,
Մտքերս առած... տանում է, տանու՛մ։

1999

* * *

«Կամուրջներ» ալմանախում
Իմ սիրտն էլ է բաբախում.
Առաջին անգամն այդտեղ
Տեղ են գտել իմ անմեղ
Գրվածքները չափածո
Վերին կամքով Աստծո։
Մի ողջ դարով ուշացած
Երբ ես արդեն ծերացած
Դուռ էր, որ անահ բացվեց
Ու սպասվածն ստացվեց։
Ընդունեցին զարմացմամբ,
Որ քարգործն այս իրավամբ
Բառեր, քարեր քով ի քով
Պատշաճությամբ, վերելքով
Մոնումենտներ արարում,
Ծիածաններ կամարում,
Մարդկանց հաճույք պատճառում,
Ստեղծում է, ու ճառում։

1999

Այսպես հաճախ

Այսպես ահա, մերթ հիշում եմ, մերթ մոռանում,
Ինչեր էին տնօրենները ինձ հետ անում.
Ըմբոնումն էր, օ՜, պակասում բոլորի մոտ,
Ինչ լավ միտք կար, խորշում էին, մի կողմ վանում։

Ինչպե՞ս էի այդ բոլորը ուսած տանում,
Ինչպե՞ս էի գլուխ հանել կարողանում.
Այն էլ երբ դեռ երիտասարդ ու կամքիս տեր...
Շատերն էին համառությանն իմ զարմանում։

Արդարացան ձգտումներս գործի հանուն
Իզուր չանցան ջանք ու եռանդ, պահեր անքուն.
Օր ծերություն, պատիվ բերին արարքներս,
Ու դեռ պիտի բարի խոսվի՝ խոսք զվարթուն։

1999

* * *

Գիրքս տպում են.
Օ՜, ոչ պատմական,
Ոչ էլ գիտական,
Ներշնչումներս են
Բանաստեղծական։
Հայրենիքս է
Ու նաև մերոնք.
Պարզապես ինքս եմ,
Գոհ Աստծո կամոք.
Ու ... բյուր սերերս.
Հաճախ եմ փոխել
Խաղադերերս.
Վերջում ամբոխել,
Շառըս ու խերըս,
Գիրքս տպում են,
Տպաքանակը փոքր է՝
Հազիվ հինգ հարյուր.
Մինչ մոտիկներս
Քանի¬քանի բյուր։
Ու՞մ նվեր ղրկեմ,
Ո՞ր մեկին զրկեմ
Իրոք հաճույքից,
Այս վերջին, վերջին

Բարի խնջույքից.
Նրանք, որ չկան,
Ինձ ներելու են.
Երազում կգան
Ու բերելու են
Հուշ¬հիշատակներ,
Ծիծաղ, կատակներ,
Օ՜ ... ժամանակներ
Օ՜ ... ժամանակներ.
Որոնք էլ դեռ կան,
Օ՜, պիտի ժպտան,
Որպես լուսինը
Ամպերի ճեղքից,
Քամով կնճռոտված,
Աստղծո տված
Բարեգութ մեղքից։
Գիրքս տպում են,
Գիտեմ, կկարդան
Ու կորոնեն
Կարմիրը որդան,
Կգտնեն, թե ոչ,
Այդ դեռ կտեսնենք,
Մինչ հյուրերն անկոչ,
Մեծամասամբ նենգ,
Կուզեն քամահրել՝
Այդ՝ իրենց վայել։

1999

* * *

Դժվար ժամանակներում երեսունյոթի,
Ժամանակներում խայտ ու ամոթի,
Գործընկերներս, որ մի քիչ անբան,
Նետեցին անձիս գոռ գայլի բերան։

Այժմ հիշում եմ՝ զարմանալի բան
Այդ գոռ գայլերը անձիս չկերան.
Ջահելությու՞նս ափսոսեցին, թե
Հստակ հասկացան... օ՜, միթե, միթե։

Գործընկերներս հանուն սեփական
Մաշկի փրկության՝ ապահովաբար
Ինձ զոհել էին, օ՜, Տերն էր վկան,
Դավաճանություն, օ՜, մեղկ անարդար։

Դե հիմա, հիմա բոլորը չկան,
Ու շուտով ես էլ պիտի հեռանամ,
Բայց կուզենայի ցավն այս ապական,
Օ՜, գիտենային մոտ ու բարեկամ։

1999

* * *

Չխնայեցի լույսը աչքերիս,
Լծակից արի բեռիս սայլակին.
Էջերում բազում գիր ու գրքերիս
Նրանք խայտում են լուռ ու անմեկին։

Օ՜, էլ ինձ չեն գա, չարչրկվեն կրկին
Այրվում, մարվում են մոմի լույսի պես.
Հոգատար չեղա իր ժամանակին
Տերն էլ չի օգնի, դե կյանքն է այդպես։

1999

* * *

Իմ հեռուները արդեն մշուշվում
Ու անթափանց են նրանք այլևս.
Ինչ էլ թողեցի այնտեղ՝ չեմ հիշում,
Հազիվ եմ ջոկում սպիտակս, սևս։

Տերն ինձ տվել էր, արդ ետ է առնում,
Օ՜, շուտով, շուտով պարտք չեմ ունենա.
Ճամփես գնալով, անվերջ հեռանում
Վերինն այս անգամ ինձ չի մոռանա։

1999

* * *

Խորհրդածում եմ ինքս ինձ հետ,
Երկար է տևում երբեմն այն,
Հարցերը շատ են ու ամենայն...
Խորհրդածում եմ ինքս ինձ հետ։
Խոսքի մեջ ժլատ ու սակավապետ,
Մտքիս աղեղը բավական լայն.
Խորհրդածում եմ ինքս ինձ հետ,
Երկար է տևում երբեմն այն։

1999

* * *

Այսօր էլ մյուս օրերի նման
Մի քիչ կզբաղվեմ,
Փույթ չէ՝ կշաղվեմ.
Եվ նույնիսկ, նույնիսկ,
Օ՜, կաղավաղվեմ
Այսօր էլ մյուս օրերի նման։

*

Այսօր էլ մյուս օրերի նման։

1999

* * *

Մտորում եմ ինքս ինձ
Ու մի մտքի չեմ գալիս.
Անխոս առնում ու տալիս,
Մտորում եմ ինքս ինձ։
Երկար ձգվում մի թախիծ,
Ուղեկիցն այդ հուշերիս.
Մտորում եմ ինքս ինձ
Ու մի մտքի չեմ գալիս։

1999

* * *

Ճյուղին ապահով թառել,
Գլուխը թևի տակ առել,
Ինքն իրեն ասես տաքացնում,
Կեռ կտուցն է թաքցնում։

Ցնորք ափերից հեռու,
Կերածը հար դառն ու մռու,
Հեռավոր հավքն իմ կարոտի
Օ՜, կես կուշտ, կես՝ անոթի։

1999

* * *

Օ՜, շատ անգամներ ինձ փողոց նետել,
Բայց քեզ չեմ գտել, օ՜, քեզ չեմ գտել,
Ապա ինքս ինձ ատելով ատել,
Հեղվել ու շեղվել, անհույս վհատել։

Հիմա, երբ կյանքս եկել, ավարտել,
Ավել¬պակասս կտրել, մկրատել,
Մեղքերս ո՞նց չեմ տեսել¬նկատել,
Ինքս ինձ ո՞նց չեմ խիստ դատապարտել։

1999

«Աչքերիդ լույսն ափսոս է».
Դերենիկ Դեմիրճյան

Ասում են, թե դադարեցրու գիր գրելը
«Քեզ ինչ բերեց, որ էլ բերի արարելը.
Կուրանում ես, խնայիր էդ լույսն աչքերիդ,
Խաբուսիկ է քո հասակում վարարելը»։
Բանն այն է, որ թելադրող է ինքը՝ Տերը.
Ես պետք է որ արդարացնեմ իմ այդ դերը.
Կորած է այն, ինչ չի արվում ու չի ստեղծվում,
Վերջը¬վերջո ինչ արվում է՝ այն է մերը։

1999

* * *

Նոր եմ զգում, որ գործերս մնացին,
Էստեղ, էնտեղ վախվորած ու ծպտված.
Քիչը հայտնի, շատը՝ անհայտ կամ կորած...
Նոր եմ զգում, որ գործերս մնացին։
Մինչ գործելու օրերն անցան, գնացին
Ավարտելու պահ¬ժամանակ չմնաց.
Նոր եմ զգում, որ գործերս մնացին,
Էստեղ, էնտեղ վախվորած ու ծպտված։

1999

* * *

Ամենուրեք որոնեցի,
Չգտա ու չգտա.
Ամեն բակ ու տուն մտա,
Ամենուրեք որոնեցի։
Էլի ինչ որ հորինեցի,
Որ Տերն ինձ նոր մտքեր տա.
Ամենուրեք որոնեցի,
Չգտա ու չգտա։

1999

* * *

Քաջություն է այս հասակում
Սիրուններին երգ հյուսել.
Երբ ցնդում ու քեզ չես հսկում
Չես քաշվում «սեր» խոսքն ասել։

Այն էլ ինչ սեր՝ ասպետական,
Որ տակավին պատանի,
Արարքներով հերոսական,
Ցնորք ափեր կտանի.

Ուր վայելքն է հեքիաթային,
Ուր երազն է իրական.
Օ՜, ցնորքներ սուրբ, մարդկային՝
Նաիրական, նաիրական։

1999

* * *

Սրտիս վրա բացված մի վերք
Արյունում ու չի սպիանում.
Չի պատահել այսպես երբեք.
Մեղսակից չեմ ես վատ բանում։
Ու այդ վերքն էլ երևի թե
Իմ ավարտին առիթ դառնա,
Հոգիս մաքուր, թեթև, թեթև
Ծխի նման վեր համբառնա։

1999

* * *

Գիրքս կարդում են, օ՜, ոմանք,
Զանգահարում, շնորհավորում,
Շոյում են ինձ խոսքերն այդ թանկ,
Ծերիս նաև ոգևորում։
Ես ջոկում եմ, թե որքանով
Տեղին են, օ՜, գովեստներն այդ,
Թմբկահարվում փչող քամով,
Մերթ անձրևում, թրջում վրադ։
Կարևորն է, որ կարդում են,
Ու չեն նետում այնպես մի կողմ.
Լավ ու վատը նկատում են,
Անտարբեր չեն, չեն անողորմ։

1999

* * *

Ես հիմա էլ դեռ գրում եմ,
Եվ ինքս ինձ հրահրում եմ.
Տերը գթա ու պահպանի,
Ցուրտ ամպի պես գոմռում եմ։
Թող անձնրևեն այդ ամպերը,
Օ՜, քանի դեռ ամառ է շոգ.
Գործն իր գիտի վերին Տերը
Մի քիչ էլ մենք մնանք անհոգ։

1999

* * *

Մի տագնապիր, հանդարտվիր, սիրտ,
Գրված կարգ ու կանոններ կան.
Մեկը բարի, մյուսը՝ բիրտ.
Պայթում են մերթ, որպես ական։

Հանդարտվում է այնուհետև,
Ու խաբուսիկ մի լռություն
Անցնում հով մի, քամի թեթև,
Ու քաշվում են բոլորը տուն։

*

Մի տագնապիր, հանդարտվիր, սիրտ։

1999

* * *

Ում որ գիրք եմ նվիրել,
Գիտեմ, նրանք կկարդան.
- Ավարայր կա ու Վարդան.
Ում որ գիրք եմ նվիրել,
Նրանց հուզել, հրահրել,
Արցունք, արյուն՝ ալ որդան.
Ում որ գիրք եմ նվիրել,
Գիտեմ, նրանք կկարդան։

* * *

Իմաստնանում եմ ես մերթ
Ապրած անգին զոհերով.
Լցված ծանր խոհերով
Իմաստնանում եմ ես մերթ։

Գալիքներում լուսակերտ,
Հարստացած գահերով,
Իմաստնանում եմ ես մերթ
Ապրած անգին զոհերով։

1999

* * *

Բժիշկները զորու չեղան
Վերադարձնել լույսն աչքերիս.
Շունչ պարգևել լուռ վերքերիս,
Բժիշկները զորու չեղան.
Չը գոհացրեց իմ սուրբ «մեղան»
Մեծ էր բեռը, օ՜, մեղքերիս.
Բժիշկները զորու չեղան
Վերադարձնել լույսն աչքերիս։

1999

* * *

Ես այդպես էլ, օ՜, կիսակույր,
Ծանոթներիս չեմ տարբերում.
Հասկացումով մի ձևանում...
Ես այդպես էլ, օ՜, կիսակույր։
Բարեկամներ հեզահամբույր,
Մեղանչանքս եմ արդ ձեզ բերում...
Ես այդպես էլ, օ՜, կիսակույր,
Ծանոթներիս չեմ տարբերում։

1999

* * *

Գրում եմ, գցում
Իմ իսկ զզրոցը.
Եվ ուղևորվում
Գրողի ծոցը։
Ստուգել բոլորը՝
Թղթի կապոցը
Լավ է կլանի
Ծխացող բոցը։

1999

* * *

Գիրքս ով էլ որ կարդաց,
Շոյող, պարզ խոսքեր ասաց.
Ես էլ շնորհակալ եղա,
Տիրոջից վարձատրված։
Դե ինչ, նման դեպքերում,
Լոկ այդքանն է մասհանված
Հեղինակները ներում,
Բավարարվում է Աստված։

1999

* * *

Դեռ չեմ ծուլանում,
Գրի եմ առնում
Ինչ որ մոտ գալիս,
Մղվում է, հառնում,
Թևավոր դառնում,
Վեր¬վեր սավառնում,
Տիրոջից անձամբ
Հունչ ու շունչ առնում։

1999

* * *

Ես ուժից վեր գործ չեմ բռնում,
Անում եմ այն, ինչ կարող եմ.
Ես արև չեմ, ընկնող շող եմ.
Ես ուժից վեր գործ չեմ բռնում։
Ինձ՝ մշակիս ինքս եմ բեռնում,
Չափավորի հորդորող եմ.
Ես ուժից վեր գործ չեմ բռնում,
Անում եմ այն, ինչ կարող եմ։

1999

* * *

Ես աչքերս փակել էի,
Որ ապրումդ չտեսնեմ.
Կործանմանդ չհասնեմ...
Ես աչքերս փակել էի։
Հոգով բացված ու մերկ էի,
Հանցավոր, հավերժ նսեմ.
Ես աչքերս փակել էի,
Որ այրումդ չտեսնեմ։

1999

* * *

Գիրքս տպվել է, ուրախացել եմ,
Բայց ահա կարդալ չեմ կարողանում.
Էլ ինչու եմ նոր երգեր հղանում...
Գիրքս տպվել է, ուրախացել եմ.
Արդ ինչ¬որ չափով ես կուրացել եմ,
Տերն իր արածից զուր չքմեղանում...
Գիրքս տպվել է, ուրախացել եմ,
Բայց ահա կարդալ չեմ կարողանում։

1999

* * *

Գիրքս կարդում են, արձագանքում են,
Շնորհավորում են հաջողությունս,
Լույսի շողեր են թափանցում տունս...
Գիրքս կարդում են, արձագանքում են։
Էլի սպասենք, գուցե հերքում են,
Կրիտիկոսները՝ խոռվելով քունս
Գիրքս կարդում են, արձագանքում են,
Շնորհավորում են հաջողությունս։

1999

* * *

Թզբեհիս ընկերացել,
Սրտիկս սրտին բացել,
Գաղտնիքս խոստովանում
Տես, թե ոնց եմ մերկացել։

Չգիտեմ, լա՞վ եմ անում
Եվ նա ինձ ու՞ր է տանում,
Երբ մի նոր Տեր ունենա
Անկեղծանու՞մ է, պատմու՞մ։

Բայց թզբեհս թութակ չէ,
Ինչու պիտի մեղանչե.
Քյահրիբար է, հատընտիր,
Դե այդ ամենքի բան չէ։

1999

* * *

Օ՜, լցվում է սիրտս հաճախ,
Քիչ է մնում փղձկամ ու լամ.
Թաց շուրթերիս անձրևահամ...
Օ՜, լցվում է սիրտս հաճախ։
Թպրտոցով մի թևաբախ
Անցա՜ն, անցան կազմած երամ...
Օ՜, լցվում է սիրտս հաճախ,
Քիչ է մնում փղձկամ ու լամ։

1999

* * *

Ասում են, որ ես
Տաղանդավոր եմ.
Օ՜, ոչ, պարզապես
Մի քիչ աղվոր եմ,
Որ ուշացել եմ,
Շատ մեղավոր եմ.
Ասեցի էլի՝
Մի քիչ աղվոր եմ։

1999

* * *

Չըմբոշխնեցի այն, ինչ իմն էր,
Պատշաճորեն չմատուցվեց.
Ասես պարտքի դեմ հատուցվեց...
Չըմբոշխնեցի այն, ինչ իմն էր։
Երազանքս, օ՜, անհիմն էր.
Արթնացումով մի փարատվեց.
Չըմբոշխնեցի այն, ինչ իմն էր,
Պատշաճորեն չմատուցվեց։

1999

* * *

Երբ գալիս են ու գումարվում
Կյանքի խորհուրդն ու իմաստը,
Դեմ են ելնում, հակադրվում
Մտքի թռիչքն ու ռեալ փաստը։
Ջանք է խլում հաշտեցնելը՝
Երաշխիքը բուն արբունքի.

Փրկության ափ հասցնելը,
Լույս հովիտը սուրբ երկունքի։

1999

* * *

Լավ էր, եղա,
Վատ չէ, որ կամ.
Օ՜, Տեր մեղա,
Թող հաշիվ տամ։
Ինչեր արի,
Օ՜, մնայուն.
Լավ ու բարի՝
Կոթող ու այուն,
Քաղաք ու գյուղ,
Պալատ ու տուն,
Միշտ աներկյուղ,
Զգաստ, արթուն,
Որ չվրիպեմ,
Շեղ չգնամ,
Չհանդիպեն
Սև, անզգամ.
Ստեղծածից իմ
Գոհանում են,
Մոտ, մտերիմ,
Ով որ անքեն,
Անատ, անխանդ
Խոսքն իր ասում,
Ու ջերմեռանդ
Հոգու ներսում
Ողջյուններ է
Ինձ փոխանցում,
Մատյաններում
Այն գրանցում,
Որ նորերը
Լավ իմանան,
Լավ գործերը
Միշտ կմնան։
Լավ է եղա,
Վատ չէ, որ կամ։

1999

* * *

Ափսոս, ափսոս, շուտ արթնացա
Ու երազս կիսատ մնաց.
Չեն ցամաքում աչքերս թաց,
Ափսոս, ափսոս, շուտ արթնացա։
Աշխարհական կյանք էր, անցա,
Էս է, էս է, բան չմնաց...
Ափսոս, ափսոս, շուտ արթնացա
Ու երազս կիսատ մնաց։

1999

* * *

Ինձ կորցրել եմ,
Տեղս չեմ գտնում.
Ես քուն չեմ մտնում
Ինձ կորցրել եմ։
Խելքս ցրել եմ,
Քաղցում, չեմ ուտում.
Ինձ կորցրել եմ,
Տեղս չեմ գտնում։

1999

* * *

Մի նոր մեղք եմ գործել, Տեր,
Թողություն տուր, որ ապրեմ.
Չտանջվեմ, չտառապեմ,
Մի նոր մեղք եմ գործել, Տեր։
Զույգ ձեռքերս պարզել վեր,
Դու իմ միակ ապավեն.
Մի նոր մեղք եմ գործել, Տեր,
Թողություն տուր, որ ապրեմ։

1999

* * *

Հարազատս իր հեռվում
Կրկին հիշել է ինձ.
Հոգեխռով մի անբիծ
Հարազատս իր հեռվում.
Նա որպես կերոն՝ այրվում.
Շուրջը խնկարկում թախիծ.
Հարազատս իր հեռվում
Կրկին հիշել է ինձ։

1999

* * *

Ուղեծիր է դուրս եկել
Գիշերային լուսընկան.
Ողջը իրեն ենթարկել
Գիշերային լուսընկան։

Հույսով, լույսով համակել
Ճամփորդներին գիշերի,
Արթնացնողը հուշերի,
Գիշերային լուսընկան։

1999

* * *

«Մնաք բարով»-ն ասացին,
Աստծո կամքին անսացին,
(Մերթ զոհ անխոհ արկածին)
Ու գնացին, գնացին։

«Մնաք բարով»-ն ասացին,
Մինչ, ներքուստ կյանք տենչացին.
Հոգիներն այն երկնածին
Գնացին ու գնացին։

1999

* * *

Քնելը դյուրին է ու դուրեկան,
Երբ ուղեկցում է պայծառ լուսընկան.
Ու երբ արթնանում, կայտառանում են,
Ու չեն շփոթում անցյալն ու ներկան։

Սակայն քուն էլ կա ոչ սովորական,
Այն խորն է, խորն է, տհաճ բավական.
Երբ քուն մտնողը էլ չի արթնանում՝
Դառնում ննջեցյալ հավիտենական։

1999

* * *

Լսեք, լսեք, կչկչում է,

Հավանաբար ձու է ածել.
Տեսնես մտքովն ինչ է անցել՝
Լսեք, լսեք՝ կչկչում է։
Աշխարհով մեկ նա ճչում է,
Նա իր դերին պինդ մնացել...
Լսեք, լսեք՝ կչկչում է,
Հավանաբար ձու է ածել։

1999

* * *

Հենց որ տեղս նեղվում,
Հայացքս պարզում եմ վեր.
Գթություն աղերսում, Տեր,
Հենց որ տեղս նեղվում։
Հնարք ու ջանք մեկտեղում,
Ըմպում դարմանող հաբեր.
Հենց որ տեղս նեղվում,
Հայացքս պարզում եմ վեր։

1999

* * *

Մտքիդ եկածը թե չես գրանցում,
Գիսաստղի նման անէանում է.
Ոչինչ չի թողնում, առնում, տանում է՝
Մտքիդ եկածը թե չես գրանցում։
Օ՜, անողոք ես, խարդախ մոռացում.
Ամեն հիացում այրվում, մարում է.
Մտքիդ եկածը թե չես գրանցում,
Գիսաստղի նման անէանում է։

1999

* * *

Ամպն արևին մեզնից փակել,
Մեր հանդիպումն արգելակել,
Չի թողնում, որ ողջագուրվենք,
Հարազատի պես համբուրվենք,
Ու ջերմանանք, մտերմանանք,
Այցելության գնանք ու գանք,
Մանավանդ զոհ չի պահանջում,
Պարտքի մուրհակ գրվում, դաջվում,
Այն լոկ պարգև աստվածատուր,

Հանց հրեշտակից պոկված փետուր,
Շոյում է մեզ առատորեն,
Հույս ներարկում մտերմորեն,
Որ չենք մրսի ձմռան ցրտին,
Գարուն կգա մեզ վերստին։

*

Ամպն արևին մեզնից փակել,
Մեր հանդիպումն արգելակել,
Չի թողնում, որ ողջագուրվենք,
Հարազատի պես համբուրվենք։

1999

* * *

Որքան հեռանում,
Այնքան մոռանում.
Հոգիդ է թթվում,
Կծվում, դառնանում.
Կաց, մի հեռանա,
Շուտ մի մոռանա.
Պտուղը ճյուղին
Թող հասունանա։

1999

* * *

Փոստարկղում իմ նամակն է,
Հին օրերի նոր կրակն է.
Մի երկընչիր, առ ձեռքիդ մեջ,
Հավատալու ժամանակն է։

Փոստարկղում իմ նամակն է,
Աղաղակող իմ երակն է.
Տրոփում է առաջվա պես,
Օ՜, այն սրտիս զարկերակն է։

1999

* * *

Ընդառաջեք փոստատարին,
Նա ձեզ նամակ է բերում.
Նայեք որքան ցոլանքներ կան
Նրա բարի բիբերում։
Դուք էլ նրան բարի մաղթեք,

Միշտ ժպտադեմ գա¬գնա.
Ու վատ լուրեր ձեզ չբերի,
Խղճին քար չծանրանա։

1999

* * *

Իմ բարերարը մեծահարուստ չէ,
Պարզապես բարի, խելացի մի կին.
Ապրում է հեռվում՝ իր տանն անմեկին...
Իմ բարերարը մեծահարուստ չէ։
Թող որ ամեն հայ նրան ճանաչէ,
Զոհ է մատուցում հայրենի հերկին...
Իմ բարերարը մեծահարուստ չէ,
Պարզապես բարի, խելացի մի կին։

1999

* * *

Նոր տարի է շուտով գալու,
Նոր հոգսերով բեռնավորված.
Ճամփաներով չտրորված,
Նոր տարի է շուտով գալու։
Ձյուն¬ձմեռ կա դեռ գնալու,
Քամիներով իր մոլորված...
Նոր տարի է շուտով գալու,
Նոր հոգսերով բեռնավորված։

1999

* * *

Էս գիրքն ուրիշ, ուրիշ գիրք է,
Մեջը Աստծո շունչը կա.
Տիեզերքի հունչը կա...
Էս գիրքն ուրիշ, ուրիշ գիրք է։
Էստեղ սեր կա, գիրկ ու կիրք կա,
Եվ տրտունջ կա, և մրմունջ կա.
Էս գիրքն ուրիշ, ուրիշ գիրք է,
Մեջը՝ Աստծո շունչը կա։

1999

* * *

Տերը սահման չի ճանաչում,

Իր արածից չի ամաչում.
Ինձ կուրացրեց անհոգաբար,
Դավադիրն այդ ամեն ինչում։

Պահ է գտնում, գոռում, գոչում,
Առյուծի պես հա մռնչում.
Սավառնում է վերևներում,
Ու արծվենի խենթ կռնչում։

*

Տերը սահման չի ճանաչում,
Իր արածից չի ամաչում։

1999

* * *

Հոգեառը դուռըս թակում,
Ինքը իրեն պախարակում.
Որտեղի՞ց է նա ժառանգել
Անմարդկային, անդուր հակում։

Բուն է դրել մեր իսկ բակում,
Գունավորվում, մերթ ճերմակում,
Հարմարվում է ցրտի, ձյան հետ,
Գաղտագողի ինձ ծիկրակում։

1999

* * *

Օ՜, բվեճ, բվեճ.
Այդ ինչն է որ քեզ
Անդադար հուզում
Եվ ինչ է ուզում։
Հա տրոփում է,
Ու տրոփում է.
Թե՞ վաղ գործածը
Արդ ամփոփում է։
Թվում է՝ սիրտն ես
Դու տիեզերքի.
Կամ զարկերակը
Չը գոցված վերքի։
Օ՜, բվեճ, բվեճ։

1999

* * *

Մառախուղ է՝
Անդուր ձմեռ.
Հունվարն է դեռ...
Մառախուղ է։
Ցուրտ երկյուղ է
Դիմացը մեր...
Մառախուղ է՝
Անդուր ձմեռ։

1999

* * *

Մեր հույսն էլի գարունն է.
Ու կրակն արեգական.
Ամենազոր, մոգական...
Մեր հույսն էլի գարունն է։
Լույս հանգրվանը տունն է.
Սուրբ օջախը հայրական.
Մեր հույսն էլի գարունն է,
Ու կրակն արեգական։

1999

* * *

Անուղղելի է Տիրոջ սխալը,
Ուրեմն՝ անտեղի խնդրելն ու լալը.
Ու թե զորու ես, լռելյայն այն տար,
Ու մի անիծիր քո աշխարհ գալը։

Ոչ բոլորին է այդ բախտը տրվում՝
Անուն, ազգանուն, հայրանուն գրվում.
Կհանգստանաս ի վերջո մի օր,
Երբ տարիների հաշիվն է լրվում։

1999

* * *

Մեր մեծերը, օ՜, մեծամեծ էին,
Մեր սարերի պես երկնաքերծ էին.
Մարդկայնորեն սուրբ ու բարոյական,
Ամենայն ախտից հեռու, զերծ էին,
Ինչպես որ եկան, այնպես գնացին,
Ինչպիսին կային, այնպես մնացին.

Նրանք սրբացան ու աղոթք դարձան,
Երկրածին էին, դարձան երկնային։

1999

* * *

Թե որ Տերը ինքն է տալու
Ամենքիս կյանք՝ հունչ ու շունչ,
Հարկ է լռենք լուռ¬անմռունչ,
Թե որ Տերը ինքն է տալու։
Մենք թե գալիս, թե գնալիս
Պատյանի մեջ զերթ խխունջ...
Թե որ Տերը ինքն է տալիս
Ամենքիս կյանք, հունչ ու շունչ։

1999

* * *

Հայոց հարսներին սիրենք
Զավակների քանակով.
Գեղեցկությամբ, հասակով
Հայոց հարսներին սիրենք։
Նրանց վարդեր նվիրենք,
Ու խոնարհվենք հարգանքով...
Հայոց հարսներին սիրենք
Զավակների քանակով։

1999

Միթե բոլորը հող դարձան.
Վալտեր Արամյան

Տերն այդպես է կամեցել,
Տիրոջ կամքն է կայացել,
Հաշվենկատն է անշուշտ,
Ոչ¬ոքի չի շրջանցել։

Ամեն մեկը իր հերթին,
Խառնվել է մեծ երթին.
Շուք են տվել՝ քաղցած, կուշտ
Աշխարհական շքերթին։

Գնում են ու հող դառնում,
Հողը նորից է հառնում.

Հերթական մի նոր սերունդ
Աշխարհն իրեն բեռ առնում։

1999

* * *

Առիթներ, որքան ուզեք,
Կյանք է՝ հազար գլխանի.
Դե եկ ու գլուխ հանի.
Առիթներ, որքան ուզեք։
Լավ է միմյանց չհուզենք,
Չնայենք հազար բանի.
Առիթներ, որքան ուզեք,
Կյանք է, հազար գլխանի։

1999

* * *

Նա իրեն սուրբ է կարծում,
Ճշմարիտ՝ ամեն հարցում.
Իր չարամիտ մեղքերը
Ուղեկցողին է բարձում:

Զգտել է լինել բարձրում,
Բաժին որոնել քաղցրում.
Ատամով ադամանդ կորզել
Քարերից ամենակարծրում:

1999

* * *

Օտարացել են ծիծեռնակները,
Կտուրների տակ էլ բույն չեն հյուսում,
Մեր հորդորները դյուրին չեն լսում...
Օտարացել են ծիծեռնակները:
Շատ են դառնացել ժամանակները,
Ամենուր նույնն է՝ հարավ-հյուսիսում...
Օտարացել են ծիծեռնակները,
Կտուրների տակ էլ բույն չեն հյուսում:

1999

* * *

Մենք ձեզ սիրում ենք,

Մենք ձեզ կարոտում.
Ձեզ նվիրում ենք
Աղոթք ու երդում:
Երբ վերադառնաք,
Համեցեք մեր տուն.
Մենք սիրով կտանք
Ձեզ հանգիստ ու քուն:

1999

* * *

Համարժեք է կյանքին աչքի լույսը՝
Միակ միջոցը աշխարհ տեսնելու.
Առհավատչյան, օ՜, տեղ հասնելու...
Համարժեք է կյանքին աչքի լույսը:
Թող որ պահպանվի տեսնելու հույսը,
Որ արտաբերեմ ինչ կա ասելու.
Համարժեք է կյանքին աչքի լույսը՝
Միակ միջոցը աշխարհ տեսնելու:

1999

* * *

Հրաշք բան է աշխարհ գալը,
Լինելն, ապրելն այս կյանքում.
Սերն ըմբոշխնելն արբունքում...
Հրաշք բան է աշխարհ գալը:
Աշխարհով մեկ զրնգալը,
Արձագանքվելն երկնքում.
Հրաշք բան է աշխարհ գալը՝
Լինելն, ապրելն այս կյանքում:
*
Հրաշք բան է աշխարհ գալը:

1999

* * *

Անելիքս օրվա՝ արի.
Ժամանակ կա դեռ էլի.
Դեռ հարցեր կան անքննելի...
Անելիքս օրվա՝ արի:
Կարևորն է՝ մնալ բարի.
Սիրուն հակվել ավելի.
Անելիքս օրվա՝ արի,

Ժամանակ կա դեռ էլի...

1999

* * *

Աշխարհին ինչ էլ պատահի,
Դու հողը հերկիր, ռանչպար.
Քաղցողին հաց տուր անչար.
Աշխարհին ինչ էլ պատահի:
Կործանում թագի ու գահի,
Միշտ էլ չարքաշը՝ անճար.
Աշխարհին ինչ էլ պատահի՝
Դու հողը հերկիր ռանչպար:

1999

* * *

Տերն ինքն է կյանք շնորհում,
Շնչավորում, ճամփեն օրհնում.
Հետագայում ամեն մեկը
Գործն անձամբ է տնօրինում:

Բայց և այնպես ամեն անգամ,
Զայն առնելով՝ վերուստ պատգամ
Քայլը շտկում, այն կողմ դառնում,
Հեզ ընդունում կապանք ու գամ.

Չլինի թե սխալ գործի,
Տերը դեմը դուռը գոցի,
Առօրյան իր դժվարանա,
Էլ ինչպես վեր նայել փորձի:

Այսպես մարդն ու Տերը վերին,
Մարդը Տիրոջ ճորտն ու գերին,
Ապրում են, կան, ու կլինեն,
Հավատարիմ իրենց դերին:

1999

Ջահելներին

Վայելեցեք ձեր այսօրը,
Որը ձերն է, օ՛, բոլորը,
Շնորհները շռայլ կյանքի,

Պտուղները գործի, ջանքի:
Հիշեցեք, որ ծերանալ կա,
Հիշեցեք, որ հեռանալ կա.
Վայելեցեք ձեր այսօրը,
Վայելեցեք ձեր այսօրը:

1999

* * *

Ծերանալը, այդ նույնն է, թե ապրել,
Տենչն է ապրելու առմիշտ ինձ ներել,
Ու պահել առույգ, երբեմն կայտառ,
Իզուր չէ, հարկավ, ինձ այստեղ բերել:
Դարավերջին է միտքս բևեռել,
Քննելու գործս՝ պակաս-առավել.
Ծերանալ, այդ նույնն է թե ապրել.
Տենչն է ապրելու ինձ այստեղ բերել:

1999

* * *

Մարդն աշխարհ գալիս
Առնում է, տալիս,
Գալն իր ծանուցում,
Մի բան ստեղծում,
Ապա անիծում,
Ջանքն անհատուցում.
Ու թողնում, գնում,
Դեպի մոռացում,
Դեպի մոռացում:

1999

* * *

Չափից ավել բեռ առնողի
Փոկը շուտ է կտրվում...
Փրկության հաբ փնտրվում,
Չափից ավել բեռ առնողի...
Ճանապարհը հարդարողի
Ջանքը չի վարձատրվում...
Չափից ավել բեռ առնողի
Փոկը շուտ է կտրվում:

1999

Նրանք

Իրենցով են գնահատում
Ամեն ինչն ու ամենքին
Նույնիսկ պարզվելը երկնքին,
Իրենցով են գնահատում:
Կամ սիրում են և կամ ատում,
Հավելում իրենց հենքին.
Իրենցով են գնահատում
Ամեն ինչն ու ամենքին:

1999

* * *

Ա՜խ, սիրտս քար է,
Քարի սիրահար է.
Քարի պես կարծր,
Պինդ ու համառ է:

Քարով կառուցում,
Որպես հիացում՝
Շքեղ պալատներ,
Կամուրջ ու անցում:

Ահա քարակերտ
Արի մոնումենտ.
Հավերժին պատմող,
Ապրող նրա հետ:

Քարն էլ շնչում է,
Ու մռնչում է,
Վիրավորվելիս
Ցավից ճչում է:

Ա՜խ, քարեր, քարեր,
Քարեղեն սարեր,
Կյանք է, դիմացեք,
Թեկուզ և ավեր:

Ա՜խ, սիրտս խար է
Խենթ սիրահար է,
Դեմից եկողը
Անծանոթ դար է:

1999

* * *

Ինչ անելու ես, այս կյանքում արա,
Այն կյանքում ոչինչ անել չես կարող.
Օ՜, կամաց-կամաց դառնալու ես հող...
Ինչ անելու ես, այս կյանքում արա:
Սրբազան բեռը կռնակիդ վրա
Տար, քանի լույսջերմ կա, արևաշող...
Ինչ անելու ես այս կյանքում արա,
Այն կյանքում ոչինչ անել չես կարող:

1999

* * *

Երբ մեկնելու լինես, մարդ,
Վերադարձիր հայրենիք.
Որ չխառնեն կավիդ հարդ,
Վերադարձիր հայրենիք:
Տուն ունեիր ու տանիք,
Հիշող, սիրող ունեիր
Վերևում՝ կապույտ երկինք,
Ներքևում օրհնված հող.
Քեզ սուրբ շիրիմ կընծայեն,
Թարմ ծաղիկներ գունագեղ.
Աղբյուրի ջուր կցայեն
Ու նինջ խոր ու փառահեղ:

1999

* * *

Ոմանք կյանքը վայելեցին
Իրենց ուզածի ձևով.
Վերևներում սավառնեցին
Գաղտնի փոխ առած թևով.
Ու ի վերջո կործանվեցին
Սրտամկանի հևով...
Նրանք կյանքը վայելեցին
Իրենց նախընտրած ձևով:

1999

* * *

Արհավիրքներ, արհավիրքներ,
Այստեղ, այնտեղ մոլեգնող
Կործանվում են անմեղ կյանքեր,
Դառնում ճարակ անսքող:
Մարդն ի ծնե անօգնական,
Վերից, վարից անպաշտպան,
Զուրկ ուժերից սեգ մոգական,
Դատարկ քսակ ու գրպան:
Ու հանգիստ են արդ աղերսում,
Պահ մի դադար ըղձալի,
Լույս երկրային դրսում, ներսում,
Օրհնություն մի բաղձալի:

1999

* * *

Ջահելությունը ամենաթանկն է,
Մինչ շուկաներում այն չի վաճառվում.
Նրա կորուստը ցավ է պատճառում,
Ջահելությունը ամենաթանկն է:
Ջահելությունը, այդ ինքը՝ կյանքն է.
Մերթ հայտնվում է բաժակաճառում...
Ջահելությունը ամենաթանկն է,
Մինչ շուկաներում այն չի վաճառվում:

1999

* * *

Հայերը եկան համագումարի
Արար աշխարհի բոլոր ծայրերից.
Ծանոթ, անծանոթ բոլոր վայրերից
Հայերը եկան համագումարի:
Գործել խոստացան առանց դադարի,
Հային զերծ պահել խենթ ուծացումից.
Հայերը եկան համագումարի
Արար աշխարհի բոլոր ծայրերից:

1999

* * *

Այսպես հաճախ չի լինում՝
Նկատեն արարողին,
Դատարկեն կենաց օղին.
Այսպես հաճախ չի լինում:

Ջուրն իր ճամփով է գնում.
Ու փարվում պապակ հողին.
Այսպես հաճախ չի լինում՝
Նկատեն արարողին։

1999

* * *

Փոքր հոգս էր՝ ուռճացավ,
Աշխարհ բերեց մաշող ցավ
Դեղ¬դարմանը չօգնեցին,
Գնալով այն սաստկացավ։
Չունեցավ ու չունեցավ,
Մարդը թոշնեց, դալկացավ.
Հուսախաբ եղավ, հոգնեց՝
«Ուղեկցողը» չուշացավ։

1999

* * *

Մեր այս ճամփան քայլեցինք
Հետ ու առաջ ընկնելով,
Հին սխալներ կրկնելով
Մեր այս ճամփան քայլեցինք։
Ոչ մի կերպ չփայլեցինք
Այտեր, շուրթեր ներկելով...
Մեր այս ճամփան քայլեցինք
Հետ ու առաջ ընկնելով։

1999

Լևոն Տեր¬Պետրոսյանին

Խնայած փող ունեինք
Դրամբանկում պահ տված
Նեղ օրի, օ՜, գիտեինք
Այդ էր մեզ համար պահված։

Բայց այն մեզնից գողացան
Հարստացան մեր հաշվին
Հետո «բարերար» դարձան
Ու մեզ «օգնություն» տվին։

Տերը ինչպես հանդուրժեց
Այդ սև «ալան¬թալանը»,
Չարը տները խուժեց,
Տիրոջը մնաց փալանը։

1999

* * *

Վերջին տարին է քսաներորդ դարի՝
Հարյուրամյակի հարյուրերորդը.
Մենք նրա համառ ճանապարհորդը.
Վերջին տարին է քսաներորդ դարի։
Տա Աստված չգանք մի նոր վթարի,
Մենք՝ ճակատագրով ստույգ ձախորդը...
Վերջին տարին է քսաներորդ դարի
Հարյուրամյակի հարյուրերորդը։

1999

* * *

Երազների աշխարհ,
Օ՜, առինքնող ես
Սրսուռ ու դող ես.
Երազների աշխարհ։
Ցնորք մի անհնար.
Անուշ գերող ես.
Երազների աշխարհ,
Օ՜, առինքնող ես։

1999

* * *

Օ՜, պայծառություններ հայոց դպրության
Որ շնչավորեցիք այս հողն ու ջուրը
Որպես ի տրիտուր, որպես հատուցում
Ըմպեցիք հեգ կյանքի մաղձն ու մրուրը։

Չմարեց սակայն Ձեր բորբոքած հուրը,
Կրակոտ խոսքերն ալ նետած գալիքին.
Այդպես, երբ բացվում է գոց վարագույրը,
Երբ կոտրած ժպիտ է ցոլցլում դեմքին։

Մենք այդ հասկանում ենք՝ Ձեզ ենք պարտական,
Ուրիշ էլ ով ունենք, մենք ենք մեր վկան։

1999

* * *

Ծիրանին ծաղկեց մեկ գիշերվա մեջ,
Եվ արդ բուրում է մեղմ, անուշահոտ
Օ՜, ծաղկով բացվող գարնան առավոտ
Ծիրանին ծաղկեց մեկ գիշերվա մեջ։
Թող որ արևը միշտ այսպես անշեջ
Ջերմացնի կյանքն այս, օ՜, մշտակարոտ.
Ծիրանին ծաղկեց մեկ գիշերվա մեջ
Ու արդ բուրում է մեղմ անուշահոտ։

1999

* * *

Չարաշահում եմ քո չափն ու ձևը,
Քո հանգն ու վանկը, շունչը՝ Տրիոլետ,
Այդ չէ կարևորը, կարևորն այն է,
Որ ամենուրեք մնում եմ քեզ հետ։

Իմ փրկությունը քո մեջ եմ գտնում,
Ժամանակս կարճ, զբաղմունքս՝ շատ,
Հեշտությամբ եմ քո չափի մեջ մտնում,
Օ՜, ես, ծերունիս դարձյալ բազմաշխատ։

1999

* * *

Կյանքը թանկ է ամեն ինչից,
Այն մեկ անգամ է տրվում.
Երբևէ չի կրկնվում...
Կյանքը թանկ է ամեն ինչից։
Այն պոկվել է մոր ջերմ շնչից,
Մինչև ի մահ չի մարվում.
Կյանքը թանկ է ամեն ինչից,
Այն մեկ անգամ է տրվում։

1999

* * *

Հրաշքը մարդու այս աշխարհ գալն է,
Կյանք վայելելը, օ՜, աստվածընծա.
Ով մարդ, կարո՞ղ ես, վայելիր, ցնծա...

Հրաշքը մարդու այս աշխարհի գալն է։
Տխուրը միայն շտապ գնալն է,
Չըվայելելը սերը նորընծա.
Հրաշքը մարդու այս աշխարհի գալն է,
Կյանք վայելելը, օ՜, աստվածընծա։

1999

* * *

Օ՜, լավ է, լավ է, որ դեռ ջահել ես,
Սուրբ կարոտներ ես դեռ ոգեկոչում.
Բարին ես գտնում դու ամեն ինչում...
Օ՜, լավ է, լավ է, որ դեռ ջահել ես։
Դու երազներում դեռ սուրբ ջահեր ես
Լույսով ողողում, որ հար ճաճանչում...
Օ՜, լավ է, լավ է, որ դեռ ջահել ես,
Սուրբ կարոտներ ես դեռ ոգեկոչում։

1999

* * *

Թմբկահարում՝ մեկդ¬մեկիդ և իրար,
Չեք խնայում բառեր, սարեր, գովեստներ.
Ձեզ ցույց տալիս ոնց ի ծնե համեստներ...
Թմբկահարում՝ մեկդ¬մեկիդ և իրար։
Եղեք մի քիչ շրջահայաց ու արդար,
Թե կարող եք՝ արարեցեք արվեստներ...
Թմբկահարում՝ մեկդ-մեկիդ և իրար,
Չեք խնայում բառեր, սարեր, գովեստներ։

1999

* * *

Զարմանալի ներդաշնակ է կյանքն ստեղծվել.
Այս հետո է աղավաղվել, անսիրտ եղծվել.
Անտերության է մատնվել ամեն կանոն.
Ինչ կար ազնիվ, աստվածային՝ մարդուց կեղծվել։
Թե որ այսպես շարունակվի էլի մի դար,
Կկործանվենք ու փրկվելը, օ՜, անհնար.
Արդ քանի դեռ խելք ու խրատ չի սպառվել,
Գործի դնենք դատ¬դատաստան սուրբ ու արդար։

1999

* * *

Աշխատանքով ապրիր, մարդ,
Սեփական ձեռք ու ջանքով,
Ջերմ սրտով, անրջանքով,
Աշխատանքով ապրիր, մարդ։
Աշխատանքը՝ սկիզբ¬ավարտ
Լցված է ազնիվ կյանքով.
Աշխատանքով ապրիր, մարդ,
Սեփական ձեռք ու ջանքով։

1999

* * *

Շողոքորթում են, օ՜, եղբայրանում,
Խաբում, մորթում են, ապա այպանում.
Ու հետո նորից փորձում են հաշտվել,
Տեր, այս բարքերը մեզ ու՞ր են տանում։

Այ քեզ հարևան, լպիրշ, վատանուն
Նա մեզնից զավթեց հայրենիք ու հող,
Որ հավերժորեն այն սեփականի,
Այսպես, դարերով մեզ տեղահանում։

Դատ¬դատաստանից անշուշտ վախենում,
Դաշնակիցներ է գտել Մյունխենում,
Աշխարհն էլ հիմա ցավին անտարբեր,
Ամեն արդար գործ մեկեն խափանում։

1999

* * *

Բեմահարթակում երկուսն են միայն,
Երկու լիիրավ դերակատարներ.
Նրանք երկուսով պատկերում են արդ
Բազմաբովանդակ ռեալ կյանքը մեր։

Ասում են, որ այդ ներկայացում է,
Խաղում են մի կին, ու մի տղամարդ.
Օ՜, ընդամենը երկու, երեք դեր.
Պարզաբանում են ամբողջ կյանքը բարդ։

Այդպես է՝ կանայք ու տղամարդիկ
Երրորդը չկա, Տերը չի ստեղծել.
Աշխարհ է, կյանք է, կա և արհավիրք,

Մնում է խորհել, մտածել, գործել։

Բեմահարթակ է, երկուսն են միայն.
Երկու լիիրավ դերակատարներ.
Նրանք երկուսով պատկերում են արդ
Բազմաբովանդակ ռեալ կյանքը մեր։

1999

* * *

Եվ նվազում, և պարում ես,
Կուտակվում ու վարարում ես,
Եվ ինչ էլ որ պակասում է
Ալեկոծվում, արարում ես։

Վարարում ես, արարում ես,
Գունավորում, կամարում ես,
Ամեն անգամ վերածնվում,
Վերընձյուղվում, դալարում ես։

1999

* * *

Մեր նոր սերունդը լավն է ավելի.
Շենք ու շնորհքը նույնիսկ գովելի.
Թե սխալներ կան առօրեական,
Հանցանք չեն, մեղքեր՝ անքեն ավելի։

Մեր նոր սերունդը լավն է ավելի,
Թող կյանքի բերքը սիրով վայելի.
Թե նորից, նորից ռիմակները գան -
Կդիմակայեն անառարկելի։

1999

* * *

Գրագետ մարդու հացը ու ջուրը՝
Թուղթն է, գրիչը մելանով լցված,
Սևեռուն միտքը դեմ¬դիմաց ցցված,
Գրագետ մարդու հացը ու ջուրը...
Նա կշրջանցի սիրտն այրող հուրը,
Ճամփան կտանի ելքի դռնով բաց.
Գրագետ մարդու հացը ու ջուրը՝
Թուղթն է, գրիչը մելանով լցված։

1999

* * *

Օ՜, դժվարը ամեն ինչից
Լավը վատից ջոկելն է,
Լավը կոկել, հղկելն է.
Օ՜, դժվարը ամեն ինչից։
Գիտենալը ինչը¬ինչից
Անջատելը¬պոկելն է.
Օ՜, դժվարը ամեն ինչից՝
Լավը վատից ջոկելն է։

1999

* * *

Լավ է գիտենալ, որ քեզ հիշող կա,
Որ մեկը մտքում հետդ խոսում է.
Որ սրտիդ ձայնը հեռվում լսում է,
Լավ է գիտենալ, որ քեզ հիշող կա։
Որ աներևույթ, ծածուկ, անվկա
Իր գորովանքը հետդ կիսում է.
Լավ է գիտենալ, որ քեզ սպասող կա,
Որ մեկը մտքում հետդ խոսում է։

1999

* * *

Վրիպեցիր, մայրիկ, վրիպեցիր սաստիկ,
Բախտը իր ոտքով մեր տուն էր եկել,
Չըհամակրեցիր, նա չեկավ մեկ էլ...
Վրիպեցիր, մայրիկ, վրիպեցիր սաստիկ։
Օ՜, ժամանակներ, խենթ, չարաբաստիկ.
Չեք ընդդիմացել, ո՞նց չեք աղմկել...
Վրիպեցիր, մայրիկ, վրիպեցիր սաստիկ,
Բախտը իր ոտքով մեր տուն էր եկել...

1999

* * *

Այս շող լուսինը թե որ չլիներ,
Մեր գիշերները մութ կլինեին,
Լույս հեքիաթները սուտ կլինեին,
Այս շող լուսինը թե որ չլիներ։

Օ՜, արդյո՞ք այդ էլ քո շնորհն է, Տեր,
Օրերն առանց քեզ ցուրտ կլինեին.
Այս շող լուսինը թե որ չլիներ,
Մեր գիշերները մութ կլինեին։

1999

* * *

Արդյոք մե՞ղք էիր գործել,
Որ խաչեցին, Քրիստոս.
Բութ եղան ու բարբարոս...
Արդյոք մե՞ղք էիր գործել։
Աշխարհի հերն անիծել,
Այրերը գոռ, հեթանոս...
Միթե՞ մեղք էիր գործել,
Որ խաչեցին, Քրիստոս։

1999

* * *

Մեր հանճարեղ պոետի
Վիզը ծուռ են քանդակել.
Սուրբ պատկերը մեր հոգում
Աղարտել, այլանդակել։
Ցանկանք մի այլ վարպետի
Փորձի վիճակը փրկել.
Պետք է ձգտել միշտ լավին...
Ո՞վ է լավին առարկել։

1999

* * *

Դու վիշտ ունեիր,
Եվ նա քեզ տարավ.
Իր ուզածն արավ...
Դու վիշտ ունեիր։
Ինչ էլ ունեիր,
Դնեիր գրավ...
Դու վիշտ ունեիր,
Եվ նա քեզ տարավ։

1999

* * *

Քայլողին ճամփան երկար է թվում,
Երբ անընկեր է, ինքն է՝ մեն¬մենակ.
Երբ ձեռնափայտն է ընկեր ու հենակ...
Քայլողին ճամփան երկար է թվում։
Շուտ էլ հոգնում է, ոտքերը նվում.
Լուռ, անհաղորդ են ժամ ու ժամանակ...
Քայլողին ճամփան երկար է թվում,
Երբ անընկեր է, ինքն է՝ մեն¬մենակ։

1999

* * *

Կյանքում ամեն մարդ իր երգն է երգում,
Երբեմն միայն իրեն լսելի.
Երգ սիրո մասին ¬ անհասանելի.
Կյանքում ամեն մարդ իր երգն է երգում։
Տեղ չգտնելով նա մեծ համերգում,
Պոկվում է տեղից անսպասելի.
Կյանքում ամեն մարդ իր երգն է երգում,
Երբեմն միայն իրեն լսելի։

1999

* * *

Երբ բանաստեղծում են բանաստեղծները,
Աշխարհը ուշիմ ականջ է դնում.
Ձեն¬ծպտուն հանել, օ՜, չեն հանդգնում,
Երբ բանաստեղծում են բանաստեղծները։
Մինչ երբ գործում են միահեծները,
Պատերազմներ են ահեղ մոլեգնում.
Երբ բանաստեղծները բանաստեղծում են,
Աշխարհը ուշիմ ականջ է դնում։

1999

* * *

Դու ամեն պահ արարում ես
Փույթ չէ, գյուտը փոքր է, կամ մեծ.
Այն նվաճում մի նորաստեղծ
Դու ամեն պահ արարում ես։
Չեղած տեղից հնարում ես,
Դարձնում ես ռեալ ու մերձ.
Դու ամեն պահ արարում ես,
Փույթ չէ, գյուտը փոքր է, կամ մեծ։

1999

* * *

Ամեն մեկը իր շահն ունի,
Կեղծ խոսքերին մի՛ անսա։
Անմեկնելի աշխարհ է սա։
Ամեն մեկը իր շահն ունի։
Գանձ ունեցիր դու արքունի,
Երգ մի հյուսիր անմուսա.
Ամեն մեկը իր շահն ունի,
Կեղծ խոսքերին մի անսա։

1999

* * *

Գիշեր¬ցերեկը հավասարվել են,
Ու խաղաղվել են, միմյանց չեն հերքում.
Զենք-զրահ չկա ոչ ոքի ձեռքում,
Գիշեր¬ցերեկը հավասարվել են։
Մինչ վաղը... վաղը, օ՛, պատրաստվել են
Դիմակայելու ամրոցում, դիրքում.
Գիշեր¬ցերեկը հավասարվել են,
Ու խաղաղվել են, միմյանց չեն հերքում։

1999

Վ.¬ին

Քո արածն ի՞նչ էր, ի՞նչ արժեք ուներ,
Որ ընտրվեցիր բարձր ատյանում,
Վճիռներ էիր գրում մատյանում...
Քո արածն ի՞նչ էր, ի՞նչ արժեք ուներ։
Ինչ որ բերեցիր գիտությանը մեր,
Այն օրը¬օրին, տես, անհայտանում.
Քո արածը ի՞նչ էր, ի՞նչ արժեք ուներ,
Որ ընտրվեցիր բարձր ատյանում։

1999

* * *

Ոչ ոք ոչ ոքի այժմ չի հիշում,
Հարազատներն են լոկ մտաբերում,
Գլուխները կախ լուռ տարուբերում.

Ոչ ոք ոչ ոքի այժմ չի հիշում։
Կյանքը բոլորին անողոք մաշում,
Իսկ Տերը բարի ամենքին ներում.
Ոչ ոք ոչ ոքի այժմ չի հիշում,
Հարազատներն են լոկ մտաբերում։

1999

* * *

Որքան գեղեցիկ բառեր կան,
Օրհնվեք, օ՜, արարողներ.
Անվերջ լավը որոնողներ...
Որքան գեղեցիկ բառեր կան։
Հստակ լեզուն խոսակցական
Արթնացնում է հարգանք ու սեր.
Որքան գեղեցիկ բառեր կան,
Օրհնվեք, օ՜, արարողներ։

1999

* * *

Դրսում եղածն ենք լոկ տեսնում,
Մինչ խորքում ինչ կա, չգիտենք,
Տեր, մենք ինչքան դեռ անգետ ենք.
Դրսում եղածն ենք լոկ տեսնում։
Հայտնի՞ չէ, թե՞ մեզ չեն ասում,
Դեռ որքան պիտի վարանենք.
Դրսում եղածն ենք լոկ տեսնում,
Մինչ խորքում ինչ կա, չգիտենք։

1999

* * *

Դու մաքառեցիր,
Եվ Տիրոջ կամքով
Վարձատրվեցիր։

Օ՜, անգին գանձեր
Սիրով երկնեցիր
Աստվածանվեր։

Դրանով հարուստ
Օ՜, պահպանիր այն
Առաքված վերուստ։

1999

* * *

Մանկանը օրորոց դրեք,
Օրորեք, անուշ քնանա.
Սրբացած աղոթքներ ասեք,
Որ սրտիկն ազնվանա։
Օ՜, ազգընտիր հայեր են պետք
Թող որ ցեղն, օ՜, բազմանա,
Մանկանը օրորոց դրեք,
Օրորեք, անուշ քնանա։

1999

* * *

Լավի լավը մեկ անգամ է լինում,
Փեշից պինդ բռնիր ու բաց մի թող.
Ձեռնամարտերում եղիր հաղթող...
Լավի լավը մեկ անգամ է լինում։
Որքան լավեր ենք ձեռքից բաց թողել
Ու այն դարձել է անվերջ տանջող.
Լավի լավը մեկ անգամ է լինում
Փեշից պինդ բռնիր ու բաց մի թող։

1999

* * *

Երևի թե հանգստացար,
Խաղը քո օգտին վճռեցիր.
Լավ չգիտեմ, լա՞վ հասկացար
Ում հաղթեցիր, ում զիջեցիր.
Ու քեզ թվաց թեթևացար,
Դար ու փոսեր հարթեցրիր,
Ճանապարհդ հանգիստ անցար,
Հոգիդ հոգսից թոթափեցիր։
Դեռ համբերիր, դու տաք ես դեռ,
Ցավդ հետո ես զգալու,
Կրելու ես ծանր մի բեռ,
Պարտավորված, հեգ, հլու։

1999

* * *

Բնությունը՝ այդ հրաշք է,
Աստվածորեն արարող.
Երկիր¬երկինք խոլ թռիչք է
Ամենայն հաղթահարող։

Բնությունը ամեն ինչ է,
Ամեն ինչ ծնող¬երկնող.
Ամպի գոռոց, մանկան ճիչ է,
Հմայող է, առինքնող։

Ինչ էլ որ կա, ինչ տեսնում ենք
Այդ բնությունն է, որ կա.
Բնությունը, օ՜, այդ մենք ենք,
Եղած¬չեղածը վկա։

Բնությունը, օ՜, զարմանք է,
Սովորական, առօրյա
Բնությունը շունչ է, կյանք է,
Օ՜, հրաշք հանապազօրյա։

1999

* * *

Այսօր խաչվեցին հազարամյակները
Որ կայանում է հազար տարին մեկ.
Մեկը այսօր է, մյուսը՝ երեկ.
Այսօր խաչվեցին հազարամյակները։
Աստծո ստեղծած բոլոր էակները
Վերև պարզվեցին սուրբ, մաքուր ու մերկ...
Այսօր խաչվեցին հազարամյակները,
Որ կայանում է հազար տարին մեկ։

1999

Մեր թոռնիկներին

Մեր դարն ավարտվեց,
Այս նորը ձերն է.
Այսօր մկրտվեց
Եվ նա ձեր տերն է։
Փարվեցեք նրան,
Հաշտությամբ մի սուրբ
Եղեք հենարան
Օ՜ սիրով մի նուրբ։

Գալ կա, գնալ կա,
Արդ դուք եկել եք
Միշտ անբացակա
Կյանքը վայելեք։
Նույնը դուք կասեք
Ձեր իսկ թոռներին.
Միշտ լավի սպասեք
Բարությամբ վերին։

1999

* * *

Վաղը նոր օր է, նոր տարի, նոր դար,
Նոր հազարամյակ, օ՜, դեպք անհնար.
Մենք վկաները այդ հույժ արարի՝
Մեկը վեր հառնող, մինչ մյուսը՝ վար։
Օ՜, հոլովումներ անխոնջ, անբարբառ,
Հավերժագնա ժամանակներ մառ.
Տիեզերական լույսի, խավարի
Տեսիլքներ անկաս հավիտյանս հար։

1999

* * *

Հազարամյակի առաջին օրն է,
Գիշերապահ է՝ աննինջ եմ, արթուն.
Շող կենացներ են ըմպում զվարթուն...
Հազարամյակի առաջին օրն է։
Հանուր մարդկության ամենայն նորն է,
Շուրջս նորեր են վառ ճառագայթում
Հազարամյակի առաջին օրն է,
Գիշերապահ է՝ աննինջ եմ, արթուն։

2000

* * *

Հին հազարամյակը արդ սկվում,
Նոր հազարամյակը արդ սկսվում,
Մենք վկաներն ենք խաչաձևումի
Մի դարպաս գոցվում, մյուսը բացվում։
Շարունակվում է կյանքի այս երթը,
Մենք ժառանգեցինք մեզ հասած հերթը.
Տերություն արա, օ՜, Տեր, աշխարհին
Հար շարունակվի այս մեծ շքերթը։

2000

* * *

Անմիջապես իմ կողքին
Երկրորդ «ես» եղել է,
Ինչ¬որ չափով նեղել է...
Անմիջապես իմ կողքին։
Անցնելիքս շեղել է,
Աներևույթ այդ ոգին.
Անմիջապես իմ կողքին
Երկրորդ «ես» եղել է։

2000

* * *

Օ՜, այնքան եմ հեղեղվել,
Քամուց, ցրտից աղեղվել,
Սակայն երբեք, օ՜, երբեք
Իմ սուրբ ճամփից չեմ շեղվել։

Որքան էլ որ սրտնեղվել,
Հոսանքներով դուրս մղվել,
Մնացել եմ անխռով
Ու երբեք աղավաղվել։

2000

* * *

Ներիր ինձ, ներիր,
Բախտդ չբերեց
Անդուր դիպվածը
Պահը ավերեց։

Չէ որ, թանկ է, թանկ
Օ՜, անկրկնելին.
Ճակատագիր է,
Սուրբ՝ անմեկնելին։

2000

* * *

Օ՜, մեկ, օ՜, մեկ ակնթարթ էր այն միայն
Ու ես կրկին, ու ես կրկին ծնվեցի.

Նույնիսկ, նույնիսկ ճերմակեցի ծերացա,
Մեծ վթար էր, անհնար էր՝ պահ ունայն.
Ես նեղ տեղից, զիգզագ շեղից ցատկեցի,
Ու՞մ օրհնությամբ, ու՞մ աղոթքով տուն դարձա
Օ՜, կյանք, օ՜, կյանք, այն հրաշք էր ¬ եղիցի.
Օ՜, ես կրկին, օ՜, ես կրկին ծնվեցի։

2000

* * *

Գիտեմ, ինձ Տերը վերև կտանի,
Օ՜, ոչ օրհնությամբ, փառքով օծելու,
Այլ աստվածորեն խորունկ խոցելու...
Գիտեմ, ինձ Տերը վերև կտանի։

Նախ շունչս, հոգիս ինձնից կհանի,
Որ ուժ չունենամ ալեկոծվելու.
Գիտեմ, ինձ Տերը վերև կտանի,
Օ՜, ո՛չ օրհնությամբ, փառքով օծելու։

2000

* * *

Ես չեմ կասկածում, որ ինձ կկարդան
Եվ որոշակի կարծիք կկազմեն.
Ու կգոհանան, հանգիստ կբազմեն...
Ես չեմ կասկածում, որ ինձ կկարդան։
Տողեր կլինեն, որ կդղրդան,
Թևեր կարձակեն լայն, որպես բազեն.
Ես չեմ կասկածում, որ ինձ կկարդան,
Եվ որոշակի կարծիք կկազմեն։

2000

* * *

Դե ես գնացել ու ետ եմ եկել,
Չի կրկնվելու էս բախտը մեկ էլ.
Ինչ որ ցրել եմ աշխարհով արար,
Այսօր փորձում եմ ի մի հավաքել։
Կը հաջողի՞ ինձ, դժվար է ասել,
Երջանկությանն այդ շատ եմ սպասել.
Օ՜, Տեր, օգնիր ինձ, դու ամենազոր,
Ու՞մ չես, դու ու՞մ չես օգնության հասել։

2000

* * *

Երբ ճանապարհը խորդուբորդ է,
Ձեռնափայտս շատ է օգնում.
Ինքն էլ ինձ հետ, ինձ պես հոգնում
Երբ ճանապարհը խորդուբորդ է։
Կարծում են՝ փայտ է, անհաղորդ է,
Երբ հոգնությունն է հեգնում.
Երբ ճանապարհը խորդուբորդ է,
Ձեռնափայտս շատ է օգնում։

2000

* * *

Մերթ այսպես պայծառանում,
Ու հրճվում եմ ամեն լավով.
Ըմպում գինին կավե գավով...
Մերթ այսպես պայծառանում.
Ամեն գեշի դեմ ծառանում.
Լցվում կորուստների ցավով.
Մերթ այսպես պայծառանում,
Ու հրճվում եմ ամեն լավով։

2000

* * *

Անբավարար եմ ես իմ արածից,
Ինձ վիճակված էր ավելին անել.
Մրցություններում հաղթանակ տանել...
Անբավարար եմ ես իմ արածից։
Հաշվեկշռույթում տարած¬բերածից
Գերազանցումն էր ստեղծողին վայել.
Անբավարար եմ ես իմ արածից,
Ինձ վիճակված էր ավելին անել։

2000

* * *

Ես աշխարհի չափ, օ՜, ուրախացա,
Երբ տպագրվեց առաջին գիրքս.
Եվ այն հավաստեց պոետի ձիրքս,
Ես աշխարհի չափ, օ՜, ուրախացա։
Ասես պոկվեցի և անկախացա,

Ու պարզվեց վաղվա սուրբ անելիքս
Ես աշխարհի չափ, օ՜, ուրախացա,
Երբ տպագրվեց առաջին գիրքս։

2000

* * *

Գրքիս տիրաժը չվաճառեցի,
Օ՜, ընծայեցի ում որ կամեցա.
Ես էլ նրանց հետ սիրով հրճվեցի,
Ինքս իմ աչքում ասես բարձրացա։
Այս տարիքում էլ հասակ քաշեցի,
Զարմանալի է, որ չզարմացա.
Գրքիս տիրաժը չվաճառեցի,
Օ՜, ընծայեցի, ում որ կամեցա։

2000

Հասակակիցներիս

Օ՜, բոլորը գնացել են,
Մեկը չկա՝ հետը կիսվեմ.
Ասեմ¬խոսեմ, լսեմ¬լսվեմ,
Օ՜, բոլորը գնացել են։
Ինչպես է, որ մնացել եմ,
Կանգուն, որպես քարակերտ վեմ.
Օ՜, բոլորը գնացել են,
Մեկը չկա հետը կիսվեմ։

2000

* * *

Նոր գրիչներ եմ գնել,
Ուրախացել երեխի պես.
Մի՞շտ եմ, արդյոք եղել այդպես...
Նոր գրիչներ եմ գնել։

Երևում է դեռ չեմ հոգնել,
Ծերուկս, օ՜, պնդերես.
Նոր գրիչներ եմ գնել,
Ուրախացել երեխի պես։

2000

* * *

Ճոճվող բազկաթոռ չունեցա,
Գնալ¬գալն ինձ դուր էր գալիս.
Մուսաս իսկույն հյուր էր գալիս...
Ճոճվող բազկաթոռ չունեցա։

Առաջարկեց մեկն ինձ ընծա,
Այն թարսի պես շուռ էր գալիս.
Ճոճվող բազկաթոռ չունեցա,
Գնալ¬գալն ինձ դուր էր գալիս։

2000

* * *

Գրածներիս մեջ,
Օ՜, լավերն էլ կան.
Գոնե երկու էջ
Գրիր, բարեկամ։

Թե չէ ինքդ քեզ
Հա գոմռում ես.
Բացված վերքի պես
Լուռ մռմռում ես։

Պատի՞վ չի բերում
Քեզ խոսք ասելը։
Ես քեզ չեմ ներում,
Բավ է սպասելը։

2000

* * *

Ինչ էլ արել եմ, ես չեմ ուրանում,
Դեպքերը հիշում ու չեմ մոռանում,
Տեղից ու պահից, օ՜, չեմ հեռանում,
Ինչ էլ արել եմ, ես չեմ ուրանում։
Փույթ չէ, թե այժմ անհայտ կուրանում,
Երբ պետք է, նորից դառնում եմ, հառնում.
Ինչ էլ արել եմ, ես չեմ ուրանում,
Դեպքերը հիշում ու չեմ մոռանում։

2000

* * *

Արածիս համար ինձ չեմ նախատում,
Ես դրա համար առիթ չեմ տվել.
Ճիշտը փնտրելիս շուրջը պտտվել,
Արածիս համար ինձ չեմ նախատում.
Եվ այսօր էլ դեռ անխոնջ աշխատում,
Օ՜, երևում է դեռ, չեմ ավարտվել.
Արածիս համար ինձ չեմ նախատում,
Ես դրա համար առիթ չեմ տվել։

2000

* * *

Քեզ հավատարիմ եղա, տրիոլետ,
Ջերմացա քեզնով, քեզնով գերվեցի,
Ընթերցողներիս կողմից ներվեցի...
Քեզ հավատարիմ եղա, տրիոլետ։
Քեզ դեռ կայցելեն Օթելլո, Համլետ,
Ե՞րբ էր, որ մի օր քո տուն բերվեցի.
Քեզ հավատարիմ եղա, տրիոլետ,
Ջերմացա քեզնով, քեզնով գերվեցի։

2000

* * *

Տե՛ր, բարի եղիր,
Հորդորս ներիր.
Եվ հաջողեցրու
Ինձ տեղ հասցրու։
Տեր, բարի եղիր,
Տեր, բարի եղիր։
Ճամփես մի շեղիր,
Ու մի՛ հեղեղիր,
Կամքս հարցրու՝
Օ՜, հանդիպեցրու...
Տեր, բարի եղիր,
Հորդորս ներիր։
Մի քիչ բարձրացրու
Ու քեզ մոտեցրու.
Մի քիչ տաքացրու,
Թացս չորացրու.
Զուգիր, նորացրու.
Խանդս խորացրու,
Ինձ հզորացրու,
Ձեռքս ամրացրու.

Զարկս ծանրացրու,
Թույնս թանձրացրու,
Կամքս կարծրացրու,
Քիչս լրացրու,
Եվ արդարացրու,
Վատն անհետացրու,
Լավն ազնվացրու
Վեր տուր, հեռացրու,
Եվ աստվածացրու,
Քիչ ամաչեցրու,
Պարտքդ վերջացրու.
Տեր, բարի եղիր,
Հորդորս ներիր
Եվ ուրախացրու։

2000

* * *

Տխուր ստվեր է ընկել սրտիս,
Ինձ թվում է, թե մրսում եմ.
Արդյոք տա՞նն եմ, թե դրսում եմ...
Տխուր ստվեր է ընկել սրտիս։
Այս վատ նշան է, այո, ըստ իս,
Ինչ որ մի տեղ ինձ սպասում են.
Տխուր ստվեր է ընկել սրտիս,
Ու թվում է, թե մրսում եմ։

2000

* * *

Նստել ու գիրքս թերթում եմ, կարդում,
Վատին առնելիս ինքս ինձ ատում.
Պատահում է մերթ հանդիպում լավին,
Օ՜, անկոծկելի՝ ինք¬զինք դրվատում։
Նստել ու գիրքս թերթում եմ, կարդում,
Փորձում եմ լինել արդար¬անպատում.
Նստել ու գիրքս թերթում եմ, կարդում,
Վատին առնելիս ատում եմ, ատում։

2000

* * *

Մեղա եմ գալիս մեղքերիս համար,
Սխալմունքներիս, օ՜, աններելի,

Այդպիսին լինել, ոչ, չէր կարելի...
Մեղա եմ գալիս մեղքերիս համար։
Կյանքս երկար էր, դեպքերն՝ անհամար.
Բոլոր, բոլորը անբացատրելի.
Մեղա եմ գալիս մեղքերիս համար,
Սխալմունքներիս, օ՜, աններելի։

2000

* * *

Թեպետ անմեղ են, օ՜, սխալներս,
Բայց միևնույն է, ես պատժվում եմ.
Տեղին, անտեղի անխիղճ մերժվում եմ.
Թեպետ անմեղ են, օ՜, սխալներս։
Նույնիսկ չի ներում մշտարթուն Տերս,
Ինքս ինձ ձաղկում, ասես գժվում եմ.
Թեպետ անմեղ են, օ՜, սխալներս,
Բայց միևնույն է, ես պատժվում եմ։

2000

* * *

Ինքս ինձ հետ եմ, ինքս ինձ հետ,
Տաք հագնվել եմ ու քաշվել մի կողմ.
Գտնել չի կարող ինձ պտտահողմ...
Ինքս ինձ հետ եմ, ինքս ինձ հետ։
Ծպտվել եմ, մունջ, ես սակավապետ,
Արդ սրբարանում, ձեռքիս վառած մոմ,
Ինքս ինձ հետ եմ, ինքս ինձ հետ.
Տաք հագնվել եմ ու քաշվել մի կողմ։

2000

* * *

Հիշում եմ, ամենքին հիշում եմ,
Աշխարհ էր, կործանվեց, գնաց.
Այս փոքրիկ հիշելը մնաց,
Հիշում եմ, ամեն ինչ հիշում եմ։
Մշուշ է ու քամին քշում է,
Մառախուղ, ու գետինն է թաց.
Հիշում եմ, ամեն ինչ հիշում եմ,
Աշխարհ էր, կործանվեց, գնաց։

2000

* * *

Հին լուսամփոփս ինձնից ձանձրացավ,
Ուշ նկատեցի՝ գիշերն էր անցել.
Երկիրն արևի հրաշքով օծվել.
Հին լուսամփոփս ինձնից ձանձրացավ։
Անխոս հանգցրի, նա հանգստացավ.
Ես՝ սպառվել էի, ուժ չէր մնացել.
Հին լուսամփոփս ինձնից ձանձրացավ,
Ուշ նկատեցի՝ գիշերն էր անցել։

2000

* * *

Պահեր են եղել, օ՜, տարբեր, տարբեր,
Ես նրանց այնպես խոր զգացել եմ.
Գիրքս նրանցով ահա լցրել եմ,
Պահեր են եղել, օ՜, տարբեր, տարբեր։
Պատսպարել եմ նրանց որպես Տեր,
Դառն արցունքները մերթ քաղցրացել են.
Պահեր են եղել, օ՜, տարբեր, տարբեր,
Ես նրանց այնպես խոր զգացել եմ։

2000

* * *

Կարելի էր ապրել ևս մի կյանք,
Անհնարինը դարձրու հնարավոր,
Օ՜, մեծ բնություն ¬ միակ զորավոր.
Կարելի էր ապրել ևս մի կյանք։
Փույթ չէ՝ կրեի հազար մի զրկանք,
Դարի տառապանքները այն բոլոր.
Կարելի էր ապրել ևս մի կյանք,
Անհնարինը դառնար հնարավոր։

2000

* * *

Այս մի գործն էլ ավարտեցի,
Ասի, թող որ պարտք չմնամ.
Հոգիս հանգիստ ճամփես գնամ,
Այս մի գործն էլ ավարտեցի։
Սրտով, կամքով սատարեցի,
Այն օրհնեցի, որպես պատգամ.

Այս մի գործն էլ ավարտեցի,
Ասի, թող որ պարտք չմնամ։

2000

* * *

Սխալն իմն է, մեղքը՝ իմը.
Օ՜, դու անմեղ¬մեղավորս,
Դու վերջինս, օ՜, դու նորս...
Սխալն իմն է, մեղքը՝ իմը։
Շփոթել եմ «նորն» ու «հինը»,
Դու անուշիկ աստնվորս -
Սխալն իմն է, մեղքը՝ իմը,
Օ՜, դու անմեղ¬մեղավորս։

2000

* * *

Ինչից որ խորշում էի,
Ճշտիվ նույնը ստացա,
Նրան ենթակա դարձա,
Ինչից որ խորշում էի։
Քաշվում¬շղարշում էի,
Բայց ոչինչ չմոռացա.
Ինչից որ խորշում էի,
Ճշտիվ նույնը ստացա։

2000

* * *

Ես մի նոր գիրք եմ փորձել հորինել՝
«Լինել¬չլինել, լինել¬չլինել».
Այն ոչ «Համլետ» է, ոչ էլ... տրիոլետ,
Գործարքի մեջ է շարունակ ինձ հետ։
Այն կրնկակոխ, օ՜, ինձ հետևել,
Ողջ կյանք է տևել, տանջել առավել,
Եվ այժմ ահա ճամփիս ավարտում
Հոգիս անողոք, անխիղճ «թրատում»,
Չի զիջում, օ՜, ոչ՝ «հայեցի պատվեր»,
Դժվար ճանապարհ՝ Մասիս սարն ի վեր։

2000

* * *

Էն աշխարհը մեկնելիս
Հետս լուրեր կտանեմ
Ջերմ համբույրներ կտանեմ
Էն աշխարհը մեկնելիս.
Նոր հեքիաթներ երկնելիս
Գանձ ու գոհար կվատնեմ
Էն աշխարհը մեկնելիս
Կյանքից լուրեր կտանեմ։

2001

* * *

Երբ ինսունի շեմից ներս մտա,
Դարձյալ գործելու հարմար տեղ գտա.
Պատշաճությամբ մեզ դիմավորեցին,
Փորձել¬գործելու ինձ հորդորեցին։
Շնորհավորեցին այս նոր հազարը,
Կարծեցին ես եմ ճիշտ Քաջ Նազարը։

2001

[օր. Սամվելյանին]

Նա մի օր ինձ շնորհավորեց
Ձեռքս սեղմեց ու ժպտաց.
Սուրբ արարքով ոգևորեց,
Այդ էլ անանց հուշ մնաց

Մարդկայինը կար նրա մեջ
Այդպիսին էր էությունը.
Այրվեց, այրվեց՝ կերոն անշեջ,
Որպես հոգու վեհությունը։

2001

* * *

Իմ բեմահարթակն ունեի կյանքում
Ուր խաղացել եմ շարունակ իմ դերը.
Հուշարարը եղել է այնտեղ՝ վերը.
Ես իմ բեմահարթակն ունեի կյանքում
Խիղճս է եղել շաղախված իմ ջանքում
Ու կանգուն են դեռ հոծ որմերը.
Ես իմ բեմահարթակն ունեի կյանքում
Ուր խաղացել եմ շարունակ իմ դերը։

2001

* * *

Գրքիս էջերը բեռնավորված են տրիոլետներով,
Երբեմն երեք, երբեմն էլ չորս, օ՜, խիտ չէ՞, Տեր իմ.
Փույթ չէ, լինեին միմյանց հարազատ, մոտ ու մտերիմ.
Գրքիս էջերը բեռնավորված են տրիոլետներով։
Օ՜, կյանքս էր այդպես ծանր ծանրացած բազում հոգսերով,
Որքան բարեկամ, նույնքան էլ խանդոտ, նույնիսկ ոխերիմ...
Գրքիս էջերը բեռնավորված են տրիոլետներով...
Երբեմն երեք, երբեմն էլ չորս, օ՜, խիտ չէ՞, Տեր իմ։

2001

* * *

Քանի դեռ կամ
«Մնաք բարով» գրեմ.
Ձեզ մաղթանքներ բերեմ.
Քանի դեռ կամ։
Ազգ¬բարեկամ
Ձեր տագնապները ներեմ...
Քանի դեռ կամ
«Մնաք բարով» գրեմ։

2001

* * *

Երազներում ինձ ջահել եմ տեսնում,
Նորից եմ անցնում ծանոթ ճամփեքս.
Մեկը կա սակայն, որին չեմ հասնում,
Որ խոստովանեմ գործած հին մեղքս։
Նա չի համբերել, ինձ չի սպասել,
Հայտնի չի արել անցնելիք ճամփեն.
Արդ ինչ իմանամ, թե ուր է հասել,
Խոռ՞վք կար հոգում, թե անխոնջ, անքեն...
Ու արթնանում եմ ներքին մի ցավից,
Սկիզբ է առնում արթնության պահը.
Հոգուս իջնում է կեղեքող թախիծ՝
Իմ անբացակա ավանդապահը։

*

Երազներում ինձ ջահել եմ տեսնում,
Նորից եմ անցնում ծանոթ ճամփեքս.
Մեկը կա սակայն, որին չեմ հասնում,

Որ խոստովանեմ գործած հին մեղքս։

2001

* * *

Մուսաս գալիս, թելադրում է,
Ստիպում է՝ գրի առնեմ.
Ոգեշնչվեմ, երկինք հառնեմ...
Մուսաս գալիս թելադրում է։
Օ՜, նա հաճախ վրիպում է,
Մեկ էլ տեսար՝ իրար խառնեմ.
Մուսաս գալիս, թելադրում է,
Ստիպում է գրի առնեմ։

2001

* * *

Երազում էի մի գիրք ունենալ,
Որում լինեի ինքս ինձ հետ.
Ինձ հեռու տաներ մի սուրբ արահետ...
Երազում էի մի գիրք ունենալ։
Եվ այն ունեցա... պետք էր հավատալ,
Կյանքի հրաշքին, օ՜, չքնաղակերտ.
Երազում էի մի գիրք ունենալ,
Որում լինեի, օ՜, ինքս ինձ հետ։

2001

* * *

Սիրահարվե՞լ, ոչ, չեմ կարող
Այս մանկամարդ թռչնակին.
(Այ թե լիներ հասուն կին)
Սիրահարվե՞լ, ոչ, չեմ կարող։
Սակայն հյուսել նրբին ներբող
Պատշաճեք իմ հասակին.
Սիրահարվե՞լ, ոչ, չեմ կարող
Այս մանկամարդ թռչնակին։

2001

* * *

Վարագույրը ետ տար, ջանս.
Պատկերվիր սեգ հասակով.
Շող, հերարձակ գիսակով.

Վարագույրը ետ տար, ջանս։
Բացել եմ դուռ¬պատուհանս
Նկատիր «աչքի տակով».
Վարագույրը ետ տար, ջանս,
Պատկերվիր ողջ հասակով։

2001

* * *

Գրել եմ ուզում,
Մի լավ բան գրել.
Մեկն ինձ համոզում՝
Պատշաճ է լռել։
Չիմացա ով էր
Ինձ արգելք դրել
Մահով էր փորձում
Սիրտս ավիրել։

2001

* * *

Օ՜, երբեմնի, երբեմնի
Ես էլ ջահել եմ եղել՝
Բա՜րձր, հպարտ եղևնի
Քամու սլացքը մեղմել։
Ու քնած, թե արթմնի
Սարեր, ձորեր հեղեղել...
Օ՜, երբեմնի, երբեմնի
Ես էլ ջահել եմ եղել։

2001

* * *

Ես իմ սերնդի երգիչը արդար,
Մերթ թմբկահարել, նաև լացել եմ,
Օ՜, նա գնացել, ես մնացել եմ,
Ես իմ սերնդի երգիչը արդար։
Օ՜, դու մերն էիր քըսաներորդ դար,
Քեզանից հետո ամայացել եմ...
Ես իմ սերնդի երգիչը արդար,
Մերթ թմբկահարել, ու մերթ լացել եմ։

2001

* * *

Ո՛չ ամեն ինչ է այժմ ստացվում՝
Դու աջ ես ուզում, բայց գնում ես ձախ.
Համբերությանդ բաժակն է լցվում
Եվ ամեն ինչը քո կամքից անկախ։
Անվերջ դռներ են բացվում ու գոցվում,
Բայց որ բոլորի համար է, ավա՛ղ,
Բարակ ծորակից դույլն ուշ է լցվում
Այդ նույնպես, նույնպես, քո կամքից անկախ,
Քո կամքից անկախ։

2001

* * *

Օ՛, իմ ներսում դեռ մանկուց
Ապրում է անանց մի հույս.
Ցոլանում կանաչ մի լույս
Օ՛, իմ ներսում, դեռ մանկուց…
Փույթ չէ, սակայն, օ՛, կուց-կուց
Օ՛, թարմ գարնան լիաբույս…
Օ՛, իմ ներսում դեռ մանկուց
Ապրում է անանց մի հույս։

2001

* * *

Բերանները ջուր են առել, լռել, լռել.
Չե՞ն իմանում՝ ինչ եմ գրել, ոնց եմ գրել.
Մեկին սիրել, մեկին մրել ու ավերել…
Բերանները ջուր են առել, լռել, լռել։
Երևի թե մտածել են «անջուր ջրել»,
Որ չփորձենք ևս մի գիրք տպագրել…
Բերանները ջուր են առել, լռել, լռել.
Չե՞ն իմանում՝ ինչ եմ գրել, ոնց եմ գրել։

2001

* * *

Այն, ինչ որ ունեմ, ես եմ արարել,
Ինձ ոչ ոք, ոչ ոք չի հանձնարարել.
Նրանցում ես եմ ու նաև մերոնք,
Ներշնչման պահն է ներքուստ վարարել։
Օ՛, ես հոգատար՝ հովանավորել,
Նորատունկ այգիս ահա դալարել,

Պտղաբերվել են մատաղ շիվերը,
Գոյությունն իրենց լուռ ազդարարել։

2001

* * *

Դու արժեքդ իմացիր,
Տես, ձրի տանուլ չտաս.
Մի կարծիր՝ նորից կգաս,
Կյանքիդ արժեքն իմացիր։
Ինքդ քո տերը դարձիր,
Թող այն լինի անպակաս,
Կյանքիդ արժեքն իմացիր,
Տես, ձրի տանուլ չտաս։

2001

* * *

Ես կամ ու դեռ պիտի լինեմ,
Ու՞մ տի թողնեմ անելիքս.
Պարտքս պիտի մարեմ ինքս…
Ես կամ ու դեռ պիտի լինեմ։
Փույթ չէ ծեր եմ, փույթ չէ հին եմ,
Օ՜, համառն եմ, ես՝ սֆինքս.
Ես կամ ու դեռ պիտի լինեմ,
Ու՞մ տի թողնեմ անելիքս։

2001

* * *

Ինձանից բացի ոչ ոք չգիտի,
Որ այստեղ կանգնել, ում եմ սպասում.
Ինձ չեն հարցնում, ես էլ չեմ ասում…
Ինձանից բացի ոչ ոք չգիտի։
Ինձ այցելողը միայն նա գիտի,
Նա էլ ինքն իրեն անվերջ հակասում…
Ինձանից բացի ոչ ոք չգիտի,
Որ այստեղ կանգնել, ում եմ սպասում։

2001

* * *

Էս է, ընդհուպ մոտեցել եմ,
Լոկ մի քայլ է մնացել.

Քայլն այդ անել խոստացել եմ,
Հավատացեք, չեմ մոռացել։

Բոլոր ճամփեքս անցել եմ,
Ուր ասես՝ չեմ գնացել,
Ուր էլ հասել ետ դարձել եմ,
Միշտ էլ գոհ եմ մնացել։

Այս վերջինն է, խայծ է դարձել,
Որ ծուղակ է, հասկացել եմ։

2001

* * *

Անզուսպ լացս ո՞նց թաքցնեմ.
Արցունքներս մատնում են,
Սուղ ուժերս վատնում են,
Անզուսպ լացս ո՞նց թաքցնեմ։
Ուժ տուր, Տեր, ինձ տեղ հասնեմ,
Ես այլևս հատնում եմ.
Անզուսպ լացս ո՞նց թաքցնեմ,
Արցունքներս մատնում են։

2001

Խոստովանանք

Իմ գրածներին ես տեր-տնօրեն,
Ոչ մեկի համար ինձ չեմ նախատում,
Անկեղծությանը նրանց հավատում,
Իմ գրածներին ես տեր-տնօրեն։
Թույլ տեղեր էլ կան, օ՜, հավանորեն,
Դե, արարողն եմ, լավ չեմ նկատում.
Իմ գրածներին ես տեր-տնօրեն,
Ոչ մեկի համար ինձ չեմ նախատում։

2001

* * *

Լավ եմ գրում ես, թե վատ,
Ի վիճակի չեմ դատել.
Չէի ուզի ընդհատել…
Լավ եմ գրում ես, թե վատ։
Ինձ տիրում է մի հավատ,

Սիրով եմ գործս կերտել,
Լավ եմ գրում ես, թե վատ,
Ի վիճակի չեմ դատել։

2001

* * *

Թե որ Մարոն դրվատել,
Էլ Աբգարը ինչիս է.
Փույթ չէ, թե չարախոսե,
Զի Մարոն է դրվատել։
Պետք չէ սիրել կամ ատել,
Թող որ անեղծը խոսե.
Թե որ Մարոն դրվատել,
Էլ Աբգարը ինչիս է։

2001

* * *

Նանա՛ր, գիրքս կարդացի՞ր,
Ինչե՞ր տեսար լավ ու վատ,
Կա՞ն աղոթքներ ու հավատ…
Նանա՛ր, գիրքս կարդացի՞ր։
Այն սրտիս պես մերթ բացիր,
Սուրբ էջեր կան աննկատ.
Նանա՛ր, գիրքս կարդացի՞ր,
Ինչե՞ր կային լավ ու վատ։

2001

* * *

Իմ մեջ առկա է երկրորդ գոյը.
Ինձ ետ է պահում համարձակ քայլից,
Նա ինձ զրկում է մարդկային փայլից.
Իմ մեջ ապրում է երկրորդ գոյը։

Այ թե նրա տեղ լիներ հենց Նոյը,
Ինձ վեր կպահեր սուզվող հին սայլից.
Իմ մեջ ապրում է երկրորդ գոյը.
Նա ետ է պահում համարձակ քայլից։

2001

* * *

Կյանքս երազ եղավ՝ ծայրից ծայր երազ.
Երազներով անցա, վարգով՝ վազեվազ.
Փույթ չէ՝ անհարթ էր ճամփես՝ քար-քոս,
Բոկոտն-արյունլվա՝ մղկտացող սազ։

Այստեղ հասա, շնչակտուր, օ՜, հազիվ-հազ,
Ամեն կողմ ծով էր, ափունքը՝ ավազ…
Կյանքս երազ եղավ, ծայրից ծայր՝ երազ.
Երազներով անցա, վարգով՝ վազեվազ։

2001

* * *

Ա

Եկա, եկա, եկա, դարձա իննսուն,
Բայց ինձնից բացի ոչ ոք չզարմացավ,
Այս էլ կյանք էր, աննկատ եկավ, անցավ…
Եկա, եկա, եկա, դարձա իննսուն։
Դե վատ բան հո չեղա՞վ, էլ ի՞նչ վայնասուն,
Փույթ չէ, թե շքեղ հանդես չկայացավ,
Եկա, եկա, եկա, դարձա իննսուն,
Բայց ինձնից բացի ոչ ոք չզարմացավ։

Բ

Չէի սպասում, չէի հավատում,
Ի՞նչ բացառություն կարող էր լինել,
Այն չէր վաճառվում, չէր լինի գնել...
Չէի սպասում, չէի հավատում։
Դե ամեն ինչ կա լավում ու վատում,
Պետք է միշտ լավին լուռ ապավինել,
Չէի սպասում, չէի հավատում,
Ի՞նչ բացատրություն կարող էր լինել։

Գ

Տեր, իննսունը էնքան էլ շատ չէ,
Դու բարի եղիր, ժպտա շատերին,
Օ՜, դու Արարող՝ վերինից¬վերին,
Տեր, իննսունը էնքան էլ շատ չէ։
Զգտիր, բարեկամ, ամաչելու չէ,
Բախտը ժպտում է նաև վատերին,
Տեր, իննսունը էնքան էլ շատ չէ,
Դու բարի եղիր, ժպտա շատերին։

2001

* * *

Ո՞ր մի մտքիս հետ գնամ,
Ո՞ր մի հոգսս ամոքեմ.
Ո՞ր մի հուշս մորմոքեմ,
Ո՞ր մի մտքիս հետ գնամ։

Ու թե հոգնեմ, ու՞ր մնամ,
Ո՞ր սրբության դեմ չոքեմ,
Ո՞ր մի մտքիս հետ գնամ,
Ո՞ր մի հոգսս ամոքեմ։

2001

* * *

Դու շատ անգամ լսած կաս,
Որպես անգիր արած դաս,
«Աչքի լույսը պահպանել
աչքի լույսի պես».
Հիմա վիճակս անել.
Ի՞նչ կարող եմ անել ես.
Արժե՞ այլևս մնալ
Ես խարխափող խեղճ անկյալ։

2002

* * *

Երբ բացվում է ախորժակս,
Գրում եմ, գցում դարակս.
Գիտեմ այն չէ հյուսելու
Լուսապսակս։
Չէ՞ որ արդեն կորվել է
Ու չի ձգվելու
Օ՜, երբեմնի լուսածիր
Հպարտ հասակս։

2002

* * *

Հուշարձաններին աշակերտեցի,
Եվ Թամանյանին վսեմափայլ,
Չունեցա ուսուցիչ մի այլ.
Մեծ Թամանյանին աշակերտեցի։

Հայեցի եղավ, ինչ էլ կերտեցի։
Համարձակ էի և անայլայլ։

Մեծ Թամանյանին աշակերտեցի,
Հուշարձաններին մեր վսեմափայլ։

2002

* * *

Տե՛ր, քեզ դադար չեմ տալիս,
Քեզ խնդրելու եմ գալիս,
Հենց որ տեղս նեղվում է։

Շատ էլ երես չես տալիս,
Հենց քեզնից հեռանալիս,
Միտքս նորից շեղվում է։

2002

* * *

Մի երրորդ աչք ինձ շնորհեիր, Տե՛ր,
Թեկուզ հենց այս մերկ ճակատիս.
Պիտի ուղեկցեր ինձ ավարտիս.
Մի երրորդ աչք ինձ շնորհեիր, Տե՛ր։

Եւ կիսակույր տքնում եմ դեռ՝
Հավատարիմ հին հավատիս.
Մի երրորդ աչք շնորհեիր ինձ, Տե՛ր,
Թեկուզ հենց այս մերկ ճակատիս։

2002

* * *

Հոգեառս տուն էր եկել,
Ի վերջո քաշվեց, գնաց.
Ցանկանում էր ահաբեկել,
Թեպետ ոչ մի խոսք չասաց։

Ես երբևէ չեմ առարկել,
Բայց թե պահը հարմար չէր,
Պատրաստ չէի լուրջ սակարկել,
Ներկայացնել պահանջներ։

2002

* * *

Թե որ պահը բաց ես թողել,

Էլ ետևից մի գնա.
Նա շատ հեռու չի մնա,
Թե որ պահը բաց ես թողել,
Մի ծածուկ տեղ արևկողել,
Այն շուտով կինանա
Թե որ պահը բաց ես թողել
Էլ ետևից մի գնա։

2002

* * *

Ես գիտեմ, գիտեմ, թե ով երբ գնաց,
Ես նաև գիտեմ՝ ումից ինչ մնաց.
Բայց, ավա՜ղ, նրանք չեն իմանալու,
Երբ եմ գնալու, ինչ եմ թողնելու,
Եվ այս բոլորը նորերի համար,
Գալիքի քննող օրերի համար.
Պատմությունն, այո, եղել է արդար.
Անկաշառելի… օ՜, հաշվեհարդար։

2002

* * *

Թեքվել բարձին, երևի թե ննջում եմ,
Ասես երազ՝ մեր դաշտերով շրջում եմ.
Ձնծաղիկներ, ձնծաղիկներ՝ նոր ելած,
Մեկիկ-մեկիկ հավաքում ու փնջում եմ։

Պիտի տանեմ, աղջիկներին ընծայեմ.
Ջահել չեմ, թե սիրուններին հմայեմ.
Գարունները նրանց համար են գալիս,
Ինձ մնում է մի կողմ կանգնեմ ու նայեմ։

2002

Սերեր, սերեր

Վ. Տ.¬ին

Հանրակառքում հանդիպեցինք,
Ու նստեցինք դեմ-դիմաց.
Մենք գաղտնաբար, մեղմ ժպտացինք,
Հառաչեցինք շա՛տ կամաց:

Դաստակներդ ձեռնոցներից
Ազատեցիր, որ տեսնեմ,
Որ ազատ ես ամեն «պարտքից»,
Որ ձգտեմ քեզ, ու հասնեմ:

Մինչ հասկացա, սթափվեցի,
Մեկ էլ նայեմ, էլ չկաս.
Ու թվաց թե կործանվեցի.
Գեթ երազում դու կգա՞ս:

1940

* * *

Ասի՝
Գարունն ես դու իմ,
Ծաղիկ տուր ինձ, յար.
Ասիր՝
Գարուն չեմ արդեն,
Դարձել եմ ամառ:
Ասի՝
Ամառն ես դու իմ,
Արև տուր ինձ, յար.
Ասիր՝
Ամառ չեմ արդեն,
Աշուն եմ պայծառ:
Ասի՝
Աշունն ես դու իմ,
Մրգեր տուր ինձ, յար.
Ասիր՝
Աշուն չեմ արդեն,
Ձմեռ, ձյուն եմ սառ:
Ասի՝
Ձմեռն ես դու իմ,
Խեղդիր բուքիդ մեջ, յար.

Ասիր՝
Բուքն ինձ է խեղդում,
Դե փրկի՛ր ինձ, յա՛ր։

1945

* * *

Ելնեմ փողոց, ձեր թաղը գամ,
Հեռվից տեսնես, ձեռքով անես.
Սրտի դողով ձեր բաղը գամ,
Աչքով, ունքով հոգի հանես։
Խռով գնամ, ետ վաղը գամ,
Կանչես, վարդի շաղը տանես.
Ու դրախտի վարդերից վառ
Կուրծքդ բանաս՝ շափաղ հանես։

1946

* * *

Կանցնեն տարիներ,
Կանցնեն շատ արագ.
Մի օր կկարդաս
Երգս հասարակ։

Նա քեզ կթվա
Մի քաղցր երազ,
Անցած երեկվա
Նվագուն մի սազ։

Ու թե հուշերդ
Հոգիդ փոթորկեն,
Լուռ սրտիդ վրա
Գոռ ասպատակեն,

Ու փայլատակի
Կայծակն ամպերում,
Շողերը խաղան
Հոգուդ ծերպերում,

Միտքդ կբերես
Մի ջահել տղի,
Որ քեզ դարձրեց
Հույզերով հղի։

1950

* * *

Դու ինձ հիշու՞մ ես հիմա,
Հենց հիմա, հենց այս վայրկյանին,
Երբ գրում եմ այս ութ տողանին.
Դու ինձ հիշու՞մ ես հիմա:
Եվ արդյոք չե՞ս ասում հիմար,
Որ հավատացի քո կանչող ձայնին.
Դու ինձ հիշու՞մ ես հիմա,
Հենց հիմա, հենց այս վայրկյանին:

1954

* * *

Իմ ջան, իմ ազիզ,
Գոնե երազիս
Իմ անապատում
Դարձիր օազիս:

Խմեմ ու աճեմ,
Թող որ չկորչեմ,
Ու պապակ սրտով
Չընկնեմ, չհանգչեմ:

1955

* * *

Քո համերգներին հաճախ եկել եմ,
Ծափահարել եմ հաջողությունդ.
Թովչանքդ, կանչդ ճարպիկ բեկել եմ,
Խորշել եմ, ոտքս չեմ դրել տունդ:

Ի՞նչ փույթ, նախատել ու նախատում ես,
Որ քո նկատմամբ «խիստ ու ժլատ» եմ.
Հոգիս ու խիղճս հանգի՛ստ են այնպե՛ս…
Իսկ դու կարծում ես դաժան ու վատն եմ:

1956

* * *

Լիլի, ճերմակ շուշան.
Շքեղ, փարթամ բացված.
Մաքուր սիրո նշան,

Ցայգի ցողով թացված:

Ամեն զարնան այդպես
Բացվիր, թացվիր, ժպտա.
Քեզ հետ ժպտամ և ես,
Աշխարհը մեզ հետ ժպտա:

1957

* * *

Ցարիս հիշել եմ,
Անունն եմ մոռցե.
Տի նամակ գրեմ,
Թանաքն է չորցե.
Էլնեմ սարն, ըսի,
Ու հեռվե նայեմ,
Ավաղ, ջուխտ աչս
Արցունքե քոռցե:

Նստեմ, մի կուշտ լամ,
Որ սիրտս հովնա.
Աչս արցունքով
Լցվի ու ծովնա.
Արտս ցանել եմ
Էն դեմի դզեր,
Հեյ վախ, արևեն
Կայրվե, կբռվնա:

1958

* * *

Դեռ վաղ հասակում անտարբեր եղա,
Եվ նույնիսկ անփույթ քո սիրո հանդեպ.
Օ՜, ուշ է արդեն, որ ասեմ «մեղա»
Դե ճամփաներն էլ ե՞րբ են տանում հետ:

Եվ փույթ չէ սակայն ու ես այսօր էլ
Այնպե՜ս սիրով եմ քեզ մտաբերում,
Իմ հուշերում քեզ միշտ եմ փայփայել…
Ահա ինչու եմ այսօր ինձ ներում:

1960

* * *

Դուք մի բան ինձնից գաղտնի եք պահում,
Ինչ որ երկնչում, ինձ չեք վստահում.
Ձեր թաքստոցի դռները բացել,
Այս մեկը, սակայն, ոչ չեմ կռահում:

Դուք մի բան ինձնից գաղտնի եք պահում,
Ու խաբս եք տալիս, երգում, կաքավում,
Մեզ մեկտեղ քայլել քիչ է մնացել,
Շտապենք, քանի պահն է հապաղում:

Դուք մի բան ինձնից գաղտնի եք պահում:

1979

* * *

Ես ձեզ հետ եմ, իմ սերեր, սրբություններ սրբածին
Բոլորիդ հետ միասին ու առանձին-առանձին,
Ինչ փույթ հեռու միմյանցից, ինչ որ կամքով քմածին
Ես ձեզ հետ եմ, իմ սերեր, սրբություններ սրբածին:
Աղոթք, օրհնանք, ակնածանք ու երախտիք անցածին,
Տիրոջ կամքը կայանա, որ հանդիպենք ետդարձին…
Ես ձեզ հետ եմ, իմ սերեր, սրբություններ երկնածին,
Բոլորիդ հետ միասին ու առանձին-առանձին:

1980

* * *

Ես քո անվանը փարվել-տարվել եմ,
Քո բոց կրակում այրվել-մարվել եմ.
Նորից ճամփելու էլ ոչինչ չունեմ,
Բոլոր մեղքերդ ներել-մերվել եմ:

Մերն ավարտել ենք ու արդ ավարտվել.
Ու մերթ հատվել ենք ու արդ թերատվել.
Կանչդ չեմ լսում, երամ-թռչուն եմ…
Կյանքում դատել ենք, կյանքից էլ դատվել:

1981

* * *

Դեռ նախատում ես, որ ես անսիրտ եմ,
Որ իմ մեջ քիչ է նուրբ մարդկայինը,
Որ ես վայրենի կոպիտ ու բիրտ եմ,
Որ չեմ ընկալում ջերմության գինը:

Ու դեռ թախծում ես ու կանչում հեռվից,
Հեռվից է գալիս սուտ հեքիաթը այդ,
Իբր չեմ եղել մոտ ու կարեկից,
Ճամփես շեղել եմ, թողել աննկատ:

Սակայն, տեսնում ես, մտաբերում եմ,
Ուզում եմ ասել՝ ճիշտ չես սիրելիս.
Սխալմունքներդ ահա ներում եմ,
Միտքս քեզ հետ է տողն այս գրելիս:

1983

* * *

Եկել, ճամփիս սեգ կանգնել ես,
Արդյոք սիրե՞լ, թե՞ հեգնել ես,
Սիրուն, սիրուն հագնվել ես,
Եկել, ճամփիս սեգ կանգնել ես:

Հեռվից տեսել, մորմոքվել եմ,
Զայրացե՞լ, թե՞ բորբոքվել եմ.
Ճամփես շեղել ու թեքվել եմ.
Հեռվից տեսել, մորմոքվել եմ:

Ափսո՜ս, ափսոս… վաղուց էր այդ.
Աչքերդ էին բոց-ճառագայթ.
Սրտներս լի սեր ու հավատ.
Ափսո՜ս, ափսոս… վաղուց էր այդ:

Արդ փոխվել ենք, այո, այն չենք,
Արդյո՞ք միմյանց կճանաչենք.
Թեկուզ ձայնենք, միմյանց կանչենք…
Արդ փոխվել ենք, այո, այն չենք:

1983

* * *

Մեղմիվ ծորում է տխուր մի երգ,
Ու տանում, տանում մի այլ եզերք.
Հանկարծ հառնում է ցավոտ մի դեմք.
Մեղմիվ ծորում է տխուր մի երգ:
Վաղուց հանգչում է հոգի մի հեգ,
Կարոտով կանչում պարզված մի ձեռք:
Մեղմիվ ծորում է տխուր մի երգ,

Ու տանում, տանում մի այլ եզերք:

1984

* * *

Քո ինչի՞ն է պետք լուսապսակը,
Երբ ինքդ ես սուրբ.
Աչքիս առաջ է քո սեգ հասակը,
Ու ժպիտդ նուրբ:

Քո ինչի՞ն է պետք լուսապսակը
Երբ շողքդ ծածան
Ոսկեզօծել է քո ծով գիսակը,
Կապել ծիածան:

Քո ինչի՞ն է պետք լուսապսակը
Առաքված երկնից.
Երբ իմ ընծայած ցորյանի հասկը
Վեր է զարդերից:

1984

* * *

Իմ տան ճամփեն դու գիտես,
Բայց չես գալիս, չես գալիս.
Գալու հույս էլ չես տալիս…
Իմ տան ճամփեն դու գիտես:
Դեռ ինչքա՞ն, ինչքա՞ն էսպես
Քարը քաշեմ թզբեհիս.
Իմ տան ճամփեն դու գիտես,
Բայց չես գալիս, չես գալիս:

1984

* * *

Ողջ կյանքումս փափագել եմ, որ ինձ կանչես,
Ու չունեցա, ու չունեցա այդ բախտը ես.
Օ՜, այս գիշեր երազիս մեջ կանչում էիր,
Բայց… արթնացա, չարժանացա գալ քեզ ի տես:

Ու մնացի, ու մնացի քո կարոտով,
Ու միշտ քեզ հետ, ու միշտ քեզ հետ հոգով–սրտով,
Դու խաբուսիկ ժպիտներդ տարար քեզ հետ,
Դեռ քայլում եմ, քո մոլորած արահետով:

Բայց չեմ հասնում, բայց չեմ հասնում՝ դու հեռանում,
Երբ էլ հասնում, ձեռքս մեկնում՝ դու վերանում.
Կրկնվում է նույն հեքիաթը դարեր ի վեր,
Իսկ անցածը, հեռացածը ետ չի դառնում:

1984

* * *

Ո՜վ մարդկային սեր,
Է՞ր չես տարբերում
Պատանի ու ծեր։

Հավասարապես,
Օ՜, և աններում
Գերում, այրում ես։

Ու քամուն տալիս,
Ու խենթ քամահրում,
Խնդում ու լալիս։

Ո՜վ մարդկային սեր,
Ո՜վ մարդկային սեր։

1985

* * *

Գիշերային այն կապույտում
Անհայտ աստղ եմ նկատել.
Իմ սրտի պես այն թպրտում –
- Սիրուհի՞ն է կատակել:

Խոստացել էր ծածուկ հյուր գալ,
Փարվել ծով փաղաքշանքով,
Երջանկությամբ մի հեկեկալ,
Ժպտալ անհուն քնքշանքով:

Ու երևի ուշանում է,
Թե՞ ճամփեն է շփոթել.
Բամբասանքից զգուշանու՞մ է,
Գուցե՞ գետակն է հորդել:

Անսփոփ է աստղն այս գիշեր,
Ինչով վիշտը փարատի.

Այ թե մեկը գնար, ճշտեր՝
Ուր է կույսն իր դեռատի:

1985

* * *

Հեռվով եմ անցնում, որ չհանդիպենք,
Որ հայացքներս դեմ չգան միմյանց,
Որ չարտաբերենք խոսքեր վերամբարձ…
Հեռվով եմ անցնում, որ չհանդիպենք:

Սիրո խոսքերում թող չվրիպենք,
Որ էլ չմաղթենք բարի վերադարձ.
Հեռվով եմ անցնում, որ չհանդիպենք,
Որ հայացքներս դեմ չգան միմյանց:

1985

Ս –ին

Ես շնորհակալ եմ Ձեզանից, տիկին,
Նորից ու կրկին, նորից ու կրկին,
Որ չզլացաք, օ՜, արձագանքել,
Եվ ընդառաջել մթնում անմեկին:

Ես շնորհակալ եմ Ձեզանից, տիկին,
Որ չգանձեցիք ինձնից փրկագին,
Ձի փորձում էինք միայն կատակել,
Մինչ ճաշակեցինք լրիվ կրկնակին:

1985

* * *

Ինչ լավ է, որ դու շատ փոքր ես,
իսկ ես՝ շատ մեծ,
Թե չէ պիտի սիրուդ գամված
տառապեի.
Ես, որ սիրո մեջ միշտ մաքուր,
պարզ ու անեղծ
Մոմի նման անմնացորդ
պիտ այրվեի:

Ինչ լավ է, որ դու շատ փոքր ես,
իսկ ես՝ շատ մեծ.

Մնանք հեռու, մաղթանքով լոկ՝
մոտիկ ու մերձ:

1986

* * *

Ադամանդ եմ փնտրում անվերջ,
Որ այն հոկեմ - փայլատակի,
Փնտրում խաշված խոտերի մեջ,
Ու ափունքին հորդ գետակի:

Ադամանդ եմ փնտրում անվերջ,
Ազնվագույն ու բնածին,
Որ նվիրեմ իմ անմոռաց
Կորցրածին ու… գտածին:

1986

* * *

Եկ, փոստատար,
Նամակ ինձ բեր -
Բարի լուրեր…
Եկ, փոստատար:

Դու անվթար,
Ես՝ անհամբեր…
Եկ, փոստատար,
Նամակ ինձ բեր:

1986

* * *

Դուք իմ հասցեն մոռացել եք,
Որ չեք, օ՜, չեք զանգահարում.
Ճեպընթացով անցկենալիս
Թաշկինակ չեք թափահարում:

Ափսոսում եմ, ափսոսում եմ,
Ու չեմ հաշտվում կորստիս հետ.
Այսպես ահա մերթ խոսում եմ
Ինքս ինձ հետ, ինքս ինձ հետ:

1986

* * *

Սիրո հասակ էր,
Չսպասեց, անցավ.
Կյանքի պսակն էր,
Շուտ ամայացավ։

Ամեն ինչ փոխվեց,
Քաղցրը դառնացավ.
Ժպիտը դեմքից,
Օ՜, անէացավ։

Ու հոգսը կախվեց
Մարդու աչք-ունքից,
Ու մարդը բախվեց…
Պայթեց երկունքից։

1987

* * *

Ոչ մի լուր չունեմ, Դուք կաք, թե՞ չկաք.
Եկաք, գնացիք,
Ոնց լույս հպանցիկ
Ու դարձաք ցնորք, երազ մի, խաբկանք։

Գեթ մի շող լույսի, գեթ խուլ արձագանք,
Օ՜, խենթ կախարդանք,
Օ՜, չար խարդավանք…
Ոչ մի լուր չունեմ, Դուք կաք, թե՞ չկաք,

1988

* * *

Պայթում եմ սրտի նեղից,
Կանչում ես ինչ որ տեղից.
Նետը հոգիս մխրճվեց
Թռած քո պիրկ աղեղից։

Չեմ երկնչում ուժեղից,
Ոչ էլ սարսում ահեղից.
Կամրջել եմ ափերս -
Հոգս չունեմ ջրհեղեղից։

1990

* * *

Երկա՛ր, երկա՛ր սպասեցի,
Տարի անցավ, դար անցավ.
Աչքս ճամփիդ կուրացավ.
Երկա՛ր, երկա՛ր սպասեցի։
Հույս ու պատրանք, օ՛, հյուսեցի,
Գիշերս չլուսացավ.
Երկա՛ր, երկա՛ր սպասեցի,
Տարի անցավ, դար անցավ։

1990

* * *

Սիրելու և սիրվելու
Մենք ժամանակ չունեցանք.
Շիկնելու, համբուրվելու,
Գգվելու չարժանացանք։

Աշխարհ, մենք մերկ ու հլու
Մացառուտներդ անցանք,
Լավ օրեր էին գալու…
Օ՛, այդ կյանք էր, թե՞ հանցանք։

1990

* * *

Բաց ճեղքից պատուհանիս
Թուխ թռչնակ մի ծիկրակում,
Եկել ի՞նչ է ակնարկում
Բաց ճեղքից պատուհանիս։
Սե՞ր է հայցում պարմանի,
Ինձնի՞ց, օ՛, ա՞յս հասակում…
Բաց ճեղքից պատուհանիս
Թուխ թռչնակ է ծիկրակում։

1991

* * *

Եկ էսօր սեր վայելենք,
Եկ էսօր պայծառանանք.
Խմենք, մի քիչ արբենանք.
Եկ էսօր սեր վայելենք։

Չտարբերենք մուտք ու ելք,

Դրկիցներ ենք՝ գանք, գնանք.
Եկ էսօր սեր վայելենք,
Եկ էսօր պայծառանանք։

1991

* * *

Չգնահատեցին նրանք իմ սերը՝
Ջրերի փերի-ջրահարսերը.
Գնացին դեպի իրենց անհունը,
Գնացին, տարան արձակ վարսերը։

Աստված նրանց հետ, ինձ հետ՝ իմ Տերը,
Իմ ցերեկները, իմ գիշերները.
Երբեմն, ծո՛վ իմ, կփորձեմ հյուր գալ,
Եվ ամեն անգամ ինձ հետ իմ սերը։

1991

* * *

Գիտեմ՝ հեռու ես,
Չեմ կարող ձայն տալ,
Առավել ևս՝
Քայլել, մոտդ գալ։

Բայց ինչո՞ւ այսպես
Որոնում եմ քեզ
Իմ այս մոտերքում.
Սուտ-սխալն այդ ես
Ինչու՞ չեմ հերքում։

Ու որոնում եմ,
Անվերջ որոնում,
Չեղած առիթներ
Բերում-հորինում,

Փորձում հավատալ,
Նույնիսկ համոզվել,
Ներքին հաճույքով
Ակամա հուզվել,

Որ իրոք, այստեղ,
Այստեղ ես՝ շատ մոտ,
Իմ սե՛ր խելահեղ,

Չխամրող կարոտ։

1992

* * *

Մեր սիրո մասին ոչ ոք չիմացավ,
Ու դրանով էլ երջանիկ էինք.
Մեր այդ պարգևը վայելում էինք…
Մեր սիրո մասին ոչ ոք չիմացավ։
Քեզնով ով ասես, որ չհիացավ.
Դու չքնաղ էիր, դու՝ անամպ երկինք.
Մեր սիրո մասին ոչ ոք չիմացավ
Ու դրանով էլ երջանիկ էինք։

1992

* * *

Դու եղար սերն իմ առաջին,
Այդպիսին էլ մնացել ես,
Ինչ փույթ, կյանքից հեռացել ես…
Դու եղար սերն իմ առաջին։
Բայց ունեցա՞ սեր մի վերջին,
Որ գեթ մի պահ մոռացներ քեզ…
Դու եղար սերն իմ առաջին,
Այդպիսին էլ մնացել ես։

1993

* * *

Առաջին սիրո հմայքը անանց՝
Աստվածային է ու չի մոռացվում,
Նա ամեն գարնան վարդի պես բացվում…
Առաջին սիրո հմայքը անանց։
Առաջին սերը, օ՜, հավերժացած՝
Մինչև հանգչելդ ծածուկ ուղեկցում…
Առաջին սիրո հմայքը անանց
Աստվածային է ու չի մոռացվում։

1993

* * *

Այսօր քեզ հետ եմ,
Դեմքս զգում է շնչառությունդ.
Ինչ փույթ հեռու ես, հեռու է տունդ.

Այսօր քեզ հետ եմ։

Հար ու հավետ եմ,
Տես, խռովում եմ հոգնատանջ քունդ.
Այսօր քեզ հետ եմ,
Դեմքս զգում է շնչառությունդ։

1993

* * *

Որտեղ երբեմնի հանդիպում էինք,
Ես այժմ հաճախ գնում եմ այնտեղ.
Այնժամ մեկմեկու մենք գտնում էինք,
Մինչ այժմ, այժմ ժպտում եմ անմեղ,

Չի գիտենալով դու անվերադարձ
Գնացել ես ու կրկին չես գալու.
Բայց էլի, էլի լուռ, կարոտադարձ
Հույս եմ փայփայում, հույս՝ քեզ գտնելու։

Ուշադիր եղիր, ու երբ նկատես,
Որ էլ չեմ գալիս քեզ որոնելու,
Հավատա այնժամ, որ չկամ և ես,
Եվ հույս չունենաս ինձ հանդիպելու։

1993

Էլեգիա

Հիշում եմ՝ եկար ու խառնվեցիր մեր ջերմ զրույցին,
Օ՜, անակնկալ, մեր հայացքները միմյանց հայեցին.
Դու աստվածային հրաշք երկնային, անըմբռնելի…
Միմյանց որոնող բոլոր աստղերը մեզ նախանձեցին։

Ու ես այլևս կյանքից պոկվեցի, երկինք վերացա,
Ու ես այլևս մի այլ աշխարհի բնակիչ դարձա.
Ներս թափանցեցիր իմ էության մեջ, որպես հին բնիկ,
Ու ես մեր աստծուն, երախտապարտս, լուռ ներկայացա։

Նա՝ մեր աշխարհի մեծ վեհափառը, օրհնեց իմ բախտը,
Ասեց՝ վայելիր քո իսկ երկրային ցնորք դրախտը.
Աչալուրջ եղիր, դե ով իմանա, խարդավանքներ կան,
Ձեզ չմոտենան աշխարհասասան նենգ կարոտախտը։

Բայց մի դիպվածով անըմբռնելի, անսպասելի

Աշխարհը փոխվեց, հեղեղներ անցան գոռ, անկասելի.
Ողջը մոռացվեց, լոկ հուշդ մնաց աստվածապատկեր՝
Ոդիսականն այս, որպես մարդկային վիշտ անասելի։

1997

* * *

Ես այդպես էլ չգտա,
Այն, ինչ մի օր կորցրի.
Ամաչելս թաքցրի…
Ես այդպես էլ չգտա։
Արևի հետ մայր մտա,
Գիշերս չլուսացրի…
Ես այդպես էլ չգտա,
Այն, ինչ մի օր կորցրի։

1997

* * *

Երջանիկ պահ եք Դուք ինձ պարգևել
Իմ փնտրումների արահետներում.
Պատանությանս այն հեռուներում
Երջանիկ պահ եք Դուք ինձ պարգևել։
Մինչ տարիները սլացքով թևել,
Արդ ոչ մի, ոչ մի պատրանք չեն բերում.
Երջանիկ պահ եք Դուք ինձ պարգևել
Իմ փնտրումների արահետներում։

1997

* * *

Ձեր այդ մի ժպիտն իսկ, Տիկի՛ն,
Տասը հուսո խոստում արժե,
Լրջմիտ մարդն իսկ այն կախորժե
Ձեր այդ մի ժպիտն իսկ, Տիկի՛ն։
Աստվածընծա, օ՜ կին, օ՜ կին.
Ձեր ժեստն ամեն սիրաշարժ է.
Ձեր այդ մի ժպիտն իսկ, Տիկի՛ն,
Տասը հուսո խոստում արժե։

1997

* * *

Քո ժպիտն այնքան անուշ էր,

Աչք-ունքդ շքեղ էր, պայծառ.
Հայուհիս, հմայքդ անծայր…
Քո ժպիտն այնքան անուշ էր։
Թեպետ այս քաղցր վերհուշ է,
Հրաշք է, ցնորք անհնար…
Քո ժպիտն այնքան անուշ էր,
Հայուհիս, հմայքդ անծայր։

1998

* * *

Մի հանկարծահաս մղումով ներքին,
Եկա, անցկացա ձեր հին տան մոտով,
Օ՜, լցված էի անուշ կարոտով,
Մի հանկարծահաս մղումով ներքին։
Ու վերապրեցի պահերն այն կրկին,
Խոր շնչավորված սուրբ առավոտով.
Մի հանկարծահաս մղումով ներքին,
Եկա, անցկացա ձեր հին տան մոտով։

1998

* * *

Պատահաբար միմյանց գտանք
Ու սիրեցինք, ու սիրվեցինք,
Որթատունկի պես հյուսվեցինք.
Պատահաբար միմյանց գտանք։
Սերը, սակայն, հավերժ պատրանք.
Միմյանց ներել խնայեցինք…
Պատահաբար միմյանց գտանք,
Սուրբ մասունք էր, կորցրեցինք։

1998

* * *

Բարեկամիս մոտ խոստովանել ես,
Որ բոլորի մեջ ինձ ես հավանել,
Բոլորին անքեն հեռու ես վանել…
Բարեկամիս մոտ խոստովանել ես։
Ես հավերժորեն երախտապարտ քեզ,
Ափսոսել եմ, որ վիճակս էր անել.
Բարեկամիս մոտ խոստովանել ես,
Որ բոլորի մեջ ինձ ես հավանել։

1998

* * *

Դու շուտ գնացիր,
Չհամբերեցիր հանդիպենք նորից,
Քեզ որոնում եմ գնալուդ օրից.
Դու շուտ գնացիր։
Օ՜, վերադարձիր
Ու ապրիր, ապրիր սիրված բոլորից…
Դու շուտ գնացիր,
Չհամբերեցիր հանդիպենք նորից։

1998

* * *

Գիտեի, որ դու ինձ սիրում էիր,
Ու այդ սիրով էլ հմայում էիր.
Մերթ թաքնվելով խնայում էիր...
Գիտեի, որ ինձ դու սիրում էիր։
Մինչ կյանքը, կյանքը մեզ չխնայեց,
Տերն իր բարձունքից սիրով չնայեց,
Բերդապատի պես մենք կործանվեցինք,
Քարն իսկ կրակին չդիմակայեց։

1999

* * *

Առաջին սերը
Նույն վերջին սերն է,
Մի այլ սեր չկա.
Երջանկությունը,
Օ՜, այդ է, որ կա՝
Սերը աղջկա։

1999

* * *

Սե՞րն է արդյոք այն վաղեմի
Շողարձակվում կրկին, կրկին.
Ազնվական, անբասիր կին,
Սե՞րն է արդյոք այն վաղեմի
Արթնացել ու դիպվածով մի
Հիշել պահերն այն անմեկին...
Սե՞րն է արդյոք այն վաղեմի

Շողարձակվում կրկին, կրկին:

1999

* * *

Այ թե ջահել լինեինք,
Հանկարծ իրար գտնեինք.
Խենթանայինք մեր սիրով,
Ու այդպես կյանք մտնեինք՝
Տասը զավակ երկնեինք,
Ու տասը կյանք կրկնեինք,
Այ թե ջահել լինեինք.
Այ թե ջահել լինեինք:

1999

* * *

Իմ սիրո բոլոր երգերում դու կաս,
Փնտրե՞լ, գտե՞լ ես՝ լուռ են, ծպտված
Հոգուս լույսերով վերամկրտված...
Իմ սիրո բոլոր երգերում դու կաս:
Դե ներող եղիր, ավել կամ պակաս,
Ներողամիտ է նույնիսկ ինքն Աստված...
Իմ սիրո բոլոր երգերում դու կաս,
Փնտրե՞լ, գտե՞լ ես՝ լուռ են, ծպտված:

1999

* * *

Իմ նամակին ես սպասում, գիտեմ,
Այն արդեն գրել ու ծրարել եմ.
Քեզ նվեր նոր ձոն, օ՜, արարել եմ...
Իմ նամակին ես սպասում, գիտեմ:
Վաղն իսկ կառաքեմ, ու ... կկարոտեմ
Ես այն ամենին, ինչ որ գրել եմ.
Իմ նամակին ես սպասում, գիտեմ,
Որն արդեն գրել ու ծրարել եմ:

1999

* * *

Ա՜խ, երանի մերթ հանդիպել կարենայինք
Աստվածընծա հաճույքները վայելեինք.
Ու չզգայինք աշխարհական հոգսերն ամեն

Ուզած պահին «մեր տուն, ձեր տուն» գնալ-գայինք:

Այնպես լիներ, որ միասին ծերանայինք,
Թե հոգնեինք, միասին էլ հեռանայինք.
Ու թե Տերը հոգիները մեր ընդուներ
Մենք անխռով ու աննկատ վերանայինք:

1999

* * *

Կռունկների կերպարանքով
Սերերս երամ կազմած,
Շրջանցելով ամպերը թաց,
Անցան լեռան թիկունքով:
Կռնչացող խո՛ր երկունքով
Նուրբ թևերը լայն բացած
Կռունկների կերպարանքով
Անցկացան երամ կազմած:

1999

* * *

Օ՜, սերեր եմ ունեցել
Մեկը մեկից գեղեցիկ,
Տևաբար, մերթ՝ հպանցիկ...
Օ՜, սերեր եմ ունեցել:
Ու բոլորն էլ գնացել,
Անցել շտապ, վաղանցիկ.
Օ՜, սերեր եմ ունեցել
Մեկը մեկից գեղեցիկ:

1999

* * *

Պաշտանմունքն ունեմ կրակ ու բոցի,
Հրաշք հայուհու ջերմեռանդ ծոցի.
Ներսս հեծում է հեթանոս ոգիս՝
Անհողդողդ Տերը անառ ամրոցի:
Փույթ չէ, երկինքն իր դռները գոցի,
Փույթ չէ, թե Տերը խորախոր խոցի.
Արևը կա ու կմնա բագին...
Պաշտանմունքն ունեմ կրակ ու բոցի:

1999

* * *

Խոստացել էիր ինձ էլ Զոն հյուսել,
Քո իսկ շուրթերով բարի խոսք ասել,
Հորդորում էիր էլի սպասել,
Բայց չհասցրիր, մնաց անկատար:
Փորձում էիր ինձ ձեր դասը դասել,
Փարվել եղածին, ու չհակասել,
Քիչ էլ կատակել, քիչ էլ բամբասել,
Խոստացել էիր ինձ էլ Զոն հյուսել:
Բայց այս բոլորը դու հետդ տարար,
Օ՜, կյանք, օ՜, վերջին հանճարեղ արար:

1999

* * *

Ո՞վ է, ո՞վ է,
Չեմ իմանում
Ինձ անտեղի
Տեղից հանում
Այսպես թողնում
Ու չի տանում...
Օրերն իրենց
Թելն են մանում:

1999

Լ¬ին

Ձեր կողմերը էլ չեմ գալիս,
Վաղ օրերի սիրուհիս.
Ով աննման, անկրկնելիս,
Ձեր կողմերը էլ չեմ գալիս:

Երևի թե այն վերջինն էր՝
Խոնարհվեցինք մենք միմյանց,
Համերգային մեծ սրահում
Մեր դեմ դռներն էին բաց:

Տարբեր տեղեր զբաղեցրեցինք,
Ու խոռվքներ ունեցանք.
Ու այլևս կորցրեցինք,
Ու այլևս չգտանք:

Հեռուներով մերթ անցնելիս
Այս ու այն կողմ եմ նայում.
Ոչ մի հայացք մոտ չի գալիս,
Էլ ոչ ոք չի հմայում։

1999

* * *

Երևի թե պիտի մնար
Գործս անտիպ ու անհայտ,
Կամ կորստյան ճարակ դառնար,
Չառներ կյանքի ճառագայթ։
Թե չունենար գութ, խղճմտանք,
Օգնության ձեռք չմեկներ.
Օրհնություն ձեզ՝ սեր անկապանք,
Բոցկլտացող կրակներ։

1999

* * *

Խոստովանել ես՝
«Կարոտդ առար».
Այսպես բառ առ բառ
Խոստովանել ես։
Հավատում եմ քեզ,
Դու սուրբ, դու արդար.
Խոստովանել ես՝
«Կարոտդ առար»։

1999

* * *

Դու ինձ սպասել ես,
Մինչ ես չեմ կանչել
Օ՜, դու ամաչել,
Բայց և սպասել ես։
Քեզ հակասել ես,
Քեզ չես ճանաչել.
Դու ինձ սպասել ես,
Մինչ ես չեմ կանչել։

1999

* * *

Իրենն առավ ու գնաց,
Մոտս ոչինչ չթողեց՝
Գաղտնության մեջ սքողեց...
Իրենն առավ ու գնաց։
Դուռս ոտքի վրա բաց,
Հեղեղ անցավ, ողողեց.
Իրենն առավ ու գնաց,
Մոտս ոչինչ չթողեց։

1999

* * *

Կյանքը սպասածին
Հաճախ հակասել,
Սիրած¬սիրածին
Նաև բամբասել,
Լսած, չլսած
Բերել դասդասել,
Այսպես անելով
Թե ուր է հասել,
Ոչ ոք չգիտի,
Չի էլ գիտենա
Բաց թող, թող ջուրը
Իր ճամփով գնա։
Փույթ չէ, թե տակը
Ավազ կմնա։

1999

* * *

Սեր որոնողը հանգիստ չմնաց,
Գլուխը առավ ու տնից գնաց.
Անցավ աշխարհներ ու ծովեր անցավ.
Օվկիաններ անցավ, շուտ տուն չդարձավ։

Որոնեց անվերջ, փնտրեց, որոնեց,
Գտնելու հազար ձևեր հորինեց,
Ու երբ չգտավ, հոգին թևաթափ
Տուն վերադարձավ՝ հարազատ գետափ։

Ու հանկարծ թվաց՝ աշխարհը փլվեց,
Հողմը ծառերին առավ¬պլլվեց,
Ապա խաղաղվեց՝ հանդարտվեց քամին
Ու դեմը տեսավ իր հարևանին։

Ու գտավ, գտավ սիրած էակին՝
Թեև գեղեցիկ, զառամյալ մի կին.
Որի կյանքն անցել, բան չէր մնացել
Իրեն փնտրողին վաղուց մոռացել,
Իր հավերին էր կանչում կուտ տալու,
Իր ճակատագրին, վիճակին հլու։

1999

* * *

Իմ շատ սիրած երգն է այս
Որ նվիրում եմ արդ քեզ
Լինենք խաղաղ, հաշտ ու հեզ
Իմ շատ սիրած երգն է այս։
Հեգում եմ այն հոտնկայս
Որպես աղոթք, օ՜, սուրբ ծես
Իմ շատ սիրած երգն է այս
Որ նվիրում եմ արդ քեզ։

1999

* * *

Քո գահը թափուր մնաց,
Ոչ ոք չուզեց տիրանալ,
Ինքն իրենից վերանալ...
Քո գահը թափուր մնաց։
Ճորտդ պակասդ չզգաց
Պետք էր՝ օ՜, հանգստանալ.
Քո գահը թափուր մնաց
Ոչ ոք չուզեց տիրանալ։

1999

* * *

Դուք երբեք, երբեք չեք բացակայել,
Ձեր ներկայությամբ երջանկացրել եք,
Իմ էությունը Ձեզնով լցրել եք,
Դուք երբեք, երբեք չեք բացակայել։
Լինելությունս սիրով վկայել
Մահկանացուիս անմահացրել եք,
Դուք երբեք, երբեք չեք բացակայել,
Ձեր ներկայությամբ երջանկացրել եք։

1999

* * *

Նամակիդ եմ սպասում
Ու աննշմար փսփսում.
Ավաղ, ինքս էլ չգիտեմ
Ինչ մտածում, ինչ ասում:
Դե ճանապարհն է երկար՝
Ծով է, ձոր է, սար է, սար.
Համբերողի հույսն է միշտ
Աստծո լույսին հավասար:

1999

* * *

Նա իր կամքով էր եկել,
Բայց մի անսովոր քայլով,
Աչքերի շռայլ փայլով,
Նա իր կամքով էր եկել:
Ամեն նախատինք բեկել,
Սիրո ձայնի դայլայլով.
Նա իր կամքով էր եկել,
Բայց մի անսովոր քայլով:

1999

* * *

Սերն է ցոլցոլում քո ծով բիբերում,
Բայց դե ինչ արած, բախտդ չի բերում.
Տիրոջը երազն այս, օ՜, դուր չի գալիս
Խափանում է միշտ ու երբեք ներում:
Ինքը բազմել է լուրթ վերևներում,
Մինչ չար սատանան մեր օրն ավերում,
Ինչ մտածում ենք, գլուխ չի գալիս,
Կորցնում ենք, մեզ ոչինչ չի մնում:

1999

* * *

Թե գիտենայի, թե գիտենայի,
Որ ինչ որ չափով իմ կողմն եք հակված,
Գլխաբաց, բոբիկ ես Ձեզ կգայի,
Թակելու փեղկը դռանդ փակված:

Հույսը ինձ կօգներ, որ այն կբացվի,
Ու կհայտնվի արևս շիկնած.
Աչքերի մեջ մեղմ երկինքը ծավի
Աղջնակ մի սուրբ, անսուտ ամոթխած:

Երջանիկ պահն այդ որ միշտ խաբուսիկ
Կկառչեի խաս փեշերից ամուր
Օ՜, այն կլիներ անբռնազբոսիկ՝
Երջանիկ պահ մի, օ՜, աստվածատուր:

1999

* * *

Քո անունով եմ երդվում,
Դու իմ սրբությունն ես,
Իմ հավերժությունն ես.
Քո անունով եմ երդվում:
Թե երբևէ կախարդվում,
Ով սեր, իմ փրկությունն ես.
Քո անունով եմ երդվում,
Դու իմ սրբությունն ես:

1999

* * *

Դու, սիրելի հեռավորս,
Զբաղեցնողդ ամեն օրս,
Այնպես եղավ, օ՜, մնացիր,
Դու և հինս, դու և նորս:
Այո, այո, զորավորս,
Քո կարկաչն է շուրջ¬բոլորս,
Հաշվետու եմ, ո՜վ մշտարթուն,
Դու հորդորս, դու ցենզորս:

1999

* * *

Դու այն ես, որին ես ստեղծում էի,
Տարիներ ի վեր, տարիներ ի վեր.
Երբեմն հեծում, հեծեծում էի
Երբ մթնում էին լույս աստղերը մեր:
Այժմ փայլում ես դու պայծառատես
Փույթ չէ, թե օտար հորիզոններում.
Ես աղոթում եմ և օրհնում եմ քեզ

Իմ անզարդ, իմ պարզ, անեղծ ձոներում։

1999

* * *

Դու, օ՜, այնպիսին էիր
Ինչպիսին երազում էի
Քո հետքով ոչ թե քայլում,
Ուղղակի վազում էի։
Հասնելիս ոչ թե խոսում,
Ուղղակի կակազում էի.
Դու, օ՜, այնպիսին էիր
Ինչպիսին երազում էի։

1999

* * *

Հոգեթով երգն այս, որ քեզ եմ ձոնել,
Ափսոս, շատ ափսոս, դու չկարդացիր.
Այդպես անտեղյակ, անձուկ մեկնեցիր
Չիմացար, երգն այս ես քեզ եմ ձոնել։
Փողոց դուրս եկել, քեզ եմ որոնել,
Իմ փնտրումներում դու չերևացիր.
Հոգեթով երգն այս, որ քեզ եմ ձոնել,
Ափսոս, շատ ափսոս, դու չկարդացիր։

1999

* * *

Մի հատիկ համբույր չըշնորհեցիր,
Այդպես էլ դատարկ անդարձ հեռացանք.
Թեպետև միմյանց մենք չմոռացանք...
Մի հատիկ համբույր չըշնորհեցիր։
Անցնելիք ճամփես, օ՜, չըօրհնեցիր,
Մենք չէինք գործել որևէ հանցանք.
Մի հատիկ համբույր չըշնորհեցիր,
Այդպես էլ դատարկ, անդարձ հեռացանք։

1999

* * *

Ես քեզ ձոներ եմ հյուսում,
Նրանցում սեր մի անեղծ.
Ինձ դարձրին բանաստեղծ...

Ես քեզ ձոներ եմ հյուսում։
Կաքավի պես սաղմոսում,
Աղոթքի պես նախաստեղծ.
Ես քեզ ձոներ եմ հյուսում
Նրանցում սեր մի անեղծ։

1999

* * *

Սերեր, օ՜, սերեր ես շատ ունեցա,
Հափշտակվեցի մեկով, մյուսով,
Ու տիրանալու անսահման հույսով
Սերեր, օ՜, սերեր ես շատ ունեցա։
Բոլորը անցան ու ես էլ անցա,
Կարոտը մնաց, որպես սիրո սով.
Սերեր, օ՜, սերեր ես շատ ունեցա,
Հափշտակվեցի մեկով, մյուսով։

1999

* * *

Սերն ամեն ինչ է,
Անսերը՝ ոչինչ.
Այդ էլ դեռ քիչ է,
Խիստ անամոքիչ։
Սերը սուրբ ճիչ է,
Անսերը՝ կռինչ.
Սերը, օ՜, նինջ է,
Անսերը՝ ճռինչ։

1999

* * *

Կինն այս արժեքն իր գիտի,
Հայացքը որ կողմ նետի,
Սարդոստայնում մետաքսե
Գերվածներ, օ՜, կգտնի։
Տարիներ կան մինչ հատնի,
Որ ունեցածը վատնի.
Նա գիտի, ինչ է անում,
Փույթ չէ, կյանքը կմատնի։

1999

* * *

Լցված եմ, լցված եմ միայն քեզնով,
Եվ դու չգիտես, այո՛, չգիտես.
Ե՞րբ եմ, ես ե՞րբ եմ տառապել այսպես,
Լցված եմ, լցված եմ միայն քեզնով։
Չգիտեմ, ցու՞րտ է, թե պարզապես զով,
Ջերմացրու, ջերմացրու, մրսում եմ ես.
Լցված եմ, լցված եմ միայն քեզնով,
Եվ դու չգիտես, այո, չգիտես։

1999

* * *

Դու մի ուրիշ սեր էլ ունես,
Օ՜, տեսնու՞մ ես, ոնց եմ խանդում.
Ես շինում եմ, մինչ դու քանդում...
Դու մի ուրիշ սեր էլ ունես։
Շատ է տվել մեր Տերը քեզ,
Դրանով ես պնդում, թնդում.
Դու մի ուրիշ սեր էլ ունես,
Օ՜, տեսնու՞մ ես, ոնց եմ խանդում։

1999

* * *

Այ թե գինի լինեիր,
Ես միշտ պատրաստ ըմպելու.
Թե անձրև թախանձեիր,
Պատրաստ էի ամպելու.
Թե ձոներ հորինեիր,
Ես պատրաստ տպագրելու։
Ա՜խ, լինեիր, լինեիր,
Ես պատրաստ հանդիպելու։

1999

* * *

Ես չգիտեմ, սիրու՞մ է,
Թե՞ պարզապես ձևանում.
Գիտի՞, թե ինչ է անում.
Ես չգիտեմ, սիրու՞մ է։
Այլևս ինձ տիրում է,
Եվ ուր ուզում է, տանում.
Ես չգիտեմ, սիրու՞մ է,

Թե պարզապես ձևանում։

2000

* * *

Մենք այդպես էլ իրար չեկանք,
Եղանք մի քիչ թեթևամիտ.
Հարցուփորձում՝ մանրակրկիտ,
Մենք այդպես էլ իրար չեկանք։
Կյանք է էլի, մի քիչ խաբկանք՝
Երազների անծիր հովիտ.
Մենք այդպես էլ իրար չեկանք,
Եղանք մի քիչ թեթևամիտ։

2000

* * *

Թե որ իմ շիրմին
Այցելու լինես.
Մենակ ես, ջանս՝
Դու՛ լինես և ես։

Լինենք անկաշկանդ,
Լինենք անմեկին,
Կրկին ու կրկին
Կամքով հնավանդ։

2000

* * *

Քեզնից նամակ չեմ ստանում
Արդեն երկար ժամանակ.
Շատ եմ, օ՜, անհանգստանում
Հեռավորս դու միակ։
Գրիր, գրիր, առաքիր
Թող այն ինձ հանգիստ բերի,
Իմ կասկածները հերքիր,
Չմնամ վշտիս գերի։

2000

* * *

Քո սև աչքերի որոգայթներում
Ես մոլորվեցի ու ելք չգտա.

Ամեն հանդիպած դռնով ներս մտա
Քո սև աչքերի որոգայթներում։
Ինձ չէր վիճակված քո անհայտներում
Լուծումներ գտնել, ջանս, հավատա,
Քո սև աչքերի որոգայթներում
Ես մոլորվեցի ու ելք չգտա։

2000

* * *

Չգիտեմ, թե ի՛նչ ես անում,
Լռել ես ու ձեն չես հանում.
Ոչ ճախարակ ես պտտում,
Ոչ իլիկով թել ես մանում։
Չգիտեմ թե ինչ ես անում
Խելքս առել, ուր ես տանում.
Ասա, ինչի տեղ ես դրել
Ոչ ձգում ես, ոչ էլ վանում։
Չգիտեմ, թե ինչ ես անում,
Գործդ ունի՞ գեթ անվանում,
Բաց թող, բաց թող գործիս գնամ,
Առանց աղա էլ ի՞նչ խանում։

2000

* * *

Հիշիր, մեր կյանքի առաջին կեսն էր,
Մտերմանալու փորձնական ծեսն էր,
Խանգարվեց, խանգարվեց անգթաբար,
Մեր խաչելության, օ՜, Արտագերսն էր։
Մեր կյանքի երկրորդ կեսն է ավարտվում,
Սիրո, կարոտի վերջը հավաստվում.
Օ՜, միևնույն է, սիրո հեքիաթը
Նա կա ու երբեք չի համառոտվում։

2001

* * *

Դու այնքան, այնքան գեղեցկացել ես,
Խոստովանում եմ, չճանաչեցի,
Չհամարձակվեցի, քեզ չկանչեցի...
Դու այնքան, այնքան գեղեցկացել ես։
Թվում է՝ արդեն օտարացել ես,
Հույսս, հավատա, ափսո՛ս վատնեցի.

Դու այնքան, այնքան գեղեցկացել ես,
Խոստովանում եմ՝ չճանաչեցի։

2001

* * *

Մեր Նշանը Ձեզ սիրում էր,
Օ՜, Դուք անշուշտ գիտեիք.
Նուրբ նազանքով գերում էիք,
Մեր Նշանը Ձեզ սիրում էր։
(Երկուսին էլ տարար, օ՜, Տեր
Համբարձվեցին առ երկինք).
Մեր Նշանը Ձեզ սիրում էր,
Իրո՞ք, Դուք այդ գիտեիք։

2001

* * *

Ահա դառնում,
Վերադառնում
Ու գտնում եմ քեզ
Վաղու՜ց, վաղուց
Առաջվա պես
Երջանիկ եմ ես.
Փույթ չէ՝ երազ
Դու հանապազ
Օ՜, կաս, միշտ կաս.
Մեղմ ժպիտով
Հույժ կարոտով
Նայում վրաս
Հատու, անկաս,
Երբեմն այսպես
Գտնում եմ քեզ
Միշտ ժպտադեմ՝
Անսուտ եղեմ։

2001

* * *

Ես քեզ սիրում եմ,
Մինչ դու, ո՞վ գիտի,
Գիտցյալն ո՞վ պիտի
Ես քեզ սիրում եմ։
Սիրո հրում եմ

Հանուն հավատի,
Ես քեզ սիրում եմ,
Մինչ դու, ո՞վ գիտի։

2001

Սեր (էքսպրոմտ)

Քո հայտնությամբ նորոգվեցի,
Կենդանացա վերստին,
Ընդդիմացա մոլեգնաբար
Բամբասանքին ու ստին։
Առաջվա պես քեզ զգվեցի,
Անկախ շոգին ու ցրտին...
Օ՜, բարբաջանք խենթ¬խելագար,
Այն էլ կյանքիս ավարտին։

2001

* * *

Օ՜, նա պայծառ էր, ադամանդափայլ
Չէի ունեցել հանդիպում մի այլ
Որ մնար իմ մեջ հավիտենորեն ջինջ՝
Անսահման անդորր և հոգեզմայլ։

Պարագաներում խառն ու այլ և այլ,
Նա նուրբ հմայքով ու թեթևաքայլ
Սիրով ուղեկցեց, եղավ ուսուցիչ՝
Չլինել ժլատ, չլինել շռայլ։

2001

* * *

Մեր այն վերջին հանդիպմանը
Նախ դու, նախ դու բարևեցիր.
Դու այդ օրը ուրիշ էիր՝
Հոգուս մութը չարևեցիր։
Խոր, քննախույզ աչքերում քո
Ինձ անծանոթ հոգսեր կային.
Տագնապի պես մի արտաքո
Անկոչ ստվեր արտերկրային։
Ոչ, ոչ, ոչ մի առիթ չկար,
Արդյո՞ք հուշ մի նոր արթնացել,
Ցանկություն մի, որ անկատար

Դեռ չի խամրել, լուռ մնացել,
Հանկարծահաս պտտահողմ
Պարուրել քեզ, բաց չի թողնում,
Նույնն է, նույնն է, օ՜, ամեն կողմ,
Որ մարդու միտք է խճողում։
Օ՜, սթափվիր, ըմբռնիր որ
Վաղուց արդեն սահմանասանձ
Անց են կացել թավագլոր,
Պահերն անանց, անգերազանց,
Որ մերն էին, օ՜, երբեմնի,
Կորուսյալ են, արդ մերը չեն.
Ետ նայել, օ՜, մի հանդգնի,
Որքան էլ որ սիրով կանչեն։

2001

* * *

Օ՜, մենք միմյանց լավ հասկացանք,
Սահման դրինք ու այն չանցանք.
Այո՛, չեղանք պայմանազանց,
Չկայացավ մեղք ու հանցանք։
Չըհամարենք այս լոկ պարծանք,
Բարի գործ էր, արինք-պրծանք.
Մենք՝ ձկնորսներ, պարզ կարթ ու ցանց,
Չկնաբեռով գոհ տուն դարձանք։

2001

* * *

Աշխարհը ընկած քեզ եմ որոնում,
Ու թե չկաս էլ, սիրով հորինում,
Դե, ե՛կ, հայտնվի՛ր, որ դադար առնեմ.
Մտքիս եկածը շուտ եմ մոռանում։
Հաճախ եմ մտքում գնում, հեռանում,
Անտակ անդունդներ իջնում, խորանում…
Դե, ե՛կ, հայտնվի՛ր, վերջ տառապանքիս.
Ճիշտ ես, թե՞ սուտ ես, ու՞ր ես հեռանում։

2001

* * *

Պահը հանդիպման ճի՞շտ եմ որոշել,
Թե վրիպել եմ նաև այս անգամ,
Խոստացել էիր՝ «անպայման կգամ».

Պահը հանդիպման ճի՞շտ եմ որոշել։
Արդ թե մոլորվել, սխալ եմ հիշել,
Ջանս, չկարծես, որ արդեն չկամ.
Պահը հանդիպման ճի՞շտ եմ որոշել,
Թե սխալվել եմ նաև այս անգամ։

2001

* * *

Մեր կանգառում սպասում եմ,
Որքան գալիս, նույնքան գնում.
Մենակ ես եմ մենակ մնում…
Մեր կանգառում սպասում եմ։
Ես իմ աչքում պակասում եմ,
Ինձ էլ բանի տեղ չեն դնում.
Մեր կանգառում սպասում եմ,
Որքան գալիս, նույնքան գնում։

2001

* * *

Դու ինձ կարո՞ղ ես ներել,
Որ անունդ մոռացել եմ.
Չէ՞ որ վաղուց հեռացել եմ...
Դու ինձ կարո՞ղ ես ներել։
Շիրմիդ ծաղիկներ եմ բերել,
Ես ծնկաչոք կեռացել եմ.
Դու ինձ կարո՞ղ ես ներել,
Որ անունդ մոռացել եմ։

2001

* * *

Տեսիլներ սահեցին, անցան,
Տեսիլանման փերիներ.
Օ՜, սուրբ պահեր զարմացման,
Քնքույշ, սիրո գերիներ։

Որպես երազ, որպես ցնորք՝
Կարճատև ու վաղանցիկ.
Ու խամրեցին ձիրք ու շնորհք
Թեթև-թեթև, թափանցիկ։

2001

* * *

Կանգնել մեր հին խաչմերուկում,
Եկել եմ քեզ ընդառաջ.
Նայում եմ ձախ, նայում աջ.
Կանգնած մեր հին խաչմերուկում
Հայացքներից և ոչ մեկում
Ոչ վարդ տեսա, ոչ կակաչ
Կանգնել մեր հին խաչմերուկում,
Եկել եմ քեզ ընդառաջ։

2001

* * *

Մեկական համբույր փոխանակեցինք,
Ու այնուհետև, ասես ընկեցիկ,
Միմյանցից փախանք, անէացանք
Ու մինչև այսօր չհանդիպեցինք։

Կուզեի, սակայն, հնար գտնեինք
Մեկ անգամ ևս, օ՜, համբուրվեինք.
Ու այդ կլինի հրաշքի պես բան,
Այս անգամ միմյանց սիրտ կմտնեինք։

2002

* * *

Նայեց մի հեղ, օ՜, նրբագեղ,
Մի քիչ էլ շեղ, շող ու շքեղ,
Թե «Ընդունիր լռության մեջ
Սուրբ ու անմեղ». իսկ որ ձայնեղ։

Թող, որ անմեղ
Օ՜, սիրազեղ
Դու կայծակող
Ջիգզագաշեղ։

2002

* * *

Ինձ երբեք այնպես չէիր ժպտացել,
Ինչպես այս գիշեր՝ մի պահ երազում.
Ժամ ու ժամանակ, այդ ու՞ր եք վազում…
Ինձ երբեք այնպես չէիր ժպտացել։

Գիտե՞ս, դու այնպես լավն ես մնացել,
Դու է՛լ առավել քնքշորեն նազում.
Ինձ երբեք այնպես չէիր ժպտացել,
Ինչպես այս գիշեր՝ մի պահ երազում։

2002

* * *

Երբեմն-երբեմն երազ ես գալիս,
Ալեկոծում ես ու… անէանում.
Չգիտեմ, զգու՞մ ես, թե ինչ ես անում…
Երբեմն-երբեմն երազ ես գալիս։
Եղար, մնացիր ու կաս, անձկալիս,
Փույթ չէ, որ օրօրեն ինձ քիչ է մնում.
Երբեմն-երբեմն երազ ես գալիս,
Ալեկոծում ես ու… անէանում։

2002

Նվիրումներ

* * *

Լուռ նստել եմ քարի վրա -
Փրփուր կապած ժեռ ափին.
Ծով, քո երգն եմ լսում ահա,
Երբ զարկվում ես քարափին:

Ծով, քո երգը ինձ սիրելի,
Երկրիս աշնան հողմի պես.
Արհավիրքը քո՝ ներելի,
Քանզի անծի՛ր, անհուն ես:

Եվ շեղջերդ երբ ցրում ես
Ծիածանով բազմերանգ -
Այս ժայռերում ես լսում եմ
Հուզող հազար արձագանք:

Ծով, քեզանից չեմ բաժանվում
Քո փոթորկի այս ժամին.
Մեծ հուզմունքդ եմ բաժանում –
Սրտիս առնում իր բաժին:

Նստել եմ ժեռ քարի վրա -
Փրփուր կապած ծովափին,
Երգս խառնած երգին նրա,
Ու հայացքս քարափին,

Լուռ, ինքս ինձ միտք եմ անում –
Այս ծովի պես լայն ու խոր.
Նոր զգում եմ, թե աշխարհում
Որքան փոքր եմ ու անզոր:

1938

* * *

Ու՞մ հիշատակն ես այդպես դարեդար
Հավերժին տանում քանդակված խաչքար.
Այն Վարդապետի՞,

Որ սերունդներից հիշվելու համար,
Կտակեց շիրմին կանգնեցնել խաչքար.

Թե՞ այն Վարպետի,

Որ մեր Հայկական հանճարով ճարտար,
Սրբագործեց քեզ - անհաց, անվճար:

Ու՞մ հիշատակն ես այդպես անվթար,
Տանում դարեդար, մամռոտած խաչքար,
Այն Վարդապետի՞,
Թե՞ հայ Վարպետի:

1941

Երբ Կերչը ընկավ

Մանուկին և Գուրգենին

Իմ սրտում այժմ ոչ մի երգ չկա.
Լռել են բոլոր զանգերը հնչուն.
Հողմերն են միայն սանձակոծ ու չար
Հոգուս ծերպերում ցրտահար փչում:

Եվ որպես դաշտի կարկտահար արտ,
Հպվել եմ հողին ու չեմ նայում վեր.
Իմ ցնորքների տաճարն անարատ
Մեկեն կործանվեց ու դարձավ ավեր:

Իմ սրտում այժմ ոչ մի երգ չկա.
Չեմ հիշում անգամ խոստումներս սուրբ.
Հաղթանակ էի փափագում, սակայն
Պարտության բոթն է խեղդում անհագուրդ:

Օ՜, եթե հույսի կայծը չմարի,
Հրդեհվի նորից մի նոր այգաբաց,
Զինավառ ելնեն գնդեր քաջարի,
Գրոհի գնան ահեղ, սրընթաց,

Ջախջախեն, կախեն երիցս անիծյալ,
Նեռ, ուխտադրուժ, տապաստ թշնամուն.
Ու թոհ ու բոհն այս դառնար լոկ անցյալ…
Օ՜, եթե նորից գար խաղաղություն:

1942 մայիս

* * *

Ճայեր,

Ճերմակ ճայեր.
Ելման ծովի ալիքից
Ի՞նչ եք ուզում հեռու պահել,
Փրկել անհետ կորստից:

Ճայեր,
Ճախրող ճայեր.
Փրփուր ծովի մութ խորքից,
Օ՜, չեք կարող գանձ դուրս հանել,
Կզրկվեք թևքերից:

Ինձ չեն լսում բյուր ճայեր,
Իրենց երգով ու հևքով
Ճախրում են լուռ, վար ու վեր,
Ծեծում ալիքը թևքով:

1950

Դ. Դեմիրճյանին

Էտ է, հասար,
Բան չմնաց,
Մի քիչ էլ.
Քեզ հավասար
Մարդ չմնաց,
Մի քիչ էլ.
Ասա, ասա
Ինչ չես ասել,
Չես հնչել,
Քեզ է մնում
Մահասառսուռ
Մի ճիչ էլ:

1950

Ճարտարապետներ
Կվելկմեյերին և Տոկարսկուն

Դուք, որ սիրում եք մեր քերթությունը,
Այդ նրանից է, որ անկեղծ է այն.
Դուք հաճույքով եք մտնում մեր տունը,
Ձի սրտերն են մեր սեղանի պես լայն:

Ի՞նչ փույթ, հեռու են հարավն ու հյուսիսը,

Բայց մոտ են սրտերը, մտքերը անեղծ.
Այդպես անարատ է զի մեր Մասիսը,
Այդպես հյուսիսն է որոգայթից զերծ:

1953

Նոր Տարու մաղթանք

Ավ. Իսահակյանին

Մեր կուռ բարբառով դարավոր ու հին
Խաղաղություն ես մաղթում աշխարհին.
Մղում խիզախման դեպի աշխատանք,
Կերտելու պայծառ հեքիաթային կյանք:

Մեծին, մանուկին, կնոջն, ամուսնուն,
Հղում ես կերտել անխախտ տեղ ու տուն.
Գործվորին՝ գործի, ռամկին՝ դեպի դաշտ,
Ուսումնավորին՝ ձգտման բարեպաշտ:

Իսկ քեզ, ով Վարպետ մեր քաղցրաբարբառ,
Կյանք ենք ցանկանում հավիտենաբար.
Զի դու հայրն ես մեր, նառը հոգևոր,
Հայրենի հողը՝ միշտ թե հին, թե՝ նոր:

1955

* * *

Ընկերոջը տեսնելիս, ավագ եղբորս եմ հիշում,
Ու նա կորավ հեռավոր խավարում ու մշուշում.
Արև չկար, լույս չկար և փրկության հույս չկար,
Ու հողմն էր լոկ անտարբեր ողջը առնում ու քշում:

Տարավ, տարավ ու տարավ մինչ ափերը հեռավոր,
Հեղեղի պես ներս առավ կենդանի ու վիրավոր,
Փոշի դարձուց ու առավ ու շաղ տվեց աշխարհով,
Մարդը անզեն ու անոգ, լոկ ուժը կար զորավոր:

Ընկերոջը տեսնելիս, ավագ եղբորս եմ հիշում,
Մինչև այսօր մտքիս դեմ հողմն է առել ու քշում:

1960

* * *

Իմ Սուսամբար հորատատը

Տարբերում էր լավն ու վատը.
Ով խառնվեր նրա գործին,
Ինքն էր վարում նրա դատը։

Բայց ասում են, հաճախ նա էլ
Հավասար չէ որդոց նայել.
Խորթին զրկել ու այպանել,
Օ՜, չար արարք, միշտ անվայել։

1978

Ալբ. Ստ.-ին

Հանդիպում էինք,
Բարևում, անցնում.
Միմյանց գիտեինք՝
Մոտիկ անցյալում
Գործակցում էինք
Մի մեծ կառույցում։
Երիտասարդ էր,
Եռուզեռով լի.
Գնում էր նա վեր,
Ուր որ բաղձալի
Անուն կար, պատիվ,
Եվ փառք, և պաշտոն,
Եվ գիշեր և տիվ
Մուտքի մոտ օթոն…
Բայց վայրիվերո
Մի թեթև հողմից
Խիստ տկարացավ,
Չելավ անկողնից։
Այսպես ընդհատվեց
Բարևը բարի.
Մի ծառ էլ հատվեց
Վերի անտառից։

1979

* * *

Նրա տարիքը երեսունվեց էր,
Կյանքի կարոտը անսահման մեծ էր,
Բայց պատերազմ էր, անվերջ կոտորած-
Մահվան ճիվաղը խենթ, սանձազերծ էր։

Ու բյուր անգամ բյուր հարյուրապատիկ,
Բոլորը ջահել ու քաջամարտիկ,
Գնացին հեռու ու ետ չդարձան,
Մարտիրոսվեցին որպես ֆանատիկ:

Նա էլ նրանց հետ-միասին էին,
Ընկերներ էին սիրով, նոր ու հին.
Բոլոր, բոլորը լռեցին հավերժ,
Արդ նրանց հետ եմ՝ կյանքիս ավարտին:

1979

Պապիին

Պապին էլ գնաց էս լույս աշխարհից
Էն մութ աշխարհը անէության.
Դե ո՞վ կարող է խուսափել մահից,
Ցավոք հավերժ է այդ «խենթը» միայն:

Պապին էլ գնաց ու հասավ մերոնց,
Ա՜խ, երանի թե տեսնեին միմյանց,
Պատմեին իրենց ցավը խորախոց,
Որ մնաց անբույժ վշտի պես անանց:

Պապին, այդ բարի, այդ անչար մարդը,
Որ իրեն պես էր աշխարհը կարծում,
Չտեսավ ո՞նց են լարել թակարդը,
Որտեղից չկար փրկություն-պրծում:

Եվ ընկավ, ելավ, ու քանի անգամ
Ճաշակեց կյանքի դժոխքը անել,
Եվ ամեն անգամ ասեց, թե «կգամ»,
Ու հաղթահարեց ամենայն արգել:

Սակայն այս անգամ անուժ էր – սնանկ,
Այս անգամ հաշտվեց ճակատագրի հետ.
Թև-թևի տված ասացին «գնանք»,
Գնացին հավետ, ցավերին անգետ:

1980

* * *

Օ՜, շքեղաշուք գերազնիվ տիկին,
Ծով հմայքներիդ վաղեմի գերին

Այսօր էլ ահա քեզ հետ է կրկին:
Ըմբոշխնիր կյանքի պարգևը վերին,
Քանի դեռ նա կա և ունակ է դեռ.
Լայն սավառնումի կամքը թևերին:
Օ՜, շքեղաշուք գերազնիվ տիկին,
Դեռ առաջվանն ես՝ ամենով հարուստ,
Որ ունես վերուստ – Տերդ անմեկին:
Դե ժամանակն էլ տագնապներ ունի,
Ամեն ինչի մեջ հոլովույթը կա,
Ամենակուլ է մութը անհունի:
Օ՜, շքեղաշուք գերազնիվ տիկին,
Շտապենք քանի գիշեր չի իջել,
Թևավորներ են ճախրում մեր հերկին:
Օ՜, շքեղաշուք գերազնիվ տիկին,
Գերազնիվ տիկին:

1980

* * *

Քեզ ինչ անուն տամ, Վախթանգ Բերիձե.
Օ՜, չեմ ներելու, որ չար ես այդքան.
Մեր վեճը, գիտես, երդում ու իղձ է,
Ու անզիջում է, պապերի պատգամ:

Հիմա եկել դու ու տեր ես կանգնում
Մեր կոթողներին՝ երկունքով օծված,
Կարծես այդ քիչ է, նաև հանդգնում,
Արհամարհում ես ձևերով փորձված:

Նսեմացնում ես քեզ վիճարկողին
Ոչ թե գիտական պարզ հողի վրա,
Այլ հայհոյանքով (հատուկ է գողին),
Որ հույս է դնում կեցվածքին իրա:

Ինձ չի կաշկանդում քո դիրքն ու կիրքը,
Ու նաև հոգս չէ քո ով լինելը.
Ես օրհներգում եմ պապերիս ձիրքը,
Նրանց հատուկ չէր խենթ հայհոյելը:

1982

* * *

Զարմանալի չար աչք ունես,
Ինչի նայում՝ շուռ է գալիս.

Մի՞թե դա քեզ դուր է գալիս։
Զարմանալի չար աչք ունես։
Ինքդ քեզնից վախենում ես,
Ու թախծում ես, գաղտնի լալիս։
Զարմանալի չար աչք ունես,
Ինչի նայում՝ շուռ է գալիս։

1982

* * *

Ծովը ալեկոծվել է,
Բերնեբերան լցվել է,
Հա զարկվում է ափերին,
Շուրջ-բոլորը թացվել է։

Օ՜, իմ սիրտն էլ ալեկոծ՝
Շրջափակված մի ամրոց.
Ընդվզում է, ելք չունի՝
Շուրջը կրակ, ծուխ ու բոց։

Կհանդարտվի, օ՜, շուտով
Ծովը խաղաղ, անվրդով։
Իմ ամրոցն ինչպե՞ս լքեմ,
Հեռանամ ես ի՞նչ սրտով։

1982

* * *

Վեր կենամ, գնամ, ծովափով անցնեմ,
Հուզմունքով լցվեմ հորդ ալիքների,
Ու պատմեմ վիշտս, ու չթաքցնեմ,
Ու հանգստանամ ցավից վերքերիս։

Վեր կենամ, գնամ, ծովափով անցնեմ,
Ջրերից առնեմ վերջին կարոտս,
Ու սիրտս այրող հուրը հանգցնեմ,
Որ պայծառ բացվի նոր առավոտս։

Վեր կենամ, գնամ, ծովափով անցնեմ,
Թերևս այս է իմ վերջին այցը.
Նրա ջրերում լիք-լիք լվացվեմ,
Օրհնությամբ օծեմ այս այգաբացը։

1982

* * *

Տխուր, տխուր են աչքերդ,
Թախիծդ անսահման է երևի.
Անցած օրվա հետ մարել տենչերդ,
Դեմ առել ճամփեդ անագորույն դևի:

Մթնել, մթնել ես անկարեկից.
Մինչ թիկունքդ երեք հազարամյակ.
Ինչ են ուզում քեզնից հեռու և դրկից,
Դարանում ճամփեդ կողքից և ահյակ:

Տխուր, տխուր են աչքերդ:

1982

Վ.Ս.-ին

Հայի աչքեր ունի,
Ներսում՝
Թաքնված թախիծ.
Հետքերն են հնի
Խոսում -
Վշտերն անպարագիծ:

Հայի աչքեր ունի.
Նայում է հեռու -
Հեռվին.
Թվում է, ուզում է
Քնի -
Այրվի երազի հրում:

Հայի աչքեր ունի,
Իսկ խորքի ծալքերում
Սրտի
Անորոշը անհունի,
Եվ անանց դողը
Ցրտի:
Հայի աչքեր ունի:

1982

* * *

Հեռվի ձայն առա - այն լաց ու կոծ էր,

Մթի մեջ կորած գերմեզմանոց էր.
Հուղարկավորնե՞ր ¬ ոչ, չերևացին…
Հեռվի ձայն առա - այն լաց ու կոծ էր:

Ծուխ էր բարձրանում ¬ կրակ ու բոց էր,
Ու ճարճատում էր - անմար հնոց էր.
Հեռվի ձայն առա - այն լաց ու կոծ էր,
Մթի մեջ կորած գերեզմանոց էր:

1983

Արամ Ղանալանյանին

Իմաստուն էր մեր Արամը,
Նա սիրելին էր բոլորիս.
Աշխատանքում, նաև տանը,
Եվ խոսելիս, և պատմելիս
Միշտ ներկա էր տակտ¬սահմանը:
Տեղը-տեղին համ ու հոտը,
Հանց մայիսին հնձած խոտը,
Ու ծաղիկը-ցողը վրան…
Ես այդպես եմ հիշում նրան:

Իմաստուն էր մեր Արամը,
Նա սիրելի էր բոլորիս:

1983

* * *

Վերջին խոսք մի … ու լռեցիր,
Քո ռուբիկոնը անցար.
Քունդ եկավ – ու քնեցիր,
Քնեցիր ու չարթնացար:

Ու փակեցինք բաց աչքերդ,
Թաց աչքերդ մթամած.
Ու խաչեցինք զույգ ձեռքերդ -
Ախատանքում կոշտացած:

Պատանեցինք դագաղի մեջ,
Ծաղիկներով ծածկեցինք
Ու հեծկլտաց տխուր մի վերջ,
Նվագի հետ թափանցիկ:

Կափարիչը դեմքդ ծածկեց,
Ու դագաղը սահեց ցած:
Լռությունը երգ խնկարկեց
Հոգիներում կարկամած:

Ու գոյացավ շիրիմ մի թարմ -
Ներսում աճյուն մի հանգչող.
Կանցնեն տարիք, նա կդառնա
Ջերմ հայրենիք, սիրած հող:

1983

* * *

Առաջվա պես տունդ եկա,
Իսկ դու, պապիկ իմ, չկաս.
Սպասում եմ, աստված վկա,
Չկաս, չկաս ու չկաս:

Թվում է թե մոռացել եմ,
Որ երեկ էր քեզ տարանք…
Լոկ քնել ու արթնացել եմ,
Այս էլ իրական զարմանք:

Բայց դե էլի սպասում եմ,
Համաձայն չեմ, որ չկաս.
Ձայնդ այնպես դեռ լսում եմ,
Դեռ հույս ունեմ, որ կգաս:

1983

* * *

Խայամը գինով էր, գինով էր,
Ով տեր, այդ հոգսից, թե՞ սիրուց.
Ինքն էլ չիմացավ, թե ով էր,
Ապուրն էր կորեկից, գարուց:

Խայամը գինով էր, գինով էր,
Գինուն էր անվերջ գովերգում.
Վերքերին նա դարման չուներ,
Գինով էր հոգսերն իր հոգում:

1983

* * *

Խայամն երկու շահ ունեցավ,
Մեկն այն էր, որ երգ գրեց,
Մեկն էլ՝ գինով լավ լիացավ,
Տրտմությունը փարատեց։

Անուշ գինին իրեն մնաց,
Մինչ երգերը՝ մեզ.
Երգը թողեց, ինքը գնաց -
Գինովցած - հրկեզ։

1983

* * *

Դեռ այսօր էլ ամեն մեկը մի թավադ,
Միշտ քեֆի մեջ՝ գինի, օղի ու գավաթ,
Բաժակաճառ՝ երկար ու ձիգ - շաղակրատ…
Դեռ այսօր էլ ամեն մեկը մի թավադ։

Ու խմբերգը դեռ ձգվում է, ալիքվում,
Եվ պատրանքը հավատարիմ՝ չի լքում.
Պատարագի մեղեդին է մեղմ զգվում…
Ու խմբերգը դեռ ձգվում է, ալիքվում։

Ստի կյանքը քառասուն օր է տևում,
Նա էլ անցավ, մնաց հեռու՝ ետևում.
- Ինչ-որ մեկը սպիտակ պատանք է ձևում…
Ստի կյանքը քառասուն օր է տևում։

1983

* * *

Իմ սերունդը ճերմակում է.
Կյանքի դժար ճամփեքին
Ինչ որ ցրել՝ հավաքում է,
Ուշիմ երկնած իր բերքին։

Իմ սերունդը ճերմակում է,
Դառնում վսեմ, ծանրախոհ.
Իսկ կյանքն այնպես կատակում է,
Նյութում անվերջ թոհ ու բոհ։

Իմ սերունդը ճերմակում է,
Իսկ կյանքը բիրտ ու հոռի,
Օտարի պես մտրակում է -

Քշում քարվանն օրերի։

Իմ սերունդը ճերմակում է,
Բայց ահա նոր գարնան հետ
Նոր սերունդը աղմկում է,
Բացում մի նոր արահետ։

Իմ սերունդը ճերմակում է.
Ով նոր սերունդ թխահեր,
Զգույշ, կյանքը կատակում է,
Եղիր ուշիմ, աներեր։

Չմոռանաս գանձերն ամեն,
Որ ստանում ես ընծա.
Չմոռանաս զրահ ու զեն,
Ու կյանքը քեզ կցնծա։

1983

* * *

Ես արել էի,
Իսկ նա կրկնել է.
Մինչ կարծել էին,
Որ նա երկնել է։

Մեծ պատիվ տվին,
Թմբկահարեցին.
Ինչպես սուրբ կկվին,
Խոր խոնարհվեցին։

Ես արել էի,
Իսկ նա կրկնել է.
Ու որոշեցին՝
- Նա էլ երկնել է։

1983

* * *

Մեծ վարպետը ինձ գովեստի խոսք ասեց,
Երևի թե ինձնից լավ գործ սպասեց.
Չերևացի հորիզոնում, սակայն ես,
Երևի թե ծածուկ-ծածուկ ափսոսեց։

Մեծ վարպետը ինձ գովեստի խոսք ասեց.

Ակնածեցի, հապաղեցի, սակայն ես.
Մինչ վարպետը շտապում էր, չսպասեց…
Ու թևաթափ, ու հուսախաբ եղա ես։

1983

* * *

Ասում են տկար ես, Սոս.
Ասում են տեղդ նեղ է.
Էս դժվար, դժվար կռվում
Զենքդ նետ ու աղեղ է։

Հիշիր, Հայկ նահապետը
Նետ ու աղեղով կռվեց.
Թող չասեն, «Ճարտարապետը
Թույլ քամուց ծռվեց»։

Դե ապաքինվիր, մեր Սոս,
Որ մենք էլ ուրախ լինենք.
Որ չասենք «հեյ վախ, ափսոս,
Էս ինչ օրի ենք»։

1983

Ասատուր Մնացականյանին

Սպասում էի շուտ ապաքինվես,
Մահիճը թողած ելնես զբոսանքի,
Ասես, ծիծաղես, նաև բորբոքվես,
Ընդդեմ ծառանաս խենթ բամբասանքին։

Սպասում էի շուտ ապաքինվես…
Մինչ գուժը մահվան արծարծվեց անգութ.
Ափսոս, տագնապս ոչ ոք չհերքեց,
Սև շրջանակվեց պատկերը քո լուրթ։

1983

Նշանին

Մեկնելուց առաջ դու չսթափվեցի՞ր,
Որ թողնում ես ինձ մենակ, մե՛նմենակ.
Իմ խաղաղ օրը այնպես խռովեցիր,
Հետո խնդացիր կես լուրջ, կես կատակ։

Այնպես գնացիր, այնպես հեռացար,
Կարծես գիտեիր, որ էլ չես գալու,
Ու Քրիստոսի պես դու էլ սրբացար,
Ակնածանքով ենք արդ քեզ նայելու:

Հետո… որ տեսանք շատ տխուր էիր,
Մտախոհ էիր՝ երկրից վերացած:
Դեռ վերադառնալ, գիտեմ, կուզեիր,
Թե որ տան ճամփեն չլիներ փակված:

1983

Աշխատանոցում

Վարդանը հենված գրասեղանին
Հաճախ ննջում է ու մերթ էլ քնում.
Վատ չէ, իհարկե և այդ «սպեղանին»,
Դե մեծացել է, նա էլ է հոգնում:

Նույնն է պատահում ու նաև ինձ հետ,
Զերծ չեն այդ «մեղքից» և ուրիշները.
Վատն այն քունն է, որ գալիս անհերթ
«Վարդը» տանում է, թողնում «փշերը»:

1983

* * *

Երգի՛ր, սիրտ իմ, մեղմիվ երգիր,
Ի՞նչ փույթ մի քիչ բաղաձայն ես.
Գիտեմ, ինձ հետ համաձայն ես,
Դե ուրեմն երգի՛ր, երգի՛ր։

Շառլը անցավ երկրից-երկիր,
Բաղաձայն էր… համաձա՞յն ես…
Երգի՛ր, սիրտ իմ, մեղմիվ երգիր,
Ի՞նչ փույթ մի քիչ բաղաձայն ես։

1984

* * *

Իմ հիվանդին տեր կաց, աստված,
Թող օր առաջ ապաքինվի,
Ապրի, ինչպես կարգ է հաստված…

Իմ հիվանդին տեր կաց, աստվա՛ծ։

Նոր տարի է վաղը գալու,
Թող այն լինի աստեղային,
Մարդուս խաղաղ կամքին հլու…
Նոր տարի է վաղը գալու։

Իմ հիվանդին տեր կաց, աստված,
Թող Նոր տարին նրան զգվի,
Ու դառնա հյուր շատ սպասված…
Իմ հիվանդին տեր կաց, աստված։

1984

* * *

Սիրուն աղջիկներ, միշտ պայծառ եղեք,
Ջերմ, շռայլորեն ժպիտներ հեղեք.
Այս դժվար դարի մռայլը մեղմեք,
Սիրուն աղջիկներ, միշտ պայծառ եղեք։
Բյուր մանուկներով կյանքը հեղեղեք,
Սիրեք, սիրվեցեք, օ՜, ոչ, մի նեղվեք.
Սիրուն աղջիկներ, միշտ պայծառ եղեք,
Ջերմ, շռայլորեն ժպիտներ հեղեք։

1984

* * *

Թե մարդ ես՝ ադամորդի,
Լավը ցանկացիր մարդուն,
Լավը՝ լավ մարդու որդուն…
Թե մարդ ես՝ ադամորդի։

Մաղթիր պանդուխտ ճամփորդին
Ի վերջո դառնա տուն…
Թե մարդ ես՝ ադամորդի,
Լավը ցանկացիր մարդուն։

1984

* * *

Դուրս ես բերում քո խորքերից
Այսքան, այսքան քար ու ավազ,
Հետո ետ ես տանում նորից…
Էսպես անվերջ ու հանապազ։

Թանկ մի քար եմ ես կորցրել
Տարիք առաջ քո ափերում.
Դու տարել ու ետ չես բերել,
Համառում ու ետ չես բերում:

- Ետ եմ բերում, - ասաց ծովը,
Երբ անհամբեր դու հեռանում.
Երբ գալիս ես, խորքում թողած –
Ետ բերելն եմ ես մոռանում:

1984

* * *

Շիրազն այսօր Արաքսն անցավ,
Ելավ գագաթն Արարատի.
Շիրազն ահա անմահացավ,
Լրումն առավ իր հավատի:

Շիրազն այսօր Արաքսն անցավ,
Ոչ մի արգելք, ոչ մի սահման…
Ժամանակը ներկայացավ
Մեծին երգչի անմահության:

Ուխտ էր արել, մոմեր վառել,
Զրուցել էր սրբերի հետ.
Սուր հայացքը վեր էր հառել,
Մեծ որոնման մի ակնդետ:

Ու գտել էր տեղն իր էջքի,
Ու գնում էր շիփ ու շիտակ.
Ցածրում թողած բեռը մեջքի,
Որպես նշխար ու հիշատակ:

1984

* * *

Ծով, եկա և ահա դարձել, գնում եմ.
Հաճելի էր պահ մի հետդ զրուցել.
Հուր հմայքդ անանց հետս տանում եմ –
Այն, որ անեղծ ջերմ հրճվանք է հարուցել:

Ծով, եկա և ահա դարձել, գնում եմ,
Ո՞վ իմանա, թե մեկ էլ երբ կգամ հյուր.

Չէ՞ քեզ նման ես էլ շա՛տ գործեր ունեմ,
Արդ համբուրում ու գրկում եմ քեզ ամուր:

1984

* * *

Մեր խոսք-խոսելիքը կիսատ մնաց,
Մինչ գործերը անավարտ են.
Տարիները ակնթարթ են…
Մեր խոսք-խոսելիքը կիսատ մնաց:

Դուռդ չփակես, թող որ մնա բաց.
Մռմուռներս անփարատ են.
Մեր խոսք-խոսելիքը կիսատ մնաց,
Մինչ գործերը անավարտ են:

1984

* * *

Իջնեմ ծովծովափ, հետը զրուցեմ,
Խճողված հարցեր վերծանեմ, լուծեմ.
Պոկված զրույցի ծայրը հանգուցեմ…
Իջնեմ ծովծովափ, հետը զրուցեմ:

Նոր-բարի կամքի հարցեր հարուցեմ,
Ինչքան կարող եմ՝ կցեմ, կցմցեմ…
Իջնեմ ծովծովափ, հետը զրուցեմ,
Խճողված հարցեր վերծանեմ, լուծեմ:

1984

* * *

Դու էլ ունեիր մակընթացություն՝
Երբ լցվում էիր, հորդում ափերից.
Սարսռում էինք ելման չափերից…
Դու էլ ունեիր մակընթացություն:
Այժմ նահանջ է, տեղատվություն.
Ընկնում, կառչում ես նույնիսկ թփերից…
Դու էլ ունեիր մակընթացություն՝
Երբ լցվում էիր, հորդում ափերից:

1984

Վարդանին

Որ ինքն էլ էր մահկանացու,
Մտքով չէր անցնում.
Լավ ու վատը միշտ թաքցնում,
Ու սիրտ չէր բացում:

Ու ողջ կյանքում փակված մնաց –
Անհաղորդ ու լուռ.
Ու այդպես էլ հողը գնաց –
Հող դառնա մի բուռ:

1984

* * *

Մեր Վարդանի հետ մերթ զրուցում եմ,
Երբեմն վիճում, առնում ու տալիս.
Դե որ սխալ է, ապացուցում եմ,
Բայց էլի, էլի խելքի չի գալիս:

Դե ինքը չկա, նկարն է պատին.
Չեմ կարող տանել պուրակ զբոսանքի.
Գրերն եմ կարդում գրված ճակատին,
Նա, թե «Դարդերս մի տուր հանաքի»:

1984

* * *

Հայոց հայրերը վաղ են արթնացել,
Հայոց հայրերը վաղ գործի անցել.
Մինչ ժառանգները, օ՜, ուշանում են,
Ու չեն նկատում - ետ են մնացել:

Հայոց հայրերը վաղ են արթնացել,
Հայոց հայրերը, օ՜, չեն հնացել.
Մինչ ժառանգները մերթ ուրանում են,
Ու չեն նկատում – շատ են խորթացել:

Հայոց հայրերը վաղ են արթնացել,
Դարերով եկել, գալով բարձրացել.
Մինչ ժառանգները դեռ ստորոտում են,
Երկնչել, սակայն վեր չեն մագլցել:

Հայոց հայրերը վաղ են արթնացել,
Արևածագով թրծվել, ամրացել,

Ու մնացել են միշտ հավատավոր,
Անեծքներ, սակայն, չեն, չեն արծարծել:

Դու դարերն այսպես եկել, գնացել,
Ժամանակները մերթ ահագնացել,
Բայց դեռ կանգուն են հիմերը հայոց…
Հայոց հայրերը վաղ են արթնացել:

1984

* * *

Ի՞նչ օրորի ժամ է, մայրե՛ր.
Հայ մանչուկին ի՞նչ օրորոց.
Անց են կենում օրե՛ր, դարե՛ր,
Հայրենիքի դռներն են զոց:

Ի՞նչ օրորի ժամ է, մայրեր.
Բորբոքեցե՛ք կրակ ու բոց,
Մանգաղի հետ կռե՛ք թրեր,
Սուրսայր սրեր, պահե՛ք սրոց:

Դեռ գալու է, ժամ է գալու
Առճակատման մի անողորմ.
Մենք պատմության կամքին հլու,
Պիտի կանգնենք բերդեր ու որմ:

Ի՞նչ օրորի ժամ է, մայրե՛ր.
Էլ ի՞նչ երգեր՝ նանի՛-նանիկ.
Դեռ գան պիտի ժամանակներ…
Ի՞նչ փույթ՝ ձմեռ, սառնամանիք…

Ի՞նչ օրորի ժամ է, մայրե՛ր…

1985

* * *

Երկու աքաղաղ էին կանչում երեկ,
Մեր կես գիշերը դարձնելով ցերեկ.
Մորթել են թերևս մեկնումեկին…
Երկու աքաղաղ էին կանչում երեկ:

Ծուղրուղուներից մնացել է մեկ,
Այն էլ թվում է վախից ահաբեկ,
Մեկ անգամ միայն կանչեց ու լռեց -

Երբ առավոտ էր, կատարյալ ցերեկ։

1985

* * *

Գլուխ է քո ուսերին,
Թե՞ նեխած դդում.
Անտարբեր մեր հույսերին -
Ստում ես, ստում։

Գլու՞խ է քո ուսերին՝
Թյուրիմացություն.
Նոր է դառնում լսելի՝
Օ՜, խաբեություն։

1985

Ն-ին

Այդ ո՞ր պայծառ աստղն է նայել
Խանձարուրում քո օրոցքին,
Որ պահվածքով ինքնավայել
Նմանվել ես երկնացոլքին։

Արդ խոնարհվում են կոպերս -
Աչքիս լույսը խնայելու.
Դու այնքան ես զորեղացել,
Վարպետացել հմայելում։

Եկ… ու ինձնից առաջ անցիր,
Թող, որ մնամ քո ստվերում.
Ներող եղիր ու հասկացիր -
Ոնց եմ անօգ տարուբերվում։

1985

* * *

Նրանց ծարավ ջուրը տարա ու բերի,
Բայց հասկացա՞ն վերջիվերջո ինչ արի.
Թե հասկացան, երբևիցե չեն ների…
Նրանց ծարավ ջուրը տարա ու բերի։

Ահա նրանք՝ տիտղոսներով մեծամեծ,
Ինչպես տանը՝ իրենց պահում միահեծ,

Ինչ էլ ուզում, գրի առնում ինքնաստեղծ…
Ահա նրանք՝ տիտղոսներով մեծամեծ։

Միշտ կարծել են միայն իրենք «տանուտեր»,
Չիք հարևան, նրանց ինչքերը «անտեր»,
Սեփականել, չճանաչել սահմաններ…
Միշտ կարծել են միայն իրենք «տանուտեր»։

Թվացել է ամեն ինչը հեքիաթում,
Ոնց մանանա, որ երկնքից է կաթում,
Վերցրել են բաց աչքերով անթարթում…
Թվացել է ամեն ինչը հեքիաթում։

1985

* * *

Տեսնում եմ, որ հուզվում ես,
Անուրջներում սուզվում ես.
Ասա, մտքինդ ասա,
Կտամ, ինչ որ ուզում ես։

Օ՜, չես ասում, լռում ես,
Անծպտուն գոմռում ես.
Մեկ էլ հանկարծ դառնում ինձ՝
Եվ անզուսպ հռհռում ես։

Դե հասկանում եմ ես քեզ,
Հասկանում ես դու էլ ինձ.
Եվ մի՞թե լավ է էսպես -
Երկուսս էլ անկարեկից։

1985

Կաստել Ֆրանկին

Իտալուհին այն ժպտերես
Երևանից Հռոմ տարավ
Երկու համբույր իր այտերին.
Շատ թանկագին զարդեր որպես,
Նվեր որպես անգին՝ իրավ.
Իտալուհին իր այտերին
Երկու համբույր Հռոմ տարավ։

1985

* * *

Ես քո ցավով եմ ցավում,
Իմ հեռավոր, իմ որբ.
Սիրտս դառնորեն նվում
Կրակներում իմ բորբ։

Այրվում եմ ու մոխրանում,
Ու չկա փրկություն.
Ու կսկիծն է խորանում
Անամոք ու անքուն։

1985

* * *

Նոր մեկին տեսա հենց ճանապարհիս,
Թվաց, թե դու ես՝ հին ընկերուհիս.
Քո երկվորյակն էր, ո՛չ, ո՛չ, դու էիր,
Դու էիր, այո՛, այո՛, դու էիր։

Բայց ես գիտեի, որ դու գնացել…
Եվ միթե, միթե ետ վերադարձել…
Մի այլ անունով ու մի այլ վայրում…
Քեզ համար անփույթ, անտարբեր քայլում,

Չիմանալով, որ ես քեզ նկատել,
Մի քիչ վհատել, գործս ընդհատել,
Ու ընկել եմ խոր հույզերիս կիրճը -
Լավ է, չի լսվում զարմանքիս ճիչը։

Թե չէ անցորդներ անվերջ հոսանքով
Ինձ կնայեին ու ափսոսանքով
Կկարծեին, թե խախտվել եմ անհույս,
Ու չեմ տեսնելու մի նոր արշալույս։

Արդ շփոթվել եմ ու չեմ սթափվում,
Ահա երկնքից փաթիլներ թափվում
Գլխիս, կոնակիս ձյուն է կուտակվում,
Սիրտս լցվել է ու չի դատարկվում։

Սիրտս լցվել է ու չի դատարկվում։

1985

* * *

Որքա՛ն քնքշանք,
Ու փաղաքշանք -
Օ՛, մայրական
Անանց շրշանք։

Գորովագութ,
Գգվանք անսուտ,
Հույս ոգեղեն
Իջած վերուստ։

1985

* * *

Քեզնով լցված լինեի,
Քեզնից սիրված լինեի.
Դու, որ միշտ հավատացյալ -
Քո մեջ Աստված լինեի։

Թող հասկացված լինեի,
Քեզ հատկացված լինեի,
Ոչ հենց այնպես՝ մնացյալ…
Այլ կապակցված լինեի։

1985

Ծովը

Ալեկոծվել ես, ալեկոծվել ես
ալեկոծվել.
Եվ սպառնում ես, ցատկում, հառնում ես
ու գազազում.
Լցվել, լցվել ես, խորունկ ցնցվել ես
ու քարկոծվել,
Ու մռնչում ես, ու մռլտում ես
ու կակազում։

Ինչ որ ուզում ես, ինչ որ հուզում ես
ինչ որ նազում,
Ու հռհռում ես, ու փրփրում ես
ու համբուրում.
Տիտանական ես ու դյութական ես
ու դյուցազուն.
Ազնվական ես, օ՛, եզական ես,

քեզ խոնարհում:

1985

* * *

Ծովափ իջնելիս ես ամեն անգամ
Նոր խոհերով ու հույզով եմ լցվում.
Ալեկոծումը ասես դաս-պատգամ
Հոգուս ծերպերում խարիսխ է գցում:

Ծովափ իջնելիս ես ամեն անգամ
Ողջագուրվում եմ հարազատի պես.
Այդ ծով տարերքը տիեզերական
Դառնում խոյանքի հրաշք ասպարեզ

Ինձ առնում իր տաք հորձանուտի մեջ
Ու տանում-բերում, առնում ու տալիս,
Իր արարքներում անսահման, անվերջ
Ընդվզումով մի գնում է- գալիս:

Ծովափ իջնելիս ես ամեն անգամ
Վերածնվում եմ, առնում նոր երանգ.
Զգում եմ, որ դեռ գործում եմ ու … կամ,
Ու կյանքս, կյանքս թռիչք է, ճախրանք:

1985

Վազգեն Ղազարյանին

Ձախ ուսը իջել, աջը՝ բարձրացել,
Գլուխը թեքվել է ձախ.
Կյանքը թիկունքին այնքան ծանրացել,
Որ անվերջ խոհուն ու հայացքը կախ

Ծանր ու թեթև է անում օրն ի բուն
Եղելությունը էս անցնող դարի,
Որ իրար խառնել հայրենիք ու տուն,
Բորբոքել կրքեր բյուր՝ չար ու բարի:

Ձախ ուսը իջել, աջը՝ բարձրացել,
Գլուխը թեքվել է ձախ.
Տես հոգսը մարդուն ուր է հասցրել…
Այր էր երբեմնի՝ կենսախի՛նդ, ուրա՛խ:

1985

* * *

Օ՜, չար էր քո դարը, Չարենց,
Իսկ մե՞րը… մերը՝ առավել.
Մեր հոգին ձեռքի մեջ առել…
Օ՜, չար էր քո դարը, Չարենց:
Եվ ինչե՜ր ասես չարեց՝
Կործանման պատրույգ մի վառել…
Օ՜, չար էր քո դարը, Չարենց,
Իսկ մերը՞… մերը՝ առավել:

1986

* * *

Քեզ բարի ճանապարհ ես մաղթեցի,
Երբ ծեքծեքում էր վաղ առավոտը.
Երբ ծոցատետրս հետո թերթեցի -
Լուռ ծվարել էր քո ջերմ կարոտը:

Նա թափահարվեց ու պոկվեց տեղից,
Վանդակից ծլկած դեղձանիկի պես.
Ասես կծկվեցի ես սրտի նեղից,
Որ ինչ որ մի պահ մոռացել եմ քեզ:

1987

* * *

Գրաշար, օրհնում եմ քեզ.
Արդ շնորհակալ եմ ջանքիդ համար,
Որ շոգ օրերին այս կեզ
Շարում ես էջերը բառ առ բառ,
Շարում ես ոչ հենց այնպես,
Որպես կրկնվող հաջորդաբար
Արարք մի կամ պարտք որպես
Անցած օրերին այն անկատար:

Շարում ես, կշռադատում,
Եվ ընկալում մտորում ու կիրք.
Ձգվող տողերը հատում,
Կապում էջերը, ըստեղծում գիրք:

Ահա այդ գրքի համար
Եվ քո կրքի համար ու ջանքի,

Երախտապարտ ձոնս առ,
Եվ այն թող դառնա հիմնը կյանքի։

1988

* * *

Ծովը, ծովը մենակ մնաց -
Ինքը իր հետ ¬ մեն ու մենակ.
Օ՛, նա շատ էր, շատ էր խոցված
Ջրահարսից ծովաբնակ։

Նա լքում էր լույս դղյակն իր
Ու գիշերով անհետացել՝
Հորդ ջրերի զարդն երկնածիր…
Ծովն անմեկին նստե՛լ, լացե՛լ։

Ծովը, ծովը մենակ մնաց,
Հեռանում ենք ահա մենք էլ,
Ու մենք էլ ենք արդ կարկամած՝
Ծովն էլ մեզ է ահա լքել։

1988

Իմ Սուսաննային

Այս սուրբ հողը դարեր ի վեր,
Որ հայրենի օջախն է մեր,
Նենգ արարքով ավերակվեց,
Դողաց, ճեղքվեց ու բեկբեկվեց։

Ու երերաց երկիրն արար
Բութ սաստկությամբ կործանարար.
Փուլքեր, փուլքեր վայրիվերո -
Դարձան ճարակ անսանձ հրո։

Անհետացան քաղաք ու գյուղ,
Ամենուրեք մահ է, երկյուղ.
Համատարած մղձավանջում
Լոկ հայն է, որ չի նահանջում։

1989

* * *

Լավ ու վատը տարբերակիր,

Կուլ մի գնա հոգով գեշին.
Մի տիրանա նեխած լեշին…
Լավ ու վատը տարբերակիր,
Ամեն հավքի մի՛ կրակիր,
Մի՛ գործակցիր նենգ հրեշին.
Լավ ու վատը տարբերակիր,
Կուլ մի՛ գնա հոգով գեշին։

1989

* * *

Քերթող, երկնիր պարզ արվեստով,
Որ գերելով հարատևի.
Յամբով լինի, անապեստով -
Շողարձակվի ու արևի։

Թե չէ այդպես անձուկ, խրթին -
Սրտերին ոչ հասանելի,
Ու ոչ ձուլված կյանքի երթին -
Օ՛, դժվարին անասելի։

1989

* * *

Հանգիստ չի տալիս բախտը Թալեաթի,
Ու սարսռում է ճակատը ճաղատ.
Խելամիտ եղիր, ով կյուրապաղատ…
Հանգիստ չի տալիս բախտը Թալեաթի։

Գայթակղել է այգին Ջեննաթի,
Ճամփեն հատել է մի խոր հեղեղատ…
Հանգիստ չի տալիս բախտը Թալեաթի,
Ու սարսռում է ճակատը ճաղատ։

1990

* * *

Ծով, դու նույնն ես, ծով,
Ծով, դու չես փոխվել.
Դու այն ես, ինչ որ տեսել եմ վաղուց՝
Կյանքիս սկզբում.
Ես դրա համար ոչ թե նախատում,
Ոչ թե կշտամբում,
Լոկ հավաստում եմ, որ դու չես փոխվել,
Եվ ինչու պիտի փոխվեիր, ինչու,

Զի դու նախաստեղծ
Բնությունն ես Մեծ,
Որ հավերժորեն կա ու կմնա
Միշտ խաղաղ-խաղաղ
Ու մերթ հողմածեծ…
Բայց ահա ես քո հին բարեկամը,
Որ միշտ քեզ հետ եմ դրսում, թե տանը,
Քո աչքի առաջ,
Փոխվել եմ, փոխվել,
Խառը մտքերով հաճախ ամբոխվել,
Ու նաև կյանքում տրորվել-կոխվել
Խենթ կճղակավոր
Ու սմբակավոր կրունկների տակ.
Խոսքն այս թող լինի շառաչող ապտակ,
Այրի քիթ-մռութ,
Որ եղան անգութ
Լուռ շարքայինի, կերտողի հանդեպ.
Այս ամենուր էր, ցավոք նույնակերպ:
Այսպես, ուրեմն,
Սիրելի ծով իմ,
Այլևս այն չեմ,
Ինչպիսին կայի վաղ տարիներում,
Տաքարյուն էի, չէի տարբերում
Ինչը ինչոց էր,
Գառան մայուն էր, թե շան հաչոց էր…
Իսկ հիմա փորձված,
Գրեթե աստված,
Սակայն ծերացած, լրիվ ճերմակած:
Մի օր էլ, օ՜, դու կիմանաս հանկարծ,
Որ էլ չեմ գալու,
Քո տեսությանը արժանանալու:

1991

Կինը

Աստված տարբեր ստեղծեց Ադամին ու Եվային,
Եվ պատվիրեց, որ նրանք մեկ-մեկու լավ հասկանան,
Ապրեն խաղաղ ու անդորր, ապրեն կյանքով մարդկային,
Այնպես, որ նրանց միջև տեղ չգտնի սատանան:
Սակայն ամեն մի չնչին ու աննկատ ճեղքից էլ
Առանց ճիգի սատանան ազատ ներս է խցկվում,
Գունավորվում է իսկույն ու անշշուկ ցատկումով
Գնում տան մի անկյունում գաղտագողի կծկվում:

Բայց և տեղին¬անտեղի տան գործերին խառնվում
Մերթ մեկին, մերթ մյուսին դրդում, հանում իրար դեմ,
Այնքան, որ տան տերերը միմյանց ատում, առնվում…
Օ՜, շատ են, շատ դեպքերը, բոլորին էլ ես գիտեմ:

Տղամարդը, օ՜, սակայն, որ ուժեղ է ավելի,
Չի հանձնվում սատանի որոգայթին բանսարկու,
Սակայն կինը, օ՜, կինը, որ թույլ է ու նազելի,
Չի հասկանում՝ սատանան ինչ օյիններ է սարքում:
Տեղ է տալիս սատանին, հեքիաթներին հավատում,
Թաքցնում է ամուսնուց խենթ չարկամին անիրավ,
Այդ միջոցին կարճատև նա նույնիսկ չի նկատում
Թե ինչպես չար սատանան գրկըվեց, հոգին մտավ:
Այդ օրվանից երկփեղկվեց սերը Ադամ-Եվայի,
Չհասկացան, օ՜, իրար, գժտվեցին տևաբար,
Չի ներկա է կնոջ մեջ մաղձը խենթ սատանայի,
Որ գործում է անընդմեջ անզիջում ու նենգաբար:
Դժվար է, օ՜, շատ դժվար կնոջը լավ հասկանալ,
Նրա մեջ, նրա կողքին միշտ կա անկոչ հյուրը տան,
Չես կարող, վեր է ուժից հոգին ու սիրտը բանալ,
Եղել են ու կլինեն մեկտեղ՝ կինն ու սատանան:

1991

* * *

Թելադրանքով աստվածային, Վեհափառի անբեկ խոսքով,
Զվարթնոցի բոլորանիստ անմեկնելի շքեղ տեսքով,
Այստեղ պիտի հպարտ կանգներ Սուրբ Գրիգոր մայր եկեղեցին.
(Հողահատին այս բարձրադիր վիմագիր քար տեղադրեցին):
Ու լույս պիտի մի օր իջներ, սրբագործվեր մի ձեռակերտ,
Աղոթք ծորար ու մեղեդի, ու խոսք բացվեր երկնքի հետ:
Աստվածն՝ ինքը պիտի օծեր ու տարածվեր ծուխ խնկաբույր,
Պիտի ծփար հավատավոր աջահամբույր, խաչահամբույր:

Չարը, սակայն, որ միշտ էլ կույր, չհանդուրժեց, որ լույս շողա,
Խարդավանքով, դավադրաբար արևածագը շափուղյա
Հրով, մրով, ամպակուտակ վարագուրեց, օ՜, անթափանց,
Ու ամեն ինչ մթնում կորավ, մարդիկ եղան երդմնազանց.
Ու վախվորած ընկրկեցին, չարի հանդեպ իջան ծնկի,
Ցնդեց, անցավ բուրվառի մեջ սուրբ բուրմունքը հանգած խնկի:
Վեհափառին մեր սրբասուրբ տգետ մարդիկ, օ՜, չանսացին,
Աստվածառաք, գեղեցկագույն հղացումը կործանեցին:

Մեզնից հետո, դե ով գիտի, ինչ մտքեր են արծարծվելու,

Մտքից հեռու, հոգուն անգետ ինչ կրքեր են բարձրացվելու.
Ու վիմագիր այն մարմարե հուշաքարի առջև մի օր
Հազարավոր հավատավոր հուսախաբված ու գլխիկոր
Աղոթքի տեղ անագորույն անեծք պիտի արտաբերեն ,
Ու քրիստոնայք բարեհոգի չարերին իսկ պիտի ներեն:
Կորուստներով մենք հարուստ ենք, այդ մի կորուստն էլ կունենանք,
Շատ ափսոս, որ վերջին օրով ափսոսանքով պիտի գնանք:

1992

* * *

Առյուծն առյուծ պիտի ծնվի,
Առյուծի թունդ կաթով սնվի.
Ե՞րբ է կորյունն առյուծ դառնում՝

- Երբ իր աստծու օրհնանքն առնում,
Առյուծների գլուխն անցած
Սարերն ի վեր երկինք հառնում:

Մեր Կորյունը կորյուն մնաց,
Կորյուն եկավ, կորյուն գնաց.
Անկեղծ ասած՝
Կորյունից մեզ բան չմնաց:

1992

* * *

Ուզում եմ հետդ խոսել,
Ուզում եմ հետդ հոսել,
Ուզում եմ, սեր իմ գետակ,
Ցավերս հետդ կիսել:

Չէ՞ քեզ նման ես էլ,
Ինձ էլ են պատուհասել,
Հավերժահոս ու անկանգ,
Հազիվհազ քեզ եմ հասել:

1992

Էդմոնդին

Մեկնումիդ պահին դու մենա՞կ էիր,
Թե՞ ուղեկցում էր սերդ առաջին.
Օ՜, ներող եղիր հարցումիս վերջին…

Մեկնումիդ պահին դու մենա՞կ էիր:

Օ՜, մարդ աստծո, ծածուկ ձայնեիր,
Ես կներեի «հանցանքդ» չնչին…
Մեկնումիդ պահին դու մենա՞կ էիր,
Թե՞ ուղեկցում էր սերդ առաջին:

1994

* * *

Ժամանակ կանցնի, դու հուշ կդառնաս,
Կհավասարվես վաղ գնացածներին,
Էլ չես երազի փառք, պատիվ, Պառնաս,
Կյանքն այդպիսին է ու կամքն է Վերին:

Ժամանակ կանցնի, դու կմոռացվես,
Ոնց մոռացվել են վաղ գնացածները,
Կգնաս, նրանց կհավասարվես,
Կարժեքազրկվեն նախածանցները:

Հավասարվում են այդպես ամենքը,
Լոկ մեծերին է բախտը ժպտում,
Հիշում անունը, երբեմն՝ դեմքը -
Միայն թե մեկը ջերմ հետամտի:

1994

* * *

Երազներիս աշխարհը վառ ու պայծառ էր,
Հորիզոնը լուրթ լույս ու անծայր էր,
Երջանիկ էի ու բարին էր շատ,
Դիմացս շիվ մի - այն կենաց ծառ էր:

Այն ու՞մ պարգևն էր, անշահ շռայլ էր,
Այն արթմնի չէր, աշխարհ էր մի այլ,
Աստվածորեն էր, օ՜, այն հայտնվել,
Ծիածանից վառ՝ արեգնափայլ էր:

1994

* * *

Ես աստրծու հետ մերթ կատակում եմ,
Պատահում է, որ սահմանն անցնում.
Ու իրենից էլ այդ չեմ թաքցնում…

Ես աստծու հետ մերթ կատակում եմ:

Անկիրթս՝ նույնիսկ ճամարտակում եմ,
Ինչու՞ ոչ մեկը ինձ չի սթափեցնում…
Ես աստծու հետ մերթ կատակում եմ,
Պատահում է, որ սահմանն անցնում:

1994

* * *

Թոռնիկ է աշխարհ եկել,
Գալուստը բարի,
Ապրի բյուր տարի,
Թոռնիկ է աշխարհ եկել:

Եկել է ու աղմկել,
Մարդը նոր դարի.
Թոռնիկ է աշխարհ եկել,
Գալուստը բարի:

Այսօր առաջին օրն է
Նոր աշխարհ եկած այս մանկան.
Արդ մենք ենք հավաստի վկան.
Այսօր առաջին օրն է:

Մեր արտի փոքրագույն լորն է,
Տոնն է մեր ընտանեկան.
Այսօր առաջին օրն է
Նոր աշխարհ եկած այս մանկան:

1994

* * *

Գիշերը լցվում է մութ խոհերով,
Որոգայթներով ցերեկը հյուսված,
Հեռացումներով, անմեղ զոհերով,
Վիրոտ սրտերով այնքան ցավացած:

Մինչև լուսաբաց, մինչև առավոտ
Գիշերն ընդվզում, որպես երկունքում,
Քամու շուրթերին դառը մահահոտ,
Գիշերը անհույս մռնչում, տնքում:

1994

* * *

Ի՞նչ հասկացան էս կյանքից
Վաղ մեկնողները.
Ապշահար են զարմանքից
Ողջ մնացածները:

Օ՜, որքան է դյուրացել
Հաշտ ընկրկելը,
Աստված էլ է մոռացել
Գոյը փրկելը:

1995

* * *

Մեռնողները չիմացան
Ապրողները ինչ արին.
Չմնաց քարը քարին…
Մեռնողները չիմացան:

Հողն անմշակ, հերկն անցան.
Պարտք մնաց դարը դարին…
Մեռնողները չիմացան
Ապրողները ինչ արին:

1995

* * *

Շենքն այս հորինեց Գևորգ Քոչարը,
Որում երբեմնի բուն դրեց Չարը,
Մինչ ներքնահարկում խոնավ, մութ ու ցուրտ
Մգլեց, մամլվեց հայոց հանճարը:

Խանգարված անցավ քսաներորդ դարը,
Այրվեց, ճաքճքվեց լերկ որձաքարը.
Մարդը, լոկ մարդը լուռ դիմակայեց,
Ուսերին տարավ ողջ անհնարը:

Օ՜, ի՞նչ կբերի քսանմեկերորդը,
Մարդս լցվել է մինչև կոկորդը,
Դեռ կապաքինվե՞նք, թե՞ լուռ կծխի
Մոխրակույտ դարձած մեր մնացորդը:

1995

* * *

Ով էլ որ գնաց, մնաց, ետ չեկավ.
Քրիստոսը անգամ չվերադարձավ.
Երախդ լայն ես բացել, քարանձավ…
Ով էլ որ գնաց, մնաց, ետ չեկավ:

Արդ մենք ենք գնում, կանոն է հարկավ,
Ու՞ր ես պարտակում, աշխարհ այսքան ցավ…
Ով էլ որ գնաց, մնաց, ետ չեկավ,
Քրիստոսը անգամ չվերադարձավ:

1995

* * *

Սաղարթն այրվում է ծխելով միայն,
Կրակ չի տալիս, չի բոցավառվում.
Մոխիրը անհոգ խենթ քամով տարվում…
Սաղարթն այրվում է ծխելով միայն:

Այդպես այրվում է, տես ծերուկը այն,
Չի ողջակիզվեց որդին ցուրտ հեռվում…
Սաղարթն այրվում է ծխելով միայն,
Կրակ չի տալիս, չի բոցավառվում:

1995

* * *

Քանի դեռ թուրքը չի խոստովանել
Հայոց եղեռնը իր սանձազերծած,
Ոչ ոք չի կարող նրան անվանել
Մարդկային էակ - աստծո արարած:

Քանի դեռ թուրքը մեզ չի ցավակցել
Մեկուկես միլիոն զոհերի համար՝
Այն, որ Տեր-Զորում անթաղ մնացել -
Կեր անգղներին՝ դիեր անհամար…

Այն, որ երկիրը հայոց՝ պապական
Հայրենի հողը հնուց ժառանգած
Չի վերադարձրել մեզ-անապական,
Չեն նշավակվել օրինազանցված

Արարքներն անկարգ, նենգ, անմարդկային՝

Մենք կընդվզենք, կդատապարտենք,
Հայցը կհանձնենք մեր ապագային
Շահելով միայն գործը կավարտենք:

1995

* * *

Քո երերուն քայլերում
Շանթեր բեկ-բեկ ու շեղված,
Կրակներ կան անթեղված
Քո երերուն քայլերում:

Օրը նոր բոթ է բերում
Հարազատներ կան գերված…
Քո երերուն քայլերում
Շանթեր բեկ-բեկ ու շեղված:

1995

* * *

Այս տողերի ստվերում
Տագնապներ կան ծվարած,
Մոլորված ու շվարած
Այս տողերի ստվերում:

Նախատինք կա ու ներում
Եվ խոստովանք վախվորած…
Այս տողերի ստվերում
Տագնապներ կան ծվարած:

1995

* * *

Ախ, այս գրքերը, գրքերը,
Թվում է լռել են կրքերը,
Մինչ լռության մեջ ճչում են
Նրանց հարուցած վերքերը:

Ախ, այս գրքերը, գրքերը,
Ձերթ խոպանացած հերկերը,
Ուր ծղրիդն անգամ լռում,
Երես է թեքում և Տերը:

Ախ, այս գրքերը, գրքերը:

1996

* * *

«Դրախտը» էն նույնը մնաց,
Փոխվեց լոկ դրոշի գույնը.
Խառն են շաքարն ու թույնը…
«Դրախտը» մնաց էն նույնը:

Հայը կրկին պանդուխտ գնաց,
Թռչունը կորցրեց բույնը…
«Դրախտը» էն նույնը մնաց,
Փոխվեց լոկ դրոշի գույնը:

1996

* * *

Երկու առանցքի շուրջ ենք պտտվում,
Մեկ մեր՝ սեփական, մեկ էլ Արևի.
Նախախնամության կամքն է երևի…
Երկու առանցքի շուրջ ենք պտտվում:

Մեր կյանքն աշխարհում վաղ ավարտվում,
Իսկ քո՞նը, Երկիր, որքա՞ն կտևի…
Երկու առանցքի շուրջ ենք պտտվում ,
Մեկ մեր՝ սեփական, մեկ էլ Արևի:

1996

* * *

Հոգիներն ամեն համբարձվում երկինք,
Մինչ մարմինները դառնում սևահող,
Կարգը փոխելում մարդը անկարող…
Հոգիներն ամեն համբարձվում երկինք:

Մարում են այնժամ և եռանդ, և կիրք,
Օ՜, կյանք, ամենայն գոյի արարող.
Հոգիներն ամեն համբարձվում երկինք,
Մինչ մարմինները դառնում սևահող:

1996

* * *

Մենք մեր կյանքը ապրեցինք,

Լավ ու վատը չհիշենք,
Տարելիցներ չնշենք…
Մենք մեր կյանքը ապրեցինք:

Մեր բաժին հաբն ըմպեցինք,
Ժամն է մեր կառքը քշենք.
Մենք մեր կյանքը ապրեցինք,
Լավ ու վատը չհիշենք:

1996

* * *

Նա գիտե՞ր, արդյոք,
Որ ինքը Մեծ էր,
Կեղծիքից զերծ էր,
Նա գիտե՞ր արդյոք:

Նա անգետ, իրոք,
Աստվածաստեղծ էր…
Նա գիտե՞ր արդյոք,
Որ ինքը Մեծ էր:

1996

Օ՜, իմ տրիոլետ.

Չարաշահելով համբերությունդ
Առանց բախելու մտնում եմ տունդ՝
Անսպասելի, մերթ տարաժամին՝
Վրդովում խոնջած, հոգնատանջ քունդ:

Օ՜, ներող եղիր դու հավերժորեն,
Գուցե վաղը իսկ կրկնվի նորեն,
Դու միակ, միակ իմ սիրելին,
Համբերիր դու հար, տար վեհանձնորեն:

1996

* * *

Օ՜, խնկաբույր սուրբ խաչքարեր,
Սիրով հղկված ու քանդակված,
Խոնարհաբար շիրմին հակված,
Օ՜, խնկաբույր սուրբ խաչքարեր:

Դուք դեռ կապրեք դարեր, դարեր,
Բախտն այդ միայն ձեզ է տրված…
Օ՜, խնկաբույր սուրբ խաչքարեր,
Սիրով հղկված ու քանդակված:

1996

* * *

Այս մի բուռ դառած տատիկի կրծքում
Դեռ թպրտում է ահագին մի սիրտ.
Անսահման բարի ու շքեղ ու կիրթ՝
Այս մի բուռ դառած տատիկի կրծքում:
Նրա երբեմնի ջահել հորձանքում
Խայտացել են բյուր մարջան ու հակինթ.
Այս մի բուռ դառած տատիկի կրծքում
Դեռ թպրտում է ահագին մի սիրտ:

1997

Մ¬ին

Նա սուրբ մյուռոնով օծված,
Մի քիչ ինքն իր մեջ գոցված,
Վերև լինի, թե ներքև,
Մարդ է ու նաև աստված:
Անխոնջ բարությամբ լցված,
Մարդկանց ու աստծուն բացված,
Ճշգրիտ ու արդարև
Հավատացյալ անեղծված:
Որտեղ որբ, անտեր, ծեծկված,
Գործերում անհույս բեկված…
Աչքը Տիրոջը՝ վերև,
Փրկություն է նա նրանց.
Ու բարձրյալից օրհնված
Աշխարհին է նվիրված:

1997

* * *

Սիրանյութով շաղախված,
Հունցված մայրական կաթով,
Լցված շռայլ հոգեթով,
Սիրանյութով շաղախված:
Նրան օրհնել է աստված,

Օծել անանց բուրմունքով…
Սիրանյութով շաղախված,
Հունցված մայրական կաթով:

1997

Տրիոլետ երախտագիտության
առ բանաստեղծուհի
Մարո Մարգարյան

Ով առհավատչյա հույսի, հավատի,
Ով սուրբ երաշխիք ապրելու էլի,
Ստեղծագործելու կամք անկապտելի…
Ով առհավատչյա հույսի, հավատի:
Տերը անկաշառ այդ կնկատի,
Եվ կհատուցի անեղծ՝ լիուլի:
Ով առհավատչյա հույսի, հավատի,
Ով սուրբ երաշխիք ապրելու էլի:

1997

* * *

Տատիկ է դառել աղջնակ Մարոն,
Իր տատիկների նման ձեռնառատ,
Բաշխում, չի նայում օտար, հարազատ…
Տատիկ է դառել աղջնակ Մարոն:
Թոռներ ու ծոռներ՝ շեկլիկ, մրահոն.
Սիրում, չի թողնում մնան աննկատ.
Տատիկ է դառել աղջնակ Մարոն,
Իր տատիկների նման ձեռնառատ:

1997

* * *

Միայն Մարոն հասկացավ,
Թե ով եմ ես, ինչ եմ ես.
Նա Տիրոջ պես սրատես
Միայն Մարոն հասկացավ:
Եղավ բարի, սրտացավ,
Օ՜, Փրկիչներն են այդպես…
Միայն Մարոն հասկացավ,
Թե ով եմ ես, ինչ եմ ես:

1997

* * *

Երախտապարտ իմ հոգին
Ինչ խոսքեր արտաբերի
Արժանի խղճիդ անբիծ՝
Բարյացկամ ու անգին
Արարքներով անթերի,
Բարությամբ անպարագիծ:

Կրկին, կրկին ու կրկին
Տերը կյանքդ երկարի
Ու քեզ մնա կարեկից,
Օրհնանք սփռի քո հերկին,
Տունկդ անվերջ դալարի
Շիտակ, որպես դիմագիծ:

1997

* * *

Ինձ պոետ օծեց Մարո Մարգարյանը
Տերյան փողոցի իր վերնատանը:
Նա գրեց երկտող «Գարուն» հանդեսում,
Արժե այն կարդալ, թե ինչ է ասում:

Նա բավարարված իր կարդացածով,
Եվ ոգևորված այժմ արածով
Լայն սեղան բացեց, հրավիրեց, որ գան
Իր ուսուցչապետ բոլոր Մեծերը,
Քննեն, քննարկեն արած գործերը,
Ու վավերացնեն իրենց կնիքով,
Ադամանդակուռ լույս մատանիքով,
Անվարան դնեն ինքնագրերը,
Գոհ վերադառնան իրենց տները:

*

Թվաց բազմել են գահերում իր տան
Թագակիրները հայոց քերթության՝
Միշտ բարյացկամ Թումանյանը մեծ,
Դարի պոետը՝ Եղիշե Չարենց:

*

Լի բաժակները ջերմ ծլնգացին,
Դրսում զանգերը զիլ զրնգացին,
Ազդարարեցին էջք պոետական,
Ինչ փույթ, թե ութսուն և հինգ տարեկան:

1998

* * *

Մարոն, Մարոն բանաստեղծ է,
Բարյացկամ ու անկեղծ է.
Սիրտը բաց է բոլորի դեմ,
Բոլորի հետ մոտ ու մերձ է:

Դրանով էլ, օ՜, նա մեծ է,
Սարերի պես բարձր քերծ է.
Թեպետ համեստ է, երկյուղած,
Բարձր է, բարձր է, բարձրաբերձ է:

1998

* * *

Մեր մեծերը մեր չափանիշներն են,
Մենք ու մեր գործը չափվում նրանցով.
Նրանց հետ մեկտեղ գնում, դառնում ծով…
Մեր մեծերը մեր չափանիշներն են:
Մոլորվածները այն դերվիշներն են,
Որոնք հրճվում են հանկարծ գտածով…
Մեր մեծերը մեր չափանիշներն են,
Նաև աշխարհն է չափվում նրանցով:

1998

Մ. Մ. –ին

Բարեհաճ, բարյացկամ,
Օ՜, ոգեղեն մի անկեղծ,
Նրբաճաշակ բանաստեղծ,
Բարեհաճ, բարյացկամ:
Ահա մի լավ բարեկամ,
Ինքը փոքր, հոգին՝ մեծ.
Բարեհաճ, բարյացկամ,
Օ՜, ոգեղեն մի անկեղծ:

*

Որոգայթից, խանդից զերծ,
Ինքնավստահ, ինքնակամ,
Կատարյալին մոտ ու մերձ,
Իրոք՝ երկնային պատգամ…
Նա ինձ մի օր ավետեց՝
Որ ես երկնող եմ ու … կամ:

1998

* * *

Օ՜, նա իմ քույրն է,
Իմ հրապույրն է,
Բյուր ծաղկանց բույրն է
Մարգարյան Մարոն։
Հայի պարույրն է,
Շողշողուն թույրն է,
Բարեհամբույրն է
Մարգարյան Մարոն։

1998

* * *

Մեծ Վարպետի գովեստին
Ես արժանացա.
Հանդիպելու վերստին,
Օ՜, շատ ուշացա։

Ու մնայի ես ու ես,
Մի քիչ շվարած.
Կյանք է, լինում է այդպես,
Հիմա ինչ արած։

1999

* * *

Դատարկ մարդիկ կան վերևում,
Աչքներին ես չեմ երևում,
Տերն իրենց հետ, խելքի կգան՝
Որ իրենք չեն ինձ արևում։
Պաշտոնը չի հարատևում,
Այն մերթ կորչում է ետևում,
Ամպամպոտում է երկինքը,
Ու երբեմն էլ ցուրտ անձրևում։

1999

* * *

Ես մոռացել եմ, թե իմ երգն այս նուրբ,
Իր ժամանակին ու՞մ եմ նվիրել.
Ու՞մ եմ, օ՜, այսքան սիրել ու ներել.

Ես մոռացել եմ, թե իմ երգն այս նուրբ...
Նրանում այնքան ելևէջներ սուրբ,
Ասես թե ես չեմ, Տերն է հորինել.
Ես մոռացել եմ, թե երգն այս նուրբ
Ես ում եմ, ու՞մ եմ սիրով նվիրել։

1999

* * *

Ճամփաներով տարբեր¬տարբեր
Օջախներից հեռացան,
Մոլորվեցին, կործանվեցին
Ու վերադարձ չունեցան։
Ու չունեցան, ու չունեցան,
Այն, ինչ Տերն էր շնորհել.
Երևի թե անէացան,
Չար խորշակն էր գրոհել։

1999

* * *

Մարոն ինձ պոետ օծեց,
Կասկածի դուռը գոցեց.
Մինչ Ջուլիետը սրտաբաց,
Գրքիս ծախքերը հոգաց.
Հարութն ամեն ինչ արեց,
Ու գիրս գիրք դարձրեց.
Փրկեց ստույգ կորստից,
Այն, ինչն այնքան թանկ էր ինձ։
Ծնողական օրհնություն,
Երկար կյանք, առողջություն։

1999

* * *

Շնորհապարտ եմ, բարերարս՝
Դրախտային այգու բարը.
Քո օրհնությամբ բեղմնավորվեց
Ճաճանչափայլ ոսկեդարս։
Աստղաբույլում հրավառ,
Պաշտամունքի ուխտասարս.
Քարավանս մեկնարկել է,
Անդավաճան հպարտ նառս։

1999

* * *

Միմյանց նման են Վարպետ
Մեր ձեռնափայտերը.
Կարևորն, որ տարբերենք
Ովքեր են տերերը.
Մեկին հենված գնացողը
Հավերժի ճամփորդ է,
Մինչ մյուսը հավերժին
Ավաղ, օ՜, անհաղորդ է:

1999

Մ.Մ.-ին

Ասելիքներ ուներ նա դեռ,
Բարձրանալու, օ՜, մի նոր լեռ.
Տեսնելու էր երկիրն հայոց՝
Հեռու, հեռու շենշող ափեր:

Անելիքը կիսատ մնաց,
Շվարած էր ու շփոթված.
Նա վերջում մի կում էլ շնչեց
Ու վերջին այդ շնչում գնաց:

1999

* * *

Մարոն իր վերնատունը
Իր անուն-ազգանունը
Այնքան, այնքան պատվական
Առավ-տարավ Բյուրական,
Այնտեղ իր շիրմատունը տիեզերական
Այնտեղ է իր նոր տունը
Հարահոս կյանքի հունը
Մարոն գոյ հավերժական
Օ՜, այսու տիեզերական:

1999

Օմար Խայամին

Կուժն ու գավաթը,

Հույսն ու հավատը
Մեզ պահպանեցին.
Մինչ հարազատը,
Քո պայազատը
Քեզ կողմ վանեցին:

1999

* * *

Քո սուրբ ձեռքը, ազնիվ տիկին,
Ես քանիցս համբուրեցի
Ու նրբորեն գուրգուրեցի,
Քո սուրբ ձեռքը ազնիվ տիկին:

Օրինանք հղում հիշատակի
Օ՜, այն ձեռք էր բանաստեղծի.
Քո սուրբ ձեռքը ազնիվ տիկին,
Ես քանիցս համբուրեցի:

1999

Համո Սահյանին

Նա սիրով ցածրերի հետ էր,
Մինչ իրեն բարձրում էր պահում.
Վտանգներ կային, կռահում…
Նա սիրով ցածրերի հետ էր:
Հեռատես էր, կարապետ էր,
Առաջինն էր գրոհում:
Նա սիրով ցածրերի հետ էր,
Մինչ իրեն բարձրում էր պահում:

1999

* * *

Պարտապանդ եղա ես
Պարտատերը եղար դու.
Ահա կապվել ենք այսպես
Հեռավորս, ես ու դու:

Արար աշխարհը մեզ պես՝
Պարտապան ու պարտատեր
Օղակվել են հաշտ ու հեզ
Մեր բարին օրհնիր, օ՜, Տեր:

1999

Ավ. Իսահակյանին

Չանսացի կանչիդ, փութացի, անցա,
Այդպես անխոհեմ, ոչ, չէր կարելի,
Ու մեղքս քավել չկարողացա
Օ՜, ես անսփոփ ու աններելի:

Օրերն այդ անցել և դու էլ չկաս,
Ես էլ ծերացել, շատ բան մոռացել…
Մինչ, օ՜, զարմանքով նայում ես վրաս,
Այդ երբ ես, Վարպետ դու արձանացել:

1999

* * *

Հիշու՞մ եք
Պայծառ էր Սուրեն Քոչարյանը,
Անծայր էր հմայքը նրա,
Անտես ժպտում էր Թումանյանը
Իրոք վիրտուոզ կատարման վրա:
Ծիծաղից թնդում էր դահլիճը
Երբ լսում էր Նեսոյի ճիչը.
Օ՜, այդ գլուխգործոցը,
Ավանդական էր՝ գրողի ծոցը:
Հապա խմբապետ Շավարշը,
Իր մոտ է կանչել իր մեծը.
Հրճվանքի մեջ էր ասես Չարենցը:
Օ՜, բարեկենդանը,
Տժվժիկը հրաշք,
Ինքն էր այդ, ինքը:
Պայծառ էր Սուրեն Քոչարյանը
Անծայր էր հմայքը նրա.
Հիշու՞մ եք:

1999

* * *

Կրկին ու կրկին Տերյանի հետ եմ,
Իմ այդ սիրո մեջ հար¬առհավետ եմ,
Փույթ չէ՝ նա ջահել, սիրո հասակում...
Ես՝ բազմապատիկ ծեր¬նահապետ եմ:

Օ՜, նա լուսակերտ, սիրո սպարապետ,
Իր օրինակով ես էլ ասպետ եմ.
Մեր սրտերն են մոտ, մեր կարոտները,
Դե ինչ, ասում են ես էլ պոետ եմ։

2000

* * *

Ես չգիտեմ, թե ինչպես է օրդ անցնում,
Մեծ քաղաք է, հազար ու մի իրարանցում.
Եվ այդ հսկա խառնիճաղանջ թոհ ու բոհում,
Ոնց ես բացում քեզ ճանապարհ՝ պատշաճ անցում։
Պատկերացնել այդ ամենը ես մերթ փորձում,
Խճճվում եմ, ելք չեմ գտնում անցուդարձում,
Լավ է տեղս հանգիստ մնամ ու անփորձանք,
Բարեկամս, օ՜, Բոստոնի, ի՞նչ ես կարծում։

2000

* * *

Ինձ սատարողը ինձնից վաղ գնաց,
Ասելիք ուներ, որ մնաց չասված.
Գիտեմ, էլ ոչ ոք խոսք չի ասելու,
Լրիվ չստացած հոնորար ու վարձ։
Ինձ սատարողը ինձնից վաղ գնաց,
Բոլոր կողմերից անպաշտպան եմ բաց
Ինչ էլ որ լինի, չեմ ընկրկելու,
Ով էլ որ լինի դիմացս ցցված։

2000

* * *

Դու չե՞ս արդյոք շարունակ
Հսկում իմ շարժ ու ձևին.
Արևին, թե անձրևին
Դու չե՞ս արդյոք շարունակ
Որպես ինձ հիմք ու հենակ
Փարված նոր գոյաձևին.
Դու չե՞ս արդյոք շարունակ
Հսկում իմ շարժուձևին։

2000

Վազգեն Ա.-ին

Քեզ խաբեց չար Վարազդատը
Նրա ստին հավատացիր
Լավը թողած, վատն ընտրեցիր
Մեզ խաբեց չար Վարազդդատը:
Չկայացրիր նրա դատը
Տեր իմ, Տեր իմ, մեղանչեցիր
Քեզ խաբեց չար Վարազդատը
Նրա ստին հավատացիր:

2000

* * *

Օ՜, Մարո, Մարո, սիրելի Մարո,
Դու աննախադեպ անեղծ սրտի տեր.
Անխառն, խառնակ օրերում այս մեր
Օ՜, Մարո, Մարո, սիրելի Մարո:
Քո վարք ու բարքով ազնվաբարո
Մարդկանց օգնել ես, որ ձգտեն միշտ վեր,
Օ՜, Մարո, Մարո, սիրելի Մարո,
Դու աննախադեպ անեղծ սրտի տեր:

2000

* * *

Ազնիվ բանաստեղծ Մարոյից բացի
Ոչ ոք չփորձեց, չուզեց, չգրեց.
Ջուր առավ բերանն, ապահով լռեց.
Ազնիվ բանաստեղծ Մարոյից բացի:
Օ՜, ախորժալի բույր ցորեն հացի…
Հուսաթափ հոգիս աշխուժով լցրեց.
Ազնիվ բանաստեղծ Մարոյից բացի
Ոչ ոք չփորձեց, չուզեց, չգրեց:

2000

Հ.Թ.-ին

Ես փորձում եմ մերթ քեզնով չափվել,
Հույսով՝ ինքս ինձնից չհիասթափվել
Աստվածային էր քո չափանիշը,
Այն ինձ հարկադրեց, օ՜, թևաթափվել:
Փույթ չէ, ձգտում եմ անվանդ կապվել,

Հնարը գտնել, անցավ սթափվել.
Մեր նժարները շա՛տ են վար ու վեր.
Հարկ է վիճակին լուռ համակերպվել։

2000

Տիրան՝ չզիջես, Տիրան՝ չզիջես

Խաչիկ Դաշտենց

Այդպես եմ հիշում այժմ ես նրան,
«Տիրան չզիջես, Տիրան».
«Տայքի» գիրքն էին բոցավառել
Դեռ չկարդացած, չնայած վրան։
Այդ թելադրանքն էր հարևան «մեծ»-ի.
Որ գանակոծեն, ենթարկեն ծեծի.
Հրագործեցի ես սուրբ պատգամը
Ընկեր, բանաստեղծ Խաչիկ Դաշտենցի։

2000

* * *

Այգուս տնակը երեք պատ ուներ,
Դիմացը բաց էր՝ դուռ, դռնակ չկար.
Այնտեղ էր ապրում այգեպանս ծեր՝
Հոգնաբեկ մայրս կեռացած, տկար։
Արդ ոչ մայրս կա, ոչ էլ տնակը,
Ոչ էլ ծառերը, օ՜, այն պտղաբեր.
Առել, տարել է, մեծ ժամանակը,
Ու այգիս չունի պահապան ու տեր։
Ու այդ բոլորից ինձ պարգև մնաց
Մի խոր տխրություն, մի անուն, կարոտ.
Անձրև է մաղում ու գետինն է թաց,
Շտապիր գիշեր, ու՞ր ես, առավոտ։

2000

Տրիոլետ Ջ¬ին

Կա մեկը Բոստոնում, որ ինձ լավ գիտի,
Գիտի՝ իր հետ եմ հոգով ու մտքով.
Որքան եմ վազել ես նրա հետքով...
Կա մեկը Բոստոնում, որ ինձ լավ գիտի։
Օ՜, Տեր իմ, մեկ էլ հանդիպե՞նք պիտի,
Այնպե՜ս լցված եմ այդ լույս հավատքով.

Կա մեկը Բոստոնում, որ ինձ լավ գիտի,
Գիտի՝ իր հետ եմ հոգով ու մտքով։

2000

* * *

Աստեղայինը լուսապսակ ուներ,
«Մտերիմներս» իրարով անցան,
Կարճատև պահը արին ցիրուցան.
Աստեղայինը լուսապսակ ուներ։

Տերն էր պատվիրել՝ կյանքն ինձ փառավորեր,
Ինձ՝ արդարամիտ, անխոնջ սերմնացան.
Աստեղայինը լուսապսակ ուներ,
«Մտերիմներս» արին ցիրուցան։

2000

Պրոֆ. Մաստկովին

Նկատեցիք իմ «հրաշքը»
Առաջին իսկ հայացքից,
Թափանցիկ էր հոգուս մաշկը,
Երևում էր քղանցքից։

Ձեզ դուր եկավ ձգվող շարքը
Կամարակապ լուսակերտ,
Մեր արվեստի կարգ ու բարքը
Որ խոսում է հոգու հետ։

2000

* * *

Մի նոր գիրք եմ գրել, Է՛դմոնդ,
Խմբագիրս դու պիտեիր.
Դե արարքս լավ գիտեիր,
Մի նոր գիրք եմ գրել, Էդմոնդ.
Օ՜, չեմ լքել դիրք ու ֆրոնտ,
Ամենուրեք ինձ հետ էիր.
Մի նոր գիրք եմ գրել, Էդմոնդ,
Խմբագիրս դու պիտեիր։

2000

* * *

Նա լոռեցի է, բայց ոչ Թումանյան,
Մի այլ մականուն շնորհեցեք նրան,
Թող չսխալվի, դե մարդ է նա էլ,
Ու դեմք էլ ունի, լոկ իրեն վայել,
Չի արտահայտվում ավելորդ անգամ,
Խոսքն «արժեք ունի՝ լոզունգ է, պատգամ»։
Նա ինչ էլ անի՝ իր սեփականն է,
Իր մոտիկների ազնվականն է,
Զուր է սպասել մի խելոք խոսքի
Նա մասն է կազմում Գետառի հոսքի։

2000

* * *

Մեծ Վարպետի ազգականն ես,
Ինքդ նույնպես գյումրեցի
Ես քեզ գիտեմ հենց այդպես
Տես ոնց իրար բերեցի։
Այդ մեծ պատիվ է ինքնին,
Արժանի ես հարգանքի.
Քո գործերի ու ջանքի
Օ՜, արժանի մեծարման
Եվ ստեղծագործ արարման։

2001

* * *

Խնկարկում եմ հիշատակդ,
Օրհնանք հեղում ոտնկայս.
Դու քերթության մեծ գիտակդ
Քեզնով լիքն է պահն իմ այս։
Թող համարվի մխիթարանք
Թեթևացիր սուրբ հոգով.
Տունդ կարծիր սեգ ապարանք
Փույթ չէ՝ պատված ցուրտ միգով։

2001

* * *

Մարոն, Մարոն ինձ անվանեց
Օ՜, իսկական բանաստեղծ
Նավաբեկյալ մոլորյալիս
Լույս երազի ափ հանեց,

Օրհնյալ լինի թող սիրտն իր մեծ
Հոգին զուլալ ու անեղծ.
Խնկով բարի շիրմահողը
Բյուրականում երկնամերձ։

2001

* * *

Առյուծաբաշ ռեժիսորը
Վերհիշել է իր «կեսօրը»
Օ՛, այնքան պարզ, այնքան հստակ
Անմիջական, ոնց այսօրը։
Ինքն իր գործի պրոֆեսորը,
Պատկերներից թունդ¬բոսորը՝
Սև էկրանի լայն պաստառին
Պատկերել էր մեր «աքսորը»
Դեպի Ալթայ՝ հեռու Սիբիր
Լաց ու կոծին ինքն ունկնդիր,
Ապագայի համար՝ ի տես...
Գործ շնորհակալ և յուրընտիր։

2001

* * *

Միտքս քեզ հետ է, բարի ընթերցող,
Փույթ չէ՝ հուզված եմ այսպես անսքող.
Ուզում եմ լսել, կարծիքդ իմանալ,
Թող որ բաց լինի, անեղծ լինի թող։

Օ՛, այն կլինի երիցս արդար.
Անկորնչելի ու սուրբ ինձ համար.
Երախտապարտ եմ կանխավ արդարև
Հանդուրժող եղիր, ու ներող անչար։

2002

Ռեժիսոր Լևոն Իսահակյանին

Լևոն ինքնակոչ XXI դարի
Ինչ ես տանը նստել,
Մեր կողմերն արի.
Մերը չէ Կիլիկիան
Ոչ էլ ծովախորշը
Այնտեղ ծածանվում է

Թուրքերի դրոշը:
Ինչ ես կորցրել
Ինչի ման գալի
Հարցերը շատ են
Մութ ու ցավալի
Հույսներս ենք հառել
Մի նոր ձնհալի
Օ՛, լավատեսն ենք
Անվերծանելի:

2002

Մերոնք

* * *

Թևավոր մերիկ, ճուտերիդ ներս առ,
Դրսում անգղն է չար թևին տալիս.
Հողից, ցողից է մահու հոտ գալիս,
Թևավոր մերիկ, ճուտերիդ ներս առ։
Սար ու ձոր արին, տեսքը ողբալի,
Տխուր շիրիմ է ընկած ամեն քար.
Մահու անգղն է չար պտիտ տալիս,
Թևավոր մերիկ, ճուտերիդ ներս առ։

1941

* * *

Մայր իմ, չլաս ինձ համար,
Ես կենդանի եմ.
Սրտումս հուր կա անմար,
Ես կենդանի եմ։

Մայր իմ, չլաս ինձ համար,
Հեռվից կլսեմ.
Քո անուշ սիրով անծայր՝
Ես կենդանի եմ։

Եվ շիրմիս հողը այս սառ.
Թեթև կտանեմ.
Միայն չլաս ինձ համար,
Ես կենդանի եմ։

1943

* * *

Կապել ես բոխչես,
Արդ ձիս ես թամբում.
Հասկանում եմ քեզ՝
Հեռու ես ճամփում։
Ես կամքիդ հլու
Կընկնեմ ճանապարհ
Բայց… ետ չեմ գալու,
Չլաս ինձ համար։
Նույնիսկ թե ձայնդ
Հողմն ինձ հասցնի.

Ու սիրտս հիվանդ
Լա - չթաքցնի,
Այն, որ սիրել եմ
Մանկան խենթությամբ.
Այն, որ երդվել եմ
Քո լուսե անվամբ.
Խիստ է, համառ է
Իմ ձին էլ ինձ պես.
Օ՜, անհնար է,
Անդարձ է ճամփես:

Կապել ես բոխչես,
Արդ ձիս ես թամբում.
Գիտե՞ս, այսօր ե՜ս,
Ե՜ս եմ շտապում:

1943

* * *

Արի, արի, մերիկ ջան,
Աստծուց բարի, մերիկ ջան.
Անցած տարին սև ու սուգ,
Դու՝ նոր տարի, մերիկ ջան:

Քո գոյությամբ, քո սիրով,
Թևավորվենք նոր օրով.
Դու՝ կարոտած աչքի լույս,
Գարուն արի, մերիկ ջան:

1944

* * *

«Գար ինձ հանկարծ հեռագիր»*
Որ ապրում ես, որ դու կաս,
Որ երբևէ դու կգաս.
«Գար ինձ հանկարծ հեռագիր»:

Կյանքիդ ծիրանին հագիր,
Եվ հայտնվիր հանց երազ.
«Գար ինձ հանկարծ հեռագիր»
Որ ապրում ես, որ դու կաս:

*Չակերտներով տողը Վ. Տերյանինն է

1945

* * *

Ա՛խ, եթե հանկարծ դուռս բախեիր,
Եվ ծանոթ ձայնով տայիր անունս,
Ու եղբոր նման մտնեիր տունս…
Ա՛խ, եթե հանկարծ դուռս բախեիր:
Սիրած թիկնոցդ ծառից կախեիր,
Իսկույն ճանաչեր, կալանչեր շունս…
Ա՛խ, եթե հանկարծ դուռս բախեիր,
Եվ ծանոթ ձայնով տայիր անունս:

1946

* * *

Ննջել ես, կին իմ դեռատի,
Իսկ արգանդում քո մայրական
Աճում է նա, որ գա պիտի –
Մեր դաշնության սերն ու վկան:
Նա գա պիտի ճիչ-աղմուկով,
Ծիծեռնակի նման գարնան.
Գա ու լցնի թարմ ծաղկունքով
Մեր առօրյան ու ապագան:

Թող գա, թող գա մանկիկը մեր,
Մեկ է, էգ է, թե արու.
Թող գա, ապրի շատ տարիներ,
Մենք էլ փարվենք իրարու:
Ննջել ես, կին իմ դեռատի,
Իսկ արգանդում քո մայրական
Աճում է նա, որ գա պիտի –
Մեր դաշնության սերն ու վկան:

1956

* * *

Մայրիկս արու թոռնիկ էր ուզում,
Նրան այդ միտքը շա՛տ, շա՛տ էր հուզում.
Ու ծնվեց բալես – մանկիկ զվարթուն,
Մայրս անունը դրեց Հարություն.

Հարություն առավ կարծես պապիկը,
Ու ջահելացավ մայրս՝ տատիկը.
Պարտքս տվել եմ ու թեթև եմ ես,
Որ իմ բալիկով, մայր իմ, ուրախ ես:

1956

* * *

Բալես քնի մեջ երազ է տեսնում,
Ու երազի մեջ անուշ ժպտում է.
Երևի սուրում - երկնքին հասնում,
Ու էն կապույտում խաղն ավարտում է:

Ու երբ արթնանում, նա մոռանում է,
Ոչինչ չի պատմում, չի հիշում ոչինչ.
Միայն մերթ ընդ մերթ ձեռքը մեկնում է
Դեպի ամպերը՝ հեռուները ջինջ:

Կանցնեն օրերն այս ու երազները.
Բալես կդառնա պարթևահասակ.
Հեռու կկանչեն հորիզոնները,
Արշալույսները ճաճանչագիսակ:

Թող գնա բալես, կյանքն ուր որ տանի.
Սավառնի հանց սեգ թռչուն թևաբաց.
Կուզեի սակայն սե՛րը չվատնի,
Սե՛րը հայրենյաց:

1957

* * *

Մի երկու պտույտ կազմում,
Ցնդում է ծխի քուլան.
Բալիկս վազում, ցատկում,
Եվ… մնում է ձեռնունայն:

Դեռ կյանում քանի՜ ցնորք
Կցնդի ծխի նման.
Կունենա՞ս, բալես, շնորհք –
Արժանի պատվի, անվան:

Իմ ձեռքն էլ մնաց պարզված,
Իսկ մանկութ օրերն անկանգ…
Եվ ինչե՜ր, ինչեր չասված –
Լռեցին, դարձան պատրանք:

Կուզեի սակայն, որ քո
Ձեռքն էլ պարզված չմնար:
Ուղիդ անցնեիր երգով,

Երգդ՝ աշխարհով գնար:

1957

* * *

Չիչխանի դալար գետափ.
Մեղմահոս, հնչուն գետակ.
Ուռիներ, շրշյուն, հեքիաթ.
Զրույցներ, ծիծաղ, կատակ:

Ծաղիկներ, թիթեռ, թռչուն,
Գառնուկներ – լանջերն ի վեր.
Անտառներ, հողմեր շաչուն.
Երկնքով չվող ամպեր:

Խնձորի, տանձի այգի,
Գետակի եզրով փռված
Լիության շռայլ բերքով
Ծնողի ջանքով երկնած:

Մանկությո՛ն, անդա՛ռձ անցած -
Երազի թևով թեթև՛,
Հիշատակ ու հուշ դարձած -
Մշուշված սարի ետև:

1957

* * *

Իմ եղբայրները վաղու՛ց է չկան.
Ու՞մ եմ հաշվետու արարքիս համար.
Ա՛խ, գիտենայի թե մի օր կգան
Մաղթելու կյանքիս բարի ճանապարհ:

Նրանք այրվել են լափլիզող հրում.
Եվ իրենց կյանքով փրկել կյանքը այս.
Դրա համար եմ ես այնպե՛ս սիրում,
Ու ջանքս դնում օրերին ի սպաս:

*

Օ՛, դու ես հիմա բարձրանում իմ դեմ.
Գալիքից ահա նայում ես վրաս.
Հետևում ես ինձ, ես այնպե՛ս գիտեմ.
Իմ մանկիկ՝ վաղվա հրեղեն պեգաս:

Եվ ահա անխոնջ, գործիս հպատակ,

Որպես մարխ անշեջ այրվում եմ, այրվում:
Լավ է ունենալ հույս ու նպատակ,
Գիտենալ, որ քեզ սպասում են հեռվում:

1957

* * *

Մանկիկս, փոքր ես, դեռ մեկ տարեկան,
Բայց դու աճում ես, աճում օրեօր.
Հրճվանքիս համար քեզ եմ պարտական –
Նորածիլ արմավ - ճոճվող մեղմօրոր:

Արդ ակնածանքով ու դողով ներքին,
Եվ հուզմունքով եմ գործերս վարում –
Զի վաղը պիտի նայես իմ հերկին,
Ու տեսնես՝ ոնց է բերքը վարարում;

1957

Աքրոստիկոս

Իմ այս հայրական ջերմ մաղթանքը քեզ,
Մանուկ իմ պայծառ՝ հրաչ, հրագես:

*

Տատասկ չբուսնի քո ճանապարհին.
Առավոտի հետ աշխարհին բացվիր.
Թագուհի եղիր, ուզածդ արա.
Եղյամով, ցողով, նեկտարով լցվիր.
Վառվիր, հրդեհվիր, բոցով հուրհրա.
Իմաստն ապրումի՝ սպառնում գիտցիր.
(Կհավերժանա անունդ անարատ).
Իրական կյանքի հավատով անցիր,
Նվիրվիր անխոնջ խոյանքին նրա:

1958

* * *

Ինձ երանի են տալիս,
Որ դու իմն ես, բալիկ.
Ամեն անգամ տեսնելիս
Անվանում են երջանիկ:

Օ՜, երանի՜, երանի՛,
Որ բոլորն էլ ունենան

Քեզ պես բալիկ գեղանի,
Խելոք, լսող քեզ նման:

Դու էլ, երբ որ մեծանաս –
Չլինես գոռմեծամիտ.
Այս երբեք չմոռանաս,
Քեզ կտան սեր ու ժպիտ:

1958

* * *

Ապրիր էլի,
Իմ սիրելի,
Իմ մտերմիկ,
Իմ մայրիկ:

Ինչ որ ապրեցիր –
Դառնություն էր՝ ցավ.
Բայց դու քայլեցիր,
Եվ բոլորն անցավ:

Դու էլի ապրիր,
Այս անգամ՝ անցավ.
Կյանքը սիրալիր
Եվ ուրիշ դարձավ:

Ես ուրիշ պատրանք
Ու երազ չունեմ.
Սիրո ապարանք,
Անխորտակ իմ վեմ:

1958

* * *

Իմ բալիկները փոքր են չափազանց
Իսկ ես էլ ահա կիսով ճերմակած,
Դարձել եմ նրանց գուրգուրող պապիկ.
Նրանց մանկության ընկերը դարձած,
Նրանց խորամանկ ծուղակը ընկած,
Պարտվողը բոլոր խաղերում ճարպիկ:

Գոհ եմ ես սակայն և վերածնված.
Ինչ փույթ, բալեքս փոքր են չափազանց.
Ես սիրով նրանց գուրգուրող պապիկ,

Պարտվողը բոլոր խաղերում ճարպիկ:

1959

* * *

Մի քիչ տկար ես, գունատված, մայրիկ,
Մի քիչ նիհար ես, վհատված, մայրիկ.
Վաղուց հոգնել ես, չարքաշ իմ պառավ,
Արևահար ես, հյուծված ես, մայրիկ:

Հիշու՞մ ես, ե՞րբ էր, մենք որբ մնացինք,
Չդարձանք սակայն մերկ ու մուրացիկ.
Այդ երբ հորը մեր Խոջիվանք տարանք,
Քաղաքը թողինք և գյուղ գնացինք:

Դարձանք հողագործ, գործվոր, այգեպան,
Մենք մեր վաստակին տեր ու պահապան.
Երբ հորթը մեր՝ կով, տունկն՝ այգի դարձավ,
Ծածկվեց տանիքը հնաշեն մեր տան,

Մենք էլ շունչ առանք, շնորհք ու հասակ,
Եկանք, աշխարհի այս օրին հասանք.
Քո՛ կյանքի գնով, այ այդ է իրավ.
Օրհնվի, մայր իմ, քո ջանքն ու վաստակ:

Իսկ այժմ մի քիչ տկար ես, մայրիկ,
Ու մի քիչ նիհար, անկար ես, մայրիկ.
Դե ապաքինվիր, ջերմն իրենն առավ,
Աստվածանման նկար ես, մայրիկ:

1966

* * *

Մերիկ, քո անուշ տեսքին եմ կարոտ,
Եվ գյուղի գաթին՝ քո ձեռքով թխած.
Մերիկ, սպասում եմ քեզ այս առավոտ,
Աչքերս ճամփիդ, հոնքերս կախած:

Արի, շու՛տ արի, գրկեմ, համբուրեմ,
Արի, շու՛տ արի, առնեմ կարոտս.
Արի, որդիդ եմ, փարվեմ-գուրգուրեմ,
Գարնան պես բացվի ցուրտ առավոտս:

1966

* * *

Ամառը միշտ գյուղ ես գնում,
Ձմռանը՝ մեզ հյուր գալիս.
Ամառն անցավ, քիչ է մնում
Ձմեռը գա - անձկալիս:

Դու էլ ահա ձմռան նման
Ճերմակել ես, պաշտելիս.
Սակայն սիրուդ բոցը ելման
Ինձ հույս ու լույս է տալիս:

Ցուրտ է թեկուզ, սառնամանիք –
Ձմեռը մեր աշխարհի,
Բայց թող շուտ գա՝ ծածկի տանիք,
Որ դու էլ գաս, իմ բարի:

Աչքս Մասիս սարի ձյունին,
Սպասում եմ իջնի ցած.
Բալեն մատաղ մոր անունին,
Մասիսի պես ճերմակած:

1966

* * *

Երբ էլ կանչել եմ, եկել ես, մայրիկ,
Ինչ էլ խնդրել եմ, արել ես, մայրիկ,
Բայց վերջին անգամ որքան կանչեցի,
Որքան ձայնեցի ու աղաչեցի,
Ետ չնայեցիր, ետ չեկար, մայրիկ,
Շտապում էիր, համբարձվում երկինք:

Սպասում էին, քեզ ձեռքով անում,
Քեզ կանչում էին, քո գալուն մնում
Ջահել օրերիդ ընկերը ջահել,
Եվ որդիդ, որդիդ, որին նոր գտել,
Ու տանում էիր վերքին սպեղանի,
Որ նա էլ առնի կարոտը նանի:

1970

* * *

Քեզ որ կարոտում,
Գյուղ նամակ գրում,

Խնդրում, աղաչում,
Տուն էի կանչում:

Քո կարոտն անանց
Սրտումս մնաց.
Ու՞ր գրեմ հիմա,
Ու՞ր գրեմ, որ գաս:

1970

* * *

Ուզում եմ դեմդ նստել ու խոսել,
Խորհուրդդ լսել խելոք, իմաստուն,
Ուզում եմ այսօր ամեն ինչ ասել,
Ինչ որ կասեի իմ միակ աստծուն:

Ավա՜ղ, վաղուց է, որ չես գալիս տուն,
Ում խոստովանեմ, որ ինձ հավատա,
Չդավաճանի. ոնց մայրը որդուն
Լինի կենսատու, առհավատչյա:

Գամ ու դիմացդ նստեմ ու խոսեմ,
Խորհուրդդ լսեմ խելոք, իմաստուն,
Ու մտերմորեն ամեն ինչ ասեմ,
Ինչ որ կասեի իմ միակ աստծուն:

1975

* * *

Հայր, քո բար այգին մեծ ճամփի վրա,
Ով եկավ՝ առավ բաժինը իրա.
Ով եկավ՝ հազար ողորմի տվեց
Հազար ողորմի անցածին նրա:

Ես էլ մի անցվոր երկար ճամփեքի,
Եկա քո այգին՝ մրգի ու երգի.
Ես էլ քաղեցի մրգերից անուշ,
Հանց դերվիշ օտար՝ նման ամենքի:

Բայց ես լաց եղա դառն, աղի-աղի.
Իմ պայծառ, իմ քուրմ, քեզ բյուր ողորմի:

1980

* * *

Գետը ահեղ վարարել էր,
Ճամփեն փոխել էր՝ քանդում.
Մորս սիրտը մռայլվել էր,
Խենթ անիծում էր՝ թնդում:

Հազստության էր նա կոչում,
Որ չմեռնի ոչ մի շիվ.
Ավա՜ղ, գետն էր խոլ մռնչում,
Պոկում, տանում - անհաշիվ:

Ու նա լացեց աղի-աղի,
Խեղճ մրմնջաց քարափին.
Լացին մերերն ավեր գյուղի,
Արնոտ գետի էս ափին:

Գետը ահեղ վարարել էր,
Ճամփեն փոխել էր՝ քանդում.
Երկինքն ամպել, մռայլվել էր,
Կայծակում էր ու թնդում:

1980

* * *

Եկել, հասել եմ ճիշտ քո տարիքին,
Բայց սրտի դողով, հուզմունքով ներքին,
Ով իմ Տիրամայր, քո դեմ ծնկաչոք,
Մեր հին աղոթքն եմ մրմնջում կրկին:

Եկել, հասել եմ ճիշտ քո տարիքին,
Բայց մեր գետակի էն նույն եզերքին,
Ես նույն մանուկն եմ, սակայն մի մորմոք
Ալեկոծում է իմ միտքն ու հոգին:

1980

* * *

Վաղու՜ց քեզ համար երգ էի գրել,
Բայց պահում էի քեզնից – չկարդաս.
Թե որքա՜ն եմ քեզ փայփայել, սիրել…
Ո՛չ, չէի ուզում, որ այդ իմանաս:

Տարիներ անցան, անցա՜ն, գնացի՜ն,
Եվ տարան այնքա՜ն անուններ.

Ու դու էլ անցար, և ճամփեդ անծիր
Քեզ տարավ անդարձ, անդարձ հեռուներ:

Հրաշք է կարծես, օրագրիս էջից
Հառնում է հանկարծ պատկերդ կարոտ.
Սթափվում եմ ես ձայնիդ կարկաչից,
Տեսնում ծով աչքիդ արցունքն արևոտ:

Եվ արցունքներս թափվում են ահա,
Թրջում հին երգի տողերը: Անգին,
Մերթ հիշիր այդպես, ինձ մի մոռանա,
Ու դարձիր ինձ մոտ, ու դարձիր կրկին:

Վաղու՛ց քեզ համար երգ էի գրել,
Բայց պահում էի, որ դու չկարդաս.
Թե որքա՛ն, որքան գաղտնաբար սիրել…
Ո՛չ, չէի ուզում, որ այդ իմանաս:

1980

Քրոջս՝ Մանիկին

Երևի թե խռով գնաց
Աշխարհից ու ամենքից.
Հրաժեշտի խոսքեր չասաց,
Շատ էր խորշում կեղծիքից:

Երևի թե խռով գնաց,
Կրակ ու ծուխ անթեղեց.
Ուրախ օրի կարոտ մնաց,
Բայց «վախ ու վիշ» չհեղեց:

Երևի թե խռով գնաց,
Ամեն ինչից հոգնել էր.
Նա մեր սրտում հավերժ մնաց –
Ամենքիս էլ օգնել էր:

1980

* * *

Այգուս ծառերը հայրս է տնկել,
Շիվերը սնել, աճեցրել մայրս.
Անսիրտ ձեռքերից պահպանել, հսկել,
Ու ինձ է հանձնել ավագ եղբայրս:

Ես էլ պտուղը, երբ դեռ պատանի
Ուսել, տարել եմ գյուղերը մոտիկ,
Ու նաև հեռու՝ ձորում Չիչխանի –
Ես դեռ պատանի ու կիսաբոբիկ:

Խնձորը անուշ ու տանձը համեղ
Տարել, փոխել եմ ցորեն ու գարով
Ձավարով, ձվով: Ու այսպես անմեղ
Քայլել, անցել եմ Չիչխանի ձորով:

Ու հեռացել է պատանությունս,
Հեռացել մերոնք, օ՜, հավերժորեն.
Չիչխանի ձորում հայրենի տունս –
Խնձորով փոխված գարի ու ցորեն:

Գյուղիս ճամփեքով տարիներն անցան,
Այդ նույն ճամփեքը ինձ տարան հեռու.
Այգուս ծառերը մեկ-մեկ ծերացան,
Գետն էլ փոքրացել, դարձել է առու:

Այգիս թողել եմ անմշակ, անտեր.
Այնտեղ, ասում են, տատասկ է բուսնում.
Ինձ այգիս տարեք, հին ճանապարհներ,
Ծանոթ կանչերը սրտիս են հասնում:

1982

Մայրս

Սայլակը ծանր բարձած,
Ու չարքաշ ռիկշի դարձած,
Դեռ վաղ - արևածագին,
Իր հին սևերը հագին,
Փոկերը խոնջած քաշում,
Մինչ շուկա ոտք էր մաշում:
Սեղանի դիմաց կանգնած,
Միրգ էր վաճառում մարդկանց.
Այն քաղց ու մաղձ օրերում
Մեզ հաց ու թաց էր բերում…

1982

* * *

Այս գիշեր նորից, դու նորից եկար,
Ու ներշնչեցիր կենարար հույսով.
Ա՜խ, ինչու՞, ինչու՞ պահը չէր երկար,
Օ՜, անէացար առավոտլույսով:

Կարոտս առմիշտ է ու անանց է,
Կարոտս, օ՜, մայր, միշտ ջերմ, միշտ անեղծ.
Բերդապատերիս դարպասը բաց է,
Եկ, իմ սրբություն, օ՜, ամենամեծ:

1982

* * *

Տառապանքդ աչքիս դեմ,
Ու հայացքդ դալկահար,
Հոգսը մաշող քեզ - գիտեմ,
Իմ անամոք, անուշ մայր:

Էսօր գնամ խունկ վառեմ
Հիշատակիդ, անուշ մայր,
Ոտանավոր արարեմ
Սուրբ անունիդ, անուշ մայր:

Կանգնեմ, նկարիդ նայեմ,
Կարոտս առնեմ, անուշ մայր.
Ծնկի գամ ու աղոթեմ,
Ու արտասվեմ, անուշ մայր:

1982

* * *

Տաթևիկս ամուսնացավ,
Ինչքա՜ն վարդեր բերին.
Կարմիր, կարմիր վարդեր.
Այսօրվանից նա հարսնացավ.
Երանությու՜ն վերին:

Տաթևիկս ամուսնացավ.
Վերջ անհոգ օրերին:
Թևածիր, ով սեր.
Տաթևիկս երջանկացավ.
Փա՜ռք, Մեծություն Նորին:

1983

* * *

Կուզենայի որ լինեիք
Ապրողներիս հետ.
Կարոտելիս հանդիպեինք,
Ու դառնայինք սեթևեթ:

Թեթև անցներ օրն ու տարին,
Հուշ ու կարոտ չտանջեր.
Շրջան կազմեր լավն ու բարին,
Սերն ամոթից չամաչեր:

Կուզենայի, որ լինեիք
Ապրողներիս հետ.
Ուր գնայիք, տուն դառնայիք,
Հայրական տուն հրաշակերտ:

Հնչեր, կանչեր Չիչխանն անլուռ,
Այգիս ափին դալարեր.
Փայլփլեին խնձոր ու նուռ,
Հավքը գար ծառին թառեր:

Դուք գնացիք, ողջը փոխվեց,
Տուն ու տեղս էլ այն չեն.
Սյունը խախտվեց, ծածկը կախվեց ...
Լլկվել եմ, ու՞մ կանչեմ:

1983

* * *

Իմ բոլոր, բոլոր հարազատներս,
Չեմ էլ հարցնում որ աշխարհում եք.
Արդ դատարկում եմ բյուր բաժակներս
Ձեր սուրբ կենացը – խնդրեմ ընդունեք:

Խնդրեմ ընդունեք շնորհավորանքս,
Նոր տարվա առթիվ, որ ձերն է նաև.
Այսպես եմ առնում ծով կարոտանքս,
Եվ սփոփանքս. օ՜… ծաղր արդարև:

1984

* * *

Քեռիս ուներ մի լուծ եզ,

Նաև մի արոր ուներ.
Ու դեռ հիշում եմ այնպես,
Կարծես թե երեկ լիներ:

Ու գնում էինք վարի
Հայտնի Սև քարի հանդը,
Ցանում ցորեն ու գարի –
Սուրբ-սրբոցը՝ ավանդը:

Ու թե հաջողեր տարին,
Ու քոլաշը կալ հասներ,
Ամբարում խնդար բարին,
Ու տան հոգսն էլ պակասեր,

Աստծուն փառք էինք տալիս,
Աղոթում ու մոմ վառում…
Արդ երբ միտս են գալիս՝
Մոմերն այրվում են, մարում:

1985

* * *

Իմ հարազատ հորատատը
Սերում է մի ազնիվ ցեղից,
Որի հանդեպ լոկ հավատը
Ինձ հանում է խիստ նեղ տեղից:

Իմ հարազատ հորատատը
Հարս է եկել հին Դսեղից,
Ճյուղ է տվել և արմատը,
Որպես գետակ մեծ հեղեղից:

Իմ հարազատ հորատատը
Ազգականը Արմենակի –
Թումանյանենց հարազատը,
Ծնունդը իր ժամանակի:

*

Արդ ինչ առիթ ինձ քաշվելու,
Որ պտուղն եմ ես նույն ծառի.
Կամ «պորտերը» արդ հաշվելու,
Գիտեմ, որ այդ չեն բացառի:

Այս ինձ համար հաճելի է,
Ու թերևս և բախտորոշ:

Գուցե նաև վիճելի է՝
- Կան ժառանգներ տխուր ու գորշ…

Բայց ինձ ոչ ոք դեռ չի հերքել,
Չեն անվանել ապաշնորհ.
Աշխատել եմ ինչ որ երկնել,
Արժանանալ անվանը հոր:

Այսքան միայն, ուրիշ ոչինչ,
Փաստարկների առիթ չկա.
Ոչ հերոս ես, ոչ էլ կտրիճ,
Որ աստծուն կանչեմ վկա:

Սովորական մահկանացու,
Հայավայել ճարտարապետ,
Պորտից պոկված իմ աստծու,
Որ Մայր կոչվեց, սիրվեց հավետ:

1985

* * *

Քո սիրուն ձոնած իմ այս երգերը
քեզ չկարդացի,
Եվ դու չիմացար որքան է սիրում
ու հարգում որդիդ.
Եվ այդ չիմացան բարեկամներդ՝
դրկից, դրացի,
Օ՜, ակնածեցի, նաև չուզեցի
որ հուզվեր հոգիդ:

Քո սիրուն ձոնած իմ այս երգերը
քեզ չկարդացի,
Չի վստահ չէի, որ արժեք ունեն
ու քեզ դուր կգան.
Արդ ինձ նախատում, որ սխալ եղա -
անարդարացի,
Մոռանալով, մայր, որ մերթ ներել ես
խենթությունս անգամ:

1985

* * *

Հաղթանակն են տոնում այսօր
Վաղուց անցած պատերազմի,

Երբ երկինքն էր հրաբոսոր
Ու երկիրը՝ դաշտ մի ռազմի։

Ով կենդանի մնաց կռվում,
Պատերազմից ով զերծ մնաց –
Երջանկությամբ հրավառվում,
Խաղաղությամբ է արբեցած։

Մինչ ով մնաց ռազմի դաշտում,
Կյանքը կռվում ով ավարտեց,
(Ինչ փույթ մահվան հետ չէր հաշտվում),
Հավերժորեն լռեց, լռեց։

Հաղթանակն են տոնում այսօր
Վաղուց անցած պատերազմի.
Օ՛, նախճիր էր մի անսովոր,
Անպատմելի փլուզումի։

Հաղթանակն են տոնում այսօր։

1985

* * *

Մայրիկներ, մայրիկներ, մայրիկներ,
Դուք մի այլ խմորից հունցված.
Ձեզ ինչեր ասես չի տվել
Աշխարհը արարող աստված։

Մայրիկներ, մայրիկներ, մայրիկներ.
Անսխալ, խելոք է ասված՝
Ով աշխարհ բերում մանկիկներ,
Նա ինքն էլ դառնում է աստված։

1985

* * *

Դեռ մխում են, դեռ մխում են մանկութ հուշեր,
Դեռ հնչում են, դեռ կանչում են ձայներ ծանոթ.
Դեռ արթնանում, ալեկոծվում հազար կարոտ,
Դեռ մխում են, դեռ մխում են մանկութ հուշեր։
Միշտ ինձ հետ են քուն, թե արթուն, ցերեկ-գիշեր,
Օրեր, օրեր՝ և՛ ամպամած, և՛ արևոտ.
Դեռ մխում են, դեռ մխում են մանկութ հուշեր,
Դեռ հնչում են, դեռ կանչում են ձայներ ծանոթ։

1985

* * *

Ինձ չեն սպասել, գնացել են,
Թողել մենակ, մեն-մենակ.
Շտապե՞լ են, թե՞ մոռացել,
Բաց են թողել դուռ-դռնակ:

Ինձ չեն սպասել, գնացել են
Տարբեր, տարբեր կողմերով,
Ու տարվել են, ու անցել են
Խենթ, հոգեցունց հողմերով:

Ինձ չեն սպասել, գնացել են
Նոր եզերքներ որոնելու.
Մթնում ճամփեն կորցրել են,
Ավա՛ղ, էլ տուն չեն գալու:

1986

* * *

Ձեր հիշատակին, իմ անցավորներ,
Սուրբ Էջմիածնում մոմեր վառեցի,
Ու երկար, երկար լուռ աղոթեցի –
Ձեր հիշատակին, իմ անցավորներ:

Ու մոմերի հետ ես էլ այրվեցի,
Օ՛, անմնացորդ, սիրով ջերմեռանդ.
Թվաց, գալիս եք, դիմավորեցի,
Դուք հոգնած էիք, ու նաև հիվանդ:

Փույթ չէ, ջերմացաք արևի լույսով,
Ապաքինվեցիք և ընդարմացաք.
Եվ աստվածային պայծառ խրախույսով
Վեր համբարձվեցիք և անմահացաք:

1990

Մայրիկիս

Էջմիածնի մայր տաճարում
Մոմ վառեցի հիշատակիդ.
Վրաս թափած ծով ամակիդ

Մոմ վառեցի մայր տաճարում:

Մեկը այնտեղ ինչ որ ճառում,
Նա տեղյակ չէր վերք ու վշտիդ.
Էջմիածնի մայր տաճարում
Մոմ վառեցի հիշատակիդ:

1999

* * *

Դու իմ օգնության կարիքն ունեիր,
Չկարողացա, մայր, չկարողացա…
Օ՜, այնպես, այնպես խորունկ դառնացա,
Դու իմ օգնության կարիքն ունեիր:

Դու զավակներիդ կյանք ու տուն էիր
Եվ դու մեզանից ընդմիշտ հեռացար.
Դու իմ օգնության կարիքն ունեիր,
Չկարողացա, մայր, չկարողացա:

1999

* * *

Ինձ նորից երազ եկար, մայրիկ,
Ոչ դժոխք էր շուրջդ, ոչ դրախտ էր
Դրախտ ընկնելը նույնպես բախտ էր…
Դու նորից երազ եկար, մայրիկ:

Նույնն է աշխարհը՝ և կարիք, կարիք,
Բախտ բաժանողը ապերախտ էր
Ինձ նորից երազ եկար, մայրիկ,
Շուրջդ ոչ դժոխք, ոչ դրախտ էր:

1999

Կարոյին

Ավագ թոռնիկս տաս տարեկան է,
Ամեն առիթով այդ դուրեկան է
Փոխադրվել է չորրորդ դասարան
Օ՜, կաճապարի դեռ համալսարան.
Մարդ է դառնալու նա շատ պիտանի
Թերևս նաև գործիչ անվանի:
Քաղաքացի նոր հազարամյակի

Դափնեկիր սիրո, գործի բազմակի
Շնորհավորում եմ ես որպես պապիկ
Իմ սրտին, հոգուն, օ՜, այնքան մոտիկ։

1999

* * *

… Օ՜, ամեն ինչ ծանրացավ
Գալինայի ուսերին.
Տանը ինչքան պետք ու ցավ
Գումարվեց հին հոգսերին։

Նա էլ մաշվել ու քաշվել,
Մի կերպ գլուխ է հանում
Իր կորուստները հաշվել
Ինչ անի, չի իմանում։

1999

Զառային

Քո ծննդյան տարելիցին
Քեզ միշտ սիրող հայրդ, մայրդ
Լավ դաշնամուր նվիրեցին
- Փարթամանա նուրբ տաղանդդ։
Դե վայելիր լավ թոռնուհիս
Միշտ միասին - սիրեք իրար
Դաշնակահար դու թոռնուհիս
Կյանքն ըմբոշխնիր լիակատար։

2000

* * *

Որդիս իր կյանքը վտանգի տվեց՝
Նա զարհուրելի ճանապարհ անցավ.
Անզգույշ եղավ և տկարացավ...
Որդիս իր կյանքը վտանգի տվեց։
Անհրաժեշտաբար խոր վիրահատվեց
Օ՜, Աստծո սիրո, տուն վերադարձավ,
Որդիս իր կյանքը վտանգի տվեց
Եվ անապահով ճանապարհ անցավ։

2001

* * *

Կինս գնաց Էջմիածին
Մայր տաճարում մոմ վառի.
Որ մեր Տերը՝ սուրբ Միածին
Արդարամիտ ու բարի
Պահպանի իր հարազատին
Այս դժվար, դժվար դարում
Նեցուկ լինի իր հավատին՝
Հավատարիմ անկոտրում։

2001

Ռոզային (Վարդուշին)

Կրտսեր քույրիկս տկարացել է,
Անկողնուն գամվելը շա՛տ է տխուր.
Անքնությունը երկարացել է
Մղձավանջի պես գիսագանգուր։
Տեր, ապաքինիր եթե կարող ես,
Ի ուրախություն հարազատների.
Տեր, աղաչում եմ, անտեր չթողնես
Նա տատիկ է շատ պայազատների։

2001

* * *

Քույրիկս ծանր հիվանդ
Գիշերն ինչպե՞ս լուսացրեց
Խնամողին չարթնացրեց
Քույրիկս ծանր հիվանդ։
Տիրոջ կամքին հնազանդ
Ցավերին դիմակայեց...
Քույրիկս ծանր հիվանդ
Գիշերն ինչպե՞ս լուսացրեց։

2001

* * *

Վարդուշը ճամփի վրա է,
Դեռ տեղ չի հասել.
«Մնաք բարովն» իր
Դեռ չի ասել։

Խելքը գլխին է,

Տեսնես ի՞նչ է մտածում.
Հիշու՞մ է իր Աստծուն,
Թե՞ արդեն մինումին է։

Երբեմն աչքը բացում
Նորից գոցում է.
Հեյ գիտի աշխարհ
Քույրիկս կրակ ու բոցում է։

2001

* * *

Քո ընտանիքից ես եմ մնացել,
Ես, մեն ու մենակ, սիրելի հայր իմ.
Վարդուշն էլ գնաց, քույր հավատարիմ,
Քո ընտանիքից ես եմ մնացել։
Երևի մայրս արդ քեզ այցելել
Քեզ, զավակներիդ սիրով մտերիմ...
Քո ընտանիքից ես եմ մնացել,
Ես, մեն ու մենակ, սիրելի հայր իմ։

2001

* * *

Քույրիկիս քոչը տեսա,
Ավա՛ղ, դատապարտված էր.
Ներսում ինչ որ խոցված էր,
Քույրիկիս քոչը տեսա։
¬ Լուր տուր իրեն, Տեր, ասա,
Որ եղբայրդ շանթված էր.
Քույրիկիս քոչը տեսա,
Ավա՛ղ, դատապարտված էր։

2001

* * *

Մայրիկ, Վարդուշը քո կողմերն եկավ,
Դու կճանաչե՞ս, քո տարիքին էր.
Իր թոռնիկների սերն ու հոգին էր...
Մայրիկ, Վարդուշը քո կողմերն եկավ։
Դե քույրիկս էր, վշտացա հարկավ,
Վերքիս սպեղանին բուժող ձեռքին էր,
Մայրիկ, Վարդուշը քո կողմերն եկավ,
Դու կճանաչե՞ս, քո տարիքին էր։

2001

* * *

Ես քեզ օգնել չկարեցա,
Մինչ… պարտավոր էի.
Փույթ չէ՝ ալևոր էի,
Ես քեզ օգնել չկարեցա։
Ես փլվեցի, չհեռացա.
Առավել իսկ անզոր էի.
Ես քեզ օգնել չկարեցա,
Մինչ… պարտավոր էի։

2001

Հարութի 45 ամյակին

Օ՜, չորս ու կես տասնյակ տարի
Քո՛ սուրբ խանձարուրից ի վեր
Դու մեր տան մեջ մանուկ ու տեր…
Օ՜, չորս ու կես տասնյակ տարի։
Եվս նույնքան լույս ու բարի,
Թող հոլովվեն ջինջ տարիներ…
Օ՜, չորս ու կես տասնյակ տարի
Քո սուրբ խանձարուրից ի վեր։

Այնուհետև թող Տերը քեզ
Հավելումի շնորհ անի.
Օրհնի, որպես մեծ, անվանի,
Այնուհետև թող Տերը քեզ
Թագադրի՝ լինես իր պես.
Օ՜, երանի, շատ երանի…
Այնուհետև թող Տերը քեզ
Հավելումի շնորհ անի։

2001

* * *

Տե՛ր, փրկիր մեզ,
Նեղ տեղում ենք,
Ապաքինիր,
Հիվանդ ունենք։

Տե՛ր, փրկիր մեզ,

Աղոթում ենք
Բոլորը քեզ,
Ինչ որ ունենք։

Միայն տուն բեր
Մեր հիվանդին.
Օ՜, Տե՛ր, օ՜, Տե՛ր,
Մեր նոր ու հին։

2002

Ինքնակենսագրություն

Ա

Իմ Ներսես պապը պայտար է եղել,
Պայտել է ձիերի սմբակները,
Երկաթապատել սայլերի ակները…
Իմ Ներսես պապը պայտար է եղել։
Իր շարժ ու ձևում կայտառ է եղել,
- Պատվաբեր էին հին փեշակները.
Իմ հորապապը պայտար է եղել,
Պայտել է ձիերի սմբակները։

Բ

Իմ հորատատը շատ գեղեցիկ էր,
Հարս էին բերել Լոռվա Դսեղից,
Թումանյանների պատվարժան ցեղից…
Իմ հորատատը շատ էր գեղեցիկ.
Նաև խելոք էր, խոսքն ազդեցիկ էր.
Հնար էր գտնում փրկվել նեղ տեղից.
Իմ հորատատը շատ գեղեցիկ էր,
Հարս էին բերել Լոռվա Դսեղից։

2002

* * *

Ես որդուս եմ փոխանցել
Սերը, սերը լավ գործին,
Նա էլ, օ՜, ինձ պես անցել,
Ձեռք է զարկել և փորձին։
Հաջողում է, արդարև,
Նույնիսկ մրցույթում հաղթում.
Ջերմացրո՛ւ նրան, արև՛,

Իսկ ես բարի եմ մաղթում։

2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻՔ	5
ՕՐԵՐ ՏԱՐԻՆԵՐ	71
ԵՍ ՈՒ ԵՍ	160
ՍԵՐԵՐ ՍԵՐԵՐ	277
ՆՎԻՐՈՒՄՆԵՐ	314
ՄԵՐՈՆՔ	368